

1459  
1760  
~~1761~~

232 / 1961  
31 / 1961

2010



# ԳԱՂՏՆԻՔ ՎԵՆԵՏԿՈՅ


ԳՐԵՑ

ԵԴՈՒԱՐԴ ՏԻՏԻԷ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

## Հ. ՄԵՍՐՈՊ Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

Մ Խ Ի Թ Ա Ր Ե Ա Ն



### ՎԵՆԵՏԻԿ

Ս Ո Ւ Ր Բ Ղ Ա Զ Ա Ր

1909

288025 - 101

# ԳԱՂՏՆԻՔ ՎԵՆԵՏԿՈՅ

Ա.

## ԾՈՎՈՒՆ ՀԱՐՍԱՆԻՔԸ

1440 մայիս 25, հինգշաբթին՝ մեծ և գեղեցիկ օր մը եղաւ Վլենետկոյ ռամիկ դասակարգին՝ միշտ հետամուտ տօնախմբութեանց, տեսարաններու, խաղերու, աղմուկներու և երգերու:

Այդ օրը 25 մայիս 1440, Համբարձման տօնն էր. պերճափայլ տոժը Ֆրանչէսքոյ Ֆոսքարի, որ տասներու թ տարիէ ի վեր տոժութիւնը կը վարէր, ըստ սովորութեան նոյն օրը կէսօրէն յետոյ պիտի կատարէր Աղբիականին հետ իւր տարեկան պսակման հանդէսը:

Առաւօտ կանուխ, տարօրինակ ձևով և համակ ոսկեզօծ շողջողուն նաւ մը եկած էր քարափին մօտ՝ Բիաձէդդային զիմաց, երկու կրանիղէ կոթողներուն մէջ տեղն, որոնց միոյն ծայրը կայ Ս. Մարկոսի

(2330  
40)


20 413-60

50



Թեևաւոր առիւծը՝ իր թաթը Աւետարանին վրայ դրած, իսկ միւսին ծայրը՝ Սուրբ Թէոդորին արձանը: Այս նաւը կը կոչուէր Պոչիկերոյ, և նաւարանէն տարին անգամ մը միայն դուրս կ'ելլէր, ծովուն հարսանեաց այս աննման արարողութեան առիթով, և որ վենետիկեացոյ ամենէն աւելի մեծարանաց առարկան էր:

Բիւձէղզայի մէջ երկու շարք ձողեր կանգնուած էին, սկսեալ քարափէն մինչև Ս. Մարկոսի մայր եկեղեցւոյ գաւիթը: Չողերուն վերի ծայրերէն կախուած ոսկեփառ դրօշակները զրեթէ մինչև գետին կը հասնէին: Գրօշակներուն կրկին շարքին մէջէն պալատականք պիտի անցնէին Պոչիկերոյ նաւը մտնելու: Չինուորներու երկու շղթայներ կեցած էին ձողերուն դիմաց. ժողովուրդը ետ հրելու և պաշտօնական ճամբան ազատ պահելու համար շատ կը նեղուէին, այնքան հոժ էր բազմութիւնը: Ոչ միայն Ս. Մարկոսի հրապարակին և Սքիափոնի քարափին վրայ, այլ և Հառաչանաց կամուրջէն անդին անկարելի էր շարժիլն: Խառնիճաղանճը նոյն իսկ Բրօքուրադիէ վէքքիէն խուժած էր, և յառաջացած մինչև Պրօլիօյի վրայ,



Սուրբ Մարկոս

հրապարակին այն մասն՝ որ սովորաբար ազնուականութեան սահմանուած էր. սակայն նոյն օրուան հանդէսը ազատութիւն կու տար աղքատ դասակարգին հոն մըտնելու:

Ֆրանչէսքոյ Ֆոսքարի տոժը, Բրէկատները, Քառասունքն, Սվոկատորները, մէկ խոսքով՝ վէնետկոյ ամբողջ ականաւոր անձնաւորութիւնք Ս. Մարկոս եկեղեցին առաջուց մտած էին, հոն ներկայ ըլլալու հանդիսաւոր պատարագի արարողութեան որ կը կանխէր հարսանեաց հանդէսը:

Դուրսը բազմութիւնը որ պալատակաւնաց մայր եկեղեցիէն ելլելով տողանցքով իր առջևէն անցնելուն կ'սպասէր խօսքեր կը փոխանակէր, կամ հեռուէն հարցումներ կ'ուղղէր: Այս շաղակրատ, սրամիտ և ծաղրածու ժողովուրդը կը յանդրգնէր նոյն իսկ խճճեւ իրեն զօրաւոր տէրերն, որոնք կ'անցնէին կը դառնային իր դիմացէն: Իրարու փոխանակուած կատակարանութիւնք ընդհանրապէս կծու չէին, սպասելու տաղտուկը փարատելու համար՝ կը խօսէին, պարզ իբր ժամանց մը՝ առանց ո՛ր և է չարամտութեան:

Սակայն ամէն տեղ այսպէս չէր: Քանի



մը խմբակներու մէջ այլազան ցոյցեր կը նշմարուէին : Մնտխարանութեան երևութիւն ներքեւ ծանր խօսք մը երբեմն խուլ գայրոյթներ կը յայտնէր : Աղքատն իւր խեղճութեան վրէժը կարծես խեղկատակութեամբ կը լուծէր, և իրեն իրաւունք կը համարէր չարախօսելը, իբր վրէժ խնդրութիւն՝ հարուստներուն և ազնուականներուն վրայ՝ այս եզական օրուան յատուկ սանձարձակութեանց մէջ :

Խմբակներէն ամենէն աւելի տժգոհութիւն ցուցնողը կը գտնուէր Պաղիսդէրիոյի մօտ, Բրոքուրադիէ Վէքքիէի անկիւնը . ճիշդ Ս. Մարկոս հրապարակին և Բիաձէդդայի գիրար կտրող միջոցը : Թերես այս թշուառներուն դժգոհանք պատճառողն ազնուական երիտասարդաց տմարդի կերպով յաճախակի իրենց խմբակը ցրուել անցնիլն էր : Այս երիտասարդներէն շատերը առանց եկեղեցական արարողութեանց կարևորութիւն ընծայելու, արդէն Մայր եկեղեցիէն դուրս ելած էին Ս. Մարկոսի հրապարակին վրայ գտնուող քաղիւննէրան մէջ շրջան մը ընելու համար : Քաղիւննէր ժամանակին նորոյթ մ'էին և հրապարակին վրայ ստորին յարկաբաժիններուն

մեծագոյն մասը կը գրաւէին : Մեծ համբաւ կը վայելէին Վենետիոյ ազնուական երիտասարդութեան մէջ և չկար հարուստ ընտանեաց զաւակ որ չունենար քաղիւնյ մը, ուր կը հաւաքէր երեկոնները իր բարեկամները : Հոն կը խաղային, կը խօսակցէին, շատ մը շաքարեղէն և խմորեղէն սպառելով. ամառ գիշերները սառած ըմպելիներ խմելով, և այս կը շարունակուէր մինչև որ առաւօտեան լոյսը կուգար իմացունելու այս պարապորդ երիտասարդաց թէ ժամանակը եկած է հայրենի պալատը քաշուելու : Սմէն ժամանակ վենետիցիք գիշերայած ժողովուրդ մը եղած են :

Արդ այս խմբակին խօսակցութեան վերայ՝ որ վայրկեանէ վայրկեան կ'ընդհատուէր և կը խանգարուէր, կ'ուզենք մեր ընթերցողներուն ուշադրութիւնը հրաւիրել : Երիտասարդաց շարունակ անցուղարձն՝ որոնց լաճերը (laquais) իրենց դիմացէն կ'երթային արմուկի ուժգին հարուածներով՝ բազմութեան մէջէն ճամբայ բանալու համար, գայրոյթ գրգռելու պատճառ եղաւ : Վերջապէս անոնցմէ մին, զինուորականի համագգեստով, իւր ճամբուն վրայ գրտ-



Նուսող ծեր մը այնպիսի բիրտ կերպով հրեց որ խեղճ մարդը աներևոյթ եղաւ վայրկեան մը իբր թէ բազմութեան մէջ ծովամոյն եղած ըլլար: Այս տմարդի աւարբը խուլ շշուշ մը առաջ բերաւ խմբակին մէջ:

Ասով հանդերձ, իբր ճշմարտախօս պատմաբան, կը պարտինք աւելցնել թէ բողոքող ձայները խոհեմութիւն ունեցան սպասելու մինչև որ ազնուական երիտասարդը հեռացաւ:

Այս միջոցին, ծերը չորս կողմէն ճամլուած, կրցաւ ոտքի ելլել և ջուրէն ելլող քածի մը նման վրան թօթվել: Սակայն իրեն անիրաւողին դէմ բնաւ ռիսակալութիւն ցոյց չէր տար. իր մօտը կեցողներուն պարզապէս զուարթօրէն հարցուց այս բանս:

— Ո՞վ է այդ երիտասարդ արդարձ որ այնքան մեծ փափաք ունի իր բիտերը փորձելու:

— Զինքը չե՞ս ճանչնար, պատասխանեց, նա հռչակաւոր զօրապետ Մկրտիչ Մարդինենկոյ է:

— Մարդինենկոյ կո՞մար, կրկնեց ծերը, կը կարծէի թէ այս ժամուս քաջու-

թեամբ սուսերամարտ կը մղէ Միլանուդքսին դէմ:

— Ըսածդ ուրիշ է: Ակնարկած անձդ կը կոչուէր Պօղոս Մարդինենկոյ:

— Կը կոչուէր... կ'ըսես:

— Այո՛, անտարակոյս, քանի որ Պրէշիայի պաշարման ատեն սպաննուեցաւ:

— Այն ատեն ասիկա...

— Ինչպէս քիչ մ'առաջ կ'ըսէի իրեն հօրեղբօրորդին Մկրտիչ Մարդինենկոյ է:

Դարձեալ զանգատներ սկսան լսուիլ խմբակին մէջ Մկրտիչ Մարդինենկոյի հասցէին: Թէպէտ տակաւին երիտասարդ — հազիւ քսան և երկու տարուան — պատրիկը արդէն վենետկոյ ժողովրդեան ռամիկ դասակարգին բոլորովին զգուելի եղած էր իր արարքներով:

— Սակայն աւելին կայ, շարունակեց ճարտարախօսն աջ ու ձախ դիտելէն յետոյ, որպէս զի ապահովայ թէ իր խօսքերը մի՛ գուցէ ոստիկանին ականջը հասնին:

— Է՛հ, ի՞նչ կայ, հարցուցին քանի մը ձայներ տագնապեալ հետաքրքիր շեշտով մը:

Ճարտարախօսը կարճ հասակով նիհար մարդ մ'էր, տժգոյն կանանչկեկ, աչքերը



ակնակապիճին խորը իջած: Խորհրդաւոր նշան մը ըրաւ և քաշուեցաւ Պաթիաթէ-բիոյի և արքայական Պալատին մէջ տեղը գտնուող նեղ միջոցն, ուր կրնար աներկիւղ խօսիլ առանց ընդհատուելու կամ յանկարծ բռնուելու:

— Գիտցէք ուրեմն... շարունակեց ճարտարախօսը, տագնապելով թէ՛ Մարգինենկոյի վրայ բոլոր գիտցածները ըսելու մարմաջէն և թէ՛ իր անխոհեմութեան պատճառաւ գլխուն գալիք հետեանքներուն երկիւղէն:

— Ի՛նչ բան, հարցուցին հետաքրքիրները:

Խօսելու տենչը յաղթեց շատախօսին սարսափներուն: Կարելի եղածին չափ նըշանացի իր մօտը հաւաքեց հետաքրքիրները, և զրեթէ ցած ձայնով ըսաւ:

— Գիտէք դուք թէ Պօղոս Մարգինենկոյ...:

— Ո՞վ, անիկայ որ մեռած է, հարցուց բթամիտ մարդ մը:

— Է՛հ, անտարակոյս, պատասխանեց ճարտարախօսը, այս ձախաւեր ընդհատումէն սրտնեղուած: Պօղոս Մարգինենկոյ արտակարգ գեղեցկութեամբ կին մ'ու-

նէր, թէպէտ ցամաք երկիր ծնած: Չեր մէջէն անշուշտ զինքը ճանչցողներ կան:

— Ես, պատասխանեց ձայն մը: Անցեալ տարի, ճիշդ այս օրս տիկինը հոս էր Պոչիկերոյոյի վրայ, Ֆրանչէսքոյ Ֆրաքարի տոժին քովը, երբ նորին պերճափայլութիւնը Ազրիականին հետ պսակադրութեան հանդէսը կատարեց:

— Արդ ուրեմն այս կինը մեռաւ:

— Մեռա՛ւ, ըսին լսողները:

— Այո՛, մեռաւ:

— Դեռ մանկամարդ:

— Մարդս ամէն տարիքի կը մեռնին, զիտել տուաւ փիլիսոփայօրէն բթամիտ մարդուկը:

— Եւ ո՞ւր էր նա, հարցուցին բազմաթիւ ձայներ:

— Գեղեցիկ կղզիին մէջ:

— Կարտայի լճին վրայ, Լոմպարտիոյ մէջ. հարցուց հետաքրքիրներէն մին:

— Այո՛:

— Գեղեցիկ կղզին սեպհականութիւնն է Մարգինենկոյ հարուստ ընտանեաց: Իր էրկանը աւելի մօտ ըլլալու համար տիկինը քաշուած էր այն կղզին՝ Պրէշիայի պաշարման ատեն: Միայնակ կ'ապրէր քանի մը



ծառաներուն և իւր աղջկան հետ որ քանի մը ամսուան էր: Հոն մահը եկաւ զինքը խլելու:

— Ի՞նչ տեսակ մահ ունեցաւ, հարցուցին մօտ գտնուողներէն ոմանք աւելի ևս մօտենալով պատմողին:

— Մկրտիչ Մարդինենկոյ, շարունակեց նա, կը հաստատէ թէ կոմսուհին իր էրկանը մահուան լուրին պատճառած յուզմունքէն մեռած ըլլայ:

— Ուրեմն Մկրտիչ Մարդինենկոյ Գեղեցիկ կրօնի մանկամարդ կոմսուհին մօտ կը գտնուէր:

— Ոչ. Պրէշիայի պարիսպներուն տակ կը պատերազմէր իւր ազգականին հետ, և ինքն ստանձնեց այն տխուր լուրը տանելու պաշտօնը անոր այրիին:

— Բաւական տարօրինակ դէպք մ'է, պատասխանեց ունկնդիրներէն մին: Սակայն զաւակը, փոքրիկ աղջիկը:

— Նոյնպէս մեռած. պատասխանեց պատմիչը:

Հետաքրքիրներուն խումբն այս վերջին բառերը լսելուն այնպիսի տօգոհութիւն յայտնեց, որուն մէջ սոսկումը և կարեկցութիւնն իրարու խառնուած էին:

— Պօղոս Մարդինենկոյ, ըսաւ վերջապէս ունկնդիրներէն մին որ կարծես իրեն սեպհականած էր ուրիշներուն կարծիքը յայտնելու իրաւունքը, Պօղոս Մարդինենկոյ իր հօրեղբորդի Մկրտիչէն զատ ուրիշ ժառանգ ունէր:

— Ոչ. չունէր ուրիշ մը:

— Այնպէս որ Պօղոսին կինն և աղջիկն՝ երկուքն ալ մեռած ըլլալով...

— Զօրավար Մկրտիչը՝ որուն քիչ առաջ հոսկից անցնիլը տեսաք, է միակ ժառանգը Մարդինենկոներուն անդրանիկ ճիւղին, որով անոնց ահագին հարստութեանը տիրացած է: Ահաւասիկ իրարու ետե երեք մահեր, որոնց սուգը անուանի զօրավարն երկար ատեն իւր սրտին մէջ պիտի չպահէ: Գուց ալ նոյնը չէ՞ք խորհրդի, ընկերներ:

Ամէնքն ալ կ'ըմբռնէին այս դառն խօսքերուն տակ ծածկուած չարամիտ ակնարկութիւնները: Ճարտարախօսին մօտ կը գտնուէր մանկամարդ կին մը, որուն մեծ զի կերպարանքը, քիչ շատ առնական գեղեցկութիւնը, անփայլ տօգոհութիւնը և արտայայտիչ մեծ ու սև աչքերը կը ցուցնէին մին այն քաջասիրտ մանկա-



մարդ աղջիկներէն, որոնք սովորաբար  
լիւրիկէի լեռներէն կու գային իրենց օ-  
րապահիկը ճարելու վէնետկոյ մէջ: Այս  
կիներ շատ անգամ արդէն իր արմուկովը  
ճարտարախօսը մշտած կամ թեզանիքէն  
քաշած էր՝ լոկեայն անոր ազդարարելու  
և զինքը խոհեմութեան հրաւիրելու: Այս  
անգամ անոր թեք բռնելով ուժով մը  
ցնցեց և ըսաւ.

— Լո՛ւս կեցիր, Պետրոս, մեր վրայ  
դժբախտութիւն պիտի բերես:

Խմբակին մէջ ամէն ոք լիւրիկեցի կնոջ  
նման կը մտածէր թէ ճարտարախօսը չա-  
փէն աւելի ըսած էր, ուստի անիկայ որ  
կարծես յունական ողբերգութեանց մէջ  
խմբերգի դերը կը խաղար աճապարեց ընդ-  
հանուրին միտքը բացատրել՝ պատասխա-  
նելով անխոհեմ Պետրոսին:

— Եթէ Պօղոս Մարդինենկոյի կնկան  
և աղջկան յանկարծական և անակնկալ  
մահերը կրնան չարամտութեան պատճառ  
տալ, սակայն ստոյգ է թէ ընտանեաց  
գլուխը սպաննուեցաւ թշնամեաց դիմաց,  
Պրէշիայի պարիսպներէն արձակուած հրա-  
ցանի մը հարուածէն:

— Ո՞վ գիտէ, ըսաւ յամառ Պետրոսը,

21502

թէ հարուածն իրօք Պրէշիայէն արձրկուած  
է, և խեղճ Պօղոսը կոնակէն զարնուած չէ:

— Պօղոս Մարդինենկոյ, ըսաւ հաստ  
ձայն մը, մեռաւ ճիշդ կուրծքին վրայ ըն-  
դունած գնտակի մը հարուածէն: Քաջու-  
թեամբ ինկաւ իմ մօտս Պրէշիայի պա-  
րիսպներուն տակ: Ահա ես կը վկայեմ  
ասոր:

Ամբողջ փոքր խումբը սարսափած ե-  
տին դարձաւ և տեսաւ երիտասարդ պա-  
տարախօսին զինուոր մը, որ բռնելով ճար-  
տարախօսին ուսերէն զինքը ինքիւր վրայ  
շրջեց, այնպէս որ անոր երեսը դէպի ծով  
դարձաւ:

10558  
40  
2021-61202

— Վսեմաշուք Տէր, ըսաւ եղկելին:  
Զինուորը ձեռքը երկնցուց՝ մատնանիշ  
ընելով հեռուէն ջրանցքն որ երկու կողմի  
ցիցներուն մէջէն ազատօրէն կ'երկարէր  
մինչև Ադրիականը.

— կը ճանչնաս ատիկա, ըսաւ.

— Այո՛, վսեմաշուք տէր, ըսաւ ճար-  
տարախօսը դեփղեղին կտրած, վէնետկոյ  
մէջ չկայ խեղճ մարդ մը որ չգիտնայ  
Օրֆանոյի ջրանցքին համբարը:

— Արդ ուրեմն, կը յանձնարարեմ  
քեզ որ ասկէ ետքը լեզուիդ չափ դնես,



եթէ չես ուզեր հոն ջուրին տակը սու-  
զուիլ:

Օրֆանոյի ջրանցքը շատ չարագուշակ  
համբաւ ունէր Վենետիոյ ռամիկ ժողովը-  
դեան մէջ. որով զինուորին սպանաւրը  
սարսափ ձգեց խօսողներուն խումբին վը-  
րայ: Բարերախտաբար նոյն այն վայրկե-  
սին Ս. Մարկոսի պղնձեայ դուռները կը  
սկսէին շարժիլ. պալատականք կը պա-  
տրաստուէին դուրս ելլելու: Ամենուն աչ-  
քը այս տեսարանին ուղղուած էր, երբ զի-  
նուորը Պետրոսին ականջէն հետևեալ խօս-  
քերն աւելցուց՝ միայն իրեն և իր քով  
գտնուող լիւրիկեցի կնոջ լսելի ձայնով:

— Ենորհակալ եղիր քու Յովհաննա  
կնոջդ, անիծեալ շատախօս. թէ որ իբր  
քաղաքացի իրեն չկարեկցէի, դուն այս ե-  
րեկոյ քու լճակի տունը չէիր մտներ, ուր  
քեզ կը սպասէ քու ծեր հայրդ Սալվադոր:

— Ափսո՛ս, նա իրեն չսպասեր, ըսաւ  
լիւրիկեցի կինն իր աչքերը սրբելով:

Պետրոս բարկութենէ և թերևս սար-  
սափին մնացորդէն իր ահուաները կը կրճը-  
տէր, երբ Յովհաննա գաղտաբար զինուո-  
րին ձեռքը բռնեց և զայն սեղմելով ըսաւ-

— Ենորհակալ եմ, յիսնապետ Բար-  
թողիմէոս, շնորհակալ եմ ազգականս:

Լիւրիկէի լերանց վրայ ամէն ոք իրա-  
րու ազգական էին. ուրիշ տեղեր սովորա-  
կան հայրենակից բառին տեղ՝ հոս ընտանի  
և փաղաքշական ազգակաւ բառը կը գոր-  
ծածուէր:

— Զգուշացիր այս մարդէն, Յովհան-  
նա, ըսաւ յիսնապետը, երակներուն մէջ  
փոխանակ արեան թոյն կայ:

Լիւրիկեցի կինն չսեւլու զարկաւ և փու-  
թաց իր էրկանը քով, որմէ գրեթէ ուսով  
չափ բարձր էր:

— Ուրիշ մտածմունք չունի՛ս դու, ը-  
սաւ նա, հոգդ միայն Մարդինենկոյ ըն-  
տանի՞քն է, քանի որ զիտես թէ հայրդ երէ-  
կուրնէ ի վեր անյայտ եղած է և զինքը  
փնտռելու ելած եմ:

Այն միջոցին պալատականք կը յառա-  
ջանային, առջևէն Պրանչիսքոյ Փոսքարի  
տոժը, համակ ծիրանի հագած և գլխուն  
վրայ իւր պատուոյ նշանը՝ դքսական խոյ-  
րը դրած: Ուրախութեան երկար աղաղակ  
մը որոտաց, ոչ թէ Փոսքարիին ժողովը-  
դական ըլլալուն համար, և աւելցունենք  
ըսելու թէ նոյն իսկ բաւական հնագոյն  
ընտանիքէ չէր: Հոն գտնուող քսան հա-  
զար մուրացիկներու, ձկնորսներու և բո-



2.)

լոր աղքատ դասակարգին պատկանող անձանց մէջ չկար մէկն որ ազնուապետութեան իրաց մէջ պահանջող չըլլար իբր պատրիկներէն ամենէն ամբարտաւանը : Վենետիոյ ժողովրդեան հազար տեսակ առանձնայատկութեանց մին էր այս : Արդ այն վայրկենին բազմութիւնը ոչ թէ Գոսթարի տոժը կը ծափահարէր, այլ այն տեսարանն՝ որուն երկար ատեն անհամբերութեամբ կը սպասէր և որ վերջապէս կը ներկայանար իրեն :

Պերճափայլ Հասարակապետութեան առաջին իշխանաւորը՝ ծովուն հարսանեաց օրն, ինչպէս իրեն տոժութեան բարձրանալու ատենը, մեծ գահաւորակի մը վրայ նստած կը տարուէր. իր դիմացը եռոտանի մը կար, որուն վրայ դրուած էր մեծ կոնք մը լեցուն արծաթ դրամներով խառն քանի մը ոսկի դրամներ : Տոժը անդադար իր աջ ձեռքը կոնքին մէջ խոթելով ամիով դրամ կը նետէր ժողովրդեան՝ զինուորաց զուխներուն վրայէն, ի նշան ուրախութեան : Այս առատաձեռնութիւնը շատ անգամ պատճառ կ'ըլլար այլանդակ մենամարտութեանց, երբեմն նոյն իսկ անբանական վայրենի կոխներու : Այս տեսարանը խիստ կը զուար-

ճացընէր Վենետիոյ պճնասէր երիտասարդութիւնը որ քաղիւններուն պատուհաններէն կը դիտէր : Իսկ տոժը լուրջ և տխուր էր : Ստէպ ստէպ ետեւը դառնալով՝ մեղաժաղձիկ ակնարկ մը կը նետէր : Վասն զի իր զաւակներէն ոչ ոք կար հոն, իրենց հօրը մօտ, ինչպէս ուրիշ անգամներ, գահաւորակին վրայ անոնց համար յատկացուած տեղը : Իր չորս զաւակներէն երեքը քաջութեամբ ինկած էին հասարակապետութեան համար պատերազմելով. իսկ վերջինն և սիրելագոյն Յակոբօսը՝ ծերակուտին վճռով արքորուած էր քանի մը խօսքերուն համար, որոնք աւելի անխոհեմութեան հետեանք էին քան թէ չարութեան :

Տոժին գահաւորակին քիչ մը հեռուէն կը հետևին վաթսուն ծերակուտականք. ժողովուրդն անոնց մէջէն նշանաւոր ընտանեաց սերունդները կը ցուցընէր կամ զանոնք իրենց փառաւոր անուամբը կը կոչէր, որոնք այս կղզիաբնակ խեղճ ժողովրդեան փառքն և ուրախութիւն էին : Այսպէս յաջորդաբար ընտրական տասներկու ընտանեաց անունները կը տրուէին, զորս երկոտասան առաքելոց կը նմանցնէին :



Այս ընտանիքները կը սերէին տասնուերկու տրիբուններէն, որոնք առաջին անգամ ընտրեցին Վենետիոյ հասարակապետութեան տոժը յամին 697: Տասնուերկու ընտանեաց անուններն էին, Պատոէր, Գոնզարինի, Մորոզինի, Դիէբոլոյ, Միքիէլ, Սանուտոյ, Բուլանոյ, Կրատենիկոյ, Մէմոյ, Ֆալիէր, Տանտոլոյ, Պարոճճի:

Ծերակուտէն (Բրէկատներ<sup>\*</sup>) յետոյ, որուն ձեռքն էր Վենետիոյ ճշմարիտ ուժը,

\* Բրէկատի (ծերակոյտ) սկզբան երկու էին սակայն յետոյ 1332ին Ֆլապիանցոյ տոժը սահմանեց որ ծանր և դժուարին խնդրոց ատեն տոժը հրաւիրէ և ազաջէ մեծամեծները իր քովը ժողովուելու: Այս կարգադրութեամբ հաստատեցաւ ծերակուտին զօրաւոր իշխանութիւնը, որոնց անդամներն ըսուեցան pregadi կամ pragati, ազախաւք:

Տասանց ժողով կը կոչուէր տասնպետութիւն մը որուն տասն անդամները կ'ընտրուէին տոժէն և իրեն խորհրդականներէն, և բարձրագոյն ատեանը կը վաւերացընէր անոնց ընտրութիւնը: Այս ժողովոյն հաստատուելուն նպատակն էր ազնուականութեան զոտոգութիւնը ճնշել, ոճիրներուն առջևն աճնուել, յանցաւորները հրապարակաւ պատժել:

Համաժողով (pieno collegio), որուն կը մասնակցէին նաև ամբողջ Աւագանին, այսինքն տոժն իր բարձրագոյն և ստորին խորհրդականներով: Այս ժողովոյն երբ հաստատուիլը և իր անուանակոչութեան պատճառը չի գիտցուիր: Իր զԼխաւոր գործն էր՝ խնդիր մը ձերբազուտին դիմաց չի հանած լաւ մը քննիլ. ծերակուտէն իրեն յանձնուած խնդիրներուն վճիռ տալ, օտար ազ-



Ծերակուտական



կու գար Տասանց ժողովն, որուն մասն կը կազմէր այն ահաւոր ատեանը որ կը կոչուէր Երից ժողով, կամ լաւ ևս Պետութեան խուզարկունները (Inquisiteurs de l'Etat), Տասանց ժողովին արթուն և ահեղ աւանդապահները: Յետոյ կու գար Համաժողովը (pieno collegio) իւր վեց խորհրդականներով, որուն նախագահն էր

գաց ղեկավարներուն և պատգամաւորներուն ունկնդրութիւն շնորհել, ևն. ևն:

Քառասունք կ'ըսուէր քառասուն խորհրդականներէ բաղկացած ժողովն, և էր եղեւնադատ և քաղաքային խնդրոց բարձրագոյն ատեանը: Սակայն երբ Պետութեան ընդարձակելուն խնդիրներն ալ բազմացան, հարկ եղաւ քաղաքային խնդրոց համար ուրիշ քառասնից ժողով մը հաստատել, որով առաջինը մի միայն եղեւնադատ բարձրագոյն ատեանն եղաւ: Սակայն դարձեալ ուրիշ ստորաբաժանումն մ'ալ եղաւ և ըսուեցան քաղաքային նոր Քառասունք, քաղաքային հին Քառասունք: Այս երեք տեսակ քառասնից ձեռքն էր Պետութեան ներքին և արտաքին խնդիրներու և զործերու դատաստանը, միայն վաճառականական զործերուն չէին խառնուեր:


Հինգ ինասունք եւր գրաւած երկիրներու վրայ այսպէս կը կոչուէր հինգ իրաւագէտներէ բաղկացած ժողովն, որուն յանձնուած էր ցամաք երկրի վրայ զործելուն հոգատարութիւնը: Յետոյ այս ժողովոյն նոր զրաւուած երկիրներու կցեցան Savi agli Ordini և Savio di Settimana ըսուած ժողովները, միահամուռ կը ձևած ցունէին տասներեք անձանց ժողով մը, որուն յանձնուած էր ծովային զործերու, զինեալ և անզէն նաւերուն, վաճառականութեան, կրէտէ և Գորֆու կղզիներուն, Տալմացիոյ, Աւպանիոյ և Ռումանիոյ զործոց վերին հսկողութիւնը:

Ծան. Թարգմն.

տոժը. Քառասնից պետերը (capi di quaranta), ցամաք երկրին հինգ իմաստունները, gli Ordiniի հինգն, եօթնեկի նախագահն (Savio di Settimano) և այլն:

Քիչ ատենէն պալատականը ժողովեցան Պոչչիներոյի վրայ, որուն համակ ոսկեշող կողերն արևուն դէմ կը ցուայընէին նաևուն ողնափայտին վրայի դրասանգներն, արաբական քանդակները, յուշկապարիկները և մտացածին կենդանիները, որոնցմով Վենետիկեան արուեստին երեւակայութիւնը զարդարած էր նաևը: Պոչչիներոյ, ինչպէս վերը ըսինք, հսկայածև տարօրինակ նաւ մ'էր, և մի միայն այս հանդէսին կը ծառայէր:

Ազրիականին այս հսկայ նաւը դար մ'է գրեթէ որ Վենետիոյ նաւարանին մէջ կը քնանայ իր յետին քունը: Այս տողերը գրողն տասնըհինգ տարի առաջ (1866) տեսած է զայն, անյայտացող պետութեան մը աւերակն, աւստրիական զինուորներուն հսկողութեան ներքև: Այսօր, ինչ որ կը մնայ Պոչչիներոյէն՝ իտալիոյ պահպանութեան յանձնուած է: Սակայն Պերճափայլ Հասարակապետութիւնը կը հանգչի առ յաւէտ լճակին խորը, ուր օր մը Վենետիկն ալ պիտի խորասուզի:



Իտալացի նաւ



Պռօշիկերորոյի ետեւէն կու գային հազարաւոր կոնտորաներ, որոնց Հասարակապետութեան ծախուց կարգադիր օրէնքն այնպիսի տխուր միաձեւութիւն մը յատկացուցած էր, որ նոյն իսկ Վենետիոյ Պետութեան իյնալէն յետոյ ալ պահուեցաւ, և օտարականի մը առաջին անգամ Վենետիկ մտնելուն, զարմանքը շարժող առարկաներէն մին է: Այս համակ սեւագոյն և առանց ո՛ր և է զարդարանքի նաւակախումբին մէջ փառահեղ և հսկայ Պռօշիկերորոկը տեսնուէր իբր ճիւղ մը՝ շուրջը պատած հողապայներու և ահագնատեսիլ ջրղջիկներու վոհմակէն:

Հանդիսականք ճամբայ ելած էին, անցան Լիտոն և կարեցին խրուար. միշտ կը յառաջանային: Նաւակախումբը կը մօտենար Պրէնդային բերանը, և կը տեսնուէին հեռուէն քիոճճիայի ձկնորսաց հիւղակներն, երբ տոժը ձեռքը բարձրացունելով կանգ առնելու նշանը տուաւ:

Նաւապետին սուլելուն՝ թիավարաց երկու նստարաններն իրենց ոսկեղօժ թիերը հանեցին ջրէն. Պռօշիկերորոյ շարունակեց քանի մը վայրկեան ևս իր ճամբան և ապա անշարժ կեցաւ: Այն ատեն տոժը

ամպհովանիով աթոռի մը վրայ ելաւ, որ իրեն յատկացուած էր նաւուն կոնակի բարձրաւանդակին վրայ, և հոնկից երկար ճառախօսութիւն մը ըրաւ, որուն բնականապէս ամբողջ նիւթն էր Վենետիոյ փառքը: Թէպէտ Ֆրանչէսքոյ Ֆոսքարի գրեթէ եօթանասուն տարուան էր, այլ հաստատուն և կորովի ձայնով մը կը խօսէր: Սակայն այս բուն, աղմկայոյզ, շաղակրատ ժողովրդեան մէջ կարելի չէր լռութիւնը երկար ատեն պահէ: Ուստի տոժին խօսքերը գրեթէ միայն Պոչիմոյրոյի մէջ ազնուական նաւորդներուն լսելի եղան, որոնք գէթ կ'ունկնդրէին կամ կ'երևային ունկնդրել յարգական լռութեան մը մէջ: Ուրիշ ամէն կողմ զուարթ ժխոր մը կը տիրէր, որուն մէջ անկարելի էր իրարու խօսքը հասկընալ: Ամէն ոք կոնտոլաներուն վրայ կանգնած՝ դիմացի կամ իրեն մօտ եղողներուն հետ խալական յատուկ շաղակրատութեամբ և աշխուժութեամբ խօսքեր կը փոխանակէր: Այս մօտ եղողները զիրար կ'արգիլէին, ոչ թէ լսելէ, որուն ոչ ոք զուցէ փոյթ ունէր, այլ տեսնելէ, որ ամենէն կարևորագոյնը կը թուէր:

Յիրաւի նաւակներուն վրայ նկարչօրէն թառած քանի մը հազար մարդոց մի միայն փափագն էր տեսնել տոժին Աղբիականի հետ պսակուելուն հանդէսը, այսինքն իր ոսկիէ մատանին ծովուն մէջ ձգելը: Վենետիոյ աղքատ դասակարգին աւելորդապաշտական երևակայութիւնը չենք գիտեր ինչ գաղտնի իմաստներ կը վերագրէր այս անսովոր արարողութեան ներկայացուցած խորհրդաւոր նշանին: Ամենափոքր հանդիպած միջադէպէ մը գուշակութիւններ կը հանէր: Ոչինչ դիպուած մը ջերմեռանդօրէն կը դիտուէր, կամ կը մեկնուէր ապա կոնտոլավարներուն կողմէն Սքիավնի քարափին սալաքարերուն վրայ արևուն մէջ տարածուած, կամ ձկնորսներէն՝ լճակին միւս կողմը իրենց ուռկանները նետած ատեն: Ամէն ինչ իմաստ մ'ունէր և գուշակութեան մը ծառայէր: Թէ որ մատանին տոժին մատէն դժուարաւ ելլէր, անվրէպ նշան մ'էր Հասարակապետութեան ներքին վարչութեան ծանր տագնապներուն. թէ որ իյնալու ատեն ուղին մէջ ինքն իր վրայ պտոյտ ընէր, խեղճութիւն և սով կը սպառնար աղքատ ժողովրդեան. եթէ իյնալու ատեն ջուրը վեր



ցատքեցնէր, Սարակինոսաց հետ պատե-  
րագմ կը նշանակէր. բայց թէ որ էյնար  
ծովուն մէջ առանց անոր երեսը խռովե-  
լու, Վենետիկը կրնար ապահով ըլլալ  
բարգաւաճ և ամենառատ տարի մը բոլո-  
րելու:

Ինչպէս կը տեսնուի՝ չար գուշակու-  
թիւնը շատ աւելի բազմաթիւ էին բարի  
գուշակութիւններէ, սակայն այս բանս ար-  
գելը չեղաւ Վենետիկոյ հնգետասաններորդ  
դարուն Եւրոպայի ամենէն զօրաւոր և ա-  
մենէն հարուստ պետութիւնն ըլլալու:

Ֆրանչէսքոյ Ֆոսքարի իւր ճառը աւար-  
տելով, երկու քայլ առաջ եկաւ նաւուն  
պսակին մօտ և պատրաստուեցաւ մատա-  
նին ծովը ձգելու գործին: Տոժը ձերունի  
մ'էր, մօտ եօթանասուն տարւոյ, ինչպէս  
վերը ըսինք, իւր ձեռքերն այլ ևս դիւրա-  
շարժ չէին, մանաւանդ որ ատենօք ուսմ-  
բի կտոր մը ձախ ուսը հարուածելով,  
այն կողմը գրեթէ բոլորովին անդամաւոյժ  
ըրած էր, անոր համար դքսական մատա-  
նին՝ զոր աջ ձեռքին մատնեմատին ան-  
ցուցած էր, դժուարաւ կը սահէր ձախ  
ձեռքին մատերուն մէջ: Տոժը ժողովըր-  
դեան նախապաշարմունքը լաւ գիտէր,

կը նեղասրտէր, իր ճակատը կը կարմըր-  
նար: Երկար տրտունջ մը սկսաւ բար-  
ձրանալ բոլոր կոնտոլաներէն:

— Ինչպիսի՜ ահաւոր դժբախտութիւնը  
կը սպառնան Վենետիկոյ. կարծես կ'ըսէին  
տագնապեալ կերպարանքները:

Սակայն Ֆրանչէսքոյ Ֆոսքարի յան-  
կարծական շարժմամբ մը յաջողած էր  
հանել մատանին, և զայն օդին մէջ բար-  
ձրացունելով ուժգին ձայնով մը ըսաւ.

— Վենետիցի'ք, կը զանգատիք թէ  
տարիքը սառեցուցած է ձերու մը ձեռքը.  
սակայն ձեր մէջէն շարքերը գիտեն թէ նոյն  
այս ձեռքը քառասուն տարիէն աւելի սուր  
գործածած է Պետութեան պաշտպանու-  
թեան համար: Հոս գտնուող իմ նախկին  
զինուորական ընկերներս թող խօսին և  
ըսեն, եթէ չեն մոռցած իրենց ձեր զօ-  
րավարը:

— Ոչ, ոչ, պատասխանեցին բազմա-  
թիւ ձայներ:

— Ուրեմն վստահութիւն ունեցէք ձեր  
տոժին վրայ, ըսաւ Ֆրանչէսքոյ Ֆոսքա-  
րի, և հաւատք՝ Նախախնամութեան վրայ,  
որ երբէք չէ դադրած հսկելու Պետու-  
թեան ապահովութեան:



— Այո՛, այո՛, պատասխանեցին նոյն ձայները:

Տոժը շարունակեց.

— Ձեր ամենուն անուամբ, յանուն իմ շուրջս եղող ազնուականութեան, յանուն ինձի ունկնդրող ժողովրդեանս, յանուն Վենետիոյ, զոր ես կը ներկայացընեմ, յանուն Ս. Մարկոսի իւր պաշտպանին, ես Ֆրանչէսքոյ Ֆոսքարի, տոժ Վենետիոյ, այս տասնըութերորդ անգամ կ'ընծայեմ ահա ծովուն իմ տոժական մատանիս ի նշան հարսանեաց:

Ուրախութեան երկար աղաղակ մը ուրտաց. բոլոր գլուխները բաց էին: Կոնտոլաներուն վրայէն ձկնորսները և կոնտոլավարներն իրենց բրդեայ գլխարկները կը տատանէին: Ֆրանչէսքոյ Ֆոսքարի ձեռքի նշանով մը հասկըցուց թէ տակաւին ըսելիքներ ունի: Լուսթիւնը իսկոյն վերադարձաւ:

— Յանուն աւագանւոյն ըսաւ տոժը, կը պսակուիմ ծովուն հետ, անշուշտ կ'ըմբռնէք խորհրդաւոր իմաստը. այսինքն Վենետիկը այսօր այս ալեաց հետ, որոնք ձեր նաւերը կը տանին երկրիս հեռունները, կը կազմէ դարձեալ յոյժ սեղմ նիզա-

կակցութիւն մը, որով Պերճապայծառ Հա սարակապետութեան իշխանութիւնը պիտի տարածուի օր մը այն ամէն երկիրներուն վրայ՝ որոնց ափունքը կը թրջէ ծովը: Այն ատեն նախասացեալ ժամանակները պիտի հասնին և Աղբիականին թագուհին՝ պիտի ըլլայ թագուհի տիեզերաց:

Ուրախութեան աղաղակներն այնպիսի սաստկութեամբ վերսկսան՝ որ զառանցանքի կը յանգէին: Վենետեան հայրենասիրութիւնը կը խօսէր տոժին բերնով, ազգային հպարտութիւնը գոհացումն ունեցած էր. և բոլոր այս խայտաբղէտ բազմութեան մէջ չկար գրգռեակով ձկնորս մը կոնտոլայի մը օթեակին վրայ ելած, որ ինքզինքը գէթ աշխարհի տէր չկարծէր:

Տոժը սպասեց որպէս զի ուրախութեան խանդը քիչ մը հանդարտի, յետոյ ցըցուց ժողովրդեան դքսական մատանին, իւր իշխանութեան նշանն, և զայն մատերուն մէջէն ձգեց: Սակայն մատանին փոխանակ Աղբիականին երկնագոյն ալիքներուն մէջ անյայտ ըլլալու, ինկաւ նախ Պոռչիկը րարոյի ոսկեղօժ կողերը զարդարող բազմաթիւ դրուագներէն միոյն վրայ և հոն կից ցատկեց Քիմէռի մը վրայ, որուն ան-



ճոռնի կոնակը նաւուն կողէն դուրս կը ցցուէր:

Այս դէպքը աննկարագրելի յուզմունք մը յառաջ բերաւ: Երբէք նմանօրինակ բան մը չէր պատահած: Ամէնքը իրարու կը նաշէին առանց համարձակելու իրենց միտքէն անցածները մէկմէկու հաղորդելու: Ապահովապէս այս գուշակութիւնը մինչև այն ժամանակ եղածներուն մէջ, ամենէն ձախորդն էր: Տոժը ոչ թէ ծովուն հետ կը պսակուի, այլ հրէշի մը հետ, որ անտարակոյս պիտի ուտէ լափէ վէնետիկը:

Ահ ու սարսափը ծայր աստիճանի էր ժողովրդեան մէջ, Պոչիկերոյի վրայի ազնուական ուղևորներն իսկ խոռված էին. և անոնց մէջէն ոմանք բարկութեան նըշաններ կամ սպառնալեաց խօսքեր կ'ուղղէին տոժին հասցէին:

— Թէ որ չափազանց ծեր է իր բարձր պաշտամունքը կատարելու, կ'ըսէին երիտասարդագոյնները, իր հրաժարականը թող տայ:

Երբագոյնները կը լռէին կամ կը հանդարտեցընէին զայրոյթը երիտասարդաց, որոնք բարկութեան անխոհեմ խօսքեր իրենց բերնէն դուրս կու տային: Սակայն

ընդհանուր ամէնքն ալ տգոհ կ'երևէին Պրանչէսքոյ Պոսքարիի անճարակութեան վրայ:

Յանկարծ հսկայ կերպարանքով մէկը տեսնուեցաւ, որ իր նաւակը Պոչիկերոյի կը մօտեցընէր: Հասնելով հոն, իր նաւակին թիավարելու նստարանին վրայ ամբողջ հասակովը շիտակ կայնեցաւ, ու Պոչիկերոյի կողին ծակերէն դուրս ելած բազմաթիւ թիերէն միոյն կառչեցաւ, և ոտքերու ու ձեռքերու օգնութեամբ՝ սկսաւ համարձակօրէն մագլցել նաւուն կողին երկայնութեամբ:

— Էհ, Ռիքարտոն է, Ռիալզոյի կոնտրաւարն, ըսաւ ձայն մը:

— Զուարթ Ռիքարտոն, բարև, Ռիքարտոյ, կրկնեց ուրիշ մը:

— Այո՛, ես եմ, բարև տղաներ, ըսաւ յաղթանդամ մարդը, որ հասնելով Քիմեոին, անոր կոնակին վրայ նստած էր անփութօրէն:

— Ի՞նչ պիտի ընես հոս, Ռիքարտոյ, ըսաւ նոյն անձն որ արդէն անգամ մը հարցմունք ուղղած էր կոնտրաւարին:

— Հիմայ պիտի տեսնէք:

Տոժին և վէնետոյ ամբողջ ձերակու-



տին դիմաց ժողովրդեան այս երկու մարդոց մէջ եղած յանդուգն խօսակցութիւնը Պոչյիկրոյրոյի վրայ՝ շատերուն յօնքերը պոստել տուած էր արդէն: Սակայն չարագոյնն եղաւ երբ կոնտրաւարը, զոր Ռիքարտոյ կը կոչէին, առաւ դրսական մատանին, որ իրեն մօտ Քիմէոին վրայ կը կենար, և գայն նետեց ծովուն մէջ, ուր ինկաւ առանց կաթիլ մը ջուր վեր հանելու:

— Կեցցես, Ռիքարտոյ, գոչեցին ժողովրդեան երկու հազար ձայներ:

Սակայն Պոչյիկրոյրոյի ուղևորները, ծովուն հարսանեաց մէջ Ռիքարտոյին մասնակցութեան մասին ժողովրդեան ցուցած խանդավառութեան ամենևին համամիտ չէին: Անոնցմէ մին, միւսերէն աւելի անհամբեր, քաշեց սուրը և յարձակեցաւ նաւուն կամրջակին վրայ կոնտրաւարին հասնելու. այս անձը Մկրտիչ Մարգինենկոյ զօրավարն էր:

— Լի՛րբ, գոչեց:

— Ի՞նչ կայ, տէր զօրավար, ըսաւ կոնտրաւարն առանց կորսնցունելու իր անփոյթ գուարթ կերպը:

— Աղէկ գիտեմ ես գրեզ պատժել, ըսաւ Մարգինենկոյ, սուրը բարձրացունելով:

Սակայն Ֆրանչէսքոյ Ֆոսքարիի ձեռքն արգիլեց զինքը:

— Զօրավար, ըսաւ խստութեամբ տոժը, դուք կը մոռնաք թէ հոս ե՛ս միայն կը հրամայեմ: Սուրը պատեանը դրէք, կը հրամայեմ ձեզ:

Զօրավարը դժկամակութեամբ հնազանդեցաւ. և տոժը դառնալով կոնտրաւարին ըսաւ.

— Ի՞նչ կը խնդրես, կոնտրաւար:

— Պերճապայծառ Տէր, ըսաւ Ռիքարտոն, ուզեցի օգնել ձեր հարսանեաց արարողութեան:

— Մեծ յանդգնութիւն է ըրածդ, որուն համար կրնաս պատժուիլ, դու այս բանս չե՛ս գիտեր:

— Անշուշտ գիտեմ, վսեմաշուք Տէր, և եթէ չունենայի ուրիշ նպատակ մը, պիտի չյանդգնէի մինչև հոս վեր ելլելով Ձեր Պերճափայլութիւնը խոովել: Սակայն մեծ լուր մը ունիմ ձեզի հաղորդելու, որ կը շահագրգռէ ոչ միայն զձեզ, այլ և Պերճափայլ Հասարակապետութիւնը:

— Խօսէ՛, սակայն կարճ կապէ, ըսաւ տոժը:

— Ո՛հ, շատախօսութեան պէտք չունիմ միտքս բացատրելու:



Եւ Քիմեոնն կոնսակին վրայ ոտքի ելլելով.  
— Պերճապայծառ Տէր, ըսաւ, ձեր հարսանիքը Ադրիականին հետ այս տարի ամուլ պիտի չըլլայ:

Ֆրանչէսքոյ Ֆոսքարի ժողովրդական կատակարանութիւն մը համարեցաւ և իւր թաւ յօնքերը պոստեց: Սակայն նոյն հանգարտ ձայնով հարցուց:

— Ի՞նչ կ'ուզես ըսել, կոնտուլավար:

— Տոժ, ըսաւ Ռիքարտոյ, նայեցէք հոն վարը սա ջրի մամուռներուն ետին, ահա մանկիկ մը՝ զոր ծովը ձեզ կը խաւրէ:

Այսպէս խօսելու ատեն՝ կոնտուլավարը իւր գլխարկը շարժելով կը ցուցնէր նաւէն քանի մը հարիւր գրկաչափ հեռու սակառ մը ջրին երեսը դրուած, իբր ալկիոնի բոյն մը ալիքներուն վրայ. այս սակառին մէջ մանկիկ մը կարծես կը քնանար:

Կոնտուլավար Ռիքարտոյին խոշոր ձայնը լսելի եղած էր շատ հեռուներ: Անգամ մը որ ժողովրդեան ուամիկ դասակարգը հասկըցաւ թէ ի՞նչ բանի վրայ է խնդիրը, իրեն խօսակցութիւնը իսկոյն դադրեցուց, չար գուշակութիւնք անհետ եղան և այս խորհրդանշանը՝ հարաւայիններու երևակայութեամբ՝ իսկոյն իբր փոքր

Մովսէս մը համարուեցաւ, զոր Նախախնամութիւնը կը խաւրէր վէնետիկ, իւր տոժին ծովուն հետ ըրած զինակակցութեան իբր նշան: Խորագոյն սպաւորութիւն մը գործեց այս աւելորդապաշտ միտքերուն վրայ: Բոլոր նաւակներն միանգամայն շարժեցան երթալու ազատելու չնաշխարհիկ կորուստը. սակայն տոժը շարժումով մը արգիլեց զանոնք.

— Ամէնքնիդ ալ տեղերնիդ կեցէք, ըսաւ. կոնտուլավար Ռիքարտոյին կ'իյնայ առնուլ մանկիկը՝ զոր ինքն յայտնեց: Կոնտուլավար, աւելցուց տոժը դառնալով Ռիքարտոյին, գնա ա՛ռ սակառն և բեր մեզի Պուշիկոյրոյի վրայ:

Հսկայն կրկնել չտուաւ հրամանը. ցտկեց խոր ջրին մէջ, և այս արտակարգ տեսարանին ազդած զարմանքը տակաւին չցնդած, Ռիքարտոյ կոնտուլավարը հասած էր արդէն սակառին, զոր իր զիմացէն հրելով բերաւ Պուշիկոյրոյի քով:

Ծափահարութիւնք ողջունեցին Ռիքարտոն՝ երբ սակառը յանձնեց տոժին, և տակաւին կը շարունակէին՝ երբ Ֆրանչէսքոյ Ֆոսքարի նշան ըրաւ ժողովրդեան թէ կ'ուզէ խօսիլ: Հետաքրքրութիւնը կըրցաւ կէս մը լոռութիւն ընել տալ:



— Մանուկը կենդանի է, ըսաւ տոժը:

— Կեցցէ՛, կեցցէ՛, գոչեց բազմութիւնը:

— Աղջիկ մ'է, աւելցուց տոժը, և բանի մը շարաթուան կ'երևի:

— Աղբիականին աղջիկն, ըսաւ ձայն մը:

— Աղբիականին աղջիկը, կրկնեց բազմութիւնը, կեցցէ՛, կեցցէ՛:

— Corpo di Bacco! պոռաց Ռիքարտոն իր կորովի ձայնովը, Աղբիականին աղջիկը վենետիոյ որբուհին պիտի ըլլայ:

— Այո՛, այո՛, ըսաւ ելեկտրացեալ բազմութիւնը:

— Այնպէս չէ՞, վսեմաշուք Տեարք, աւելցուց Ռիքարտոն՝ այս անգամ դառնալով ձերակուտականաց կողմը:

— Այո՛. ըսին ձերակուտականները միաձայն, թերևս զգացուած այս տարօրինակ պարագայէն, կամ լաւ ևս նախանձելով Ֆրանչէսքոյ Ֆոսքարիին ժողովրդականութեան վրայ, զոր ղիպուածով մը ձեռք ձգած էր:

Ֆոսքարին այս անակնկալ յաղթանակին ուրախութենէն զզլխած, որուն շատոնց սովորութիւնը կորուսած էր, ըսաւ.

— Ժողովուրդ վենետիոյ, ինչ անուն կ'ուզէք դնել Աղբիականին աղջկանը:

— Վենէցիա՛. ըսաւ Ռիքարտոն, ինչպէս կոչուած է իր անդրանիկ քոյրը՝ Վենետիկը, կառուցուած եօթանասուն երկու կղզիներու վրայ:

— Այո՛, այո՛, Վենէցիա, պատասխանեց բազմութիւնը, գեղեցիկն Վենէցիա:

— Այնպէս ըլլայ, ըսաւ Ֆրանչէսքոյ Ֆոսքարի, և կը խոստանամ ձեզ հսկել այս վենէցիայի վրայ նոյն այն սիրով և խնամքով, զորս ցուցի առաջնոյն, ոչ միայն իմ դքսութեանս տասնըութ տարիներուն մէջ, այլ և Պերճափայլ Հասարակապետութեան ծառայութեանը ամբողջովին նուիրուած երկար կեանքիս մէջ:

Խառնիճադանճը խելայեղ դարձեալ երկարօրէն ծափահարեց. վերջապէս Պոլիկոյրոյ ցիցերուն մէջէն դէպի Վենետիկ ճամբայ ելաւ. և եկաւ կեցաւ դարձեալ մեծափառութեամբ Բիաձէդդայի ղիմաց, հոն հանելու Ֆոսքարին և Վենետիոյ ամբողջ ազնուականութիւնը, որ կեղծ մեծարանօք առաջնորդեց թափօրով մինչև Հսկայից սանդուխը այս տոժը՝ որ ամէն օր դառնութեամբ կը լեցունէր, և զոր տասնըութ տարի վերջը վար պիտի առնէր:



Այս միջոցին կոնստուկտներէն և ժողովրդրդեան ստորին կարգին խեղճ նաւակներէն մեծագոյն մասը ուժով ուժով կը թիաւարէին մեծ ջրանցքէն (Canal grande) վեր, աճապարելով դէպի Ռիալդոյ: Տօնախմբութիւնը չէր թուեր վերջացած ամենուն համար. վասն զի բոլոր այդ խայտաբղէտ բազմութիւնն, լեցուած կոնստուկտներուն և նաւակներուն մէջ ընկղմելու աստիճան, ուրախութեան աղաղակներ և զուարթ բացազանչութիւններ կ'ընէր, որոնց մէջ անդադար այս բառերը կը լսուէին.

— Գասդելոցիներ, Նիքոլօտներ, Ըմբշամարտութիւն քաջ կոնստուկտներու և Քիոճճիայի կտրիճ ձկնորսներու: Ըմբշամարտութիւն, Ըմբշամարտութիւն:

Բ.

## ՆԻՔՈԼՈՏՆԵՐ ԵՒ ԳԱՍԴԵԼԼՕՑԻՆԵՐ

Մեծ-Ջրանցքին և ձիուտէքքային մէջ այն ժամանակ հրապարակ մը կար միջակ մեծութեամբ, զոր կարելի է տեսնել այսօր իսկ գրեթէ մի և նոյն վիճակի մէջ ինչ որ էր հնգետասաներորդ դարուն կէսերը, ուր ամէն տարի նոյն ժամանակ հասարակաց արտասովոր զուարճութիւններ կը կատարուէին

Այս հրապարակին մէջէն կ'անցնէր այն ջրանցքներէն մին, որոնք տակաւին վեներտոյ իբր շնչերակներն են արիւնը ծայրերէն մեծ քաղաքին սիրտը տանելու: Այս ջրանցքները, ստոյգն ըսելով, հազորդակցութեան միակ ճամբաներն են վեներտոյ. փոքրիկ նեղ անցքերն, որոնց փողոցի անուն կը տրուի, չէ կարելի հաշուել: Դարձեալ աւելցունենք թէ այն դարուն այս նեղ փողոցները գրեթէ անգործածելի էին:

Վերի ըսած հրապարակը կը կոչուէր



հրապարակ Նիքոլոտներուն և Գասգել-  
լոցիներուն ի պատիւ զուարճութեանց և  
ըմբշամարտութեանց, որոնք ամէն տարի  
նոյն օրն երեկոյեան դէմ տեղի կ'ունենա-  
յին երբ տոժը իր պսակադրութիւնը կը  
նորոգէր Ազրիականին հետ:

Սակայն ո՞վ էին Նիքոլոտներն և Գաս-  
գելլոցիները:

Ասոնք Ռիալլոյի կոնտուլավարներէն և  
Քիոճճիայի ձկնորսներէն ընտրեալ կարիճ ե-  
րիտասարդներն էին. նաւահանգստին քանի  
մը բեռնակիրներ ալ կ'ընդունուէին մար-  
տընչելու, սակայն շատ քիչ թուով:

Ըմբշամարտութիւնը առանց վանդակի  
կամուրջի մը վրայ կ'ըլլար, ինչպէս էին  
այն դարուն վենետիոյ բոլոր կամուրջնե-  
րը: Սոյս կամուրջը կը գտնուէր քաղաքը  
գրեթէ երկու հաւասար մասի բաժնոյ  
ջրանցքի մը վրայ, քաղքին կեդրոնը: Կա-  
մուրջին վրայ եզերքին մօտ երկու հա-  
կազիր անկիւններու ուղղութեամբ քարին  
թանձրութեան մէջ մարդու ոտքի երկու  
լայն ձևեր փորուած էին տրամանկիւնա-  
պէս: Քիչ վերջը պիտի տեսնենք թէ ինչ  
բանի կը ծառայէին այս ոտքի նշանները,  
որոնք մինչև ցայսօր կը կենան, և այս

տողերը գրողը տեսած է զանոնք Նիքո-  
լոտներուն և Գասգելլոցիներուն հին հրա-  
պարակին վրայ:

Երկու ախոյեան խումբերը, իւրաքան-  
չիւրը տասուերկու երիտասարդներէն կազ-  
մուած, շարուած էին կամուրջին երկու  
կողմը, քիչ հեռաւորութեամբ: Ամէն մէկ  
խումբը իրեն յատուկ համազգեստն ունէր  
աչքառու գոյներով. կանանչ՝ Նիքոլոտ-  
ներուն, կարմիրը՝ Գասգելլոցիներուն: Մէն  
մի խմբի գլուխը կը գտնուէին ըմբշամար-  
տութեան երկու դատաւորներ:

Բազմութիւնը արագ արագ հրապարա-  
կին երկու պարապ մնացած մասերը լե-  
ցուեցաւ, մէկ կողմը Նիքոլոտներուն և  
միւս կողմը Գասգելլոցիներուն, ամէն ոք  
տեղ մը գրաւած էր իւր ընտրութեան  
կամ լաւ ևս իւր համակրանաց համե-  
մատ. և իւր նախընտրած ըմբիշներուն  
գոյնով դրօշ պարզած էր: Ինչպէս ներ-  
կայիս նմանը կը տեսնուի Օքսֆորդի և  
Գէմպրիչի (boat-race) նաւարշաւներու  
ատեն: Մօտակայ տուններուն պատուհան-  
ները հանդիսատեսներով լեցուած էին, ա-  
մէն կողմ մարդու գլուխ կը տեսնուէր,  
նոյն իսկ տանիքներու և պատշգամներու  
վրայ:



Նոյն պահուն ըմբշամարտութեան դատաւորներէն մին բարձրացուց ձեռքը և նշան ըրաւ թէ կ'ուզէ խօսիլ: Քիչ շատ լոռութիւն մը տիրեց, այսինքն զուարթ պոռաւներուն յաջորդեց խուլ վրժըլտոց մը, նման մեծատարած փեթակէ մը ելած բզզանքի: Գատաւորը խօսեցաւ այսպէս.

— Տղաք, ըսաւ, պիտի կոռւիք, բարեկիրթ և անկեղծ եղէք: Ըմբիշներու առաջին երկու անունները պիտի քաջուին ըստ բաղդի: Այս երկուքէն մին, Նիքոլոտ կամ Գասդելլօցի, որ յաղթող պիտի հանդիսանայ, պարտի մնալ կամուրջին վրայ սպասելով հակառակ կողման երկրորդի մը յարձակման, յետոյ երրորդի մը, մինջև որ ինքն ալ յաղթուի: Չեր մէջէն, տղաք, վերջնական յաղթողն պիտի ըլլայ անիկա որ կամուրջին տէր մնացած է, հակառակ կողման բոլորին իյնալովը: Օ՛ն ուրեմն Գասդելլօցիք, ջանացէք անցեալ տարուան ձեր պարտութեան վրէժը լուծել. կտրիչ Նիքոլոտներ, պահեցէք ձեր վաստըկած առաւելութիւնը:

Այս համառօտ ճառախօսութիւնը, ստոյգն ըսելով, շատ հեռու ճարտարախօսութենէ, ողջունուեցաւ եթէ ոչ ծաղրածութեամբ գէթ անհամբերութեան ազմուկներով:

— Ըմբշամարտութիւն, ըմբշամարտութիւն, կը զոչէին ամէն կողմէն:

— Քաջութիւն Նիքոլոտներ:

— Քաջութիւն Գասդելլօցիներ:

Երկու տարբեր գլխարկներուն մէջ դրին Նիքոլոտներուն և Գասդելլօցիներուն անունները, յետոյ իւրաքանչիւր գլխարկէ անուն մը քաշեցին:

— Պետրոս՝ Նիքոլոտներուն կողմէն, Չաքարիա՝ Գասդելլօցիներուն, ըսաւ ըմբշամարտութեան դատաւորը:

Երկու երիտասարդներ դուրս ելան իրենց յատուկ խումբերէն և չորս աստիճան վեր ելնելով կամուրջին եզերքը հասան: Հոն իւրաքանչիւր որ իր ձախ ոտքը դրաւ քանդակներէն մ'իոյն վրայ զորս վերը բացատրեցինք, իր աջ ոտքը այնպէս երկնցուց որ կամուրջին մէջ տեղը հանդիպի իր հակառակորդին աջ ոտին. այս դիրքով երկու ըմբիշները տրամանկիւնաբար կը կտրէին կամուրջը:

— Օ՛ն, ուրեմն, ըսաւ ըմբշամարտութեան դատաւորը:

Երկու հակառակորդները թևերնին երկընցուցին որպէս զի զիրար գրկեն: Ըմբշամարտութեան յաղթանակը կը կայանար



իր հակառակորդը ջրանցքին մէջ նետել առանց իր ոտքին տեղը կորսնցունելու: Երբեմն կը հանդիպէր որ երկու կուռուչները միասին կ'իյնային ջուրը, այս դիպուածը խիստ կը զուարճացնէր բարեմիտ վենետկեցիները: Նոյն այս բաղդին արժանացան երկու առաջին ներկայացուցիչները:

Ուրիշ երկու անուններ բաշուեցան ըստ բաղդի և ըմբշամարտութիւնը վերստին սկսաւ: Գրեթէ կէս ժամ շարունակեցաւ մերթ միոյն և մերթ միւս կողման յաջողութեամբ, սակայն առանց նշանաւոր պատահարներու: Նիքոլոտները և Գասդելլօցիները գրեթէ հաւասար զօրութեամբ երեցան, և անոնցմէ ոչ մին յաջողեցաւ բազմութեան համակրանքը շահիլ, ինչպէս սովորաբար այս բանս կը հանդիպի այս կարգի ըմբշական խաղին մէջ (sport-athlétique), ինչպէս պիտի ըսէինք ներկայիս:

Գասդելլօցիներէն չորս ըմբիշք միայն կը մնային ընդդէմ վեց Նիքոլոտներուն. երբ դատաւորը կանչեց.

— Յակովբ Գասդելլօցիներուն կողմէն: Գեղեցիկ երիտասարդ մը, քսանը հինգ

տարու մօտ, Գասդելլօցիներու աչքառու գունով հագուած, դուրս եկաւ կեցած տեղէն և կամուրջին վրայ ելաւ, ուր իր գեղեցիկ կերպարանքը ժողովրդեան մէջ հաճութեան շէջիւն մը առաջ բերաւ: Ռիալդոյի կոնտրապար մ'էր, շատ նշանաւոր իւր ուժովը: Ուստի բոլոր իւր կուսակիցները սկսան քաջալերական խօսքեր ուղեւ իրեն.

— Քաջ եղիր, Յակովբ, քեզ տեսնենք:

Նոյն միջոցին ըմբշամարտութեան դատաւորը գլխարկին մէջէն քաղած էր անունը:

— Լէոնարտոյ Նիքոլոտներուն կողմէն. ըսաւ:

Լայն ուսերով մարդ մը, քիչ մը վայրենի կերպարանքով, զոր Նիքոլոտներուն համազգեստին անուշ կանանչ գոյնը չէր մեղմացուցած, կամուրջին վրայ երեցաւ:

— Այս մարդը Լէոնարտոն չէ, պոռացին քսան ձայներ:

— Ո՛չ, ո՛չ, պատասխանեցին ուրիշ հարիւր ձայներ:

— Յիանապետ Բարթողիմէոսն է, ըսին ուրիշներ, որոնք կը պնդէին թէ Նիքոլոտներուն համազգեստին տակ կը ձանչ-



նան այն զինուորն որ Ս. Մարկոսի հրապարակին մէջ սարսափ մը ազդելով լռեցուցած էր շատախօսներն, որոնք առանց շրջահայեցութեան կը խօսէին վենետիկոյ ազնուականութեան դէմ և յատկապէս նըշանաւոր Մկրտիչ Մարդինենկոյ զօրավարին վրայ:

Բազմութեան մէջէն սպառնալեաց աղաղակներ սկսան բարձրանալ յիսնապետին դէմ: Իսկ ինքն արհամարհանաց ակնարկ մը միայն կը դարձունէր իր բռնութիւնը: Ըմբշամարտութեան դատաւորն իր անձին պարտք համարեցաւ միջամտել. յետ լռութիւն պահանջելու, զոր դժուարաւ կրցաւ ձեռք բերել, հարցուց անոր՝ որ այս թշնամական աղաղակներուն շարժառիթն էր:

— Գու Լէոնարտոն չե՞ս:

— Ոչ, վսեմաշուք տէր, Լէոնարտոն իմ եղբայրս է, սակայն ինքն հիւանդ է, և եկայ ես անոր կարգը պահանջելու: Ինչպէս այս բազմութիւնը կ'ըսէ, ես յիսնապետ Բարթողիմէոսն եմ:

Ըմբիշներուն երկու դատաւորներն իրարու հետ խորհրդակցեցան, յետ բաւական տաք վիճարանութեան, որուն բազմութիւնն ալ հետուէն մասնակից կ'ըլլար, յիսնա-

պետին խնդիրը սիրով ընդունելի եղաւ, և Բարթողիմէոս յիսնապետը փոխանակ իր եղբորը՝ և անոր կարգին կուուելու հաւանութիւնը ստացաւ: Դատաւորաց վճիռը հետաքրքիրներուն կողմէն միաբերան հաճութիւն չունեցաւ. սուրբու ձայները խեղճեցին ծափահարութիւնքը: Բարթողիմէոս յիսնապետն առանց այս ցոյցերուն կարևորութիւն տալու, աշխուժութեամբ կամուրջին վրայ իւր հակառակորդին մօտեցաւ:

Թէպէտ Յակովբ համակրելի էր, սակայն ահաւոր մրցակից մը ունէր իր դէմը: Բազմութիւնը լաւ կ'ըմբռնէր թէ այս երկու մարդիկ արժանի էին իրարու հետ չափուելու: Ուստի երկուքին վրայ ալ կը հիանար, և յանկարծ արդար ըլլալու ըզգացումն արթնցաւ ժողովրդեան սրտին մէջ, որուն օրէնքն է տպաւորութեանց փոփոխութիւնքն, և չուզեց իւր ազատակներով այս ընտրեալներէն միոյն վրայ ազդեցութիւն ընել: Իսկոյն լռեց և կուուին զանազան փոփոխութիւններու ատեն կրօնական լռութիւն մը պահեց:

Ծիտակը այս ըմբշամարտութիւնը ուշադրութիւն գրաւելու արժանի էր, վասն



զի թէ՛ երկար տևեց և թէ խիստ շահա-  
 գրըզիւ եղաւ: Եթէ յիսնապետն Բարթո-  
 Ղիմէոս աւելի կորովի կ'երևար, կոնտուա-  
 վարն Յակովբ կը հակակշռէր այս նուազու-  
 թեան իւր մեծագոյն ճկունութեամբ և ան-  
 բազդատելի առածգական շարժմունքնե-  
 րով: Երկու մարդիկ իրարու կը փաթ-  
 թուէին, իրարու վրայ կը յարձըկէին և  
 զիրար կը տրորէին առանց ոչ մին և ոչ  
 միւսը իր ոտքը կոտանէն շեղելու: Գլխա-  
 ւոր վտանգն էր յանկարծօրէն սաստիկու-  
 թեամբ իր հակառակորդը հրելն առանց  
 զիմացիներն գրկախառնումէն ու բռնուե-  
 լէն ազատելու. վասն զի այն ատեն երկու  
 ըմբիշները միանգամայն կ'իյնային ջուրը՝  
 բազմութեան հայհուհներուն մէջ: Այս  
 դէպքը հանդիպած էր առաջին ըմբշա-  
 մարտութեան ատեն: Սակայն թէ՛ յիսնա-  
 պետն և թէ Յակովբ՝ երկուքն ալ կարի  
 մտացի էին զգուշանալու այսպիսի անյա-  
 ջողութենէ մը: Երկուքն ալ գեղեցիկ և  
 կիրթ ըմբիշներ, և հակառակ իւրաքան-  
 չիւրին փափաքին իր հակառակորդը գա-  
 հավիժելու, ոչ մին և ոչ միւսը չէր յան-  
 դրգներ յանկարծական շարժմունք մը ը-  
 նել, որ կարող էր զիրենք իրարու փաթ-  
 թուած ջրանցքին մէջ նետել:

Թէպէտ իրենց մերկ բազուկներուն վրայ  
 կը տեսնուէին ջիգերուն ցցուիլը նման կո-  
 տրելու աստիճան ձկտեալ աղեղի մը լա-  
 րին, և թէպէտ իրենց աչքերէն արիւն կը  
 ցայտէր, և ճակատները ըրախնքով ծած-  
 կուած էին, երկու ըմբիշները ուժ մը տա-  
 լու երևոյթը չունէին: Երեք անգամ կա-  
 մակար իրարմէ բաժնուեցան, շունչ առ-  
 նելու, և երեք անգամ նորէն իրարու  
 փաթթուեցան առանց արդիւնքի մը: Սա-  
 կայն չորրորդ բախումին մինչդեռ Յակորը  
 նոյն իսկ իր հակառակորդին չէր դպած,  
 Բարթողիմէոս յիսնապետը՝ բռնելով կոն-  
 տուավարին երկու դաստակներն և զինքն  
 աշխուժութեամբ իւր ուսերէն վեր բարձ-  
 րացընելով նետեց զլխովայր ջրանցքին  
 մէջ:

Ճարտար էր հարուածը, զոր բազմու-  
 թիւնն ուժգին ծափահարեց առանց ա-  
 մենկին միտքը բերելու թշնամական ըզ-  
 գացմունքները զոր պահ մը առաջ ցոյց  
 տուած էր Բարթողիմէոսին հանդէպ: Եր-  
 կրորդ, երրորդ Գասդելլօցիներ յաջորդե-  
 ցին Յակորին առանց ո՛ր և է յաջողու-  
 թեան. գէթ քանի մը վայրկեան յիսնա-  
 պետը յաղթող համարուեցաւ:



Ըմբռամարտութեան այս վայրկենին Նիբոլոտներուն կողմը տակաւին չորս ըմբռիններ մնացած էին, որոնց մէջն էր Բարթողիմէոս յիսնապետը: Ընդհակառակն Գասգեւլօցիներուն նախկին համբաւը բարձրը բռնող միայն մէկ անձ մնացեր էր: Ասոր համար կարմիր ժապաւէն կրողները բոլորովին լքեալ էին, իսկ կանանչ ժապաւէնով Նիբոլոտները մեծագոչ կը ծափահարուէին: Սակայն այս ցոյցերը փոփոխեցան երբ Գասգեւլօցիներուն վերջին ըմբիշը քարէ սանդուխին չորս աստիճանները ելլելով երեւցաւ կամուրջին վրայ: Վիթխարի ոմն տեսնուեցաւ, վենետկոյ ռամիկ դասակարգին խիստ ծանօթ, որուն շփացած տղան էր: Նոյն այն օրը, հազիւ երկու ժամ առաջ, լճակին վրայ տօժին Ազրիականին հետ ըրած պսակազրուութեան հանգէսին զիւցազն: Նոյն այն ուրուն անփոյթ համարձակութեամբ Պոչիկոյրոյի պսակին վրայ ցատկելն տեսանք, կոնտուլավարն Ռիքարտոյ:

Հազիւ թէ հսկայն տեսնուեցաւ, բազմութիւնը գուարթ բացազանչութիւններով ողջունեց զինքը:

— Է՛, Ռիքարտոն, Ռիքարտոն.

— Բարե՛ Ռիքարտոյ:

— Ահաւասիկ վայրկեանը ցուցնելու թէ ունիս նաև պնդակազմ դաստակ մը, գաւախ:

— Նետէ՛ յիսնապետը գլխիդ վրայէն:

— Լոզանք մը ընել տուր անոր:

— Ծերանաւորի մը կը նմանիս Ռիքարտոյ, այս կարմիր զգեստներովդ:

Իսկ ինքն միշտ նոյն այն անհոգ և գուարթ կերպարանքն ունէր, իւր զօրաւոր կարթերուն վրայ ուժով մը զետեղուած, երկու բռունցքը ազդերուն վրայ, իր գոռու մազերը կէս մը գոցած իւր ըմբռական վիզը, բերանը լայն մը բացած, ցուցնելով երեսուներկու ակոսները, որոնք կարող էին պողպատէ թիթեղ մը փշրել, խեղկատակ հնչիւն ծիծաղով մը կը խնտար որուն շարժառիթը ինքն էր, կամ ինքնահաճութեամբ իւր բրդեայ կարմիր վարապանակը կը դիտէր:

Ըմբռամարտութեան դատաւորն աւանդական նշանը պիտի տար մենամարտութիւնը սկսելու, երբ Ռիքարտոն իւր ձեռքը գլխուն տանելով իրր գլխարկը բանալու, որ երբէք տեսնուած չէր իւր ապստամբ մազերուն վրայ, դարձաւ դէպի դատաւորն և ըսաւ.



— Կերեցէք, վսեմաշուք Տէր, կարծեմ դուք բան մը կը մոռնաք:

— Ինչպէս, պոռաց մարդուկը, Ռիքարտոյին տափատէն աւելի սաստիկ կարմրենալով, տխմար, կը համարձակիս ըսելու թէ ես կը մոռնամ....

— Կը համարձակիմ ըսելու, շարունակեց Ռիքարտոն առանց կորսնցունելու իր անփոյթ և զուարթ կերպարանքը, կը համարձակիմ ըսելու թէ դուք կը մոռնաք այս բանս: Բարթողիմէոս յիսնապետը արդէն երեք անգամ մենամարտեցաւ, մանաւանդ իմ Յակովբ բարեկամիս հետ, որ զինքը շատ յոգնեցուց, այնպէս չէ՞, ըսէք: Ես, ընդհակառակն, թարմ և կայտառ եմ, կարծեմ թէ արդարութիւն է հաւասարցնել բաղդին յաջողութիւնը, ձգելով յիսնապետ Բարթողիմէոսը որ ըլիչ մը շունչ առնէ, որուն մեծապէս պէտք ունի:

— Ես՞, ամենևին չէ՞, պատասխանեց յիսնապետն գոռոզութեամբ, դու ինքզինքդ կը խաբես, կոնտուլավար:

— Կարելի է, սակայն կարծեմ թէ ինչ որ արդարութիւնը կը պահանջէ զայն կը խօսիմ:

— Այո՛, այո՛, պոռացին միաբերան բոլոր Նիքոլոտները, այս անգամ Ռիքարտոյին կողմն բռնելով, արդար է ըսածը, կոնտուլավարն իրաւունք ունի:

Պատաւորը ստիպուեցաւ տեղի տալ բազմութեան պահանջքին և շնորհել յիսնապետին քանի մը վայրկեան ինքզինքը զօրացունելու, դնելով լայնօրէն շրթունքները Մոնթէֆիասքոյի կնիւնապատ շիշի մը բերնին, զոր իրեն կը ներկայացընէին իւր վկաները:

Բարթողիմէոս երբ շիշին մէջ եղած գինին պարպեց, ոտքի ելաւ և ըսաւ.

— Պատրաստ եմ.

— Օ՛ն ուրեմն, ըսաւ դատաւորը:

Հազիւ թէ այս բառերն ըսուեցան՝ յիսնապետն Բարթողիմէոս աննման թափով մը խոյացաւ կոնտուլավարին վրայ, անշուշտ կը յուսար այս անակնկալ շարժմամբ զինքը յանկարծակիի բերել: Սակայն Ռիքարտոն իւր միամիտ երևութիւն ներքև կը ծածկէր մի մեծ սրամտութիւն և բազում խոհեմութիւն: Որովհետև խիստ դպրոցի մը մէջ կըթուած էր, դպրոց մը որ կանխահաս փորձառու կ'ընէ: Ինչ որ կը յիշէր փոքր հասակէն,



ոչ հայր կը ճաշնար և ոչ մայր: Մինչև այն տարիքն որ կարող եղաւ թի գործածել, իւր պառկելու տեղն էր եկեղեցիներուն կամ պալատներուն արտաքին գաւիթները, և առաւօտեան արթնցունողն էր ծառայից ոտքն որ կոշտաբար կը մշտէր զինքը իր ապաստանարանէն հեռացունելու: Այսպէս պգտիկ հասակէն սովորած էր պատրաստ կենալու ո՛ր և է պատահարի դէմ:

Արդ կամուրջին աստիճաններէն վեր ելլելու ատեն երբ տեսաւ Բարթողիմէոսին իր վրայ նետած չարամիտ ժպիտը, հասկցաւ թէ աւելի թշնամուոյ մը քան հակառակորդի հետ է գործը: Ուստի իւր զուարթութեամբ և անայլալակ հանդարտութեամբ պատասխանելով հանդերձ հրապարակին չորս կողմէն իրեն ուղղուած կատակարանութեանց, երկվայրկեան մը իսկ աչքէ չէր կորսնցուցած Նիքոլոսներուն ըմբիշն, և պատրաստ էր արդէն զինքը ընդունելու երբ Բարթողիմէոս կայծակի արագութեամբ ինկաւ իր վրայ: Ռիքարտոյ հանդարտօրէն ըսաւ.

— Է՛, տղաս, ինչ պատահեցաւ: Արդեօք կատղեցա՛ր յանկարծ: Կ'իմացունեմ քեզ

թէ երբէք միտք չունիմ զիս քեզի խածնել տալու:

Յիսնապետն Բարթողիմէոս խուլ մըմաւուով մը միայն պատասխանեց և իւր ջիղապինդ բազուկներուն մէջ այնպէս սխմեց ըմբիշին իրանը իբր թէ ուզենար զինքը խեղդել: Սակայն յիմար ձեռնարկութիւն մ'էր ուսկից շուտով հասկըցաւ թէ պէտք էր ետ կենալ, վասն զի ուրիշ արդիւնք մը չունեցաւ բայց միայն կոնտրապարին մեծաշառաչ ծիծաղը: Այսու հանդերձ այս խնտալը պատճառ եղաւ որ Բարթողիմէոսը յարատեւէ այս դիրքին մէջ: Իւր ամբողջ ուժերը ժողվեց, կրկին կատաղութեամբ ահաւոր կերպով շարժեց կոնտրապարը: Ռիքարտոյ փոխանակ այս գըրկախառնումէն իւր ազատումն փորձելու, որ շատ դիւրին էր իրեն համար, պարզապէս իւր ձախ ոտքը սահեցուց դէպի կամուրջին եզերքը, որպէս զի աւելի հաստատուն խարխի մը ունենայ վրան յենլու: Յետոյ իւր բազուկները օդին մէջ բարձրացունելով, հրապարակին ամէն հեռաւոր անկիւններէն լսելի իւր ցուլի ձայնով գոչեց:

— Փորձէ հիմակ, տղաս, և թէ որ



կարողանաս, ոչ թէ զիս ջրանցքին մէջ նետել, զոր չէ կարող քու մօրդ վաւակը, այլ մի միայն զիս ոտնչափ մը սահեցունել տեղէս, ես զիս յաղթուած կը համարիմ:

— Շատ աղէկ ըսիր, Ռիքարտոյ, բազմութեան մէջէն ձայն մը պոռաց:

— Օ՛ն ուրեմն, տղաս, շարունակեց կոնտրափարն մի և նոյն խեղկատակ զբւարթութեամբ, ուժով հրէ՛. գիտցիր թէ այս ոտքերը գամուած են կամուրջին վրայ:

Յիսնապետն Բարթողիմէոս փոխանակ պատասխանելու, վերջին և գերագոյն ճիգ մը ըրաւ, և կոնտրափարին հետ ջրանցք իյնալն աչք առնելով, գէթ իրեն հետ քաշկոտել հակառակորդը իւր անյաջողութեան մէջ, այնպիսի ցնցում մը տուաւ կոնտրափարին որ կարող էր պատ մը տապալել:

Ռիքարտոյին զլուխը դողդղաց, իւր ամբողջ մարմինը փոթորկալից հովէն երեւրացող կաղնիի մը նման շարժելէն յետոյ երկարատե տատանման մը ենթարկուեցաւ: Սակայն շէնքին խարխիսը՝ ոտքերը կարծես, ինչպէս կորտոլափարն ըսած էր, քարին մէջ գամուած էին, երբէք չի շար-

ժեցան: Բազմութիւնը խելայեղ, ուժգին ծափահարեց: Հագարաւոր աղաղակներ օղը կը թնդացընէին և կը հասնէին մինչև կոնտրափարը:

— Կեցցէ՛ս, Ռիքարտոյ.

— Չի սահեցաւ.

— Կը տեննաս մարդը.

— Սիրտ ըրէ, Ռիքարտոյ.

— Չուրը նետէ յիսնապետը:

— Ոչ տակաւին, ըսաւ կոնտրափարն իւր կորովի ձայնովն որ սովորած էր աւետաց շառաչիւններուն տիրել:

Թեւերը խաչածև ծալլեց, և յիսնապետին անզօր կատաղութեան դէմ մի միայն անզօր ռժ մը գործածեց:

Յիսնապետն անգամ մ'ալ ուզեց կրկնել իւր փորձը տապալելու Գասթէլլոցիներուն ըմբիշը՝ սակայն, ասիկա պատրանք մ'էր: Յանկարծ սահեցաւ մինչև կամուրջին եզերքը ու ծունկերուն վրայ ինկաւ, և արագօրէն իւր զլուխը անցունելով կոնտրափարին սրունքներէն ձեւացած կամարին մէջ, կ'ուզէր զինքը տապալել, երբ Ռիքարտոյ նոյն հաւասար արագութեամբ ծռելով իւր կաշնբուռն ձեռքերով բռնեց յիսնապետը մէջքէն, և ամբողջ իր մար-



մնոյն բարձրութեամբ շտկուելով, զինքը իւր գլխէն վեր բարձրացուց իբր հինգ տարեկան տղայ մը:

Արդիւնքը հրաշալի եղաւ: Խեղճ յիսնաւեան, որուն բոլոր անդամներն ընդամացած էին, քիչ մնաց որ մարէր այս ահաւոր պըրկման տակ: Կը տեսնէր իւր բոլորտիքը հազարաւոր գլուխներու շուրջ գալը, որոնք զինքը զիտելով հեզնութեամբ կը ծիծաղէին: Այս տեսարանին զիմաց իւր ամբողջ քաջութիւնը կորսնցուց, և աչքերը գոցելով յաղթողին քմահաճոյքին ձգեց ինքզինքը:

Կոնտուլավարը կամուրջին շուրջը պտտացունելով կը ցուցնէր բազմութեան իր հակառակորդը, որուն մարմինը տակաւին կը շարժէր ջղածգոթէն, և իր գլխէն ոտնաչափ մը վեր բարձրացունելով հարցուց բազմութեան, որ կատաղաբար կը ծափահարէր.

— Պէ՞տք է ջրանցքին մէջ նետել զինքը.

— Այո՛, այո՛, կ'ըսէին ոմանք.

— Ո՛չ, ո՛չ, կը պոռային ուրիշները:

Այս հակառակ կարծեաց մէջ Ռիքարտոյ կը տատամսէր: Սակայն նոյն պա-

հուն զգաց որ զինուորին անգործ մարմինը իր վրայ կ'իյնար, հասկցաւ թէ թըշուառ մարդը մարած է, և գութը շարժեցաւ: Միւս կողմանէ ըմբշամարտութեան դատաւորները վերջ տուին ամէն հակաճառութեանց: Անիկա որ քանի մը անգամ խօսած էր, ոտքի ելաւ ու ըսաւ:

— Գասթէլլօցիները յաղթող են, և իրենց ըմբիշը, Ռիալդոյի կոնտուլավարը Ռիքարտոն, իրաւունք ունի չորս ոսկի ձէզին ստանալու, ըմբշամարտութեան պարգևը:

Վեհանձն կոնտուլավարն իւր յաղթութեամբ զեղծանելով անգութ չի գտնուեցաւ, դրաւ յիսնապետը միշտ մարած դատաւորաց ոտքին զիմաց, որոնք նոյն վայրկենին վճարեցին իրեն՝ խոստացած պարգևը:

Երբ Ռիքարտոյ զգաց չորս ոսկի ձէզիններուն իր գրպանին մէջ զուարթօրէն հնչելը, բարի խորհուրդ մը յղացաւ: Մերժեց արիարար իւր հին և նոր բարեկամներուն յորդորները, որոնք կ'ստիպէին զինքը Ռիալդոյի վրայ Ռսկի Այս կինետան մէջ արժանապէս վերջացունել այն օրը՝ Գոնելիանոյի կամ Մոնդէֆիլասքոյի քանի մը տիկ զինի պարսկելով:



— Աչ, հիմայ չէ, պատասխանեց Ռիբարտոյ: Տեղ մը ձկնորսի աղքատ ընտանիք մը կայ, որուն համար այս չորս ոսկիները մեծ նպաստ մը պիտի ըլլան, և պէտք է անպատճառ անոնց յանձնեմ այս ոսկիները: Այս բանս կատարելէն յետոյ բոլորովին ձեզի եմ:

Արովհետեւ հարկ էր անցնիլ Ռիալդոյէն որպէս զի երթայ գտնէ իւր կոնտոլը սովորական տեղը չուանով կապուած, իւր բարեկամները առ երեսս հաւանեցան, յուսալով քիչ վերջը նորէն զինքը մօտ ունենալ, սակայն անոնց բոլոր ջանքերը անօգուտ եղան: Հասնելով Ռիալդոյ կամուրջը, կոնտոլավարն աշխուժիւ ցատկեց իր նաւակին մէջ, քակեց անոր չուանը և ջրանցքին մէջ բուռն թիավարութեամբ մը առաջ քշեց զայն, մեծագոյն տխրութեան մէջ ձգելով բոլոր Գասթելլոցիներն որոնք կը դիտէին անոր հեռանալը:

Ռիբարտոյ առանց Մեծ-Ջրանցքին երկայն դարձուածներն ընելու, կողմնակի ջրանցքներէն Ս. Մարկոսի հրապարակն ուղղուեցաւ, և քիչ ատենէն անկէ ալ առաջ անցաւ: Սակայն Բիաձէզզայի դիմացէն վերադառնալու ատենը միտքը փո-

խեց, փոխանակ Օրֆանոյ ջրանցքին մէջ մտնելով ըճակին վրայ երթալու, դարձուց իր կոնտոլը եկաւ կապեց Սքիավոնի քարափին այն անկիւնն՝ որուն ջրանցքը դրսական պալատը բանտերուն հետ միացընող ահաւոր Հառաչանաց կամուրջին անուամբ կոչուած է: Երբ նաւակէն դուրս ելաւ, Ռիբարտոյ քանի մը վայրկեան կեցաւ երկրորդական պզտի դրան մը դիմաց որ կը բացուէր Սքիավոնի քարափին վրայ: Այս դռնէն ծանօթներ և ծառաներ կը մտնէին դրսական պալատը:

— Ո՛չ, ըսաւ ինքնիշխան, յանկարծ գլուխը վեր ցնցելով, Գասթելլոցիներուն ըմբիշը պէտք չէ որ այս դռնէն մտնէ դրսական պալատը, որուն ներկայիս Ազրիականին աղջիկը իր կեանքը կը պարտի:

Այս խորհրդածութիւն ընելէն յետոյ կոնտոլավարն Ռիբարտոյ դարձաւ արագօրէն Բիաձէզզայն և ներկայացաւ պալատին մայր դրան, զոր երկու հրացանակիրը կը պահպանէին:

— Արգիւեալ է անցնիլն, ըսաւ պահպաններէն մին:

— Ես Ռիբարտոն եմ, Ռիալդոյի կոնտոլավարն, ըսաւ վստահաբար մեր մար-



ղը. իբր թէ ըսած ըլլար. Ես Մալիբիէ-  
րոն եմ, ծերակուտականն, հասարակապե-  
տութեան երկոտասան առաքեալներուն սե-  
րունդը:

— Ի՞նչ կուզես:

— Խօսիլ Փրանչէսքոյ Պոսքարին հետ:

— Հեռու կեցի՛ր. ըսաւ պահապանն  
զէնքը անոր վրայ շտկելով: Կը կարծես,  
թէ նաւահանգստի պարզ կոնտուլար մը  
կարենայ մուտք գտնել տոժին մօտ:

— Արդէն անոր հետ խօսած եմ դեռ  
երկու ժամ առաջ, նոյնը կուզեմ ընել, մի՛  
բարկանար:

— Չեմ հաւտար:


— Հիմայ պիտի տեսնէք:

Այս վայրկեանին կոնտուլարն ար-  
քունական պատուոյ գաւթին խորը՝ տեսաւ  
Փրանչէսքոյ Պոսքարին Հսկայից սանդու-  
խին վրայ. ուակից դար մը առաջ իր նա-  
խորդներէն միոյն, Մարինոյ Փալիերոյի  
զուլիսը գլտորած էր: Այսքան հեռաւո-  
րութենէն Ռիքարտոյ չի քաշուեցաւ խօ-  
սիլ տոժին հետ:

— Վեհափառ Տէ՛ր. ըսաւ նա, մեզի  
ծանօթ այն ձայնովը:

Պոսքարին զուլիսը բարձրացուց և ձանչ-

Պոսքարի անտառի մէջ իր անտառի տանիքը





նալով Ռիքարտոն չի կրցաւ իր ժպիտը  
զսպել:

— Հէ՛, ըսաւ ծերակուտականաց, որոնց  
հետ խօսակցելով պատուով ճամբայ կը  
դնէր զանոնք, կարծեմ մեր բարեկամն,  
Ռիալդոյի կոնտրափարն է:

— Իրեն յատուկ բարութեամբ, նշան ը-  
րաւ ձեռքով որ թող տրուի անոր առաջ  
անցնելու: Ռիքարտոյ անձնավստահու-  
թեամբ մը անցաւ պահապանաց դիմացէն,  
որոնք իրեն անցք տալու համար կարգի  
կը շարուէին, և աչքի քովնաի ծայրովն  
նայեցաւ անոնց՝ իբր թէ կուզէր ըսել.

— Կը տեսնէ՞ք, ի՛նչպէս կ'ընդունի զիս:

Սակայն երբ գաւթին մէջտեղն եկաւ՝  
ուր լեցուած էին զինուորականք, ծերա-  
կուտանք որոնք իրենց գետնաբարշ հան-  
դերձներով մարմարեայ յատակը կ'աւ-  
լէին, մանաւանդ երբ տեսաւ մարդ մը  
զլուխը կարմիր խոյրով՝ վրայէն ոսկի  
ծէգին մը կախուած, որ անոր Ֆեկոէն ըլ-  
լալը կը ծանուցանէր, այսինքն Պետու-  
րեան խոշորկոշրեան ահաւոր ներկայա-  
ցուցիչն, (Messer grande) Մեծ տառու-  
տեղը, և որուն անունը Վենետիոյ մէջ ոչ ոք  
կը համարձակէր բերանը առնուլ, նոյն իսկ



ցած ձայնով, իւր համարձակութիւնը կորսընցուց: Գնաց կեցաւ այն հրաշալի պղընձեայ ջրհորին գիմաց՝ որ գաւթին աջ կողմը կը զարդարէ և սպասեց տոժին հաճութեան:

Երբ Ֆրանչէսքոյ ազատ մնաց, նշան բրաւ Ռիքարտոյին թէ կրնայ վեր ելլել: Կոնտուլարն ուրիշ հրամանի չսպասեց, և չորս ոստումով հասաւ տոժին քով Հսկայից սանդուխին գլուխը:

— Կուզե՞ս տեսնել Ադրիականին աղջիկը, ըսաւ անոր, ուղղուելով դէպի յարկաբաժինները:

— Ոչ ստուգիւ, վեհափառ տէր, պատասխանեց կոնտուլարն: Մակայն եթէ ձեզ ներկայանալու համարձակութիւնը ունեցայ, դիտաւորութիւնս անոր վրայ խօսիլն է:

— Ծատ լաւ, ինչ որ պիտի ըսես ինձի իր գիմացը ըսէ, վասն զի կուզեմ որ դու տեսնես զինքը:

— Աղջիկը հո՞ս է:

— Այո՛, թշուառ Յակոբոս զաւակիս կնոջը, Մարինա աղջկանս յարկաբաժնին մէջ:

— Ա՛ն որ վենետիկը սաստիկ սիրե-

լուն համար արսորուեցաւ, ըսաւ Ռիքարտոյ ցած ձայնով:

Տոժը դարձաւ երկարօրէն դիտեց կոնտուլարն և պատասխանեց միայն այս բառը.

— Այո՛:

Յետոյ շարունակեց իր ճամբան միշտ խօսելով ինքնիրեն:

— Եւ հայրը բռնադատեցին նախագահել իր որդւոյն դէմ վճիռ տուող դատարանին: Բրուտոս իր զաւակը իրեն աչքին դիմաց մեռցընել տուաւ. սակայն իր զաւակը յանցաւոր էր: Ես Յակոբոսը ենթարկել տուի տանջանաց, թոյլ տուի որ արսորեն, և գիտէի թէ այս սիրուն և վերջին զաւակս անմեղ էր: Ինչպիսի վարչութիւն է ասիկայ, որուն վիհապետը, գլուխը, ինչպէս կը կոչեն, բռնադատուի այսպիսի նուաստութեան: Թշուառ գլուխս, խեղճ վեհապետ:

Դուռ մը բացուեցաւ, ուսկից կը մըտցուէր մոզայիքէ յատակով դահլիճ մը, ուրուն մէջ տեղը օրօրոց մը դրուած էր:

— Ահա մանկիկը զոր դու փրկեցիր ծովէն իբր նոր Մովսէս մը, ըսաւ Ֆրոսարին ցուցնելով օրօրոցն՝ որուն մօտ իր




աղջիկն Մարինան նստած էր: Մօտեցիր, աւելցուց, տեսնելով որ Ռիքարտոն իբր գարիադիտ մը դահլիճին սեմին վրայ կը կենար:

Այն ատեն կոնտուլափարն յետին աստիճանի զգուշութեամբ իւր ոտքերուն ծայրերուն վրայ քալելով մօտեցաւ և դիտեց մանկիկին որ ինտումերես արթննալով իրեն երկարեց իր փոքրիկ թաթիկները: Ազնուասիրտն Ռիքարտոյ շատ զգածուելով այս մանկական սկսնակ զգուշաներէն՝ ահաւոր ոստում մը ըրաւ: Սակայն Ռիքարտոյին նման յաղթանդամ մարդ մը չէր կարող առանց վնաս հասցնելու այսպիսի ցոյց մը ընել: Մոզայիքէ յատակը այնպէս դողաց հաճոյքի այս հսկայական ցոյցին տակ, որ Մուրանոյի բաժակ մը ինկաւ գիտինը կտոր կտոր եղաւ: Մանկիկին անշուշտ այս շառաչէն վախցած սկսաւ լալու ճիչեր արձակել:

— Վախցուցիր զինքը, ըսաւ տո՛ւր:

Հսկայն շփոթած, կատարեալ խեղկատակ ձևերով իւր մէկ ոտքը օդին մէջ բռնած.

— Չա՛ր սատանայ, ըսաւ. — Ո՛հ, ներողութիւն, վեհափառ Տէր. ներողութիւն տիկին, վախցուցի մանկիկը:



Տոմկումի պալատը

C. Tardieu, 1906.



— Ո՛չ, ըսաւ Մարինա Ֆոսքարի, կարծեմ թէ մանուկն անօթի է, պէտք է բան մը կերցնել:

— Բայց ես չեմ կրնար տալ անոր ձկան կարկանդակ, բաժակ մը կիպրոսի զինիով, ըսաւ տոժը ծիծաղելով. ստնտու մը կրնայ զինքը գոհացունել:

— Ճիշդ ես ալ եկայ ձեզ ստնտու մը առաջարկել, Վեհափառ Տէր, ըսաւ Ռիբարտոյ բոլորովին ուրախացած:

— Կը ճանչնաս ստնտու մը:

— Այո Վեհափառ, և ճշմարիտ կին մը, կ'ապահովցունեմ զձեզ: Ուժով է հաւասար երկու կոնտոլաՎարներու և գեղեցիկ ինչպէս տիրամայր մը (madonna):

— Ինչո՞ւ հետզ չի բերիր:

— Չեր բարձրութեան հրամանին կը սպասէի:

— Հրամանը կու տամ քեզ: Քանի որ դու իրեն կնքահայր չես կարող ըլլալ, գէթ դու ընտրես մանկիկին ստնտու մայրն, որ Աստուծոյ վերջ քեզ կը պարտի իր կեանքը:

— Շնորհակալ եմ, Վեհափառ Տէր:

— Ուրեմն ինչո՞ւ զինքը երթալու բերելու կը դանդաղիս:



— Շուտով կ'երթամ, Տէր, վարը կը սպասէ կոնտուլս, թոչունի նման թեթեւ է, անոր անունը Գիծեռնակի դրած եմ:

— Գիծեռնակի նման թոիբ, ըսաւ տոժը ծիծաղելով:

— Ժամէ մը հոս եմ, ըսաւ կոնտուլս վարը: Եւ դառնալով Մարինա Ֆոսքարիի կողմը, աւելցուց. Արդարեւ, Տիկին, գեղեցիկ օր մ'է այսօր:

— Աճապարէ՛, շատախօս, ըսաւ տոժը զինքը ուսերէն հրելով:

Այս անգամ Ռիքարտոյ կրկնել չի տուաւ հրամանը: Մէկէն դուրս ելաւ պալատէն, շուտով մը կոնտուլին մէջ ցատկեց, և մինչդեռ քաջաբար թիաւաբերով դէպի լճակը կը յառաջանար, կ'ըսէր ինքնիրեն.

— Ստուգիւ այս բանս շատ աւելի կ'արժէ քան իմ չորս ոսկի ծէզինս: Այս խեղճ ընտանիքն իւր հացը պիտի ապահովէ և իմ անուշիկ Ֆիամէզդաս նոր շըրջազգեստ մը պիտի ունենայ. պիտի չի տեսնամ այլ ևս իւր մեծ սև աչքերը տխուր մտածմունքներով պատած, իւր այտերը պիտի ստանան կրկին իրենց կարմրափայլ գոյնը, և երբ անցնիմ այս տե-

ղէն պիտի լսեմ նորէն, ինչպէս առաջ, իւր արտոյտի ձայնին բարձրանալը լճակիս լռութեան մէջ:

Գ.

Ֆ Ի Ա Մ Է Դ Դ Ա

Այն ընտանիքն, որուն արժանաւոր կոնտուլավարն այնքան հոգ կը տանէր՝ Լիտոյին արեւմտեան կողմը կղզիացեալ տընակի մը մէջ կը բնակէր, ուր հռչակաւոր զինուորական ճարտարապետ Սան Միքէլի՛ յիսուն տարի վերջ՝ պիտի կառուցանէր Սուրբ Անդրէաս զղեակը: Սոյն տնակը ունէր իւր փոքր աւանդավէպը. պատմենք հոս համառօտիւ:

Իւսքորներն (Uscoques), այն ծովահէններն՝ որոնք զբեթէ դար մը Ադրիականին եզերքները կողոպտեցին, և այնքան չարիք հասցուցին ծովային վաճառակա՛նութեան, այս ատենները կը սկսէին իրենց աղետաբեր ասպատակութիւնները: Սակայն վէնետկոյ դէմ իրենց առաջին փորձերը յաջողութեամբ չի պսակուեցան,



և իրենց արշաւանքին մասնակցող նաւը  
չկրցաւ Տալմացիայի եզերքը վերստին  
տեսնել:

Այս նաւուն նաւաստիները արշաւանք մը  
սարքելու համար Լիտոյին ծայրը ցամաք  
ելած էին: Վենետկեցի ձկնորս մը քիչ  
հեռուն իր նաւակը կապած էր, սպա-  
սելով արշալոյսին՝ որպէս զի երթայ իր  
ուռկանը ձգէ: Իւսքոքներուն խօսակցու-  
թիւնը ահանջին հասաւ, որոնք գաւառա-  
բարբառ մը կը խօսէին, կէս լիւրիկեցի և  
կէս տալմացիացի. որով իմացաւ թէ այս  
ծովահէնները իրենց նաւուն մէջ մի միայն  
երկու մարդ թողած էին, իսկ մնացած  
ամբողջ նաւաստիները հետերնին դուրս  
հաներ էին՝ որպէս զի յանկարծակի յար-  
ձակին, ոչ թէ ուղղակի Վենետիոյ՝ այլ  
ձիւտէքքայի քանի մը ամայի տեղերուն  
վրայ:

Երբ իւսքոքներն զիշերուան մութին մէջ  
աներևոյթ եղան, իսկոյն քաջասիրտ ձրկ-  
նորսն առանց տատամսելու ուղղուեցաւ  
դէպի աւազակները բերող նաւուն, որ ե-  
զերքէն քանի մը գրկաչափ հեռու խա-  
րիսիս նետած էր:

Հասնելով խարսխանիշին, ձկնորսը

զգուշութեամբ և անշշուկ տեղաւորեց իւր  
նաւակը անոնց նաւուն կողին երկայնու-  
թեամբ: Յետոյ քանի մը վայրկեան կեցաւ  
մտիկ ընելու, և նաւուն վրայ բնաւ ճայն  
մը չի լսելով, հետեցուց թէ երկու թշուա-  
ռականներն՝ որոնց յանձնուած էր նաւուն  
պահպանութիւնը, քնացած էին նման այն  
մարդկանց՝ որոնք շուտով քուն մը կ'առ-  
նուն միշտ պատրաստ ամէն շշուկէ ար-  
թըննալու:

Չկնորսը ապահով ըլլալով, ելաւ նա-  
ւուն կտաւէ պատնէշին վրայ, և անոր  
ամէն կողմը այցելելէ առաջ, ձեռք ան-  
ցուց թնդանօթի լծակ մը՝ զոր նաւուն  
կամրջակին վրայ ձգած էին: Նախազգու-  
շութիւնը լաւ էր: Յիրաւի չորս քայլ  
չառած կամրջակին վրայ, նաւուն խելքին  
բարձրաւանդակին կողմը՝ տեսաւ գլուխ  
մը որ դուրս կը ցցուէր նաւուն խորը իջ-  
նելու քառակուսի ծակէն:

— Չար սատանայ, ըսաւ ինքնիրեն, —  
տեսնելով որ գլխուն կը հետեւէր մարմին  
մը և ամբողջը կը ներկայացընէր կտրիճ  
երևելոյթով զօրաւոր մարդ մը՝ որ աշխու-  
ժիւ կամրջակին վրայ կը ցատկէր. — պէտք  
պիտի ըլլայ կռուի բռնուիլ:



Առանց սպասելու իւր նախատեսած յարձակմանը, ձկնորսը ձեռքին երկաթէ լծակը բարձրացուց և յանկարծակի ահաւոր հարուած մը իջեցուց խեղճ Իւսըրքին գլխուն:

Ծովահէնն և ոչ ճիկ մը հանեց. իւր մարմինը զանգուածի մը նման ինկաւ նաւուն փայտէ կողերէն վար:

— Եւ մէկ, ըսաւ ձկնորսը:

Սակայն մեծագոյն վտանգը տակաւին չէր անցած. վասն զի նոյն վայրկեանին թակազաղներէն հրացանի հարուած մը արձակուեցաւ և զնտակ մը ինկաւ կամբը ջակին վրայ:

Չէր դպած ձկնորսին, սակայն թշնամւոյն ապահովութիւն տալու համար, որուն հետ զիտէր թէ պիտի կուէր, խոհեմութիւն համարեցաւ ձեռքունել թէ մահացու հարուած մը ընդունած է. կամբը ջակին վրայ տարածուեցաւ մնաց անշարժ:

Հազիւ վայրկեան մը անցած էր տեսաւ թակազաղին մէջ մարդու մը շարժիւն և գլուխը դուրս կարկառելն, ապայ մէկ թևը, յետոյ մէկ սրունքը: Քիչ վերջը տեսաւ ստուեր մը որ սարաններուն (hauban) մէջ կ'իջնէր և կ'երթար նաւուն կտաւէ

պատնէշին վրայ: Այն ատեն ձկնորսը իսկոյն ոտքի ելլելով, իւր թնդանօթի լծակովը զարկաւ երկրորդ ծովահէնին, որ թողւով սարանները՝ աներևոյթ եղաւ մի քանի անգամ մեղմօրէն սարսուալէ ետքը:

Այլ ևս ձկնորսը տէր եղած էր նաւուն: Վար իջաւ նաւուն յատակը և զօրաւոր գչիւրի մը օգնութեամբ նաւուն կողին վրայ երկու ծակեր բացաւ, ծփական գծէն վար. յետոյ կամբը ջակին վրայ ելաւ ու իր նաւակը մտնելով փութով դէպի վենետիկ ճամբայ ելաւ, որպէս զի երթայ իմացունէ Աւագանւոյն այն պահուն եղած յարձակումը: Իւսըրքները յանկարծ բռնուեցան, անոնցմէ շատերը սպանուեցան իրենց նաւը չի հասած: Մնացածները թէպէտ մինչև իրենց նաւը եկան, սակայն զարմացմամբ տեսան թէ նաւուն փորին մէջ չորս ոտնաչափ ջուր լեցուած էր և դեկին չէր հնազանդեր: Բոլոր այս ծովահէնները բռնուեցան և երկրորդ օրը գլխապարտութեան սովորական տեղը, Բիւսալի վրայ կախուեցան:

Ձկնորսին անունը՝ ի յիշատակ Պերճափայլ Հասարակապետութեան մատուցած



ծառայութեանը, Սալվադոր (փրկիչ) դրուեցաւ, և Սւագանին իրեն շնորհնց իւսքորնները բերող նաւը:

Այս աւարը իրօք շատ հարուստ ընծայ մը չէր: Նաւը հին էր և կարելի չէր ջրին երեսը հանել: Իսկ մէջի բեռը ուրիշ բան չէր՝ բայց եթէ խճաքարի մեծ կոյտ մը: Սակայն Սալվադոր գիտցաւ հին նաւուն կմախքը օգտակար ընել: Մաս մաս բաժնեց զայն՝ և միտքը դրաւ անկէ տուն մը շինել նոյն տեղւոյն վրայ, Ախոյի արևելեան ծայրը: Այս ճախճային տեղւոյն վրայ, — շարժուն աւազին մէջ, — պէտք էր ցիցերուն վրայ շինել տունը, ինչպէս Վենետիոյ մէջ: Արդ, Սալվադոր նաւուն կայմերը իւր բնակարանին իբր հիմ գործածեց, և զանոնք աւազին մէջ ցցելով, վրան բարձրացուց իւր բնակարանը:

Այս բնակարանը, գոգցես, երկնքի և երկրիս մէջ կախուած, եզական տեսարան մը կ'ընծայէր: Մտուելի մը ձև ունէր, իբր թէ տղայոց անգործութեան իբր ժամանցը չորս ցիցերու վրայ բարձրացած խաղալիք մ'ըլլար, և հաւասարակշռութեան հրաշքով կը կենար:

Շատ անգամ, փոթորկալից գիշերներ,

հովը ահաւոր կերպով կը տատանէր այս օդային տնակը, և կը սպառնար՝ զայն լճակին մէջ թաւալել: Սակայն երեսուն տարիէ ի վեր կանգուն կեցած էր, և ազէկ գէշ պատսպարած էր Սալվադորն և իրենները:

Հիմա որ Սալվադորին հետ կը ծանօթանանք, չէ այլևս այն զօրաւոր մարդը որ կըրցաւ պահպանել Վենետիկը իւսքորններուն առաջին յարձակման դէմ: Ներկայիս ծեր մ'է, և իւր արհեստին խիստ աշխատութիւններէն այնպէս մաշած՝ որ կարող չէ այլ ևս ծովի վրայ ելլել. իբր բազուկները չունին այն կարևոր ուժն ուռկան նետելու, Ադրիականի ձկնորսներու յատուկ կարածիւթով ներկուած ծանր առագաստները ժողվելու, անոնց չուանները քաշելու կամ պարզելու:

Ծեր Սալվադորը իւր ժամանակը կ'անցընէ հիմայ ծովեզերքէն դիտելով այն ալիքներն՝ որոնք շատ անգամ գինքը կըլլելու սպառնացած էին, և որոնց մէջ քառասուն տարի ամէն օր ուրախ սրտով իր կեանքը վտանգի մէջ դրած էր՝ իւր ընտանեացը հացը ճարելու համար: Ժամանակ մը՝ այս ընտանեաց անդամներուն մէջ ե-



րեք հատ զօրաւոր կտրիճներ կային, նը-  
շանաւոր այն ծովեզերաց ամենէն ճար-  
տար ձկնորսներուն մէջ:

Այս երեք անդրանիկները քաջութեամբ  
մեռան ծովուն վրայ. մէկը հինգ տարի,  
միւսը չորս և երրորդն երկու տարի ա-  
ռաջ, ձգելով իրենց հօրն և իրենց կըրտ-  
սեր եղբօր իբր ժառանգութիւն չորս որբեր  
անուցանելու. ծանրութիւնն, երբ արդէն  
Սալվադոր յուսահատութեամբ կը զգար  
թէ այլևս իր ուժերը բոլորովին սպառած  
էին:

Գէթ իւր վերջին զաւակը կարենար  
օգնել և հայթհայթել ընտանեաց այս յա-  
ւելուածին պէտքերն որ իր ընտանեաց  
թիւը բազմացուց. բայց նա անկարող մէկն  
էր, և Սալվադոր սրտի ցաւօք կը զգար  
թէ ինքն ալ իբր ընտանեաց հայր թերևս  
ասոր մէջ իւր յանցանքն ունէր: Յիրաւի,  
Սալվադորին այս վերջին զաւակը չունէր  
իւր եղբայրներուն ոչ ուժն և ոչ քաջութիւ-  
նը, պզտիկուց անհոգութեան վարժուած  
էր: Ընտանեաց բինիամին այս շփացած  
տղան՝ մեծցաւ ու ամուսնացաւ առանց  
մարդու կարգ անցնելու: Զկնորս, գրեթէ  
միայն անուամբ: Ծոյլ, չարալեզու և շա-

տախօս. ամբողջ օրերն և մինչեւ կէս գի-  
շերներ Ֆրացերիա շուկային մէջ, Ռիալ-  
դոյի կամուրջին կամ Սքիավոնի քարա-  
փին վրայ կ'անցունէր, փճախօսութիւններ  
լսելու կամ ընելու:

Սալվադորին այս անարժան զաւակը  
տեսանք արդէն քիչ առաջ Պաղիսոզերի  
քով ժողոված խմբին մէջ, որ վէնետոյ  
ազնուական անհատներէն ամենէն երիտա-  
սարդագունին, նշանաւոր Մկրտիչ Մար-  
զինենկոյի զէմ՝ չար ակնարկութիւններ և  
նոյն իսկ ծանր ամբաստանութիւններ կ'ը-  
նէր: Իւր գլխաւոր զբաղանքն այս էր.  
որովհետև եղբայրներուն կանխահաս մա-  
հը իր վրայ ձգած էր անոնց որբերուն  
և իւր իսկ յատուկ զաւակաց պահպա-  
նութեան հոգը, և եթէ անոնց ապրուստը  
մի միայն ընտանեաց այս անպէտ գլխոյն  
շահածն ըլլար, շատ անգամ անօթի մեռ-  
նելու վտանգին մէջ պիտի իյնային:

Սակայն Աստուած իւր իմաստուն նա-  
խատեսութեամբ, չարիքին քով կը դնէ  
գրեթէ միշտ անոր դարմանը: Որբերն և  
այս անսիրտ հօր զաւակները գտան ճըշ-  
մարիտ նախախնամութիւն մը իրենց հո-  
րեղբօր կնոջն և իրենց մօրը քով, Լիւրի-



կէի լեռներուն այն ուժեղ աղջկան, զոր տեսանք Բիաձէղդայի վրայ ուր ամէն ջանք ըրաւ արգիլելու իր երկանը՝ շատախօս Պետրոսին անխոհեմ լեզուն:

Գեղեցիկն Յովհաննա, ինչպէս կը կոչեն տակաւին Ս. Մարկոսի հրապարակին և Սքիավոնի քարափին կոնտուլավարները, վենետկոյ ջուր կրող կիներուն խրմբին կը պատկանէր:

Գիտենք թէ վենետկոյ մէջ, նոյն իսկ ներկայապէս<sup>\*</sup>, խմելիք ջուրը կը հայթայթուի պալատին և Աւագանւոյն հոգածութեամբ՝ ժողովրդեան համար շինուած քանի մը հասարակաց ջրամբարներէն: Գրեթէ հազար տարիէն աւելի է որ այս ջուրերը կը բաժնուին քաղաքին զանազան թաղերուն, մանկամարդ և ուժեղ կնիկներու ձեռքով որոնք, ինչպէս նաև ներկայապէս, հագուած էին Լիւրիկէի և Գարնիոլիայի լեռնականներու նկարէն համազգեստը, աչքառու գոյներով, կարճ շրջազգեստ մը

\* Սակայն հիմայ այսպէս չէ, իտալական ընկերութիւն մը Պրէնդա գետին մէկ ճիւղին ջուրը ծովուն յատակէն ջրմուկներ անցնելով քաղաք բերել տուած է. հսկայ ձեռնարկութիւն մը, որուն շնորհիւ վենետիկ առատ ջուր կը վայելէ առանց կարօտ ըլլալու Լիւրիկեցի կանանց ջրկիրութեան:

սև գուլպաներ և երկաթապատ կօշիկներ, կուրծքին վերի կողմը և թևերը մերկ, իրենց շքեղ մազերը ծոծրակին վրայ վենետիկեան ոսկի երկայն գնդասեղներով ամփոփուած. Լիւրիկէի այս կիները ամէն ժամանակ օտարականաց ուշադրութիւնը իրենց վրայ դարձուցած են, իրենց գեղեցիկ և քիչ մը առնացի կերպարանքին, մարմնոյն առոյգ գոյնին և վառվռուն մեծ աչքերուն պատճառաւ:

Լերան այս զաւակները ամէն ժամանակ առակի կարգ անցնելու չափ պարկեշտ եղած են: Վենետիկ իրենց համար վաճառաշահ քաղաք մ'էր. հոն կուգային շատ անգամ իրենց ընտրած նշանածներն ի միասին, համեստութեամբ և տաժանմամբ կը վաստրկէին փոքր դրամագլուխ մը, և կը դառնային ապա իրենց երկիրը ամուսնութիւն կնքելու: Այս էր իրենց բարքը:

Սակայն Յովհաննա տարբեր ներշնչմամբ օր մը սիրահարուելով Սալվադորին պզտի տղուն, Պետրոս ձկնորսին, ամուսնացաւ անոր հետ: Շատ չանցած հասկըցաւ գործած ծանր սխալմունքը: Ինչպէս վերը ըսինք, երիցագոյն երեք զաւակնե-



րուն մեռնելէն վերջ՝ ծեր Սալվադորը բու-  
լորովին անկարող եղած էր ծովու վրայ  
ելլելու, Յովհաննա իւր էրկանը յարա-  
ճուն ծուլութեան և անհոգութեան պատ-  
ճառաւ՝ միակ նեցուկն եղած էր այս ման-  
կերամ բունին՝ որոնք իրեն բուլորտիքը կ'ե-  
ռային:

Նա քաջութեամբ կը տանէր իւր յո-  
ւր բաղդին, և երբէք չէր գանգատեր:  
Առաւօտ կանուխ կը տեսնուէր Սքիւմուրի  
քարափին վրայ՝ արագընթաց քայլերով,  
ձախ ուսին վրայ առած փայտէ ձող մը՝  
որուն երկու ծայրերէն կախուած էին եր-  
կու պղինձէ դոյլեր, միշտ մաքուր ու փայ-  
լուն՝ նման եպիսկոպոսի մը խոհանոցին  
սպասներուն:

Յորեկները տարւոյս այս եղանակին  
աւելի երկար ըլլալով, Յովհաննա խիստ  
դժուարաւ կը հասնի թէ իր որդւոցը  
և թէ որբերուն սննդեան կարևոր ե-  
ղած պէտքերը հոգալու, որոնց պահպա-  
նութիւնը Աստուած իրեն յանձնած էր:  
Սակայն այն ատեն որ այս պատմութիւնս  
կ'սկսի Յովհաննա դժուարին կացութեան  
մը մէջ կը գտնուէր. և հակառակ իւր ը-  
րած զգուշաւորութեանց չկրցաւ ծածկել

իւր տագնապին գաղտնիքը ծեր Սալվա-  
դորէն: Արդ, առջի իրիկունէն ի վեր ծերն  
աներևոյթ եղած էր լճակի տունէն. և ա-  
հա թէ ինչո՞ւ գտանք Յովհաննան Բիա-  
ձէզդային վրայ՝ առանց իրեն պղինձէ դոյ-  
լերուն, որոնք իրեն անբաժան ընկերներ  
էին և կարծես իրեն հագուստին մասը կը  
կազմէին: Յովհաննա՝ ծերը փնտռելու ե-  
լած էր, բազմութեան մէջ բռնուելով իր  
էրկանը հանդիպեցաւ: — Միթէ ապա-  
հով չէ՞ր Պետրոսը գտնել այն ամէն տեղն  
ուր տեսնելու կամ լսելու բան մը ըլլար:

Եթէ Յովհաննան սպասեց հոն մինչև  
հանդէսին վերջանալը՝ պատճառն այն էր որ  
նախ բազմութեան մէջ շարժիլն անկարելի  
էր, և երկրորդ՝ ասկէ աւելի, ուզեց մեզ-  
մացնել ըստ կարելւոյն Պետրոսին տեն-  
դոտ շատախօսութիւնը: Գետնը թէ ինչ-  
պէս յաջողեցաւ:

Բայց երբ կարելի եղաւ ազատ անցը  
մը գտնել, Յովհաննան հեռացաւ, վասն  
զի սիրտը շատ անհանգիստ էր, ահա թէ  
ինչու:

Իւր անդրանիկ աղջիկը Ֆիամէզդա,  
տասուերկու տարեկան փոքր աղջնակ մը,  
սակայն այնքան ուժեղ և այնքան բար-



ձրահասակ՝ որ տասնըվեց տարուան կարծեկ կու տար. Ֆիամէզդա իւր թեւ թիկունքն էր, երկրորդ ինքն: Ֆիամէզդա ամէն օր և զիշերուան մէկ մասը տղայոց քով այնպէս կատարեալ կերպով իր տեղը կը փոխանակէր, որ ծովեզերքին ձկնորսներն ընտանեաց փոքրիկ մայրիկ կ'անուանէին զինքը: Ֆիամէզդա մօրը պատմած էր ծածուկ թէ մեծ հայրը առաւօտուն կանուխ տունէն բաժնուելու ատենը ըսած էր իրեն և միւս տղայոց թէ ինքն այլ ևս պիտի չի դառնայ, և թէ իւր, ինչպէս նաև իւր փոքր եղբայրներուն և քոյրերուն ըրած բոլոր աղաչանքները ծերը արգիլելու համար անօգուտ եղած էին: Նա կարգաւ համբուրած էր տղաքները և յետոյ ըսած էր Ֆիամէզդային.

— Մնաք բարով, երբ այլ ևս չի դառնամ, Աւագանին թերևս յիշէ թէ ինքն ինծի Սալվադոր անունը տուած էր, և թէ ատենօք այս մարդը, որ ապրելու անկարողութենէն բռնադատեալ կ'երթայ իւր կամաւոր մահը գտնելու, ազատած է վեհեակոյ ամբողջ թաղ մը:

Գիւրին է երևակայել խեղճ Լիւրիկեցի կնոջ մտահոգութիւնը: Սալվադորը աւելի

իւր հայրն կը համարու էր քան թէ Պետրոսին: Վեհեակոյ ամէն ճամբաները պտըտեցաւ և ամենուն հարցուց, սակայն չի կրցաւ գտնել ամենափոքր հետք մը՝ որ կարենար զինքը պապուն գնացած ճամբուն վրայ գնել: Վերջապէս յուսաբեկ դարձաւ լճակի տունը: Հոն իմանալով թէ Սալվադորը տակաւին երևցած չէր, բոլորովին յուսահատութեան մէջ ինկաւ:

— Մեռած է, գոչեց նա. ինչպէս իր երիցագոյն երեք զաւակներուն՝ իրեն ալ վերջին քնարանը ջրային գերեզմանն եղաւ. այլ ևս ծովը իր դիակը պիտի չի դարձնէ մեզ:

Յովհաննա այս խօսքերն ըսելէն ետք՝ ծունկի եկաւ պատին խորշին մէջ դրուած Աստուածամօր պատկերին դիմաց, որ այս աղքատին տան միակ զարդարանքն էր:

— Աստղ առաւօտեան, ըսաւ, մայր մեր փրկչին, Մարիամ լի շնորհօք և բարութեամբ, սիրովէ քաղցրութեամբ զինքը՝ որ իւր ամբողջ կենացը մէջ սիրեց զքեզ այնքան եռանդուն սիրով:

Յովհաննա այս համոտ աղօթքն ընելէն ետք ոտքի ելաւ, աչքերը սրբեց և գնաց գտնելու իւր վերջին զաւակն որբանին մէջ և սկսաւ կաթ տալ:



Այս միջոցիս անսիրտ զաւակն, անարժան հայրը, Պետրոս, տուն գալով իմացած էր պապուն անյայտանալը, որուն նկատմամբ անփութօրէն պատասխանեց.

— Ի՛նչ, սիրտ մի՛ հատցունէք, ձերը անշուշտ իր տարեկից մէկու մը հետ գնացած է լճակին մէջ շրջան մը ընելու. կը դառնայ. շուտ կերակուր ուտենք:

— Կէր, ըսաւ Յովհաննա, անոր դիմացը մի քանի երկայն եղջիւր նետելով, որ Վենետիոյ ռամիկ ժողովրդեան յետին աղքատին սնունդն էր:

Չկնորսը կատաղութեամբ մէկդի նետեց եղջիւրները.

— Ի՞նչ կը կարծես, կրնամ գոհ ըլլալ, ըսաւ, այսպիսի ընթրիքով մը՝ ծովուն հարսանեաց օրը: Չի պահեցիր ինծի այսպիսի հանդիսաւոր օրուան համար գէթ խորված այծի կտոր մը:

— Գնելու համար դրամ, պոռաց Յովհաննա՝ ահաւոր ձայնով:

— Դրամ, կրկնեց Պետրոս մեքենաբար:

— Անշուշտ դրամ, պատասխանեց Յովհաննա, աւելի ոգեւորութեամբ: Դու ընտանեաց հայրն ես, քեզի կ'իյնայ զայն

հոգալը. ես քովս և ոչ դահեկան մը ունիմ:

Պետրոս յանդգնեցաւ իր կնոջը վրայ լիբր ակնարկ նետել և ծաղրածու շեշտով մը ըսաւ.

— Թէ որ արծաթ դրամ չունիս, շատ աղէկ, քու խնայածէդ՝ ոսկի ծէզին մը աւրէ:

Յովհաննա այս լիբր և թշուառութիւնը ծաղրող խօսքերը լսելուն, որուն պատճառն ընտանեաց այս անպէտ և վատ հայրն էր, չկրցաւ իւր բարկութիւնը զսպել, յանկարծ ոտքի վրայ ցատկեց:

Գոյնը նետած էր, շրթունքները կը դողդղային. և առանց բառ մը ըսելու գնաց շիտակ այն խորշն՝ ուր դրուած էր Աստուածամօր արձանն և զայն ծածկելու համար եռանկիւնածև երկաթի մը վրայէն բրդէ հին վարագոյր մը քաշեց: Անշուշտ Յովհաննա չէր ուզէր որ սրբազան պատկերը հանդիսատես ըլլայ տեղի ունենալիք տեսարաններուն: Յետոյ դէպի Պետրոս յառաջացաւ և բարձրացնելով ձեռքը, — պէտք է ճշմարտութիւնը ըսել, — անտարակոյս առնական դաս մը կ'ուզէր տալ իր էրկանը, երբ լճակի տան ընակիչներուն խիստ ծանօթ ձայն մը լսուեցաւ:



— Ոսկի՞ կ'ուզէք, ըսաւ այս ձայնը, ահաւասիկ:

Երկու ծէզին, որոնց իւրաքանչիւրը կը կշռէր քսաներեք կերատ ոսկւոյ, ինկան կաղտոն ստոլին վրայ, Պետրոսի ձեռքն իսկոյն զանոնք ծածկեց: Տղաքներն ու մայրը միևնոյն շարժմամբ ետև դարձած կը տեսնէին ծեր պապը դրան շրջանակին մէջ ոտքի վրայ կեցած:

— Ա՛խ, հայրիկ. դու ես, գոչեց Յովհաննան՝ բազուկով ձերուն վիզը փաթթուելով:

Բոլոր տղաքները կը հետևէին իրենց մօրը և կը ձևացնէին մարդկային խմբարձան մը որուն կեդրոնը կը գտնուէր ծեր Սալվադորը:

Միայն Ֆրամէզդան մնացած էր տնակին միւս անկիւնը: Իւր մեծ մեծ սև աչքերը կը փայլէին խանդավառութեամբ և ցած ձայնով կը մրմնջէր.

— Սալվադոր, Սալվադոր, գեղեցիկ անուն երբ մարդ զայն կրելու արժանի է:

Յովհաննա միշտ ձերուն վիզը պըլլուած հատկեալ ձայնով կ'ըսէր

— Հայրիկ՛... հայրիկ.

— Աղջիկս, ուրեմն գո՛հ ես այս դրամը բերելուս, ըսաւ ծերը:

— Ո՛հ, ոչ թէ դրամն է որ զիս կ'ուրախացընէ, հայրիկ, ոչ. Աստուած գիտէ թէ անի չէ. կը վախնայի զքեզ կորսուած կարծելով: Սակայն դու հոս ես, դու հոս: Ա՛յո՛, ստուգիւ դու ես:

— Ա՛յո, աղջիկս:

Յանկարծ Յովհաննային մտքին մէջ տարակոյս մը ծագեցաւ: Իւր բազուկները քակեց ձերուն վիզէն, և քայլ մը ետև երթալով ըսաւ.

— Ի՛նչպէս հոգացիր այս ոսկին:

— Բեզի ի՛նչ, ըսաւ ծերը տխուր ձայնով մը: Ահա ոսկին, գնա՛ տղայոց ուտելիք գնէ:

Յովհաննա ծոց գլուխն և վայրկեան մը մտածկոտ լռութեան մը մէջ ըկզմած մնաց. յետոյ զառնալով ստոլին կողմը սաստիկ աղաղակ մը փրցուց: Երկու ոսկի դրամները չկային հոն: Պետրոս օգտուելով ձերուն գալստեամբ պատճառած իրարանցումէն, զանոնք առնելով փախած էր:

— Թշուառական, պոռոց ծեր Սալվադորը, յափշտակելով նաւակի կացինը որ տնակին անկիւնէ մը կախուած էր, գողնալ այն դրամն որ ինձի այնքան սուղի նստեցաւ:



Երբ պապը դէպի տնակին դուռը կը վազէր, ուսկից Յովհաննա արդէն դուրս ելած էր, լճակին վրայ զուարթ երգի մը կրկնումն լսուեցաւ:

— Ռիքարտոյ, պոռաց փոքրիկ Ֆիլամէդղան, մեր բարեկամ կոնտրապար Ռիքարտոն է:

— Անշուշտ հօրդ հանդիպած պիտի ըլլայ, ըսաւ Յովհաննա:

— Շուտ, մօտեցիր, Ռիքարտոյ, ըսաւ ծերը:

Կոնտրապարն թիու ուժգին հարուած մը տալով դէպի օդային տնակը՝ որուն ցիցերը դողդղացին, պատասխանեց.

— Իմ մտադրութիւնս ալ ան է:

— Տեսա՞ր Պետրոսը, հարցուց Սալվադորը:

Կոնտրապարն իւր նաւակը ցիցերէն միոյն կապելով՝ պատասխանեց.

— Այո՛, տեսայ զինքը փոքրիկ նաւի մը մէջ որ Օրֆանոյի ջրանցքէն ելլելով դէպի ճիւտէքքա կ'երթար: Չայնեցի իրեն — էհ, Պետրոս. — անշուշտ լսած պիտի չըլլայ, վասն զի չի պատասխանեց:

— Չէ ուզած լսել.

— Ինչ պատճառաւ.

— Թշուառականն, ըսաւ Յովհաննա, ուժգին սեղմելով Ռիքարտոյին բազուկը, մեզմէ երկու ոսկի ծէգին գողցաւ, զոր հայրիկը տուն բերած էր:

— Բոլոր բոլոր այս է, ըսաւ Ռիքարտոյ զուարթագին, Պետրոս ձեր երկու ոսկին առաւ, ահա չորս հատ անոնց տեղ:

Եւ Ռիքարտոյ բանալով Յովհաննային ձեռքը՝ զբաւ հոն չորս ոսկի ծէգին՝ զոր ըմբշամարտութեան դատաւորները տուած էին իրեն իբր վարձք:

— Ուսկից է այս ոսկին Ռիքարտոյ, ըսաւ Յովհաննա, այլայլած ձայնով մը:

— Ո՛հ, մի՛ վախնար, Յովհաննա, պատասխանեց զուարթութեամբ կոնտրապարն, համեստութեամբ շահեցայ: Գասթելլացիներու և Նիկոլացիներու ըմբշամարտութեան վարձքն է: Յաղթողն ես եղայ: Ա՛խ Յովհաննա, քու ազգականդ, յիսնապետն Բարթողիմէոս, բռնադատեցաւ գէշ վայրկեան մը անցընել:

Այսպէս խօսելու ատեն ահագին ծիծաղ մը հսկային ուսերը կը թօթվէր:

— Այսօր ծէգիները կը տեղան, ըսաւ Ֆիլամէդղան՝ ցատկելով Ռիքարտոյին վրէ:



Քաջ կոնտուրավարն մինչև ականջները կարմրեցաւ:

— Այս ծէգիներէն, փոքրիկ Ֆիամէզդաս, քեզի ալ մաս մը պիտի ելլէ:

— Շնորհակալ եմ, Ռիքարտոյ, ըսաւ, դու քաջ մարդ մը ես և ես կը սիրեմ զքեզ:

— Դու զի՞ս կը սիրես, Ֆիամէզդաս, ըսաւ կոնտուրավարն: Ապահով ես թէ տասնութ տարու ըլլալուդ նոյնը պիտի կրկնես ինծի:

Ֆիամէզդաս չի կարմրեցաւ, այլ իւր մեծ սև աչքերը կոնտուրավարին վրայ յտեսց:

— Կը խօսինք ասոր վրայ, Ռիքարտոյ, ըսաւ, երբ տղաքը մեծցած ըլլան: Առ այժմ բռնէ իմ ձեռքս, մօրս հաւանութեամբ այսօրուրնէ ես քու նշանածդ եմ:

Կոնտուրավարն իւր զօրաւոր ձեռքին մէջ սեղմեց Ֆիամէզդասին փոքրիկ ձեռքը:

— Ուրեմն դու զիս կը սիրես, ըսաւ նա դողդոջուն ձայնով:

Պզտիկը իւր աչքերը հսկային աչքերուն մէջ սևեռեց:

— Կը սիրեմ, ըսաւ խոր ձայնով մը, ինչ որ զօրաւոր է և քաջասիրտ:

— Շատ աղէկ ըսիր այս խօսքը, փոքրիկ Ֆիամէզդաս:

Աղջկան երեսը յանկարծ փոխուեցաւ, իւր ոնգունքները լայնցան, բերանը յոսի ծիծաղ մը ունեցաւ, իւր զիմագծին վրայ երեցան ցուրտ և անգութ արհամարհանք մը, սև ընքուիներուն ներքև իւր աչքերը կը փայլէին իբր երկու աստղունք մացառի մը մէջէն:

— Կ'ատեմ և կ'արհամարեմ, աւելցուց նա, ինչ որ տկար է և վատ:

— Ֆիամէզդաս, ըսաւ մայրը ողորմուկ ձայնով մը, զգուշացիր անօրէն խօսք մը ըսելէ:

— Ֆիամէզդասն, ըսաւ ծերը, իրաւունք ունի անխճելու վատերը. գալով տկարներուն, իմ կտրիճ թոռնիկս իւր հոգոյն մէջ այնքան առատամտութիւն ունի՝ որ կրնայ խորհիլ թէ անոնք ալ արժանի են զթուրեան մը:

Մանկամարդ աղջիկն իւր աչքերը Սալվադորին վրայ բարձրացուց և ձերուն վշտացեալ երեսին վրայ կարդաց յուսահատութեան այնպիսի ցոյց մը, որուն համար յանկարծ սկսաւ սաստիկ արտասուել: Ռիքարտոյ և Յովհաննա մեծագոյն ճիգը



Թափեցին հանդարտեցնելու այս տարօրինակ աղջիկը:

— Ինչո՞ւ կուլաս, կ'ըսէր իւր մայրը. բարի Ռիքարտոյին բերած ոսկիներուն շնորհիւ մեր նեղութիւնները վերջ գտան: Մտածէ անգամ մը, չորս ոսկի ծէգին, նման անակնկալ դրամ երբէք մեր տունը չէր մտած:

— Եւ այս բանս ոչինչ է դեռ, ըսաւ կոնտոլավարը:

— Ուրիշ ի՞նչ կայ, հարցուց մայրը:

— Եկայ ամբողջ ընտանիքն առնելու տանելու:

— Ո՞ւր:

— Դքսական պալատը, այսչափ:

Ֆիամէզդային աչքերը խսկոյն չորցեր էին.

— Դքսական պալատը, յիշաւ ի ստո՞յգ է, Ռիքարտոյ, հարցուց կոնտոլավարին:

— Այո՛, ամենաստոյգ:

— Սակայն ի՞նչ ընելու պիտի երթանք Դքսական պալատը, հարցուց Յովհաննան:

— Չե՞ս ուզեր, ըսաւ Ռիքարտոն, այն իրեն խոշոր ծիծաղովը, ստնտու ըլլալ Ադրիականին և տոժին աղջկան:

— Ի՞նչ կ'ուզես ըսել, հարցուց Յովհաննան զարմացած:

— Կուզեմ ըսել, շարունակեց Ռիքարտոյ, թէ տոժին ամուսնութիւնը ծովուն հետ այս անգամ արգասաբեր եղաւ. անկից ծնաւ աղջիկ մը զոր ես առի քիչ առաջ լճակին ալիքներուն վրայէն: Աւագանին զինքը որդեգրեց և Ֆրանչեսքոյ Ֆոսթարի տոժը զքեզ Յովհաննա, զքեզ ընտրեց անոր ստնտու:

Ծեր Սալվադորն, որ մինչև այն վայրկեան անկլին մը քաշուած մասնակից չէր ըլլար բոլորտիքը անցած դարձածին, յանկարծ ոտքի ելաւ և Ռիքարտոյին ձեռքը բռնելով գոչեց.

— Ստո՞յգ է, կ'ապրի՞ նա, ազատեցա՞մ:

— Անտարակոյս, ըսաւ Ռիքարտոյ:

Ծերը ձեռքերն իրարու միացրնելով աննրկարագրելի ուրախ երևոյթով աչքերն երկինք բարձրացուց:

— Այս տղուն վրայօք բան մը գիտե՞ս դու, հարցուց Ռիքարտոյ:

— Ե՛ս, ըսաւ ծերը, կրկին իր աթոռակին վրայ նստելով, չէ, ոչ ինչ, բան մը չեմ գիտեր:

Լճակի տանը մէջ վարժած էին ձերուն տարօրինակ գործերուն, անոր համար ինչ-



պէս ուրիշ անգամներ՝ այս անգամ ալ կարեւորութիւն չի տուին ըսածներուն: Սակայն ամենուն սիրտն ուրախութեամբ լեցուած էր, և առանց ուրիշ բացատրութեան սպասելու պատրաստուեցան հետեւելու քաջ կոնտրապարտին:

Երբ իւրաքանչիւր ոք պատրաստ էր — և պատրաստութիւնը երկար չեղան — ֆովհաննան ըսաւ ծերուն.

— Հայրիկ, դու ալ մեզի հետ չե՞ս գար,

— Ո՛չ, ըսաւ ծերը, իմ ճակատագիրս հոս է, հոս պիտի մնամ մինչև վերջին վայրկեանս:

Այլ ևս չի բռնադատեցին ծերը, և տըղայոց ամբողջ խումբն իրենց մօրը հետ փութով տեղաւորուեցան Ռիբարտոյի նաւակին մէջ, որ իսկոյն ղէպի վենետիկ ճամբայ ելաւ:

Ֆովհաննային և տղայոց լճակի տունէն մեկնելէն յետոյ՝ ժամ մը չէր անցած՝ երբ Սալվադոր լսեց տնակին որդեակեր սանդուխին թնդալը օտարականի մը քայլերուն տակ: Թէպէտ մութը կոխած էր, սակայն շնորհիւ լուսնի անփայլ լուսոյն կարելի էր տակաւին զանազանել առար-

կաները: Սալվադոր կրցաւ նշմարել թէ ներս մտնող մարդը բարձր դասու պատկանող ասպետ մ'էր: Քանի մը տարիներէ ի վեր վենետիոյ մէջ տակաւ տակաւ տարածուած նորածնութեան մը պատճառաւ, ասպետը զիմակ մը անցուցած էր երեսին. երիտասարդի երևոյթն ունէր, և գորշ գունով վերարկուի մը ներքեւէն, զոր ներս մտնելու ատեն աթոռակի մը վրայ նետեց, հագած էր սեւ թաւիշէ շքեղ բաճկոնակ մը:

Անձանօթը բառ մը ըսելէն առաջ իր նամքով փակեց դուռը:

Սալվադոր ոտքի ելաւ, և փութով իր գլխուն բրդեայ գլխարկը հանեց, յառաջ եկաւ և յարգանօք բարեկէլէն յետոյ հարցուց այցելուին:

— Զեր վսեմութիւնը կ'ուզէ ինձի՞ հետ խօսիլ:

— Այո՛, պատասխանեց կտրուկ շեշտով՝ անձանօթը:

— Զեր վսեմութեան հրամաններուն պատրաստ եմ:

Անձանօթը քիչ մը ատեն լուռ կեցաւ, սակայն իւր երկու աչքերն որոնք զիմակին ետեւէն կը փայլէին և կը յառէին



շեշտակի Սալվադորին վրայ, տարօրինակ կերպով կը խոովէին ձեռը: Այս տեսակ մագնիսացումէն խոյս տալու համար գլուխը վար կախեց:

— Երկու ծէգին ոսկիի պայմանով, ըսաւ օտարականը հնչիւն ձայնով մը, դու յանձն առեր էիր գործ մը կատարելու:

— Այո՛, վսեմաշուք տէր:

— Կատարեցիր ուրեմն:

— Այո՛, վսեմաշուք տէր:

— Ամբողջովի՞ն, հարցուց անծանօթը շեշտելով այս բառը:

— Ամբողջովին, պատասխանեց Սալվադորը մեղմ ձայնով:

— Շատ լաւ. առ այժմ կ'ընդունիմ ըսածդ իբր ճշմարիտ: Սակայն աղէկ գիտցիր թէ դու իմ ձեռքիս մէջն ես: Թէ որ հաւատարմութեամբ կատարած ես յանձնածս, իմ պաշտպանութիւնս պիտի վայելես. բայց թէ որ չարաչար գործածեցիր քու վրայ ունեցած վստահութիւնս, հոգիդ Աստուծոյ յանձնէ, ստուգիւ գիտցիր թէ դու մեռած մարդ մ'ես ասկէ վերջ:

Այս խօսքերն ըսելէն յետոյ անծանօթը մեկնեցաւ ձգելով թշուառ Սալվադորը

դառն խորհրդածութեանց և խորին զարհուրանաց մէջ հակառակ իւր բոլոր քաջասրտութեանը: Երկար ատեն անշարժ մնաց նոյն տեղը ուր որ անծանօթը ձգած էր զինք: Վերջապէս իր թմրութիւնը թօթվելու համար ոտքի ելաւ և կարծես քիչ մը վերստացաւ իր քաջութիւնը: Տեսակին մէջ քանի մը անգամ շրջագայելէն յետոյ իւր ընկերը որոշեց:

— Հոսկից մեկնող սատանան, ըսաւ, շուտով պիտի իմանայ ճշմարտութիւնը. ուրեմն ես մեռած մարդ մ'եմ: Բայց նա, ոչ թէ զիս, այլ իմ գազտնիքս կուզէ սպաննել: Արդ ուրեմն այս գազտնիքն ինձի հետ պիտի չի մեռնի: Երթանք զբտնենք հայր Յակոբոսը, Ռոմուալտեանց վանքին մէջ:

Ռոմուալտեանք վանական կրօնաւորներ էին, զոր հիմնած էր սուրբ Ռոմուալտ մետասաներորդ դարուն սկիզբը, Վենետկոյ ծովախորշին վրայ Սուրբ Կղեմես անուանով կղզեակին մէջ: Մինչև ցայսօր կը տեսնուին տակաւին հիմնադրին շինած վանքին մնացորդները: Իսկ Միաբանութիւնը մեր պատմած դէպքերէն յիսուն տարի յետոյ փոխեց իր անունը, և Ապենինեան



լերանց հովիտներուն մէջ գտնուած զըլ-  
խաւոր վանքին անունը առաւ: Ահա թէ  
ինչպէս վեշտասաններոսդ դարէն սկսեալ  
Ռոմուլտեանք կոչուեցան Գամալտո-  
լեանք:

Հայր Յակոբոս Ս. Կղեմէս կղզիին կրօ-  
նաւորներէն մին, վենետիոյ մէջ ժորովըը-  
դական անձ մ'էր, նշանաւոր իւր անա-  
բատ վարքովը: Սալվադոր ստէպ առիթ  
ունեցած էր զինքը տեսնելու վանքին մէջ  
երբ ձուկ կը տանէր հոն: Արդ, Լիտոյի  
հիւսիսային կողմը խորշի մը մէջ ամէն  
ժամանակ գտնուող բազմաթիւ ձկնորսի  
նաւակներէն մէկուն մէջ մտնելով՝ դէպի  
Ս. Կղեմէս կղզին ուղղուեցաւ:

Երբ հայր Յակոբոս իմացաւ թէ Սալ-  
վադոր զինքը կուզէ, աճապարեց իջաւ  
խօսարանը՝ ուր ծեր ձկնորսը իրեն կ'սպա-  
սէր:

— Ո՛հ, դ՞ո՞ւն ես, Սալվադոր, ըսաւ ա-  
նոր կրօնաւորը, զուարթութեամբ և ընտա-  
նեբար, վանքին ձո՞ւկ բերած ես նորէն:

— Ո՛չ, հայր, ըսաւ ձկնորսը տխրու-  
թեամբ զլուխը շարժելով, իմ ձկնորսի  
արուեստս լնացաւ, անոր աշխատելու ուժը  
չունիմ: Վանք գալու համար ձակեցայ և

հայր, խնդրելու հրամանքէդ որ հաճիս  
զիս խոստովանցնել:

— Ծանր և ստիպողական է, հարցոց  
կրօնաւորն իւր պաշտօնին ամբողջ արժա-  
նապատուութեամբը:

— Այո՛, հայր, ծանր և ստիպողական  
է, պատասխանեց Սալվադորը:

— Այն ատեն, ըսաւ կրօնաւորը, պա-  
տրաստ եմ քեզ լսելու: Ինձի հետ վան-  
քին մատուռն եկուր:

Սալվադորը երբ քարէ խորշին մէջ կրօ-  
նաւորին ոտքին քով ծունկի եկաւ:

— Հայր, ըսաւ, ձեր դիմացը կը տես-  
նէք մարդ մը դատապարտուած մահուան:

Կրօնաւորը յանկարծ ցնցուեցաւ:

— Ի՞նչ կ'ըսես, որդեակ, զոչեց նա,  
աշխարհական ձեռքը պիտի զարնէ՞ զքեզ:

— Ոչ, հայր, պատասխանեց Սալվա-  
դորը, եթէ մեռնիմ, մարդկանց արդար  
վճռով չէ, այլ պատրիկի մը հրամանով:

— Ըսել է թէ զինքը ծանր կերպով  
նախատեր ես:

— Իմիններուս թշուառութիւնը զիս  
այնպիսի յուսահատութեան մղեց որ յանձն  
առի քանի մը ոսկիի համար եղեռնագոր-  
ծութիւն մը կատարել:



— Գո՞ւ, Սաւվադոր:

— Այո՛, հայր, սակայն գործելու վայրկենին սիրտս առաջ չի գնաց:

— Առած դրամդ ետ դարձուցի՞ր:

— Գողցան ինծմէ:

— Անիրաւութեամբ շահած դրամն երբէք օգտարեր չըլլար, ըսաւ կրօնաւորը վճռաբար:

— Պիտի ըսեմ ձեզի, շարունակեց Սաւվադորն, այն մարդուն անունն որ վաղը սպաննել պիտի տայ զիս, որպէս զի այն պարագաններուն մէջ, որոց վրայ պիտի համաձայնինք, օր մը յանձնէք զինքը Աւագանւոյն արդարութեան:

— Որդեակ իմ, ըսաւ կրօնաւորն, եթէ այս է քու այցելութեանդ նպատակը, անկարելի է ինծի խոստովանցնել զքեզ:

— Ինչո՞ւ համար, հայր:

— Որովհետեւ ազատ պիտի չըլլամ երբէք յայտնելու մարդու, այն անունը՝ զոր կուզես դու ինծի վստահիլ: Չե՞ս գիտեր թէ խոստովանանքի գաղտնիքը գերեզմանի մը նման քահանային սրտին խորը կ'իջնէ.

— Ուրեմն կարող չեմ վստահիլ մարդու:

— Եւ նոյն իսկ կրօնաւորի, ըսաւ հայր Յակոբոս: Եկուր իմ սենեակս:

Երկուքը երկար ատեն փակուած մնացին զուլս զլիւի փոքր սենեկին մէջ: Սաւվադոր ձկնորսը ցած ձայնով կը խօսէր, իւր բերանը զրեթէ կրօնաւորին ազանջին կպցուցած: Խօսակցութիւնը վերջացուց ըսելով.

— Այսպէս, հայր սուրբ, կը յուսամ թէ առիթը ներկայանալուն պիտի յայտնէք որու որ պէտք է ձեզի ըսած գաղտնիքս:

Կրօնաւորը աջ ձեռքն իւր կուրծքին վրայ դնելով ըսաւ.

— Կը խոստանամ քեզի. սակայն լաւագոյն չէ՞ եղեռան առաջնն առնուլ ապահովելով զքեզ մարդասպանին ձեռքէն: Հոս կեցիր, մեր սրբազան Սրբայէն արտօնութիւն կ'առնում զքեզ վանքին մէջ պահելու, ուր կրնաս քանի մը փոքր ծառայութիւններ ընել:

— Ոչ, հայր, ըսաւ ծերը, իմ կեանքս չարժեք պաշտպանութեան: Անիկա որ զիս այս կեանքէս պիտի ազատէ ինծի մեծ ծառայութիւն մը մատուցած պիտի ըլլայ: Վասն զի եթէ իմ դահիճս չի նե-



րեր ինձի այն եղեռնագործութիւնը զոր մերժեցի գործադրել, ես ալ նոյնպէս չեմ ներեր ինձի իրմէ առած ոսկիները: Չգեցէք, հայր որ իմ ճակատագիրս գործադրուի:

Կրօնաւորն այլ ևս չ'ընդգիմացաւ և արձրկեց իւր այցելուն: Ծերը ծունկի վրայ եկաւ և երեսը խաչ հանելէն յետոյ.

— Չեք օրհնութիւնը, հայր սուրբ, ըսաւ:

Կրօնաւորը ձեռքը դրաւ ձեր ձկնորսին վրայ.

— Գնա՛ հիմակ խաղաղութեամբ, ըսաւ անոր:

Թշուառ Սալվադորին կասկածներն ու վախը շատ ճշմարիտ էին. Լիտոյ ցամաք չեկած, սպաննուած էր: Երկրորդ առաւօտ ձկնորոններն իրենց ուռկանները ձգելու գնացած ատեն գտան զինքը դաշու նով սպաննուած այն նաւակին մէջ որ զինքը ցամաք պիտի հանէր:

Այս ողբերգական մահը արթնցուց ժամանակ մը այն դիւցազնական գործին յիշատակն որուն համար ձեր ձկնորսը Սալվադոր անունը ստանալու արժանի եղած էր: Նոյն իսկ Ս. Մարկոսի հրապարա-

կին քազինոններուն մէջ խօսուեցաւ ասոր վրայ, և երիտասարդ պատրիկներէն մեծագոյն մասը այս լուրը լսելուն ըսին.

— Ծեր Սալվադորը, շատոնց մեռած կը կարծէինք զինքը:

Շատ անգամ լսած ենք այս լրուցիչ և տխուր խօսքերն այնպիսի անձանց նրկատմամբ, որոնք իրենց նշանաւոր վայրկեաններն ունեցած են. սակայն յետոյ բոլորովին մոռացութեան մէջ ինկան, իրենց դամբանականը այս մի քանի բառերով կը ձևանար.

— Ի՞նչ կըսէք, տակաւին չէ՞ր մեռած:

Գ.

#### ԱԶՆՈՒԱԿԱՆ ՕՐԻՈՐԴԱՅ ՎԱՆՔԸ

Նախընթաց գլխոյն մէջ մեր պատմած դէպքերէն յետոյ տասնըեօթը տարիներ անցած են:

Մեծ իրարանցում մը կը տիրէ այն օրն Ազնուական օրիորդաց վանքին մէջ, որ ցամաք երկրի վրայ, Բատուայի զբաներուն մօտ հիանալի դիրք մը կը գրա-



ւէր: Արդէն երկար ատեն Նորին վսեմութիւնը, կուսակալն՝ տեսակցութիւն կ'ընէր մեծաւոր մօր հետ:

— Ի՞նչ կրնայ ըլլալ այս երկար տեսակցութեան պատճառը:

Ահա ինչ որ իրարու կը հարցնէին գիշերօթիկ օրիորդներն զբօսանքի ատեն, խմբուած վանքին քառանկեան մէջ: Եւ այս մանկամարդ զլուխները կը տաքնան, իրարու ականջէ կը փսփսան հազար տեսակ ենթադրութիւններ, հակառակ այն կանոնին՝ որ խստիւ կ'արգելու աշակերտաց իրարու հետ ծածուկ խօսիլը: Այս խօսակցութիւնը կը շարունակուէր հսկողներուն և աշխատաւոր քոյրերուն ներկայութեանը, որոնք ամէն վայրկեան կը ցրուէին խմբակներն ըսելով

— Շրջագայեցէք, օրիորդներ:

Անօգուտ ջանք, քիչ հեռուն նորէն իրարու քով կը խմբուէին:

Պէտք է խոստովանիլ թէ վանքին մէջ կարգապահութիւնը շատ խիստ չէր, և այս խեղճ քոյրերը չունենալով արիութիւն, չէին համարձակէր խստութիւն բանեցունել դեռատի օրիորդաց դէմ, որոնք ամենքն ալ վենետկոյ առաջնակարգ ըն-

տանեաց զաւակներն էին: Ասկէ զատ շատերը փոքրահասակ գիշերօթիկներ չ'ըլլալով հոն կը լրացունէին ընտանեաց ծոցը սկսած դաստիարակութիւնը:

Աշակերտուհեաց սերտարան մտնելու զանգակը զարկաւ, և քառանկիւնը պարպուեցաւ առանց աշակերտուհեաց հետաքրքրութիւնը յագենալու, և անոնցմէ ոչ ոք գիտցաւ թէ ինչ կ'անցնէր կը դառնար մեծաւոր մօր քով:

Մենք անոնցմէ աւելի բարեբախտ, կ'երթանք կը մտնենք այն սենեակն ուր Տիկին մայրը, ինչպէս աշակերտուհիք զինքը կը կոչէին, երկար ժամանակ խօսակցութեան մէջն է նորին վսեմութեան Բատուայի կուսակալին հետ: Նախ կը ճանչնանք կուսակալը, նոյն ինքն զօրավար Մարդինենկոն, զոր տեսանք Ս. Մարկոսի հրապարակին վրայ, այնքան ամբարտաւանութեամբ և այնքան արհամարանօք ժողովրդեան խումբերուն մէջ:

Մկրտիչ Մարդինենկոյ զօրավարը տարիներ անցնելէն յետոյ Բատուայի կուսակալ կարգուած, ներկայապէս Պերճափայլ Հասարակապետութեան ականաւոր անձինքներէն մին է: Երակոյտն անոր



յանձնած էր իւր հրամանը տանելու պաշտօնը Ազնուական օրիորդաց վանքին մեծաւորուհիին, ուր վենեձիա օրիորդը կը գտնուէր: Վանքը, ինչպէս վերն ըսինք, կը գտնուէր կուսակալին իշխանութեան մէջ. և այս միակ պատճառին համար ծերակոյտը կոմս Մարգինենկոն պատգամաւոր զրկած էր մեծաւոր մօր:

Մեծաւորուհին թէ իւր ծագմամբ և թէ Պետութեան իրեն վստահացած պաշտօնովն ինքզինքը կուսակալին հաւասար կը համարէր: Որով մասնաւոր դարձուածներու չի դիմեց բուն կերպով վիճարանելու յանուն ծերակուտին Մարգինենկոյին իրեն հաղորդած որոշողութեանց դէմ: Կերևի թէ կուսակալին յանձնուած պատգամաւորութիւնը ծանր խնդրոյ մը շուրջն էր. վասն զի Տիկին մեծաւորուհին, որուն քաղցրութիւնն և անայլայլակ բնութիւնը ամենուն գովեստին արժանացած էին, այս վայրկենիս յայտնապէս շղագրգռութեան մէջ կը գտնուէր: Մեր սենեակ մտած տեսնը, ուր Մարգինենկոյ ընդունուած էր, կարծես վիճարանութիւնը վերջ գտած, և մեծաւորուհին ոտքի ելած էր կուսակալին հրաժեշտ տալու, ըսելով.

— Անօգուտ է ասոր վրայ պնդել, Տէր կոմս, իմ պարտականութիւնս բացարձակ կ'արգելու զիս ձեր առաջարկներուն համամիտ ըլլալ:

Այս խօսքերն այնպիսի ցուրտ շեշտով մը ըսաւ որ խօսակցութիւնը կարճ կտրելու հանգամանքն ունէին: Սակայն կուսակալը կատարեալ մարդավարութեամբ վերստին խօսք առաւ.

— Կերեցէք, Տիկին Մեծաւորուհի, դուք ձեր պարտքին թելադրութեամբ կը խօսիք, սակայն իմ պարտականութիւնս ալ է ձեզմէ չի բաժնուած իմացնել ձեզ իմ վերջին եզրակացութիւնս:

— Ըսէք ուրեմն, պատասխանեց Մեծաւորուհին, քիչ մը մեծամտութեամբ:

Եւ կրկին անգամ նստաւ լսելու ինչ որ իւր այցելուն ունէր տակաւին ըսելիք:

— Տիկին, շարունակեց Մարգինենկոյ յարգանօք խոնարհելով, պատիւ կը համարիմ յայտնել ձեզ վերստին թէ հոս եկած եմ ոչ միայն իբր կուսակալ Բատուայի իշխանութեան, որուն իրաւասութեան ներքեւ կը գտնուի ձեր վանքն, այլ իբր պատգամաւոր Մերակուտին որուն հրամանները կը հաղորդեմ ձեզ: Աւագա-



նին վճռած է որ Պետութեան որբուհին վենեձիան, Աղբիականին աղջիկը, բաւական երկար ատեն կեցած Ազնուական օրիորդաց վանքին մէջ՝ պիտի ելլէ հիմայ անկից՝ ամուսնանալու համար մեր վենետկեան պատրիկութեան անդամներէն միոյն հետ զոր Բրէկատներն որոշած են:

— Սակայն վերստին կը կրկնեմ, Տէր, պատասխանեց աշխուժով Մեծաւորուհին, օրիորդ վենեձիան յայտարարած է ինձի, իր մօրը՝ ի Տէրն-Մեր, թէ չուզեր այս տունէն բաժնուիլ և իւր միակ փեսան Յիսուս Քրիստոս պիտի ըլլայ: Կուզէ՞ք ուրեմն բնութիւն բանեցնել իր կամքին վրայ:

— Վենետկոյ որբուհին, պատասխանեց խստութեամբ Մարդինենկոյ, պէտք է Յերակուտին կամքէն դուրս ուրիշ կամք մը ունենայ, որուն ազախինն է ինքը:

— Ի՞նչ, ազատօրէն եղած ուխտ մը կրնայ բեկանիլ Յերակուտին հրամանով:

— Այո՛, Տիկին, եթէ այն է իւր հաճութիւնը, կամ մանաւանդ եթէ Պետութեան շահը զայն կը պահանջէ

— Շատ աղէկ, Տէր, ըսաւ մեծաւորուհին զսպուած տհաճութեամբ մը, կը

խոնարհիմ: Սակայն պետութենէ վեր կայ եկեղեցին, տոժէն վեր կայ մեր Սրբազան Հայրապետն: Այո՛, կը խոնարհիմ ակամայ և բռնադատեալ, և յայտնապէս կիմացընեմ թէ պիտի բողոքեմ Նորին Սրբութեան Գելեստինոս Գ.Ն: Ինքն միշտ պաշտպան եղած է կոյսերու, և որ Յովհաննատ՝ Արքի խնդիրը վերաքննեց և զինքը մարտիրոս հռչակեց, անշուշտ պիտի չի զլանայ ձեռք առնել Աղբիականին աղջկան շահերը:

Մարդինենկոյ չար փախտով մը և խոնարհելով միանգամայն բարեպաշտ Տիկնոջ դիմաց ըսաւ...

— Երբ կամիր, Տիկին, ազատ էք ու է բողոք ընելու: Սակայն դիտել կուտամ ձեզ թէ Յերակուտին ինձի տուած հրահանգներուն մէջ կայ նաեւ խնդրել ձեզմէ որ ներկայացնէք ինձի Աղբիականին աղջիկին, որպէս զի կարենամ անձամբ հաղորդել իրեն Աւագանիին հրամանները:

— Ա՛հ, անոր վրայօք խօսած եմ արդէն իրեն ձեզմէ ընդունած պատգամաւորութենէն յետոյ, ըսաւ Մեծաւորուհին խոր հառաչանք մը արձրկելով:



— Հոգ չէ, Տիկին, թոյլ տուէք ինձի կատարել պատգամաւորութիւնը անձամբ և այն ձևով որ ինձի յանձնուած է: Անգամ մ'ալ, պատիւ կը համարիմ խնդրել ձեզմէ որ հաճիք ներկայացնել ինձի վեներալոյ սրբուհին:

Մեծաւորուհին յայտնի դժկամակութեամբ հնազանդեցաւ և հրամայեց աշխատաւոր մայրապետի մը բերել հակահառութեան առարկայ եղողը: Թէպէտ Բատուայի կուսակալն իւր պաշտօնին բերմամբ շատ անգամներ եկած էր Ազնուական օրիորդաց վանքը, սակայն երբէք առիթ չէր ունեցած վենեձիան տեսնելու կամ գոնէ երբէք զինքը չէր դիտած: Արդ, երբ տեսաւ սպիտակ քողին ներքև, խաղաղ ու պայծառ վեհութեամբ մը վենեձիային ներս մտնելը, չկրցաւ իւր սքանչացումն զսպել: Հակառակ կարի մանկամարդ ըլլալուն, մեծղի կերպարանք մը ունէր: Ազրիականին աղջիկը կատարեալ վեներալուհի մ'էր, խարտեաշ մագերու երկայն հիւսուածները կը շրջանակէին այնպիսի գեղեցիկ դէմք մը՝ որ ոչ ոք ամենափոքրիկ թերութիւն մը պիտի գտնէր վրայ: Իւր աչքերն, մութ երկնագոյն ինչպէս Ա-

զրիականն, որուն աղջիկն էր, այնպիսի սեւոտւմ մը ունէր՝ որ կը բռնադատէր ամենուն աչքերը խոնարհելու իր դիմաց:

Բատուայի կուսակալն այս գեղեցիկ և հոյակապ աղջկան մտնելը տեսնելով՝ տարտամ վրդովում մը ունեցաւ, ինքն որ մանուկ մը տեսնել կը կարծէր և որ պահ մը առաջ Ազնուական Օրիորդաց վանքին մեծաւորուհիին հետ անպատկառօրէն երկար վիճաբանութիւն ըրած էր, այս տասնընթեք տարուան մանկամարդ աղջկան դիմաց խոռվեցաւ: Բաւական սեպեց քանի մը բառերով Ծերակուտին յանձնած պատգամաւորութիւնը բացատրել, որուն վենեձիան արժանի չի համարեցաւ և ոչ բառ մը ըսել: Երբ լինցուց ըսելիքներն, ինչպէս որ Ազրիականին աղջիկը իր դիմաց ոտքի վրայ կը կենար անբարբառ իւր խաղաղ վեհութեան մէջ, Մարդինենկոյ վայրկեան մը լուռ կենալէն յետոյ հարցուց.

— Ի՞նչ պատասխան պարտիմ տանել, օրիորդ, ձեր կողմանէ Աւագանույն:

Վենեձիան առանց անոր կողմը դառնալու, ծանր և ներդաշնակ ձայնով մը խօսեցաւ, որուն առանձնայատուկ շեշտ



մը կու տար Վենետիկեան գաւառաբար-  
բառն:

— Մեծաւորուհիս ձեզի պատասխանը  
չի տո՞ւաւ իմ կողմանէս:

— Բայց ես կը փափազիմ այս պա-  
տասխանը ձեր բերնէն լսել, որպէս զի  
ապահով ըլլամ թէ այն քու բերանդ բռնի  
դրուած չէ:

Մեծաւորուհին յայտնի կը քոտ շարժ-  
մամբ մը ոտքի ելաւ: Իսկ Վենեճիան բա-  
ւական համարեցաւ կոմսին վրայ ցուրտ  
արհամարհոտ ակնարկ մը նետել:

— Շատ աղէկ, Տէր, ըսաւ, ես ինքս  
կը յայտնեմ ձեզ իմ սրտիս գաղտնիքը:  
Ես որբուհի մ'եմ մինակ աշխարհիս վը-  
րայ: Հոս գտած էի ընտանիք մը, բարե-  
կամներ և գորովագութ մայր մը:

Այս վերջին խօսքերն ըսելու ատեն  
ձայնն այլայլեցաւ, զոր մեծաւորուհին չի  
կըցաւ լսել առանց արցունքը զսպելու:  
Սակայն Վենեճիան իսկոյն սրտապնդեց  
ինքզինքը ու շարունակեց.

— Որով շատ բնական է թէ իմ մե-  
ծագոյն փափագս եղաւ ամբողջ կեանքս  
այս տան մէջ անցնել ուր այնքան եր-  
ջանիկ օրեր տեսած եմ:

— Դուք, օրիորդ, կը մոռնա՞ք... Խօս-  
քը կարեց Մարգրինէնկոյ:

— Ամենեկն բան մը չեմ մոռնար,  
կըկնեց Սդրիականին աղջիկը՝ քիչ մը մե-  
ծամտութեամբ: Կը յիշեմ մանաւանդ՝ որ  
ես Վենետիոյ որբուհին եմ և հնազանդու-  
թիւն պարտիմ Մերակուտին: Ուրեմն զձեզ  
դրկողներուն ըսէք թէ պիտի հնազան-  
դիմ ձեր բերած հրամանին:

Կուսակալն պատկառանօք խոնարհեցաւ  
իրբ թէ դիմացինը թագուհի մը ըլլար,  
ու ըսաւ.

— Վանքը ձգելէն առաջ պէտք է հագ-  
նիք այն զգեստներն որոնք ձեր աստի-  
ճանին կը պատշաճին: Չեր կաթնքոյրը,  
Ֆիամէղդան, զոր Աւագանին ձեր անձին  
կը կցորդէ, ձեզի պէտք եղած խնամքնե-  
րը պիտի ընէ:

— Ֆիամէղդան հո՞ս է, հարցուց Վե-  
նեճիան, որուն երեսը յանկարծ պայծա-  
ռացան: Դառնալով մեծաւորուհիին ըսաւ.  
Մի, մեծաւոր մայր, շնորհք ըրէք, թոյլ  
տուէք որ զինքը տեսնեմ:

Մեծաւորուհին պատասխանելու ժամա-  
նակ չունեցաւ: Դուռ մը բացուեցաւ, բար-  
ձրահասակ և ուժեղ աղջիկ մը, այնքան



սևորակ որքան վենեծիան խարտեաշ էր, եկաւ անոր վիզը պլլուեցաւ ըսելով.

— Հոս եմ, քոյր իմ, հոս եմ:

Կուսակալն և մեծաւորուհին ակնարկ մը փոխանակեցին, և երկուքն ալ լաւագոյն համարեցան քաշուիլ, թողլով այս երկու մանկամարդ աղջիկներն իրենց սիրոյն զեղման մէջ:

Երկար ատեն այսպէս իրարու պլլուած կեցան: Երբ Ֆիամէդդա բաժնեց վերջապէս իւր թևերը կաթնքրոջ վիզէն, իւր շուրջը զարմացական ակնարկ մը նետեց ըսելով.

— Ո՛հ, առանձին ենք. կրնանք լաւ մը շաղակրատել: Ո՛րչափ քաղցր է զիրար վերստին տեսնելը, — և քանի մը քայլ հեռանալով. — Գիտէ՞ք սիրելի տիրուհիս, ըսաւ, թէ որքան գեղեցիկ էք, վենետկոյ մեր ամենէն հպարտ պատրիկուհիները պիտի նսեմանան ձեր առջև:

— Խենդ, ըսաւ վենեծիան:

— Այո՛, կ'ապահովցնեմ զձեզ թէ՛ առաջին անգամ երբ հանդիսաւոր օր մը դքսական պալատն երևնաք, դուք հանպիսին թագուհին պիտի ըլլաք:

Ադրիականին աղջիկը մեղամաղձութեամբ գլուխը թօթվելով,

— Իմ երազած ճակատագիրս, ըսաւ, հոն չէր:

— Շատ դժուարահաճ էք, Տիրուհիս, ըսաւ Ֆիամէդդան իր սովորական համարձակախօսութեամբ, ուրիշները պիտի նախանձին ձեր բաղդաւորութեան վրայ:

Վենեծիան ծիծաղեցաւ հրեշտակային ժպիտով մը:

— Գէթ դու զիս պիտի չի թողուս, ըսաւ:

— Ո՛հ, երբէք երբէք, ըսաւ Ֆիամէդդա զուարթօրէն, քանի որ Աւագանին զիս ձեր անձին կը կցորդէ, ես զձեզ զարդարող տիկինը պիտի ըլլամ: Շուտ եկէք, որպէս զի սկսիմ իմ պաշտօնս, փորձելով ձեր վրայ բոլոր այն գեղեցիկ զարդարանքները, զորս ձեզի բերած եմ ձեր նշանածին այցելութիւնն ընդունելու համար:

— Իմ նշանածս, դու զինքը կը ճանչնամ, Ֆիամէդդա:

— Վենետիկէն բաժնուելու ատեն լսեցի անոր անունը: Տակաւին գաղտնիք մ'է այս, և ես մէկու մը անգաղտնապահութենէն իմացայ: Ապահով եղիք, Տիրուհիս, վենետկոյ առաջնակարգ ընտանեաց միոյն



անունը կը կրէ, կը կոչուի Ֆէլիչէ Պատոէր:

— Այո՛, ստուգիւ նշանաւոր ընտանեաց միոյն սերունդն է:

— Վենետկոյ մէջ ամէն ոք կը ճանչնայ գեղեցիկն Ֆէլիչէ Պատոէր:

— Բաց ի ինձմէ:

— Է՛հ, շուտով պիտի ճանչնաք զինքը, վասն զի ստոյգ զիտեմ թէ հիմայ վանք պիտի գայ: Եւ ահա, նայեցէք հոն, քառանկեան մէջ, ահաւասիկ ինքն ոք Բատուայի կուսակալին, Մկրտիչ Մարդինենկոյ իշխանին հետ կը խօսի: Կուսակալը տժգոհ կերպաբանք մ'ունի:

Յիրաւի Մկրտիչ Մարդինենկոյ՝ մեծաւորունհին հրաժեշտ տալէն յետոյ, վանքին քառանկեան մէջ հանդիպեցաւ Ֆէլիչէ Պատոէր երիտասարդին ոք վանք եկած էր իր նշանածին ներկայանալու: Կուսակալը բնաւ տեղեակ չէր թէ Աւագանին Ֆէլիչէ Պատոէրն Ազրիականին աղջկան փեսայ ընտրած է: Առանձնայատուկ պատճառներով, զորս ընթերցողը պիտի իմանայ այս վէպին ընթացքին մէջ, կուսակալը կը յուսար թէ հակառակ իւր տարիքին (Մարդինենկոյ այն ատեն զրեթէ

քառասուն տարուան էր) Ծերակոյտը զինքը կ'ընտրէ: Ֆէլիչէ Պատոէրին անակընկալ հանդիպումն զինքը բոլորովին յուսախաբութեան մէջ ձգեց:

Բայց այս յուսախաբութիւնն ոչ միայն կործանումն էր իւր երկար ատենէ որոճացած և մեծագոյն ձեռնհասութեամբ յառաջ տարած ծրագրին, այլ և հիմայ Մարդինենկոյ ներքին մղում մը կը կրէր և անձանօթ զգացում մը իր մէջ կը զարթնուր: Երբ լսեց Ֆէլիչէ Պատոէրին բերնէն թէ ինքն է Վենեճիային նշանածը, ոչ միայն սաստիկ ցաւ զգաց, այլ և անագորոյն կուսակալն հասկըցաւ թէ այն պղինձէ սիրտն ոք երբէք ո՛ր և է կնկան համար չէր բաբախած, այն վայրկեանին ամբողջովին կը վերաբերէր Ազրիականի աղջկան: Վենեճիայի սէգ և ազնուական գեղեցկութիւնը զինքը ընկճած էր: Կոմս Մարդինենկոյին քով ո՛ր և է զգացմունք, աղէկ կամ գէշ, չափ և սահման չունէին:

Կուսակալը հասկըցաւ թէ իւր բուռն ու անսանձ բնութեան սաստկութեամբ կը սիրէր Ազրիականին աղջիկը: Ուստի երգուընցաւ ինքն իրեն թէ Վենեճիան երբէք Ֆէլիչէ Պատոէրին կողակիցը պիտի



չըլլայ : Սակայն երիտասարդ պատրիկն չի կասկածելով ամենևին կուսակալին մտքին մէջ յուզուած տխուր գաղափարներուն վրայ, կը ծիծաղէր, կը խօսէր զուարթօրէն, երբ յանկարծ կենալով ըսաւ իւր խօսակցին.

— Երեցէք, Տէր կոմս, դուք ալ կըրնաք երևակայել թէ ձեր վսեմութեան նըման անձնաւորութեան մը հետ խօսելով ժամանակ անցնելէն աւելի, կարեւոր գործ մը ունիմ կատարելիք. ինչպէս կը գտնէք այս զարդարանքը, — աւելցուց նա իւր կրունկին վրայ շրջելով, որպէս զի դիտել տայ կուսակալին իւր արդուզարդին բոլոր վայելչութիւնը, — Ֆիորէնձայի վերջին նորոյթն է :

Մարդիներնկոյ դիտելով Ֆելիչէ Պատոէրին հեռանալը, դառնութեամբ կ'ըսէր ինքն իրեն.

— Ինչ, ա՞յս է ուրեմն անոր սահմանուած ամուսինը. ամբողջ Իտալիոյ ամենէն թեթևսուիկը թէ ոչ ամենէն յիմար ազնուականն : Ոչ, ոչ, այս ամուսնութիւնը երբէք պիտի չի կատարուի. անշուշտ միջոց մը պիտի գտնեմ արգիլելու զայն : Իսկ վենեձիան օգնութեամբ Ֆիամէդ-

դային հագաւ ոսկիով բանուած և ակունքներով զարդարուած ճամկաւոր դիպակէ շքեղ զգեստ մը, զոր Ֆիորէնձայի իշխանն, Գոգմի Մէտիչի, նորաձևութեան կարգ անցուցած էր. եզական մարդ մը որ զիտէր ըլլալ միանգամայն մեծ քաղաքագէտ մը, մեծ քաղաքացի մը — հայր հայրենաց — և աշխարհի առաջին վաճառականը :

Ֆելիչէ Պատոէր երիտասարդն երբ իւր նշանածին ներկայացաւ, հակառակ իւր հանրածանօթ համարձակ կերպին, բոլորովին լեզուն կապուեցաւ, աչքերը շլացան : Փոխանակ իւր պատրաստած անձնագով և մեծամիտ ձեով բարև տալու, ծունկի վրայ եկաւ ու համեստ ձեով մը ըսաւ.

— Օրիորդ, Ֆրանչեսքոյ Ֆոսքարի տուժը զիս ձեզի ղրկելով այնպիսի պատիւ մը ըրաւ ինձի որուն անշուշտ արժանի չէի : Կրնամ արդեօք յուսալ, օրիորդ, թէ պիտի հաճիք ընդունել իմ խնդրանքս :

Եթէ վենետիոյ ամբողջ պճնասէր երիտասարդութիւնը, որուն Ֆելիչէ Պատոէր նշանաւոր տիպարներէն մին էր, եթէ բոլոր Ս. Մարկոսի հրապարակին քաղինու-



ներուն դատարկապորտ յաճախորդները հանդիսատես ըլլալին, թէ երիտասարդ պարապորդն ինչպիսի՛ յարգական ակնածութեամբ զրուցեց այս փոքրիկ բանախօսութիւնը, յիրաւի շատ պիտի զարմանային:

Ազրիականին ազջիկը վայրկեան մը անշարժ և լուռ կեցաւ մեղամաղձոտ ամփոփման մէջ: Վերջապէս պատասխանեց այս միակ խօսքերը.

— Աւագանւոյն ամենախոնարհ աղախինն եմ:

Ֆէլիչէ Պատոէր օրիորդին ըսած խօսքերը իբր յայտարարութիւն առնելով ոտքի ելաւ ողջունելով զինքը: Սակայն ինչպէս Մարդինենկոյ ըսած էր, այս երիտասարդը յիրաւի ամբողջ Իտալիոյ մեծագոյն յիմարն էր. չէր կարող երկար ատեն պահել իր ասպետական դիրքն՝ զոր առած էր Վենեճիային հանդէպ: Իր սովորական կրունկին վրայ աշխոյժ դարձուածքովը, որով քազինոներուն մէջ մեծ յաջողութիւն ձեռք բերած էր, գտաւ ինքզինքը յանկարծ երկու պատուհաններու մէջտեղը դրուած Մուրանոյի հայելիի մը դիմաց, որ իրեն մեծ ուրախութիւն պատ-

ճառեց: Սկսաւ ինքնահաճութեամբ ինքզինքը դիտել և ժպտիլ, միանգամայն իւր մետաքսէ տալմատական զգեստը շտկրտել որ ծունկի գալովը քիչ մը ճըմլոթկած էր:

— Դուք հոս անշուշտ շատ կը ձանձրանաք, ըսաւ, անգամ մ'ալ իւր կրունկին վրայ շրջելով իբր հողմաշարժ մը զոր յանկարծական հով մը հիւսիսէն հարաւ կը դարձնէ:

Վենեճիա խոր հառաչանք մը արձրկելով ըսաւ.

— Ընդհակառակն, այս տանը մէջ շատ երջանիկ օրեր անցուցած եմ, և ասկէ վերջը ինչ ալ հանդիպի՝ միշտ պիտի յիշեմ երկրիս այս անկիւնը՝ զոր կը յուսայի երբէք չը լքանել:

— Հէ՞, ըսաւ Ֆէլիչէ, ուսերը վեր նետելով:

Իւր գրեթէ մանկական դէմքն, որ իր արդուզարդով զբաղած աչքին ուրիշ բան չէր տեսնուեր, յանկարծ ապուշ կերպարանք մը առաւ: Սակայն այս բանս վայրկեան մը տևեց. իւր շնորհալի դէմքն իսկոյն ժպտով մը լուսաւորուեցաւ, և թեթեւ մը ուսերը բարձրացնելով ըսաւ.

— Կը հասկընամ, տակաւին դուք ծա-



նօթութիւնն չունիք այն ամէն վայելքներու զոր վենետիկը ձեզ վերապահած է: Անշուշտ հետուէն միայն տեսած էք դքսական պալատը և Ս. Մարկոսի հրապարակը:

— Եւ ոչ իսկ այնչափ. այս տունը մտնելէս յետոյ երբէք ոտքս դուրս դրած չեմ:

— Եւ դուք զձեզ երջանիկ կը համարէք:

— Շատ երջանիկ, իմ առանձնական խցիկիս խորէն հոգիս կը բարձրանայ առ Աստուած իբր ուրախութեան և երախտագիտութեան օրհներգութիւն մը:

— Որովհետեւ չէք տեսած վենետիկն և իւր հանդէսները, ըսաւ Ֆէլիչէ Պատոնէր, տակաւ տաքնալով: Ո՛վ վենետիկ, դրախտ աշխարհի, երիտասարդութեան վայելքներու խոստացեալ երկիրը, հաճոյքներու տաճար: Դուք հոն քիչ ատենէն պիտի երևնաք: Լճակին վրայ գիշերային հանդէսները, դուք հոն պիտի գտնուիք. Մեծ — Զրանցքին մարմարեայ պալատներուն մէջ պարահանդէսները, դուք հոն պիտի երևնաք իբր թագուհի: Իսկ մեր թատերախաղերը, երևակայեցէք անգամ

մը թէ Ֆիրլէնձայէ ղրկած են մեզի սքանչելի ձեռնածուներ...:

— Ամենեկին փափաք չ'ունիմ զանոնք տեսնելու: Չեր բոլոր թատերախաղերն երբէք չեն արժեր այն հաճոյքը զոր վանքին պարտէզին մէջ իմ ձեռքովս մշակած ծաղիկները կուտան ինծի:

Ֆէլիչէ Պատոնէրի զուարթ դէմքը դարձեալ տհաճ երևոյթ մ'առաւ:

— Յիրաւի չեմ ըմբռներ ձեր գաղափարն, ըսաւ նա յուսահատօրէն: Սակայն ես կը փափագէի այնպիսի բան մ'ընել որ կարենար ձեզ հաճելի ըլլալ. ուրեմն կարող պիտի չըլլամ:

— Թերևս, ըսաւ վենետիկացի զուարթներէն:

— Իմ սիրելի մայրս կը համարի թէ այն միակ առաքինութիւնն է զոր պահած եմ մեր նշանաւոր ազգատոհմէն, ըսաւ երիտասարդը ժպտելով:

— Կը ներէ՞ք արդեօք որ ձեզի հետ անկեղծօրէն խօսիմ, շարունակից Ադրիականին աղջիկը, ցոյց տալով աթոռ մը երիտասարդ պատրիկին:

— Ամենայն սիրով, օրիորդ:

— Ազատ թող զմեզ, Ֆրամէդդա, Ը-



սաւ Վենեճիան, հեռացունելով իր քովէն սենեկապանուհին, որ մինչև այն վայրկեանը հանդիսատես եղած էր տեսակցութեան:

Ֆրամէզդան դուրս ելաւ, և Ազրիականին աղջիկը երկար ատեն մինակ մնաց Աւագանուոյն ընտրած նշանածին հետ:

Երբ սենեկապանուհին վերադարձաւ, Ֆէլիչէ Պատոէր սաստիկ այլայլած կերևէր, ինչպէս կարող է ըլլալ մէկն որ բոլոր կենացը մէջ իր միակ փառասիրութիւնն եղած է, Վենետկոյ ամբողջ երիտասարդ պատրիկներուն ամենէն շնորհալին ըլլալը: Սակայն, ինչպէս Վենեճիան գուշակած էր, այս թեթևամիտն չար բնութիւն չունէր. և ճշմարիտ յուզուած շեշտով ըսաւ իրեն նշանածին:

— Ամէն բանէ առաջ, օրիորդ, թոյլ տուէր ինձ խոստանալ թէ ես միշտ ձեր ամենախոնարհ և հնազանդ ծառան պիտի ըլլամ: Ուրեմն կամօք կը հրաժարիմ ձեր խնամութեան պատուէն, և քանի որ կը փափագիր չի լքանել այս յարկը, հաւաստի եղիր թէ ես անձամբ պիտի պաշտպանեմ ձեր խնդիրը Մերակուտին և Ֆրանչեսքոյ Ֆոսքարի տոժին դիմաց:

— Ի՞նչպէս շնորհակալ կրնամ ըլլալ ձեզ, ըսաւ Վենեճիան, որուն արտևանունը արցունքով թրջեցան:

— Պահելով ինձ նկատմամբ բարի յիշատակ մը, ըսաւ Ֆէլիչէ Պատոէր ժպտելով:

Այս վերջին խօսքերն ըսելէն յետոյ, երիտասարդ պատրիկը ծոցաւ խորին խոնարհութեամբ, և իւր պաշարին մէջ զբռնուած ամենէն հանդիսական բարևը տալէն յետոյ, պատրաստուեցաւ դէպ ի դուռը երթալ: Սակայն հոն չի հասած միտքը բան մը ինկաւ, Ֆէլիչէն կեցաւ, ահանջը քերց:

— Չար սատանայ, մտածեց, ի՞նչ պիտի ըսեն միւսները հոն քազինոյին մէջ. . . . Մ՛հ, հո՛գս. լեզուս բերնիս մէջ կը դառնայ անոնց պատասխանելու:

— Ի՞նչ ունիր, հարցուց անոր Վենեճիան:

— Ոչ ինչ, օրիորդ, ըսաւ, իսկոյն իւր սնապարծ անձնահաճ կերպարանքն վերըստանալով: Ինքնիրենս առանձին կ'ըսէի, աւելի ինձի քան մեր երկուքին՝ մենք նշանաւոր ծառայութիւն մը պիտի մատուցանենք Վենետկոյ առաջնակարգ տիկիննե-



ըէն միոյն, այսինքն... Հէ՛, ինչ կ'ըսէի հիմայ, .... Կերեցէք, ես.... ցտեսութիւն օրիորդ:

Ուրիշ յիմարաբանութիւն մը չընելու համար, շուտով դուռը գոցեց ու վազեց Բատուայի կուսակալին քով, որ քառանկեան երկայն սրահներուն մէջ մեծաքայլ կը շրջագայէր:

— Է՛ ուրեմն, հարսնիքն ե՞րբ է, ըսաւ Մարդինենկոյ, երբ երիտասարդն իր քովը հասաւ:

— Հարսնիքը, սիրելի կուսակալ, ծագատկին մնաց, կամ լաւ ևս պիտի չըլլայ, պատասխանեց Ֆէլիչէ Պատտէր, խիստ տժգոհ իւր ձախողանքն այսպէս մէկէն խոստովանիլ բռնադատուելուն վրայ:

Մարդինենկոյին աչքերը յանկարծ վառուեցան, և չար ժպիտով մը ըսաւ.

— Ա՛հ, մերժուեցա՞ր ուրեմն:

— Այսինքն թէ, ըսաւ շիք երիտասարդը վիրաւորուած, ես ազատ կամօքս հրաժարեցայ Ադրիականի աղջկան հետ ամուսնանալու պատուէն:

— Չեզի հաճելի չեղա՞ւ աղջիկը. դուք շատ դժուարահաճ էք:

— Ընդհակառակն, իմ տեսած աղջիկ-

ներուն մէջ օրիորդն ամենէն աւելի պաշտելին է. սակայն նա յայտնեց թէ իւր փափագն է ինքզինքը Աստուծոյ նուիրել. և որչափ ալ ցաւալի եղաւ ինձի, չուզեցի բռնանալ իր վրայ:

— Ազատ թարգմանութիւն. դուք հաճելի չեղաք. շատ աղէկ, ուրիշ մը աւելի երջանիկ պիտի ըլլայ, ըսաւ Մարդինենկոյ արագաքայլ հեռանալով:

— Ի՛նչ, արդեօք մտադիր է անո՞ր հետ ամուսնանալ, մտածեց Ֆէլիչէ Պատտէր. գրեթէ ցաւելով վէնեճիային նկատմամբ իւր ցոյց տուած ասպետական վարմունքին վրայ: Ո՛չ, ասկից դուրս չեմ ելլեր ես մինչև որ իմանամ թէ խաբուած եմ:

Ֆէլիչէ Պատտէր կուսակալի տեղն անցնելով սկսաւ հայհոյելով շրջագայել քառանկեան տխուր կամարներուն տակ:

Իսկ վէնեճիան կը պատրաստուէր խօսարանէն դուրս ելլելով իւր խրցիկը քաշուիլ, հոն վերստին ուրախ սրտիւ իւր կուսական զգեստները հագնելու, երբ Մարդինենկոյ ներս մտաւ: Կը ճառագայթէր նա, և մինչդեռ վէնեճիան յանկարծակիի եկած և միանգամայն տժգոհ, կը նայէր



անոր վերադառնալուն պատճառը հարցընելու երևոյթով, Մարդինենկոյ իսկոյն ըսաւ.

— Շատ լաւ ըրիր, օրիորդ, մերժելով այն երիտասարդին ձեռքը: Չեզի պատշաճ էր, և Յերակոյտը սխալած է ընտրութիւնը անոր տալով: Կարող եմ եղած որոշողութիւնը փոխել:

— Ինչպէս, դուք կուզէր...

— Այո՛, սակայն պայմանաւ մը միայն.

— Ո՞րն է այն պայմանն, հարցուց Վենեճիա.

— Այսինքն թէ դուք անձամբ ձեր ընտրութիւնը ընէք: Ես վրաս կ'առնում զայն Աւագանիէն վաւերացընել:

— Բայց, եթէ ուզեմ իսկ, տէր կոմս, — և դուք գիտէք թէ չունիմ այնպիսի կամք — ինչպէ՛ս կրնամ ընտրութիւն մ'ընել, ես որ բոլոր Վենետկոյ ազնուականութեան մէջ մի միայն անձը այն երիտասարդն կը ճանչնամ, որ ասկից մեկնեցաւ:

— Դուք կը ճանչնաք Վենետկոյ ուրիշ ազնուական մ'ալ. ըսաւ Մարդինենկոյ շեշտելով մէկիկ մէկիկ այս բառերը:

— Ո՞վ:

— Զիս:

— Դո՛ւք, տէր կոմս, դուք կուզէիք...

— Ես ձեզի չնաշխարհիկ կեանք մը կուզեմ պատրաստել, ըսաւ Մարդինենկոյ, բարձրացնելով գլուխը: Այսօր ես Բատուայի կուսակալն եմ, տարի մը չանցած Վենետկոյ տոժը պիտի ըլլամ:

— Դո՛ւք:

— Այո՛, ես. Լորետանային օգնութեամբ վար պիտի առնում ձեր Ֆրանչեսկոյ Ֆոսքարին: Այս ձեռքն՝ զոր ձեզ կ'ընծայեմ՝ պիտի կընէ դքսական մատանին, իմ ճակատս թագ պիտի կապէ և դուք պիտի ըլլաք Վենետկոյ դշխոյն: Ըսէք, միթէ նախանձեղի վիճակ մը չէ՞ այս:

Աղբիականին աղջիկն այս անհաճոյ խօսքերուն ամենևին պատասխան չի տուաւ, և եթէ մէջտեղ հանած ըլլար այս խօսքերն՝ կարող էին սպաննել տալ Մարդինենկոն կախազանին վրայ կամ թիւմպիլենրուն\* մէջ: Այլ միայն դէպի դուռն ուղղուեցաւ ուսկից Ֆիամէզդան դուրս ելած էր, և կանչեց զինքը քանի մը անգամ ձայնելով:

\* Թիւմպիլ կը կոչուին դրսական պալատին կապալ բաժածք անասողին ներքև գտնուած բանտերը. Մ. Թ.



— Ի՞նչ կուզէք ընել, հարցուց Մարդինենկոյ:

— Ներեցէք, Տէր կոմս, վայրկեան մը, շուտով կուգամ, ըսաւ Վենեձիան. և դառնալով իր սենեկապանուհին.

— Գնա, ըսաւ, թէ որ Ֆէլիչէ Պատոէր տակաւին վանքէն դուրս ելած չէ, բեր զինքը հոս:

Ֆիամէզզան առանց բառ մը ըսելու շտապաւ դուրս ելաւ՝ և ամենէն կարճ ճամբով վանքին արտաքին դուռը գնաց ուր իրեն կը սպասէր տարօրինակ տեսարան մը:

Կոնտոլլավարն Ռիքարտոյ, զոր տասնըեօթը տարի առաջ իր ըրած քաջագործութենէ յետոյ չենք տեսած, հոն գաւազանով մը կը մենամարտէր երկայն սուսերով զինուած զինուորի մը դէմ, որ կը շանար հարուածել կոնտոլլավարը:

Ֆիամէզզա երկու կռուողներուն մէջ նետուելով պոռաց.

— Խտնթ էք. և դառնալով յատկապէս կոնտոլլավարին. Կոտե՛լ վանքին դրան զիմաց և գաւազանով մը հաստատուն երկայն սուսերի դէմ. ուրեմն կուզես զքեզ մեռցնել:

— Մի՛ վախնար, իմ ֆիամմա, ֆիամինա, ֆիամէզզաս, ըսաւ Ռիքարտոն ձախ ձեռքով թեթեւ մը հրելով մանկամարդ աղջիկը, և միանգամայն աջ ձեռքով ինքզինքը կը պաշտպանէր իր հակառակորդին ահաւոր հարուածներուն դէմ:

Սինեկապանուհին վայրկեան մը ուշադրութեամբ դիտեց այս վերջինը, վերջապէս ճանչնալով զինքը գոչեց.

— Բայց Բարթողիմէոսն է, յիսնապեան Բարթողիմէոս:

— Այո՛ ինքն է, նոյն ինքն, պատասխանեց կոնտոլլավարը: Ազնուական Օրիորդաց վանքն եկած է իր արժանաւոր տիրոջը, Մարդինենկոյ կուսակալին հետ: Երևակայէ անգամ մը, ֆիամէզզա, թէ տասնըեօթը տարիներէն վերջ յիմարը չէ կրցած մարսել Գասթելլանի կամուրջին վրայ իրեն պատահածն. շատ ոխակալ է ընկերս:

— Գէշ չէ այս հարուածը, Բարթողիմէոս, և թէ որ իմ գաւազանս չի հասնէր պաշտպանելու, դու իմ գլուխս սիրտի ձեղքէիր:

— Չե՞ս ամչնար, պոռաց ֆիամէզզան, ուզելով Բարթողիմէոսին վրայ նետուիլ,



զինուորականի մը սուրը չափել գեղացւոյ մը գաւազանին հետ :

— Ո՛հ, չարհամարենք գաւազանը, գաւազանը լաւ գործ կը տեսնէ, աւելցուց Ռիքարտոն այն խեղկատակ շեշտով՝ զոր երբէք չէր ձգած այն օրէն ի վեր յորում առաջին անգամ տեսանք զինքը Պուշկև-դորոյի պսակին վրայ համարձակօրէն ցատկելը :

Նոյն վայրկենին քաջ կոնտրավարն ձեռաց յաջողակ շարժմամբ յիսնապետին դաստակին այնպիսի հարուած մը իջեցուց՝ որ անոր ձեռքին երկայն սուրը կռուի տեղէն տասը քայլ հեռուն ցատկեց :

— Գնա հիմակ, ըսաւ Ռիքարտոն, և հեռանալէդ առաջ խորհուրդ կու տամ քեզի որ բնաւ իմ կոնտրիս մօտէն չանցնիս, եթէ չես ուզեր թիու հարուածի մը տակ սատկելու վտանգի մէջ դնել զքեզ :

Մինչդեռ յիսնապետը մըմռալով կը հեռանար, Ֆրամէդդան այլայլութենէ բուրրովին զողողջուն, ըսաւ կոնտրավարին .

— Շարունակ կուի . թէ որ զքեզ սպաննել տաս, անպիտան մարդ, ո՞վ պիտի ամուսնանայ Ֆրամէդդային հետ :

— Շիտակ է ըսածդ, պատասխանեց

կոնտրավարն, այս բանս երբէք չէի խորհած :

— Թէպէտ ինծի հետ ամուսնացողը չեն պակսիր :

— Ախ, սիրելի Ֆրամէդդաս :

— Ասկէ զատ հազար անգամ կրկնած էի քեզի թէ ես չեմ կրնար երբէք Ռիքարտոյ կոնտրավարի նման կռուարարի հետ ամուսնանալ թէ որ ինքզինքը չի շտկէ :

— Այս ըսածդ ալ շիտակ է, ըսաւ հսկայն, և իւր բրդեայ գտակը հանելով՝ ձեռքը խիտ մագերուն մէջ անցուց :

Ֆրամէդդա սիրուն թթու երես մը առած էր, որ քաջ կոնտրավարին աչքին հարիւր անգամ աւելի գեղեցիկ կը ցուցնէր զինքը : Ռիքարտոն գլուխը կախած առաջ եկաւ և զզջացեալ շեշտով մը ըսաւ .

— Դու զիս կը սիրես Ֆրամէդդա :

— Այո՛, շատ :

Քաջ կոնտրավարն այնպիսի ահագին հառաչանք մը արձըկեց որուն վրայ սեհեկապանուհին չկրցաւ իւր բարձրաձայն ծիծաղը զսպել : Ռիքարտոյ վերցուց գլուխը և ինքն ալ ծիծաղելով ըսաւ .

— Անցաւ, հէ՛ :



Աղջիկը ազուրիկ ցասկոտ շարժմամբ մը ըսաւ.

— Ինչ և իցէ, դու լաւ գիտես թէ ես կը սիրեմ զքեզ, վասն զի դու բարի և քաջ ես: Այսպէս պարտի ըլլալ էրիկ մարդ մը, և ահա ասոր համար քու կինդ պիտի ըլլամ:

— Ա՛խ, Ֆիամէզդդա, ըսաւ կոնտուլա վարն իւր գտակն օղը նետելով, և իւր երկու բազուկները երկնցնելով դէպի մանկամարդ աղջիկն:

— Հանդարտ կեցիր, ըսաւ աղջիկն՝ իւր մատը շրթունքին վրայ դնելով, տալաւին կինդ չեմ:

— Անշուշտ ան ալ պիտի ըլլայ, սակայն առ այժմ ի՞նչ պէտք է ընել, հարցուց կոնտուլաւորը:

— Ըսէ ինձի, տեսա՞ր արդեօք երիտասարդ Ֆէլիչէ Պատտերին ասկից դուրս ելլելը:

— Ապահով եղիր թէ ասկից դուրս ելած չէ, ըսաւ Ռիքարտոն, վասն զի ժամ մ'է որ հոս եմ և զինքը չի տեսայ:

— Աղէկ. գիտեմ թէ ուր պիտի գտնեմ զինքը: Յտեսութիւն բարեկամ:

— Յտեսութիւն, սիրելի Ֆիամէզդդա:

Ֆիամէզդդան վանքին արտաքին դրան սեմէն ներս մտնելու ատեն դարձաւ ձեռքով բարեւ մ'ալ տալու կոնտուլաւորին ըսելով.

— Ամենէն աւելի երբէք կուր չընել:

— Օհ, երբէք, պատասխանեց, ձեռքով նշանացի խոստումն տալով:

Սակայն հագիւ թէ աղջիկը վանքէն ներս աներևոյթ եղաւ, կոնտուլաւորն իւր յատուկ սովորութեան համեմատ գլուխը քերելով կ'ըսէր ինքնիրեն.

— Հոգ չէ, առաջին անգամ եթէ հանդիպիմ յիսնասպետ Բարթողիմէոսին՝ դժուարին պիտի ըլլայ անոր վրայ յարձրկելէ ինքզինքս արգելու:

Ֆիամէզդդա փութով Ֆէլիչէ Պատտերին բովը հասաւ. զինքը տարաւ իր տիրուհւոյն, որ կուսակալին հետ խօսակցութեան մէջն էր միշտ: Խօսակցութիւնը աղմկալից եղած պիտի ըլլայ, Մարդինենկոյ գոյնը նետած էր, ընդհակառակն վենեճիային այտերը կրակի պէս կարմրցած էին, ուրնգունքներն ուռած, իւր մեծ մութ երկնագոյն աչքերն այնպէս սև եղած էին ինչպէս Ազրիականին ալիքները ալէկոծութեան ատեն կ'ըլլան: Հագիւ թէ տեսաւ



Ֆէլիչէ Պատոէրը, շտապաւ անոր դէմը գնաց ու ըսաւ.

— Չեզմէ ներումն կը խնդրեմ, վայրկեան մը Վենետիոյ ծերակուտին դէմ դընելու մտածմունքն ունենալուս համար: Յանցաւոր գտնուեցայ և կը զղջամ: Ահաւասիկ իմ ձեռքս, եթէ դուք հաճիր զայն ընդունելու, Աղբիականին աղջիկը կ'երգնու ձեզ ըլլալ ձեր հաւատարիմ, անկեղծ և անձնուէր հարսը:

Ֆէլիչէ Պատոէր խորին խոնարհութեամբ համբուրեց իրեն երկարած ձեռքն. միանգամայն իր մտքին մէջ սա բանաձևն ընելով.

— Օրիորդը կարի փոփոխամիտ է:



Ե.

ԴԻՄԱԿՆԵՐ ԵՒ ԴԵՄՔԵՐ

Այս դէպքերէն յետոյ երեք շաբաթներ չէին անցած, երբ Մկրտիչ Մարդինենկոյ բազմաթիւ հետևորդներով և մեծ փառքով մեկնեցաւ Բատուայի կուսակալութենէն դէպի Վենետիկ:

Բոլոր ուղեկիցները հասնելով Պրէնդայի բերանը, ուր կոնտուլաներն պատրաստ կեցած էին, իրենց ձիերը յանձնելով լաճերուն ձեռքը, մտան նաւակները:

Այս փոքր նաւակախմբին մէջ կոնտուլաներէն զատ կը գտնուէին երկու տափակ նաւակներ, ստորին պաշտօնակալաց և ծառայից համար յատկացուած: Երբ Բարթողիմէոսի կարգն եկաւ իւր ընկերներուն բով նստելու, կոմս Մարդինենկոյ զինքն իր բովը կանչեց և հրամայեց անոր ոտքի վրայ իրեն մօտ կենալ՝ իր յատուկ կոնտուլային մէջ, ուր ինքն մինակ էր:

Գրեթէ երկու ժամէն կրնային հասնիլ Վենետիկ. կոմս Մկրտիչ Մարդինենկոյ



այս ժամանակամիջոցն օգտակար ըրաւ Բարթողիմէոսի հրամաններ և հրահանգներ՝ տալով, որոնք ցասկոտ յիսնապետին ճաշակէն շատ հեռու էին: Ահա թէ ինչպէս սխիւ՛ նիւթի վրայ էին կուսակալին հրահանգները:

— Կ'ուզեմ որ, ըսաւ, դու հաշտ երեսով նայիս Ռիքարտոյ կոնտրապարին, որուն քիչ ատենէն պիտի հանդիպիս Ֆէլիչէ Պատոէր պատրիկին պալատան մէջ:

— Ռիքարտոն երիտասարդ կոմսին ծառայութեան մէջն է, հարցուց յիսնապետը:

— Այո՛:

Բարթողիմէոս երեսը թթուեցուց և նոյն իսկ կուսակալին ներկայութեան իրեն սովորական նեղսիրտ շեշտով մը ըսաւ.

— Ձեր վսեմութիւնը զիտէ անշուշտ թէ Ռիքարտոյ և ես իրարու թշնամի ենք:

— Գիտեմ:

— Եւ թէ վերջերս Ազնուական Օրիորդաց վանքին մէջ....

— Զքեզ գանակոծեց:

— Այսինքն, վսեմաշուք տէր, իրարու հետ կռուեցանք, զիտել տուաւ յիսնապետը:

— Այո՛, կրկնեց կոմսը, ինքը գաւազանով մը և դու հաստատուն սուրով մը զինուած, և դու այս դիրքիդ մէջ տեսար զքեզ ամօթով զինաթափ եղած Ռիքարտոյէն:

— Եւ դուք կը հրամայէք ինծի երթալ անոր ձեռքը սեղմել:

— Կուզես դու անկէ վրէժդ հանիլ:

— Ո՛հ, այո՛, ինչպէս չեմ ուզեր:

— Գիտցիր ուրեմն անոր հասնիլ: Քու վրէժին դրութիւնդ այնքան աւելի ապահով և այնքան դիրքին կ'ըլլայ՝ որքան Ռիքարտոյ քեզմէ չզգուշանայ:

— Ստոյգ է. և այս նպատակին հասնելու համար ինչ պէտք է ընել:

— Հաշտուիլ Ռիքարտոյին հետ:

— Ճատ դժուարին է:

— Ես որ Ֆէլիչէ Պատոէրին զուարթ երես պիտի ցուցնեմ, ես, ըսաւ կուսակալը անփոփեղով իւր սև յօնքերը:

— Եւ սակայն կարծեմ զինքը չէք սիրեր, ըսաւ Բարթողիմէոս որ տիրոջ ու ծառայի այս հաւասար դիրքէն քիչ մը մխիթարուած էր:

Կոմսն ակնարկով մը լռութիւն հրամայեց յիսնապետին, և իր սուրին բռնատեղը շոյելով փափսաց



— Ես յանձն կ'առնում սպաննել զինքը  
յարմար տեղ մը՝ երբ վայրկեանը հասնի:  
Մինչև այն ատեն, աւելցուց նա չար ժը-  
պիտով մը, թաւիշ թաթիկ. միտքս հասկը-  
ցար:


— Այո՛, վսեմաշուք տէր:

— Ճատ լաւ. գնա հիմայ քու տեղդ,  
կոնտուլին առաջըր. աւելորդ է աւելի եր-  
կար ժամանակ հոս իմ մօտ կենալդ:

Մտացի երիտասարդ մ'էր Բարթողի-  
մէոս յիսնապետն, երբ մանաւանդ իւր  
յոռի բնագոյումները կ'արթնային: Ճամ-  
բորդութեան մնացած մասն անցուց իւր  
մտքին մէջ որո՞ճալով իր տիրոջը տուած  
հրահանգները, և շուտով գուշակեց թէ  
ինչ օգուտ կրնայ քաղել Ռիքարտոյի նը-  
ման պարզ ու բարի անձէ մը: Ուստի  
ինքնիրեն խոստացաւ իր բնութեան վրայ  
բռնանալ, շողորթութեան ձեռք կոն-  
տուլարին բարեկամութիւնը շահիլ:

Փոքր նաւակախումբը կանգ առաւ Մեծ-  
Ջրանցքին մուտքին՝ Պատոէրին պալատին  
դիմաց: Մարմարիոնէ մեծ սանդուխն որ  
ջրի դուռը կը հանէր, վայրկենի մէջ լա-  
ճերու բազմութեամբ ծածկուեցաւ, որոնք  
սանդուխին իւրաքանչիւր աստիճանին եր-





Մեծ ջրամուղ օդը

կու կողմը շարուեցան, և նոյն ատեն իրենցմէ երկու հոգի Չմիւսնիոյ գորգ մը փոսեցին ծածկելով ամբողջ դրան մուտքը մինչև սանդուխին վարի աստիճանը ուր կոնտուրը կը մօտենար: Մի և նոյն վայրկենին տան հրամանատարը վար իջաւ օգնելու՝ իւր թևը այցելուներուն տալով: Այս կրկին զգուշութիւնք աւելորդ չէին. վասն զի նոյն պահուն տեղատուութեամբ ծովը ցածնալով, ջրէն դուրս մնացեր էին սանդուխին վերջին աստիճանները, զորոնք ծովը մակընթացութեամբ վեց ժամ ձեծելով՝ չափազանց լրպրծուն ըրած էր:

Սակայն Բատուայի կուսակալն առանց սպասելու տան հրամատարին օգնութեան, թեթևակի ցատկած էր վերին աստիճանին վրայ և կը գտնուէր սանդուխին գլուխը. որով խեղճ հրամանատարն ժամանակ չունեցաւ, ինչպէս կարգը կանոնը կը պահանջէր, առջեւէն երթալ պահանորդաց սրահին մէջ, և ձայնել.

— Նորին վսեմութիւնը, մեծաշուք Բատուայի կուսակալը:

Այսու հանդերձ այցելուին անունը Ֆէլիչէ Պատոէրին ականջը հասած էր արդէն, որ նոյն պահուն սրուակներու, քոս-



մէդիքներու, դեղերու, օծանելիքներու, և ամէն տեսակ իսկութիւններու զինանոցի մը մէջ սաստիկ զբաղած էր ամենէն տաժանելի զարդարանք մը ընելու: Երիտասարդ պատրիկը սաստիկ զարմացաւ այս անակնկալ այցելութեան վրայ. այսու հանգերձ պատրաստուեցաւ ընդունելու Բաւտուայի կուսակալն ոչ միայն ամենայն ազնուութեամբ, այլ նաև Մարդինենկոյ կոմսին Հասարակապետութեան վարչութեան մէջ գրաւած աստիճանին արժանաւայել ակնածութեամբ:

Արդ, Ֆէլիչէ Պատոէր ընդառաջ գնաց կուսակալին և մտցուց զինքը մոզայիքէ յատակով ընդարձակ ճեմելիքի մը մէջ, որ պալատին առաջին յարկին ամբողջ երկայնութիւնը կը գրաւէր: Այս ճեմելիքը, որ կը ծառայէր միանգամայն ընդունելութեան և ճեմելու սրահի, քաղքին մէջ մեծ կարևորութիւն ունէր, դուրսը շրջագայիլն անկարելի էր գրեթէ:

— Իմ այցելութիւնս անշուշտ կը զարմացընէ զձեզ, ըսաւ կուսակալը հասնելով Ֆէլիչէ Պատոէրին քով, ժպիտով մը շրջութունքներուն վրայ և ձեռքերն երկնցնելով:

— Մանաւանդ զիս կը սքանչացնէ, պատասխանեց երիտասարդն, աւելի մարդավարի ձևով քան անկեղծութեամբ:

— Չէ՞ք խորհիր թէ իր յանցանքը ճանչնալն երբէք ուշ չէ, հարցուց կուսակալը կատարեալ լրջօրէն:

— Սակայն չեմ կարծեր թէ ձեր վրասեմութիւնը ինձ նկատմամբ ունեցած ըլլայ:

— Այո՛, այո՛, պնդեց կուսակալը: Ոչ միայն կը խոստովանիմ, այլ նաև որչափ կարելի է կուզեմ զայն դարմանել:

— Անգամ մ'ալ, տէր կոմս, չեմ գիտեր ո՛ր յանցանքը կուզէք ակնարկել, ըսաւ Ֆէլիչէ, որ կուսակալին պնդելուն վրայ կը սկսէր շփոթիլ:

— Ազրիականին աղջիկը ինձ նկատմամբ ձեզի բան մը չըսաւ, հարցուց կուսակալը՝ պիշ պիշ նայելով իւր խօսակցին երեսը:

— Եւ ոչ բառ մը:

Կոմսը չի կրցաւ իւր յուզմունքը ծածկել. անշուշտ Ֆէլիչէին պատասխանով իր գործելու ծրագիրը կը խանգարուէր: Սակայն իսկոյն կրկնեց.

— Խոհականութիւն մ'է, որուն հա-



մար երախտագէտ եմ Հասարակապետութեան որբուհիին. սակայն չեմ ուզեր անկից օգուտ քաղել և ձեզի նկատմամբ այնպիսի դիրք մը պահել որ արտաքսապէս միայն արդար ըլլայ: Չեզի խոստացայ, ահաւասիկ իմ խոստովանութիւնս: Յանցաւոր գանուեցայ մոռնալով միանգամայն թէ իմ տարիքս, թէ Երակուտին ինձ յանձնած պատգամաւորութիւնը և թէ գրեզ վեհեճիայի նշանած ընտրելը: Իւր շնորհքը, իւր աչքառու գեղեցկութիւնը, իւր անձին դիւթիչ զօրութիւնը վայրկեան մը խելքս գլխէս տարին և խորհեցայ անոր հետ ամուսնանալ: Դուք անշուշտ այս բանիս վրայօք տարակուսեցաք քիչ մը:

Ֆէլիչէ Պատոէր զարմացմամբ կուսակալին երեսը կը նայէր. Մարգինենկոյին խոստովանութիւնը իրեն բան մը չէր: Երբ կոմսն Ազնուական Օրիորդաց վանքին քառանկեան մէջ ձգեց զինքը, Ֆէլիչէ նոյն վայրկենին գուշակած էր անոր վեհեճիային տուած այցելութեան նպատակը: Սակայն ի՞նչ կը նշանակէր այս խոստովանութիւնը: Ֆէլիչէ կը խորհէր ինքնիրեն թէ Մարգենենկոյ ո՞ւր կուզէր յանգիլ: Խօսակցութեան առած դարձուածքը

զինքը կը նեղէր. ինքն որ դիւրաւ չէր կորսնցներ իւր համարձակախօսութիւնը, կուսակալին երեսը նայելով բոլորովին անխօս մնաց: Այս վերջինը յանկարծ այնպիսի անկեղծ քրքիչ մը ըրաւ և այնպիսի կատարեալ զուարթութեամբ որ Ֆէլիչէ բոլորովին շփոթեցաւ:

— Արդ, չէ՞ք գուշակեր, հարցուց Մարգինենկոյ, այսկերպ զործելու զիս բռնադատող շարժառիթը:

Ֆէլիչէն ցրտութեամբ պատասխանեց.

— Կը սպասեմ որ ձեր վսեմութիւնը հաճի որոշ բացատրել ինքզինքը:

Կուսակալն, որ ոտքի ելած էր, մօտեցաւ Ֆէլիչէին և հայրաբար անոր ուսերուն վրայ դնելով իր երկու ձեռքերը.

— Զաւակս, ըսաւ անոր զուարթ ժպիտով մը, չէ՞ք ըմբռներ ուրեմն թէ օրիորդըն եռանդնոտ վիճակի մէջ գտնուելով, իմ դրած նպատակին հասնելու համար մէկ հնարք մը միայն կար, և զոր դուք կ'երեւի թէ չէք գուշակած, դնել զինքը երկու թիկնածուներէն միոյն ընտրութիւնն ընելու հարկին մէջ

— Ներեցէք ապշութեանս, ըսաւ Ֆէլիչէն՝ քիչ մը անհամբերութեամբ, սակայն դարձեալ չեմ ըմբռներ:



— Եւ սակայն շատ պարզ է: Իւր կրօնական խանդին մէջ, որուն նկատմամբ ոչ կը վիճաբանիմ և ոչ ալ կը հակառակիմ, մանկամարդ աղջիկը ձեզմէ խնդրած էր, հրաժարել իրմէ, այնպէս չէ՞:

— Այո՛, ստոյգ է:

— Եւ դուք ասպետական ազնուութեամբ, որ ձեզի պատիւ կը բերէ, տեղի տուիք իր յայտնած փափաքին:

— Ես ինքս ըսի ձեզ նոյն օրը զինքը ձգելէն յետոյ, երբ Ազնուական Օրիորդաց վանքին քառանկեան մէջ իրարու հանդիպեցանք:

— Ճիշդ: Սակայն այս ելքը իմ գործիս չէր գար: Ծերակուտին որոշ հրամաններուն հետ զանոնք ի գործ դնելու պարտականութիւնն ալ ունէի: Կը գուշակէ՞ք հիմայ իմ հնարամտութիւնս:

— Ոչ տակաւին:

Կուսակալը բարեկամաբար իւր թէն անցուց երիտասարդ պատրիկին թեւին և ձեմելիքին մէջ սկսան շրջագայել:

— Գուք չափազանց համեստ էք, ժրպտելով ըսաւ անոր, ուրեմն մինչև վերջին կէտը բացատրեմ ձեզ: Այն ատեն ահա

զիս նոյն շարքին վրայ դրի, անշուշտ ինծի նման հասակն առած մէկուն և ձեզ նման գեղեցիկ երիտասարդին, մեր երիտասարդ պատրիկներուն ամենէն ազնուական անձին մէջ օրիորդը պիտի չի տատամսէր երկար ատեն, և իրօք ալ իւր ընտրութիւնը փութով ըրաւ:

Այս խօսքերուն վրայ կուսակալը Ֆելիչէ Պատոէրին թեւ ձգելով և յոյժ ծիծաղկոտ դէմքով մը անոր դիմացն անցաւ ու ըսաւ:

— Եւ ահաւասիկ թէ ինչպէս ինծի պարտիք, ձեր կարծեցեալ նախանձորդին, Աղբիականին աղջկան հետ ամուսնանալը:

Որչափ ալ անարուեստ ըլլար դարանը, սակայն այնքան փաղաքշանքներով շրջապատուած էր, և կոմս Մարդինեն կոյի նման նշանաւոր անձնաւորութեան մը գոռոզ մարդավարութիւնը յանկարծ այնպէս փայլալոյսով եղած էր որ ուրիշ շատերը պիտի բռնուէին: Գալով երիտասարդ Ֆելիչէ Պատոէրին, յիրաւի սքանչելի պատանի, սակայն այնպիսի ունայնամտութեամբ լեցուած էր՝ որ չէր կարող այս ծուղակէն ճողոպրիլ: Իր մանկական դիմագիծերն, որ խօսակցութեան



սկիզբները հիգ ըրած էին երկար ատեն պահել զժուարատար ծանրութիւն մը, յանկարծ թուլցան: Իւր զուարթ և բարեացակամ դէմքը վերստացաւ իւր սովորական անհոգութիւնը: Երկար շունչ մը առաւ և իսկոյն եղաւ ինչ որ էր, կատարեալ տղայ մը: Իւր բարի յատկութիւններով հանդերձ փութով ձեռք առաւ իւր մեծամտութիւնը և պատրկական ինքնահաւանութիւնը, աւելի անմեղունակ և երբէք վնասակար:

— Դո՛ւ ըրիք այս բանս, ըսաւ կուսակալին, ձեռքը անոր երկնցընելով:

— Անշուշտ, պատասխանեց Մարդինենկոյ: Սակայն դուք պարտք մը չունիք ինծի շնորհակալ ըլլալու. արդէն ըսի ձեզ թէ իմ միակ նպատակս էր Ծերակուտին հրամանները գործադրել: Իմ պարտքս եղաւ միակ շարժառիթը:

— Այսուհանդերձ անսահման երախտագիտութիւն պարտիմ ձեզ, ըսաւ Ֆէլիչէ սրտի զեղմամբ, և հաւատացէք թէ ձեզի նկատմամբ ունեցած երախտագիտութիւնս ցուցընելու միջոցը պիտի գտնեմ:

Յետոյ քովտի դիրք մը առնելով, յորում իւր ամբողջ անմիտ անձնագովու-

թիւնը կը տեսնուէր, աչքերն ամփոփելով նայեցաւ կուսակալին ու աւելցուց.

— Գիտէ՞ք թէ այս սիրուն վէնեճիան ստուգիւ գեղեցիկ է:

— Գիտեմ, ըսաւ Մարդինենկոյ խոնարհեցնելով իւր թարթիչներն, որպէս զի իր տխուր աչքերուն մէջ յանկարծական ծագած փայլակը ծածկէ:

— Սիրահարուած եմ իրեն, պատուոյս վրայ կ'ըսեմ:

— Ա՛հ:

— Սակայն կը կարծէ՞ք թէ նա զիս կը սիրէ:

— Ինչո՞ւ պիտի չի սիրէ զձեզ, պատասխանեց կուսակալը փութով իւր դերը ձեռք առնելով, զձեզ Ֆէլիչէ Պատուէր:

— Հէ՛, հէ՛, ըրաւ Ֆէլիչէ, որ իւր բուր անձնահաճութեամբ հանդերձ կը տարակուսէր տակաւին վէնեճիային ներշնչած բռնի համակրանքին վրայ:

— Կրնայ ըլլալ թէ տարփանք չունենայ, ըսաւ Մարդինենկոյ, սակայն այն ալ կ'ըլլայ:

— Ա՛հ, անշուշտ պիտի ըլլայ, վասն զի դուք ալ կը տեսնէք Մարդինենկոյ, ըսաւ երիտասարդ Ֆէլիչէն յանկարծ ըն-



տանի ձև մը առնելով, թէ կիները ինծի հետ ընտանեցնելու արուեստը գիտեմ: Իսկ դ՞ուրք:

— Ո՛հ, ես. այս բաներս ինծի հետ երբէք զործ ունեցած չեն, պատասխանեց Մարգրիկենկոյ զարմանալի բարեմտութիւն մը ձեացնելով:

— Սիրելի բարեկամ, կրկնեց երիտասարդը տակաւ հաղորդական ըլլալով, տեսած էք երբէք հայելիով որսորդութիւնը:

— Այո, կարծեմ:

— Արդ ուրեմն, կիներն արտոյտ մ'է, սիրելի կուսակալ, և գիտեմ ես թէ ի՛նչ պէս պէտք է զինքը շլացնել նոր զարդարանքներով, գոհարներով, ակունքներով, ագամանդներով, իմ տուած շքեղ հանդէսներով:

— Հանդէսներ, ըսաւ Մարգրիկենկոյ, աղէկ միտքս եկաւ, ժամանակին ձեզի պիտի առաջարկեմ յայտագիր մը, և կը յուսամ թէ հաճելի պիտի ըլլայ ձեզի, որչափ ալ նրբամիտ ըլլաք: Սակայն հարսնիքն ե՞րբ է:

— Ըստ կարելոյն փութով, ութ օրէն:

Կուսակալն անհաւանութեան դժկամակ ձև մը ըրաւ:

— Ինչպէ՛ս, ըսաւ երիտասարդ պատրիկը, շատ ուշ կը գտնէք:

— Ընդհակառակն շատ շուտ: Այսպիսի շուտափոյթ հարսանիք մը ուսմկին յարմար է:

— Ա՛հ, դուք կը կարծէք. . . . ըսաւ Ֆելիչէ քիչ մը յուսաբեկ եղած:

— Անշուշտ: Պատրաստութիւնք տեսնելու է, պէտք է որ ձեր հարսանեաց լուրը ամբողջ խտալիա հնչէ, ստոյգ չէ՞:

— Կոյնն ես ալ կը փափաքիմ, ըսաւ երիտասարդն, որուն դէմքը լուսաւորուեցաւ մտածելով թէ ամբողջ խտալիա պիտի զբաղի իր փոքրիկ անձով:

— Վասն զի, վերջապէս դուք Ֆելիչէ Պատտէր կը կոչուիք:

— Այնպէս է, մրմնջեց Ֆելիչէն երազկոտ, անունս Ֆելիչէ Պատտէր է:

— Ուրեմն այս հարսանիքը արժանաւոր շքեղութեամբ կատարենք: Եւ նախ սկսինք նշանտուքէն:

Այս նշանտուք բառին՝ Ֆելիչէին մանկական դէմքը յանկարծ կատարեալ դժկամակ կերպարանք մը առաւ:

— Ո՛հ, Տէր կոմս, ըսաւ, չէ՞ք մտածեր թէ այս բանս շատ պիտի ուշացը-



նէ ամուսնութիւնս Աղբրիականին աղջկան հետ:

— Տասնըհինգ օր, առ առաւելն երեք շաբաթ: Բայց նաև ինչպիսի՛ շքեղ հանդէսներ պատրաստելու ժամանակ պիտի ունենանք: Ֆիորէնձայի մէջ Մէտիչեան Գողմին և Միլանու մէջ Ֆրանչեսքոյ Սֆորձա իրենց նախանձէն պիտի ճաթին:

— Յիրաւի, դուք զիս փորձութեան մէջ կը ձգէք, ըսաւ Ֆէլիչէ ինքնիրմէն դուրս ելած, միտքը բերելով թէ Խտալիոյ ամենէն նշանաւոր այս երկու անձնաւորութեանց նախանձելու առարկայ պիտի ըլլայ:

— Այնպիսի հանդէսներ տանք որոնց վրայ երկար ատեն խօսուի: Սակայն դուք ևս ձեռնտու պիտի ըլլա՞ք պատրաստութեանց:

— Ձեր տրամադրութեան ներքև զիս կը դնեմ:

— Ուրեմն կը հաւանիմ: Իմ սիրելի Մարզինենկոյ, դուք ճշմարիտ բարեկամ մ'էք:

Կը տեսնուի թէ Ֆէլիչէ Պատոէր մտերիմ եղած էր:

— Ուրեմն կը տարակուսէ՞րք բարե-

կամութեանս վրայ, հարցուց կուսակալը հեգնօրէն, զոր երիտասարդն իւր կարծեցեալ յաջողութեամբ զինովցած չի կրցաւ նշմարել, անոր համար շտապեց պատասխանել.

— Չէի տարակուսեր, և հիմայ, սիրելիս, ո և է կերպով չեմ տարակուսիր ձեր վրայ. և ասոր փորձն է որ ձեր ձեռնտուութիւնը կը խնդրեմ: Սակայն այս հանդէսներուն համար պէտք է մեզի նոր, անակնկալ, մեր իտալական երևակայութիւնը զմայլեցնող բան մը:

— Ո՛հ, կը խոստանամ ձեզ բոլորովին անակնկալ մը:

— Ի՛նչ:

— Պիտի տեսնէք, պիտի տեսնէք:

Կուսակալը և Ֆէլիչէ Պատոէր երկար ատեն այսպէս մտերմօրէն տեսակցեցան, գաղափարներ փոխանակելով և յայտազիրեր շինելով. և երբ Մարզինենկոյ ուզեց վերջապէս հրաժեշտ տալ, Ֆէլիչէ Պատոէր, որ սովորաբար մէկու մը համար անհանգիստ չէր ըլլար, իր անձին պատիւ սեպեց ընկերելու իւր նոր բարեկամին մինչև կոնտոլը, և զինքը ձգելէն առաջ խոստում առաւ անկէ երկրորդ օրուան ժամադրութեան մը:



Երբ այս տեսարանը տեղի կ'ունենար Պատուէրին պալատան առաջին յարկին մէջ, նմանօրինակ տեսարան մը կը կըրկնուէր գետնայարկին վրայ, բայց բոլորովին տարբեր անձնաւորութիւններէ, թէ և մի և նոյն նպատակին վրայօք:

Յիւնապետն Բարթողիմէոս պահակաց սրահին մէջ կը գտնուէր կուսակալին հետևորդներուն մէկ մասին հետ, որոնք զինուորականք և առանձնաշնորհեալ լաճեր էին. իսկ միւսները՝ կուսակալին ուղեկիցները բերող կոնտուլաներուն և նաւակներուն մէջ մնացեր էին:

Այս պահակաց սրահը վենետկոյ պալատներէն շատերուն մէջ կար և մինչև ցարդ Մեծ - Զրանցքին վրայ բազմաթիւ նմուշներ կը տեսնուին: Հոն ստորին պաշտօնատարք և ծառայական անձինք կը կենային երբ իրենց տէրերը կը շրջագայէին կամ կը խօսակցէին վերի յարկին մէջ: Սոյն սրահին մէջ կը գտնուէր շրոյ դուռը, վենետկոյ բոլոր պալատներուն պատուոյ մուտքը, մարմարիոնէ սանդուխի մը գլուխը զոր վերը նշանակեցինք, և անկից կ'իջեցուէր Մեծ-Զրանցքը: Չրոյ դուռն սահմանուած էր մի միայն պատրիկներուն

և անոնց հետևորդներուն, բացարձակ արգիլեալ էր ծառայից անկէ պալատ մտնել ելլելը. իրենց համար ուրիշ դուռ մը կար կողմնակի փողոցներուն վրայ, որոնք ամենքն ալ Ռիալդոյ կամ Մեծ-Զրանցքը կը տանէին վենետկոյ ազնուապետական կեդրոնը:

Բարթողիմէոս երբ Պատուէրին պալատան պահակաց սրահը մտաւ, քանի մը վայրկեան աչքովը փնտոնեց Ռիքարտոն և գտաւ զինքը խմբի մը մէջ, ուր կոնտուլավարը կոտորտուելով հպարտօրէն կը քալէր: Բարթողիմէոս տարակուսելու իրաւունքն ունէր, վասն զի թէպէտ թռչունն միշտ մի և նոյն էր, սակայն փետուրները բոլորովին փոխուած էին:

Ահաւասիկ պատճառը: Յէլիչէ Պատուէրին պերճասէր բնաւորութիւնն իր շուրջն եղողներուն վրայ ալ կը տարածուէր. և իր սպասաւորաց համագգեստը նոյն իսկ անմիտ գեխութիւն մ' էր: Երիտասարդ պատրիկին համար դժբախտութիւն մ' էր որ իր շոյլութիւն չէր կարող ցուցադրել իր կոնտուլներուն վրայ: Վենետկոյ ծախուց կարգադիր օրէնքները կը հրամայէին որ կոնտուլաները միաձև շինուին,



ու ամէնքն ալ սև ներկուած առանց ուրիշ ո՛ր և է զարդի, միայն առջևի ծայրը տէգ մը պիտի ունենան: Եւ այս օրէնքները միշտ այնպիսի խստութեամբ պահուեցան որ Վենետիկեաց բարուց կարգն անցան, և ինչ որ էին հինգ դար առաջ կոնտուլաները նոյն են տակաւին ներկայիս յորում այս տողերը կը գրենք:

Այս վերոյիշեալ պատճառներուն համար երիտասարդ Ֆէլիչէ Պատոէրին շտայլ բերումները չէին կրցած ասպարէզ գտնել կոնտուլաներուն վրայ՝ կոնտուլավարներուն վրայ կեդրոնացած էին: Ասոնք ամէնքն ալ կը հագուէին թաւիշէ ու մետաքսէ, ոսկի ժապաւէններով կարուած բաճկոնակներ: Ամենէն աչքառու և ամենէն աններդաշնակ գոյներ սիրելի էին երիտասարդ Պատոէրին: Համազգեստներուն մէջ իրեն սկզբունք դրած էր հակազրութիւնը: Արդ, կրնաք երևակայել թէ երբ Ֆէլիչէ Պատոէր բախտ ունեցաւ Ռիքարտոյի նման հսկայ կոնտուլավարին վրայ ձեռք դնել, որչափ չարչրկեց միտքը անոր համազգեստ մը հնարելու...: Սակայն համազգեստ մը որ Վենետիկը տակնուվրայ պիտի ընէր Ռիալտոյէն սկսեալ մինչև Սուրբ Մարկոսի հրապարակը:

Յիրաւի Ռիքարտոյ կոնտուլավարը մեծ յաջողութիւն ունեցաւ, հետաքրքրութեան յաջողութիւն մը գէթ: Ստուգիւ չկար այնքան զուարճալի բան մը ինչպէս տեսնելն այս հսկայն դիցարանական համազգեստով: Վարզագոյն անդուսէ ձարիք մը, կանանչ ժապաւէններու անօրինակ առատութեամբ, զորս հովը կը տատանէր տերևոց նման: Իւր մազերը, որոնք ո և է տեսակ գլխարկի չէին հնազանդեր, յամառութեամբ մերժեցին շարփուշը զոր կուզէին անոնց վրայ դնել. այն ատեն երիտասարդ Պատոէր խորհեցաւ արևելեան ոճով մութ կարմիր գոյնով մետաքսէ շալ մը կապել իր կոնտուլավարին գլխուն բոլորտիրը: Սակայն որովհետև խեղճ Ռիքարտոյին զուլսը քիչ մնաց որ կը ճաթէր հոն խոնուած արիւնէ, ուստի ստիպուեցաւ մէկդի թողուլ այս փաթթոցը ինչպէս ուրիշ ո՛ր և է գլխարկ: Պատոէր գէթ մխիթարուեցաւ կոնտուլավարին զօրեղ սրունքները բանտարկելով կարմիր մարսկենի կօշիկներու մէջ զոր կրետացի սպայ մը հետը բերած էր Բիւզանդիոնէ:

Ռիքարտոյ այսօրինակ հագուած ինքն իր վրայ գմայլած էր: Իւր երջանկութեան



բան մը միայն կը պակսէր, ֆիլամէդղան տակաւին չէր տեսած զինքն այս գեղեցիկ զարդարանքի մէջ: Բայց Ռիքարտոյ կը կանխէր այն սքանչապող զարմանքը վայելել ուր իր կերպարանափոխութիւնը պիտի պատճառէր իւր նշանածին:

Սակայն խոստովանինք թէ այս կերպարանափոխութիւնը այնքան չէր վայլած իրեն՝ որքան պարզամիտ կոնտրապարը կ'երևակայէր: Ֆելիչէ Պատտէրի բմահաճոյքին հնարած սուտ ոսկիէ փառաւոր զգեստներով զարդարուած այս հսկան՝ կը ներկայացնէր գրեթէ ծաղիկներով պսակուած Սպիս եզը երբ Ռսիլիսի մեհեանը իւր հանդիսաւոր մուտքը պիտի ընէր:

Արդ, Բարթոլիմէոս նշմարելով իր նախկին հակառակորդն ուր իւր գտնուած խրմբին մէջ ինքնահաճութեամբ կը ցուցադրէր իր ճոխ արդուզարը, շրթունքները խածաւ անոր քթին չի խնտալու համար: Ռիքարտոյ չէր կրնար այսպիսի զգացմունք մը վերագրել յիսնապետին, բոլորովին համոզուած ըլլալով իւր զգեստին պատճառելիք շլացութեան վրայ: Ուստի կարծելով յիսնապետին դէմքին վրայ նախանձու զարմանք մը կարդալ, սկսաւ

կրկին կրկին ինքն իր վրայ դառնալ, որպէս զի Բարթոլիմէոս կարենայ զիւրութեամբ ամէն կողմէն զինքը դիտել:

— Իմ անկեղծ շնորհաւորութիւններս, կոնտրապարդ Ռիքարտոյ, ըսաւ յիսնապետն, ինչպէս շքեղ հագուեր ես:

Կոնտրապարն սկսաւ կոտորտուիլ, ծիծաղաշարժ ծումկած դէմք մը ընելով, գլուխը կէս մը դարձուցած որ իւր փողպատին ծալքերուն բարձրութեան մէջ արգիլուած էր, և վիզը վեր բարձրացնելով ըսաւ իւր հաստ ձայնովն, որուն կը ջանար անուշութիւն և փափկութիւն տալ որպէս զի իր հագած փայլուն զգեստներուն հետ ներդաշնակ ըլլայ:

— Ահ, դու ես, յիսնապետ. չէի նըշմարած զքեզ:

— Անշուշտ ես եմ, ըսաւ յիսնապետն. ինչո՞ւ այդքան զարմանք հոս գալուս համար:

— Միտքէդ ելած է արդեօք մեր վերջին կոխն, ըսաւ կոնտրապարն իւր բնական ձայնովը:

— Ախ, Ռիքարտոյ, պատասխանեց յիսնապետը, երեսիս կը զարնես իմ յանցանքս. ասիկայ վեհանձնութեան դէմ է:



— Ի՞նչ յանցանք:

— Ես քեզի հետ կոուեցայ զինուորի մը սուրով, դու որ չունէիր ուրիշ բան մը զքեզ պաշտպանելու բայց միայն գեղացիի մը գաւազանը, և սակայն դու զիս զինաթափ ըրիր և քու կամքիդ հպատակեցուցիր: Աղէկ որ այսպէս եղաւ, և կը խոստովանիմ թէ բովանդակ այս գործին մէջ ո՞ր և է տեսակետով գեղեցիկ դեր մը չի խաղացի: Ընդունէ, Ռիքարտոյ, իմ անկեղծօրէն ներում խնդրելս:

Ազնուասիրտ կոնտուլարն, բոլորովին ապշած կը նայէր յիսնապետին երեսն, առաջ այնքան ամբարտաւան և հիմայ այնքան խոնարհ, և ինքնիրեն կը հարցընէր թէ արդեօք երազ է տեսածը:

Սակայն իր խմբէն զատուած էր ուր կը փայլէր ուղեորներուն հասած ատենը և Բարթողիմէոսին մօտեցած, որ ինքն ալ քանի մը քայլ ընելով դէպի իրեն եկած էր:

— Բարեկամս, դու չես պատասխաներ, ըսաւ յիսնապետը: Արդեօք այս գեղեցիկ զգեստներն, որոնք այնքան քեզի վայելուչ կերպարանք մը կուտան, զքեզ մօռնջ ըրին: Այսպէս հագուած անշուշտ քեզի պիտի դարձնես Ռիալդոյ կամուր-

ջին շուկան յաճախող բոլոր գեղեցիկ աղջիկներուն գլուխները. սակայն այսու հանդերձ պէտք չէ որ քու հին ընկերոջդ նկատմամբ այնքան գոռոզ գտնուիս:

Այս փոքր բանախօսութիւնը որ մեծ ուրախութիւն պատճառած էր բարեմիտ Ռիքարտոյին, բոլորովին կեղծաւորեալ սքանչացումն մ'էր: Սակայն վերջին բառը քիչ մը կասկած ձգած էր իր մտքին:

— Ընկեր, երբէք եղած չես, ըսաւ Ռիքարտոյ:

— Սակայն կրնանք ըլլալ, կրկնեց աշխուժութեամբ յիսնապետն, և ինծի համար պատիւ կը համարիմ բարեկամ ունենալ այսպէս քաջ, այսպէս գեղեցիկ, այսպէս շքեղ հագուած երիտասարդ մը ինչպէս է կոնտուլարն Ռիքարտոյ, զոր դիմացս կը տեսնեմ զարդարուած ճիշդ սիրոյ ժամադրավայրը փութացող իշխանի մը պէս:

Անշուշտ այս զովեստը կոնտուլարին անձին պէս անողորկ էր, և եղած մեծաբանքն կրնար լաւագոյն յօրինուիլ. սակայն որքան կերակուրը աւելի պղպեղով համեմած էր այնքան հաճելի կ'ըլլար Ռիքարտոյին քիմքին: Խաալիոյ ժողովրդեան ստորին դասակարգին պարծենկոտ ունայ-



նամտութիւնն, որ իր բարեմիտ մանկական նկարագրին պատճառաւ կը ներուի, նոյն ունայնամտութիւնը՝ խոստովանինք ըսելու թէ, մեր բարեկամ Ռիքարտոյին տկար կողմն էր, իր զրահին թերութիւնը: Ասկէ զատ այն փառաւորութիւններն որոնց բարձրացած կը կարծէր (իբր բարձր պատուանդանէ մը զիտելով ինքզինքը) սպասուած արգիւնքն առաջ բերին, սովորական առողջ դատողութիւնը միջնցուցին, և հաստ պատեանի ներքև ծածկուած իտալական սրամտութիւնը փճացուցին: Կը սկսէր ուրեմն ախորժանօք խածնել մեղրախառն կարկանդակը զոր նենգաւոր ձեռքն կը հրամցնէր իրեն, և արդէն յիսնապետ Բարթողիմէոսի խորամանկ նախաքայլով՝ երեք քառորդէն աւելի առաջ տարած էր, երբ զայն լրացնելու համար յիսնապետն այս վերջին մոգական բառերն աւելցուց:

— Եւ թէ որ ընկերս հաճի, կրնանք այս բարեկամութիւնը կնքել, որուն փոխարէնը կը խոստանամ Մոնթէֆիասքոյի շիշ մը գինի, զոր կ'երթանք միասին պարպելու Լուսին (Luna) պանդոկին մէջ:

— Երկու շիշ, ըսաւ Ռիքարտոյ, որուն աչքերը սաստիկ փափաքէն կը փայ-

լէին, իւր լայն բերանը կը բացուէր. յիսնապետին ձեռքը սեղմեց:

Ըսինք վերը թէ որոնք էին Ռիքարտոյին առաքինութիւնները, սակայն քաջ կոնտրաւարն չէր կրնար երբէք Մոնթէֆիասքոյի շիշ մը գինի հրամցնելուն զիմանալ:

Արդ, երկուքն միասին գնացին Լուսին պանդոկն, ուր Մոնթէֆիասքոյի մէկ շիշին յաջորդեցին ուրիշ շատեր՝ որոնք կոնտրաւարին սիրտը այնպէս կակղացուցին որ զրեթէ աչքերը լեցուած մտիկ կ'ընէր իր նոր բարեկամին՝ յիսնապետին սրտին ցաւերը:

Բարթողիմէոս կը պատմէր թէ ինչպէս Ֆիամէզդային մայրը, Յովհաննան՝ իւր ազգականը, իրեն նման Լիւրիկեցի, ատենօք խօսք տուած էր թէ իւր աղջիկը մի միայն իրեն հետ պիտի ամուսնացնէ: Ժամանակ անցնելով Ֆիամէզդա հաւանութիւն չէր տուած իր մօրը ընտրութեանն, և ընդհակառակն նախամեծար կը համարէր կոնտրաւարը փոխանակ զինուորին: Բարթողիմէոս հասկըցած էր ասիկայ և Ֆիամէզդան ալ իր իրաւանց մէջն էր. բայց վերջապէս այս բանս՝ միակ պատճառն է-



դաւ ատենօք անհամաձայնութեան սերմն  
ցանկելու երկու ազնիւ մարդկանց մէջ՝ ու  
րոնք զիրար սիրելու համար եղած էին:

— Կորսուած ժամանակը կրնանք շա-  
հիւ, Բարթողիմէոս, մենք զիրար պիտի  
սիրենք ըսաւ Ռիքարտոյ սրտի զեղմամբ,  
և միասին պիտի պարպենք Մոնթէֆրաս-  
քոյի զինիի բազում շիշեր: Կենդանու-  
թեանդ Բարթողիմէոս:

— Կենդանութեանդ, Ռիքարտոյ:

Խօսելէն յետոյ, կոնտովալարը իր լեզուն  
քիմքին տարաւ և ջանաց իւր գաղա-  
փարները ամփոփել, զորս գինովութեան  
գոլորշին կը սկսէր շփոթել: Իր ոգւոյն  
պայծառութիւնը ցոյց տալու համար, ու-  
զեց խօսակցութեան թելը նորէն ձեռք առ-  
նել ըսելով յիսնապետին.

— Ո՛ւր ձգեցինք ուրեմն, Բարթողի-  
մէոս:

— Կըսէի թէ՛ ես Ֆրամէդդան խըն-  
դբած էի, ոչ միայն վասն զի կը սիրէի  
զինքը, այլ նաև մայրն ալ ինձի խոս-  
տացած էր:

— Եւ ես, պատասխանեց աշխուժիւ  
Ռիքարտոն, իւր հօրը Սալվադոր ձկնոր-  
սին հաւանութիւնը ունէի:

Սալվադոր անունն այսպէս յանկարծ  
խօսակցութեան մէջ նետուելով՝ խոտվեց  
քաղցր հանդարտութիւնը, որուն մէջ ըն-  
կըղմած էր յիսնապետը գրեթէ հաւասար  
Ռիքարտոյի: Մէկէն գոյնը նետեց և կոն-  
տովալարին վրայ խոժոռ ակնարկ մը նե-  
տեց:

— Ի՞նչ հասկըցնել կ' ուզես Սալվա-  
դորին նկատմամբ, հարցուց անոր:

— Մի միայն անոր վրայ լալ, ըսաւ  
կոնտովալարն, իւր գինովութեան մէջ ըզ-  
գածուելու նոր առիթ մը գտնելուն գոհա-  
նակութեամբ:

— Լա՛լ անոր վրայ, և ինչո՞ւ.

— Վասն զի սպանութեամբ մեռաւ:

— Սպանուած, պատասխանեց խըս-  
տորէն Բարթողիմէոս, ո՞վ ըսաւ. գինով  
էր, ինչպէս միշտ, և թիավարելու ատեն  
ծո՞վն ինկաւ խղդուեցաւ:

— Սակայն և այնպէս, աւելցուց Ռի-  
քարտոյ խոհականութեամբ, չէր կարելի  
միայնակ և մտաց խանգարմամբ դաշոյն  
մը մխել իր երկու ուսերուն մէջտեղը:

— Շատ աղէկ. երթանք մեր տէրերը  
գտնելու, ըսաւ Բարթողիմէոս ոտքի ելլե-  
լով խօսակցութիւնը վերջացնելու հա-  
մար:



— Մեր տէրերը. ա՛հ յիրաւի, բոլորովին մոռցեր էի ես, խոստովանեցաւ արժանաւոր կոնտովաւարն: Ի՞նչպէս, վերջին շիշ մ'ալ չի պարպե՞նք:

— Ոչ, բաւական է:

Բարթողիմէոս այս բառերն այնպիսի չոր շեշտով մը ըսաւ՝ որ ստիպեց կոնտովաւարն ոտք ելլելու քիչ մը երեքալով: Ռիքարտոյ տխուր ակնարկ մը նետեց շիշերուն վրայ և շրթունքները լիզելով ըսաւ,

— Յիրաւի շատ լաւ է Մոնթէֆիասըն:

Յետոյ երկուքն ալ թե թեի մտած դուրս ելան Լուսին պանդոկէն և դէպի Ռիալդոյ ուղղուեցան, միշտ ողբալով զըժբախտ սխալմունքն որ զիրենք այսքան ատեն թշնամի ըրած էր իրարու:

2.

#### ՊԵՏՐՈՍ ՎԵՐՍՏԻՆ ԿԸ ՏԵՍՆՈՒԻ

Երբ երկու նոր բարեկամները թե թեի մտած հասան Պատոէրին պալատը, Մարդինենկոյ առաջին յարկի ճեմելիքէն մեծ սանդուխով պահակաց սրահը կ'իջնէր:

Ֆէլիչէ Պատոէր կ'ընկերանար կուսակալին. երիտասարդ պատրիկն իր թեք Մարդինենկոյին վիզն անցուցած, զինքը գրեթէ գրկած էր, և կարծես սիրոյ չափազանց ապացոյցներ կը շոյալէր:

Այս վայրկենիս կոնտովաւար Ռիքարտոյ, հակառակ զինովութեան գոլորշիին, իր միջնցած ըզեղէն ուղղադատութեան փայլակ մը անցաւ: Կը մտածէր իր հին և ոխերիմ թշնամոյն Բարթողիմէոս յիսնապետին կողմանէ այնքան առատաձեռնօրէն ընծայուած Մոնթէֆիասքոյի զինին:

— Այս մարդիկ զմեզ չափազանց կը սիրեն. կ'ըսէր ինքնիրեն գլուխը քերելով. ասիկա բնական չէ. պէտք է չար բան մը ծածկուած ըլլայ ասոր մէջ. մեր վրայ նետուած ծաղիկներուն մէջ ի՞ժ մը կայ:



Այսպէս կը սկսէր նորէն կասկածիլ, անդին լաճերը գաւթին սանդուխին վրայ Զմիւռնիոյ գեղեցիկ գորգ մը կը տարածէին, որպէս զի հիւրերը մարմարիոնէ սանդուխին վրայ չի սահին, որոնք անդադար ալիքներէ զարնուած և մակընթացութեամբ մասամբ 'ը ծածկուած կը մընային օրուան վեց ժամը: Ռիքարտոյ աչքերը կէս մը գոցած կը զիտէր Պատտէրնայն վայրկենին յորում կուսակալը հրածեշտ տալու ատենը կը համբուրէր զինքը կեղծ խանդաղատանօք, և կոնտուլավարն կը շարունակէր ինքնիրեն ըսելու:

— Ծառայից նման ահա տէրերն ալ բարեկամութեան առուտուր կ'ընեն: Կարծեմ խոհեմութիւն է արթուն կենալ այս նենգաւոր փայփայանքներուն դէմ: Սովորաբար վագրն իրեն որսը կը լիզէ յետոյ լաւագոյն կերպով լափելու համար: Թշուառական, բոլոր այս բարեացակամ արտայայտութեանց մէջ ստուգիւ դարան մը ծածկուած կրնայ ըլլալ:

— Դքսական պալատ. ըսաւ կուսակալը կոնտուլավարներուն որոնք հրամանի կը սպասէին:

Իսկոյն կոնտուլաները շարժեցան և իջան Մեծ-Զրանցքէն:

— Ինչպէս պիտի ընդունի զիս ծեր Պոսքարին. կ'ըսէր ինքնիրեն Մարդինենկոյ նայելով պալատներուն ուրուագիծերուն անուշաղիք, որոնք կարծես իր ետեէն կը խուսէին: Պոսքարին կ'ատէ զիս, սակայն նաև կը վախնայ ինձմէ: Գիտէ թէ ես համախոհ եմ իւր ոխերիմ թշնամոյն Յակոբոս Լորեստանոյի: Եւ Լորեստանոյ տասնից պետ է և ես ալ Բատուայի կուսակալ. տոժը չէ կարող յանդգնիլ յայտնի կերպով մեզի դէմ կուռելու: Ասկէ զատ, աւելցուց նա իր բաճկոնակին գրպանը շօշափելով, թէ որ ծեր երիվարն ուզենայ կից տալ և չի թողուլ ինձի թամբին վրայ նստիլ, ունիմ հոս նամակ մը որ իրեն ոտքերն ու ձեռքերն կապած ինձի կը յանձնէ, եթէ սպառնամ անոր զայն Պետութեան խուզարկուներուն ձեռքը տալ:

Այս առանձնախօսութեան, որուն մէջ ընկղմած էր Մկրտիչ Մարդինենկոյ, հարկ կը համարինք համառօտ լուսաբանութիւն մը տալ:

Վենետկոյ մէջ կը խօսուէր թէ Պրանչեսքոյ Պոսքարի երբ իր տոժ ընարուելուն



լուրն առաւ, մտերիմ բարեկամներէն միոյն ըսած էր թէ չէ կարող ինքզինքը վեհապետ մը համարիլ՝ քանի որ Պետրոս և Մարկոս Լորետանոյ եղբարքն կ'ապրին: Քիչ ատեն անցնելէն յետոյ գրեթէ նոյն ժամանակ երկուքն ալ բռնամահ եղան: Այս զոհերէն միոյն զաւակը, Յակոբոս Լորետանոյ, հասարակաց դիմաց ամբաստանեց տոժը թէ վարձած էր մարգասպանները: Ամբաստանութիւնն արդեօք հիմն ունէ՞ր. Ֆրանչեսքոյ Ֆոսքարի իրօք յանցաւոր էր: Զայս սպացուցանող բան մը չի կար. սակայն այս բանս կարելի էր. երբ այս տարօրինակ դարուն բարքերն մեր աչքին առջևը բերենք: Պէտք չէ դատել չորեքտասաներորդ և հնգետասաներորդ դարերու իտալիան մեր գաղղիացիի գաղափարներով — ըսել կուզեմ մեր նախապաշարմամբ — իննետասներորդ դարու վերջերը: Այն դարուն, զոր կը շանանք նկարագրել, դաշոյն և թոյնը շատ ազդեցիկ դեր մը ունէին իտալացուց իրարու քաղաքական յարաբերութեանց մէջ: Մեր ըսածը կարծիք չէ այլ ճշմարտութիւն: Մանաւանդ վենետկոյ մէջ օր չէր անցներ որ ժողովրդեան մէջ իրարու չի

պատմէին ցած ձայնով իրենցմէ միոյն անյայտանալը կամ պատրիկներէն միոյն խորհրդաւոր մահը զոր առջի երեկոյ Պրոլիոյի մէջ տեսած էին շրջագայելու ատեն:

Իսկ Լորետանոյ եղբարց սպանութեանց մէջ տոժին ունեցած մասնակցութիւնը ինչ որ կրնանք ըսել, և ինչ որ գէթ կը վկայէ տարօրինակ և անձնավստահ ընթացք մը, այս է թէ՛ Յակոբոս Լորետանոյ՝ որդի և եղբօրորդի սպանեալներուն՝ յանդգնեցաւ իր վաճառականական տեսրակներուն վրայ (վենետկոյ մէջ ազնուականագոյն ընտանիքները վաճառականութեամբ զբաղիլն իրենց փոքրկութիւն չէին համարեր) գրելու.

«Պարտի Ֆոսքարի տոժը՝ Պետրոս և Մարկոս Լորետանոյի մահուան համար...»:

Եւ երբ իր բարեկամներէն մին կ'ոտիպէր զինքը այս անխոհեմ խօսքերը ջնջել, Յակոբոս Լորետանոյ պատասխանեց.

— Երբ հաշուեկշիռ ըլլայ այն ատեն կը ջնջեմ:

Եւ Ֆրանչեսքոյ Ֆոսքարի այն ատեն վենետկոյ տոժն էր: Այս Յակոբոս Լորետանոյ ամենէն ազդեցիկ գործիչն եղաւ օրինական դաւադրութեան մը (եթէ այս եր-



կու բառերն կարելի ըլլայ համաձայնեցընել) որ վերջապէս յաջողեցաւ տոժը գահընկեց ընել:

Մինչև այս կէտը դաւաճանները բաւական համարեցան հարուածել տոժն իւր Յակոբոս Փոսքարի վերջին զաւակին դժբաղդութեամբը, զոր ծերակոյտը, ինչպէս վերն ըսինք, քանի մը անպատշաճ խօսքերուն համար կրետէ աքսորած էր: Թէպէտ ինքն ամբաստանուած էր նաև իբր մարդասպան Տասանց ժողովոյն վերջին նախագահին: (Միշտ մարդասպանութիւն: Այն ատենի Իտալիոյ շուրջը պատող շքնչելու օդին մէջ կը թևապարէր նա, և սակայն այս արիւնալի ժամանակն այն մեծ դարուն՝ վերածնունդի արշալոյսն եղաւ — մեծագոյնն՝ զոր մարդկութիւնը երբէք ունեցած է): Սակայն այս զրպարտութիւնն ջնջուեցաւ Նիքոլա Էրիճձոյ անուն անձի մը՝ մահուան անկողնոյն մէջ ըրած խոստովանութեամբ, որ ինքզինքը կ'ամբաստանէր իբր հեղինակ նոյն մարդասպանութեան:

Ուրեմն Յակոբոս Փոսքարիի վրայ մի միայն տարտամ ամբաստանութիւն մը կը ծանրանար, Աւագանւոյն դէմ չարախօ-

սելն. և այս ամբաստանութեան համար տանջանքի մատնուեցաւ և վերջապէս աքսորուեցաւ կրետէ, ուր կը գտնուէր տակաւին:

Այս վճիռն անշուշտ դառն ազդեցութիւն պիտի ընէր իշխանին վրայ, որուն որդին — վերջին զաւակն — այսպէս անգութ կերպով կը հարուածուէր: Իր նախորդներէն մին, Մարինոյ Պալիէրոյ տոժն, իրմէ վաթսուն տարի առաջ, տեսած էր իւր կինը նախատուած երիտասարդ պատրիկէ մը, և այնպիսի կոշտ կերպով մը՝ որուն խօսքերը հոս մէջ բերելն անպատեհ կը համարինք յարգելով մեր ընթերցողները: Սակայն նախատողն ծերակուտականի մը զաւակն էր և նախատուողն՝ տոժ մը: Պատրիկը թեթև պատժով մը ազատեցաւ, և ծեր տոժը՝ զայրացած արդարութիւնը չի գործադրուելուն վրայ՝ դաւադրութեան մը մասնակից եղաւ, որուն համար գլխապարտութեան դատապարտեցաւ:

Ներկայիս... սակայն անցքերն ծանօթ են. չի պնդենք այլ եւս: Ինչ ալ ըլլայ, աքսորանքը սաստկապէս կը ծանրանար Յակոբոս Փոսքարիի վրայ, և անոր տար-



օրինակ գաղափար մը թեւադրած էր Միւլանու դքսին գրեւու, որպէսզի յանձն առնու միջնորդել Աւագանուոյն մօտ ի նպաստ իրեն: Անշուշտ այսպիսի ընթացք մը Վենետիոյ նման կասկածոտ կառավարութեան կողմանէ կրնար յոռի կերպով մեկնուիլ: Վենետիկ այն ատեն Միւլանու դքսին հետ պատերազմի մէջն էր, անոր հետ նամակագրութիւն ընելը կրնար իբր մտնութիւն սեպուիլ: Արդ, Յակոբոս Պոսքարիի նամակն ոչ միայն իր հասցէին չէր ժամանած, այլ նաև Պոսքարիի տան թըշնամուոյն ձեռքն անցած էր, Բատուայի կուսակալին՝ Մկրտիչ Մարդինենկոյի: Ուրեմն այս վերջինս իրաւունք ունէր խորհելու թէ այս նամակը կրնայ իբր զէնք ծառայել իրեն՝ տոժին դէմ:

Սակայն կուսակալը չէր կրցած տակաւին որոշել թէ ի՞նչ կերպ պիտի բռնէ հանդէպ Պոսքարիի՝ դքսական պալատը հասնելուն. և թէպէտ իր բուն բնաւորութիւնը զինքը յարձակողականի կը մըղէր, սակայն իւր մեծագոյն շահն էր տոժին հետ սիրով վարուիլ, որուն իշխանութիւնը որչափ ալ սահմանափակ ըլլար, կրնար ըստ իւր քմաց փութացընել

կամ յետաձգել Ազրիականի աղջկան հարսանիքը. ուստի Մարդինենկոյ ջանաց խոհեմ և զգուշաւոր եղանակով մը շահիլ անոր սիրտը:

Արդ զուարթ կերպարանք մը առնելով Հսկայից սանդուխէն վեր ելաւ և ներկայացաւ տոժին անձնական յարկաբաժնին դուռը, և իր գալուստը իմացուց:

Ընդհակառակն, Պոսքարին թէպէտ ընդունեցաւ կուսակալն այն ազնուական մարդավարութեամբ, որուն սովորոյթն ըստացած էր իւր երկարատեւ իշխանապետութեան պատճառաւ, սակայն ցուրտ կերպ մը ցոյց տուաւ Մարդինենկոյի հանդէպ: Այսու հանդերձ անոր աթոռ մը ցուցուց, բայց կուսակալը տեսնելով որ տոժն ոտքի վրայ կը մնայ յանձն չառաւ նստիլ:

Այն ատեն երկուքն միասին նստեցան պատուհանի մը կամարակապին մէջ, որուն մօտ կը գտնուէր Պոսքարին երբ իրեն իմաց տրուեցաւ կուսակալին այցելութիւնը: Սոյն պատուհանը կը նայէր դքսական պալատին պատուոյ գաւթին վրայ, որ այս վայրկենիս գրեթէ լեցուած էր զինուորաց և լաճերու բազմութեամբ:



Այս բազմութեան մէջ կը տեսնուէր նաև այն փոքր խումբն որ Մարդինեն կոյի ուղեկից գունդն եղաւ : Փոխանակ միւսներուն նման ցիրուցան կենալու, պատերազմական կարգով շարուած էր տասնապետաց առաջնորդութեան ներքև : Երկու սպայք սուսերամերկ այս փոքր գնդին զլուխը կը կենային :

— Արդեօք կը վախնայի՞ք, Տէր կուսակալ, ձեր ճամբուն վրայ Միլանու դըքսին հանդիպելու իր ամբողջ զօրաբանակովը, հարցուց Փոսքարին :

— Ինչո՞ւ համար, բարձրապատիւ Տէր :

— Վասն զի ուրիշ պատճառ մը չի կայ որ կարենայ մեկնել զինուց այս արտասովոր ցոյցը՝ զոր դուք մինչև մեր դըքսական պալատը մտցուցիք, ըսաւ տոժը :

— Պարզ ուղեկից գունդ մը, Վեհափառ :

— Ինչ որ մեր իշխանապետութեան անձն չէ ունեցած երբէք, միայն թէ որ Ծերակոյտը միասին ըլլայ, ըսաւ Փոսքարին տատանելով իւր ալևոր զլուխը :

Մարդինենկոյ ծոեցաւ, խոնարհաբար ողջունելով, և ըսաւ .

— Չեք վեհափառ տէրութիւնը ներու-

զամիտ ըլլայ . կ'ուզէի պարզապէս անձամբ փառաւորել այն բարձր աստիճանը որուն Աւագանին բարձրացուց զիս :

— Այս զինուարական ցոյցերը հարկ անհրաժեշտ չէին, պնդեց Փոսքարին, և ձեր պաշտաման աւտիճակը չէր պահանջեր այս պատերազմական պատրաստութիւնները :

— Վեհափառ տէր, կրկնեց Մարդինեն կոյ անայլայլակ քաղցրութեամբ մը, դըքսական պալատը կուգայի և ուզեցի որ հետևորդներս՝ իմ բոլոր յարգանքներս յայտնեն հասարակապետութեան առաջին իշխանին :

Տոժն այս շողոքորթութեան պատասխանեց գլխու պարզ նշանով մը, որ կըրնար իրարու հակառակ զանազան մեկնութեանց տեղի տալ . և քիչ մը խիստ կերպով մը հարցուց .

— Կրնամ արդեօք գիտնալ ձեր այցելութեան նպատակը, տէր կուսակալ :

— Միթէ մեծագոյն նպատակ մը չէ՞ գալ իւր յարգանքները մատուցանել Չեք բարձրութեան :

— Ուրիշի մը համար կրնայ ըլլալ, ձեզի համար՝ ոչ, ըսաւ տոժը դժկամալութեամբ :



— Ձեր վեհափառութիւնը շատ խիստ է հանդէպ իւր ծառային՝ ըսաւ Մարդինենկոյ դառնութեամբ:

— Ոչ, կրկնեց տոժը, խիստ չեմ ես, այլ անկեղծ եմ:

Եւ մօտենալով կուսակալին ըսաւ աւսոր:

— Մարդինենկոյ, ես չորս զաւակ ունէի, դուք ճանչցաք զանոնք: Երեք առաջինները հայրենեաց համար մեռան: Կը մնայ ինծի իմ սիրելի Յակոբոսն, և այն ալ արսոր կը գտնուի: Այսչափը չի բաւեց ձեզ, և կուզէք տակաւին զինքը հարուածել:

— Բարձրապատիւ տէր, չեմ հասկընար ըսածնիդ, պատասխանեց կուսակալը քիչ մը շփոթած:

— Դուք չէք հասկընար ըսածս. լաւ ուրեմն, բացատրեմ զայն: Ձեր գրպանին մէջ, ըսաւ տոժը տաքնալով, նամակ մը ունիք իր ճամբայէն գրաւուած, և դուք կը համարիք թէ այս նամակն իմ դժբաղդ զաւակիս գլուխը վտանգի մէջ դնելու բռնոյթն ունենայ:

Որքան ալ կուսակալն իւր անձին տէր մնաց, սակայն չի կրցաւ զսպել իւր յանկարծական զարմանքն:

— Ի՞նչպէս կրցաք գիտնալ... հարցուց նա ահամայ:

— Ես ալ, պատասխանեց տոժը, նամակ մը ընդունեցայ Յակոբոսէն, և ահաւասիկ այս նամակն, աւելցուց նա քակելով մագաղաթ մը և կուսակալին դիմացը դրաւ:

Մարդինենկոյ կարգաց.

Իմ վեհապետս և յարգելի հայրս.

«Հոս դանդաղօրէն կը մեռնիմ, Կրէտէն զիս կ'սպաննէ: Տխուր կիւկլատեանց հովնոր իմ բանտիս բոլորտիքը կը շէ, սիրտըս կը մարեցընէ և երակներուս մէջ կրակ կը վառէ: Իմ կիզած ըղեղս զովացընելու համար պէտք ունիմ Ազրիականին սիւքը շնչել, որ իմ ճակտիս մագերը վեր վերցընէ: Հայրենեաց օղը ծծել. ո՞վ հայր իմ, չէք գիտեր թէ արսորեալ մը ո՞րքան կը կարօտի անոր: Ո՞վ իմ գեղեցիկ վեներտիկ, միակն աշխարհիս վրայ, տեսնել զքեզ և ապա մեռնիլ:

«Մեռնի՛լ, ի՞նչ փոյթս, բաւական է թէ թաղուիմ այն հողին տակ զոր իմ առաջին քայլերս կոխկրտեցին: Լաւագոյն



է Վենետկոյ մէջ փոշի դառնալ քան ապրիլ ալուր:

«Ապերախտ հայրենիք, դու պիտի չունենաս իմ ոսկրներս»: Նա որ գրեց այս խօսքերը, հայր իմ, հայրենասէր մը չէր, կամ լաւ ևս մեծասիրտ մէկն էր աքսորանքի տառապանքներէն յուսահատած:

«Ո՞վ յարգելի հայրս, ահաւասիկ թէ ի՞նչ միջոց գտայ ապահով Վենետիկ մըտնելու: Գրեցի Միլանու դքսին, խնդրելով իրմէ որ բարեխօս ըլլայ ինծի համար Աւագանւոյն զիմաց: Ապահով գիտեմ թէ այս նամակը պիտի իյնայ կամ ծերակուտական Լորետանոյի և կամ Մարդինենկոյ կուսակալին ձեռքն, երկուքն ալ ոխերիմ թշնամիք մեր ընտանեաց: Այսպիսի խնդրագիր մը երբ ծերակուտին ներկայացուի, զիս յանցապարտ պիտի համարին իբր մատնիչ պետութեան: Պիտի կանչուիմ Վենետիկ, պիտի դատուիմ, պիտի դատապարտուիմ մահուան: Անգամ մը ևս, ինչ փոյթս, քանի որ ծննդավայրս զիս պիտի ընդունի իւր թևոց մէջ՝ իբր բարի մայր մը՝ որ կ'սպասէ իւր մոլորեալ զաւակին:

«Այժմ, յետ ձեր վերջին համբոյրն ըն-

դունելու, հայր իմ, ուրիշ բանի չեմ փափաքիր բայց միայն Վենետիկեան գերեզմանի մը Վենետիկեան հողին վրայ:

Ամէն, եղիցի՛:

Յակոբոս Ֆոսքարի

Մարդինենկոյ այս նոր օրինակ նամակը կարդալէն յետոյ քանի մը վայրկեան մտածկոտ մնաց: Լաւ գիտէր թէ ասի սընտի խաղ մը չէր: Ո՞վ որ Վենետկոյ մէջ ապրած էր, չէր կարող այլ ևս ուրիշ տեղ ապրիլ. և հազուագիւտ չէր տեսնել Վենետիկցի աքսորեալի մը հոն վերադառնալ յանդգնիլը, լաւ գիտնալով թէ բանտարգելութիւն կամ նոյն իսկ գլխապարտութիւն կը մնան իրեն:

Կուսակալը վերադարձուց մագաղաթը Ֆոսքարիին ըսելով,

— Եթէ ձեր թշնամին ըլլայի, ինչ որ ձեր զաւակը կ'ակնարկէ, կը պնդէի թէ այս նամակը ճարպիկութեամբ գրուած է, և անոր նպատակն է չեզոքացնել Միլանու դքսին գրածը զոր կրցայ ճամբուն վրայ գրաւել:

— Շատ աղէկ, ըսաւ Ֆոսքարի տեսակ մը զառանցանքով, այս երկու յիշատա-



կարանները Տասանց ժողովոյն ներկայացուր, և անգամ մ'ալ կրկնուի այն ատելի տեսարանը զոր վենետիկը միայն կրնայ ներկայացնել. հայր մը նախագահ այն դատարանին՝ որ տանջանաց կը դատապարտէ իր վերջին և միակ շառաւիղը:

Այսօրինակ խօսելու ատեն ծերուն աչքերը խոշոր արցունքներով լեցուած իր դողդոջուն ձեռքերը երկինք բարձրացուցած էր:

Մկրտիչ Մարդինենկոյ զգացուեցաւ արդեօք այս տեսարանին դիմաց: Ո՛չ: Սակայն տեսնելով թէ իր ծրագիրներն Տոժին սրամտութեամբ տապալեցան, ճարպիկութիւն համարեցաւ իր որոշմունքն յանկարծ փոխել: Հասկըցաւ թէ մեծագին չէր գներ Ֆրանչեսքոյ Ֆոսքարիի ձեռնտուութիւնը, զոհելով անոր առ ժամս երկար ատենէ ի վեր խորհած վրէժխնդրութիւնը: Հանեց ուրեմն իր ծոցէն Յակոբոսին զբաժ նամակն՝ Միլանու դքսին, և տուաւ զայն տոժին.

— Բարձրապատիւ Տէր, ըսաւ, իմ վեհապետիս կը յանձնեմ ձեր զաւակին գործած ծանր անխոհեմութեան միակ հաւաստիքն: Այս անխորհուրդ գործին զաղտնիքը պիտի մնայ ձեր և իմ մէջս:

Տոժը նամակն առնելով սաստիկ զգացուեցաւ, և կուսակալին ըսաւ.

— Հայրը միայն շնորհակալ կրնայ ըլլալ ձեր ազնուութեան, տէր կոմս: Իսկ իբր վեհապետ, ձեզմէ կը խնդրէ իր բռնած ընթացքը ծածուկ պահելու իրաւունքը:

Մարդինենկոյ խոնարհեցաւ առանց պատասխանելու: Վայրկեան մը յետոյ իբր թէ խօսակցութեան թելը կտրելով, որ Տոժին ցաւագին էր, իւր նայուածքին և ձայնին մէջ զնելով այն ամէն փաղաքշանքն զոր կրնար տալ ըսաւ,

— Ներկայիս Ձեր վեհափառութենէ անձնական շնորհք մը կ'ուզեմ խնդրել:

— Խօսեցէք, ըսաւ տոժը.

— Եւ զայն կ'ուզեմ ընել, շարունակեց կուսակալը, իմ բարեկամիս Ֆէլիչէ Պատոէրին հաւանութեամբ, որ կը փափաքի Ազրիականին աղջկան հետ իւր ամուսնութեան հանդէսը մեծ շքով կատարել:

— Ի՞նչ է ուրեմն, հարցուց Ֆոսքարին մօտենալով իրեն:

— Իմ բարեկամս, շարունակեց Մարդինենկոյ, մտադիր է նշանտուրի հանդէ-



սը կանխել կատարել, յորում զանազան խրախճանութիւնք պիտի տրուին ապագայ ամուսնացելոց. եկայ Չեր հաճութիւնը խնդրել որպէս զի այս խրախճանութեանց մին, որուն ծախքերն ես պիտի ընեմ, իմ կալուածիս՝ Գեղեցիկ կղզոյն մէջ տեղի ունենայ կարտայ լճին վրայ:

— Ետ աղէկ, տէր կուսակալ, պատասխանեց ծեր Գոսքարին, ասոր մէջ ո՛ր և է անպատշաճ բան մը չեմ տեսներ:

Այս վերջին խօսքերն ըսելէն յետոյ, առաջնորդեց Մարգինենկոն մինչև իւր յարկաբաժնին սեմը:

— Այսպէս գործելն թերևս լաւագոյն է, ըսաւ ինքնիրեն կուսակալն՝ տոժէն բաժնուելէն յետոյ. խոհեմ և չափաւոր ծրագիր մը նախապատիւ համարել քան ինչ որ մտածեր էի: Հիմակ ուրեմն կրնամ Բատուայի իմ պաշտօնավայրս դառնալ, ապահով եմ թէ պիտի չուշանամ այս յիմար երիտասարդին պատճառաւ նոյն ծրագրին վերադառնալ:

Կուսակալին ուղեկիցները նշմարելով իրեն հսկայից սանդուխէն իջնելն, շարժեցան և շարուեցան ճամբայ բանալու անոր մինչև իր կոնտոլան: Բարթողիմէոս,

որ Մարգինենկոյի տան մէջ վստահելի անձի մը դերն ունէր քան զինուորականի մը պաշտօնը, կը սպասէր իր տիրոջը հրամաններուն:

— Մտի՛ր ինձի հետ իմ կոնտոլիս մէջ, ըսաւ անոր կուսակալը, քեզի ըսելիք ունիմ:

Քիչ վերջը փոքր նաւակախումբն՝ որ վէնետկոյ դատարկաշրջիկ, հետաքրքիր և ծոյլ ուսմիկ ժողովրդեան սքանչացման նիւթ եղած էր, և որուն համար ամէն ինչ տեսարան էր, կը բարձրանար Մեծ — Ջրանցքին մէջ՝ այն վեհաշուք հանդարտութեամբ որ ամէն ժամանակ վէնետկոյ կոնտոլավարներուն ընթացքն եղած է:

Կուսակալն իւր հաւատարիմ մտերմին հարցուց.

— Կատարեցի՞ր իմ հրամաններս, և այն անձիրան առիւծին, որ Ռիքարտոյ կը կոչուի, կապեցի՞ր ցուկը:

— Անկէ լաւագոյնն ըրի, վսեմաշուք տէր, պատասխանեց Բարթողիմէոս. զինքը բոլորովին գինովցուցի:

— Ետ լաւ: Իսկ ես, գործը այնպէս դարձուցի որ ժամանակ վաստկեցանք, առ նուազն տասնըհինգ օր:



— Այն ատեն կրնանք մտածել:

— Այո՛: Ֆէլիչէ Պատոէրին՝ Ազրիա-  
կանի աղջկան հետ նշանախօսութեան  
առթիւ, իրենց ի պատիւ իմ Գեղեցիկ  
կղզւոյն մէջ հանդէս մը պիտի տամ:

— Ուր կրնանք, Տէր, խօսեցեալներուն  
մէկէ աւելի անակնկալներ պատրաստել:

Մարդինենկոյ չար ժպիտ մը ունեցաւ:

Այս վայրկենին կոնտոլ մը կ'անցնէր  
կուսակալին կոնտոլին քովէն, և Մար-  
դինենկոյ ճիշդ ատենին կը դառնար տես-  
նելու Ֆէլիչէ Պատոէրին գուարթ դէմքը:  
Երիտասարդ պատրիկը ձեռքով բազում և  
բարեկամական ողջոյներ կը դրկէր:

— Ո՛րչափ կը սիրէ զձեզ, ըսաւ յիս-  
նապետը:

— Այո՛, ըսաւ կուսակալն թեթև մը  
ուսերը վերցընելով, բարի սիրտ ունի և  
կարծեմ թէ զինքը շահեցայ:

— Ամբողջովին:

— Այս երիտասարդներն, աւելցոց  
Մարդինենկոյ տխուր շեշտով մը, այս ե-  
րիտասարդներն անխոհեմ են:

— Կրնամ արդեօք, Տէր, հարցնել թէ  
ինչ պատճառաւ այս անդրադարձութիւնը  
կ'ընէք:

— Ոչինչ, գաղափար մը:

— Ձեր վսեմութեան՝ յղացած գաղա-  
փարներն Ֆէլիչէ Պատոէրին նկատմամբ  
ունեցած դիրքին մէջ, անտարբեր չեն  
կրնար ըլլալ, Բարթողիմէոսն ուշիմու-  
թեամբ դիտել տուաւ:

— Լաւ ուրեմն. կը մտածէի թէ իմ  
երիտասարդ բարեկամս ամէն երեկոյ դուրս  
կ'ելլէ. կը շրջի քաղինոյէ քաղինոյ և  
թերևս ուրիշ տեղեր մինչև զիշերուան  
ուշ ատեն, և արշալուսին կը մտնէ իր  
կոնտոլն ուր թողած էր իւր ծառաները:

Յիսնապետն իւր երկու ականջները մեծ  
մեծ բացած էր: Կը սկսէր ըմբռնել թէ ին-  
չո՞ւ իր տէրն իւր կոնտոլային մէջ առ-  
նելով պատուած էր զինքը:

— Դու չե՞ս մտածեր, Բարթողիմէոս,  
չարունակեց կուսակալը ձեռքերը անսիւ-  
թութեամբ մը, թէ այս երկրին մէջ ուր  
դաշոյնն այնքան դիւրութեամբ կը գործէ,  
այսպիսի կենցաղ մը ծանր անխոհեմու-  
թիւն է: Ձեմ գիտեր, նախագգացում մը  
ունիմ թէ զիշեր մը իմ խեղճ բարեկամս  
պիտի գտնուի դրան մը դիմաց սրտին մէջ  
վեց բթաչափ միտուած դաշոյն մը:

— Եւ թէ որ այսպիսի դժբախտութիւն



մը պատահի, տէր, նշանախօսութենէ առաջ, ըսաւ յիսնապետը ցած ձայնով, ձեր հանդէսին պատրաստութիւններն անօգուտ պիտի ըլլան:

Կուսակալն նշանակելի ակնարկ մը նետեց Բարթողիմէոսին վրայ ըսելով.

— Սրամիտ եղիւր, հրաման տուր կոնտուլավարներուն որ զքեզ Վենետկոյ իմ պալատիս սանդուխներուն վրայ հանեն: Դու ինծի հետ պիտի չի գաս Բատուա:

— Եւ... երբ Ձեր վսեմութեան ներկայանամ, հարցոյց յիսնապետը:

— Երբ իմ բարեկամիս վրայ ինծի տալիք տեղեկութիւններ ունենաս:

— Բաւ է ինծի այսչափ. տէր:

Տէրն ու ծառայն ուրիշ բառ չի փոխանակեցին մինչեւ որ կոնտուլան կեցաւ Մարդինենկոյի շքեղ ճակատով պալատան դիմաց:

— Բարի յաջողութիւն, Բարթողիմէոս, ըսաւ անոր կուսակալն երբ յիսնապետը թեթեակի կը ցատկէր մարմարինէ սանդուխին առաջին աստիճանին վրայ:

— Շնորհակալ եմ, տէր, պատասխանեց այս վերջինը, ձեռքէս եկածը պիտի ընեմ զձեզ գոհացընելու համար:

Երբ փոքր նաւակախումբը կը հեռանար, Բարթողիմէոս իր թիւն տակէն մըրմըրոաց.

— Տէրս կ'ուզէ որ ամէն գործերն ես միայնակ ընեմ: Արդար չէ այս, ցարդ առատաձեռնութեամբ վճարած չէ: Ինչ տուաւ ինծի, տասնըվեց տարի առաջ, որպէս զի ձեր Սալվադորը ղրկեմ սատանային՝ իր զալտնիքը պատմելու. տաւը ոսկի ծէգին: Սակայն զինուոր մը չէ կարող սրիկայի գործը կատարել այս վարձքով: Է՛հ, անձամբ չեմ գործեր, անշուշտ կը գտնեմ Վենետկոյ մէջ բարի զաւակ մը որ ինծի օգնական ըլլայ:

Համեստ Բարթողիմէոսն այս փիլիսոփայական անդրադարձութիւններն ընելէն յետոյ, ելաւ Մարդինենկոյի պալատան սանդուխներուն աստիճանները, և փորձեց ջրոյ դռնէն ներս մտնել: Սակայն այս դուռը բոլորովին փակուած էր, ինչպէս սովորութիւն էր Վենետկոյ պալատներուն երբ անոնց տէրերը բացակայ ըլլային: Որով յիսնապետը բռնադատեցաւ եզերքը կապուած իր կոնտուլան քակել և քովնախ ջրանցքը մտնել որ կը տանէր քարափ մը, ուր կը գտնուէր ծառայից համար յատուկ պալատան դուռը:



Տակաւին մուժը չէր կոխած երբ Բարթողիմէոս փոքր փողոցին մէջ մտաւ, և թուեցաւ իրեն տեսնել մարդ մը, որ կը ջանար ծածկուիլ հոն գտնուող պատի մը ներս մտած անկեան մէջ: Բարթողիմէոս շարունակեց իր ընթացքը, և իւր աչքերն փողոցին մթութեան վարժուած, կրցաւ վերջապէս տեսնել իրմէ ծածկուիլ ուզող մարդն և ճանչցաւ զինքը.

— Պետրոսն է, գոչեց.

— Այո՞, Պետրոսն, ձայն մը փափսաց իր ականջին, ծեր Սալվադորին տղան, զոր դու սպաննեցիր ասկից տասնըվեց տարի առաջ:

Այս ահաւոր խօսքերն նոյն տեղւոյն վրայ գամեցին յիսնապետը: Քանի մը վայրկեան քար կտրեցաւ մնաց, և երբ ինքնզինքը վերստին գտաւ՝ որով չորս կողմը նայելու սիրտ ըրաւ, բան մը չի տեսաւ, միայն կնոջ մը կամ կրնայ ըլլալ կրօնաւորի մը զգեստը՝ որ կարծես փողոցին ծայրը կը ծածանէր:

Բարթողիմէոս իւր բոլոր ուժերը ժողվեց: Այս երկրորդ անգամ էր նոյն օրուան մէջ՝ որ ծեր Սալվադորին յիշատակը յետ այնքան տարիներ անցնելու, յանկարծ իր

առջևը կը ցցուէր: Համարեցաւ թէ գառանցանքէ մը բռնուած է և մտքէն ամէն տխուր մտածմունքներն հալածելով, վազեց դէպի այն մարդն զոր Պետրոսը կարծած էր:

Յիրաւի նոյն ինքն Պետրոսն էր, Սալվադորին որդին, Յովհաննային էրիկը, Ֆիամէղդային հայրը:

Ինչ եղած էր այն օրէն յետոյ զոր տեսանք զինքը լճակի տնակին մէջ, իր հօրը բերած ոսկիները զողնալով: — Ահաւասիկ պատմութիւնը:

Նախ ժամանակ մը անյայտ եղաւ. բայց երբ իմացաւ թէ իր կինը Յովհաննան դքսական պալատին մէջ Աղբիականին աղջկան ծծմայր եղած է, խորհեցաւ այս անակընկալ բարեբէն լաւագոյն մաս մը իւրեն յատկացնել: Գնաց գտաւ իւր կինն Յովհաննան. այս վերջինը վախնալով որ խայտառակութիւն մը չընէ, անոր պահանջներուն տեղի տուաւ, և յաճախակի այցելութեանց ատեն իր շահածին լաւագոյն մասը կու տար անոր:

Ութ տարի Պետրոս կրցաւ այսպէս ըստ իւր քմահաճոյից ապրիլ. ցորեկները տաքնալով արևուն մէջ, չարախօսելով մէկուն



միւսին վրայ, կծու խօսքեր ըսելով ձե-  
րակուտականաց նկատմամբ՝ որոնց մետաք-  
սէ երկայն զգեստները կ'աւլէին Բիաձէդ-  
դայի կամ Աքիավոնիի քարափին սալա-  
յատակը, ուր ընդհանրապէս Պետրոս կը  
յաճախէր : Երեկոյին Ռիալդոյի զինե-  
տան մը մէջ զինովնալով կամ Կէզդոյի  
աղտեղի սենեկի մը մէջ խաղալով կը կոր-  
սընցունէր : — Ասոնք էին Պետրոսին յա-  
ջողութեան ժամանակները :

Սակայն Յովհաննան դիպուածական մա-  
հուամբ մեռաւ, և Պետրոսին եկամուտնե-  
րուն աղբիւրը յանկարծ ցամքեցաւ : Ինչ-  
պէս ապրիւ. շատ ուշ էր աշխատութեան  
ձեռնարկելու շատոնց կը ճանչնանք զինքն  
արդէն թէ երբէք չէր սիրեր աշխատու-  
թիւնը : Պետրոս գողութեան զարկաւ, և  
քիչ ատենէն Պետութեան ցոկանաւերուն  
մէջ թիավարելու դատապատեցաւ :

Այս գրադանքը բոլորովին հեռու էր  
իր ճաշակէն, այնուհետև Պետրոսին ամ-  
բողջ մտադրութիւնն եղաւ անհրաման, ծա-  
ծուկ փախչիլ Պերճափայլ Հասարակապե-  
տութեան ձեռքէն որ զինքը զինուոր գրած  
էր : Արդ, նոյն օրն սրիկան միջոցը գտած  
էր նաւարանէն փախչելու, ձիւթողի մը ըզ-

գեստները հագնելով՝ զոր նաւագործարա-  
նին մէջ գտած էր, և քանի մը ժամէ ի  
վեր կը թափառէր Վենետկոյ փողոցները,  
փնտռելով չարագործութիւն մը ընելու ա-  
ռիթը. յաջողեցաւ աւելին ևս ընելու : Պի-  
տի տեսնենք թէ ինչպիսի՛ առիթ ներկա-  
յացաւ իրեն :

Թշուառականն երբ ճաչցաւ Բարթողի-  
մէոսն, իւր առաջին մտածմունքն եղաւ  
թէ յիսնապետը զինքը բռնելով կրկին  
նաւարանը պիտի նետէ, անոր համար ի-  
րեն նման անզգամներու փոքրոգիութեամբ  
երբ ինքզինքը բռնուած տեսաւ, ինկաւ  
Բարթողիմէոսի ոտքն ըսելով .

— Ծնորհ, տէր յիսնապետ : Զիս մի՛  
յանձներ :

— Չար սատանայ. ամենեին այնպիսի  
միտք մը չունիմ, պատասխանեց Բարթո-  
ղիմէոսն, ընդհակառակն կ'ուզեմ քեզի  
փախչելու տեղ մը գտնել և շահաւոր  
գրադանք մը : Բայց հոս խօսիլն լաւ չէ,  
ետեէս եկուր :

Այս վերջին խօսքերն ըսելով, ետեէն  
քաշեց տարաւ թափառականը դէպի Մար-  
դինենկոյի պալատը մտնելու փոքր դուռը :

Երբ մօտեցան այս դրան, ձեր կրօնա-



ւոր մը մօտակայ տունէն կ'ելլէր: Բարթո-  
ղիմէոս զինքը նշմարելով վայրկեան մը  
անբացատրելի սրտի անձկութիւն մը ու-  
նեցաւ: Միթէ այս կրօնաւորը նոյն այն  
չէ՞ որ վայրկեան մը առաջ իր ականջէն  
փսփսացած էր այն ահաւոր ամբաստանու-  
թիւնն՝ Սալվադորին սպանման:

Պետրոս այս ծերը տեսնելով ինքն ալ  
մէկէն դէպի ետ քաշուեցաւ, ինչպէս ըրած  
էր երբ Բարթողիմէոս զինքը յանկարծ  
բռնեց պատին անկեան մէջ:

— Կը ճանչնաս այս կրօնաւորը, հար-  
ցուց անոր յիսնապետը:

— Անշուշտ, պատասխանեց Պետրոս:  
Վենետիոյ մէջ ո՞վ չի ճանչնար վերապա-  
տուելի հայր Յակոբոսը, Ռոմուլտեանց  
կարգին մեծաւորը:

Բարթողիմէոս լսելով այս սուրբ անձին  
անունն, որ յիրաւի շատ ժողովրդական  
էր Վենետիոյ մէջ, երկաբ շունչ մ'առաւ:  
Ինչպէս կրնար ըլլալ որ այսպիսի նշա-  
նաւոր մարդ մը՝ զբաղի իւր գձուձ ան-  
ձով, ևս առաւել ծեր Սալվադորին ան-  
ձով, որ տասնըվեց տարի առաջ անյայ-  
տացած է:

Յաջորդ օրը, կոնտուլավարն Ռիքարտոյ

երեկոյեան դէմ երկար ատեն քնացած ըլ-  
լալով՝ Բիաձէդդայի ծայրը կապուած իր  
կոնտուլային մէջ, արթնցաւ ճիշդ այն պա-  
հուն երբ պղինձէ երկու ինքնաշարժ ար-  
ձաններն, որոնք Մէրչէրիայի փողոցին կա-  
մարակապին վրայ եղած ժամացուցի աշ-  
տարակին վրայ կեցած, իրենց երկաթէ  
մուրճերով զանգակին վրայ կը զարնէին  
տասնուերկու ժամերն:

— Կէս գիշեր, ըսաւ Ռիքարտոն ինքն-  
իրեն: Տիրոջս իր կոնտուլան մտնելու հա-  
մար դեռ երկու ժամ կայ. ժամանակ ու-  
նիմ ցամաք ելլելով քիչ մը ոտքերս շար-  
ժել: Է՛, Կուպէդդա, ձայնեց իւր կոնտու-  
լավար ընկերոջը, զոր արթնցնելու հա-  
մար ուժով մը մշտեց, մսեցայ, կ'երթամ  
Բյուքուրայիկներուն տակ շրջան մը ընե-  
լու:

— Լաւ, պատասխանեց միւսը կրկին  
իր ընդհատեալ քունին մէջ իյնալով:

Ռիքարտոյ անցաւ Բիաձէդդան և մտաւ  
Ս. Մարկոսի հրապարակը քիչ մը խար-  
խափելով: Գիշերը շատ մութ էր և միայն  
հրապարակին քանի մը մասերը լուսաւո-  
րուած էին բաց ֆնացած երեք կամ չորս  
քաղինոներուն ընդհատեալ լուսերով: Բու-



լոր այս քաղինոնները Բրոքուրադիէ վէք-  
քիէի ներքև կը գտնուէին և Ռիքարտոյ կը  
շրջագայէր Բրոքուրադիէ նուովէի տակ:


Կոնտուլավարին հոն հասնելէն կէս ժամ  
դեռ չէր անցած, երբ դիմացի քաղինոննե-  
րէն միոյն պատուհանին բացուիլը լսեց:  
Ազնուական երիտասարդ մը եկաւ արմկով  
պատուհանին կոթընեցաւ. սակայն դիմա-  
ցի կողմէն եկած լոյսն այնքան նուաղ  
էր որ Ռիքարտոյ չի կրցաւ զանազանել  
երիտասարդին դէմքը:

— Բարի երիկուն, Ռինալտինի, ըսաւ  
ձայն մը:

— Բարի երիկուն, Ֆելիչէ Պատտեր,  
պատասխանեց ուրիշ ձայն մը, որ կը  
թուէր այն պատուհանէն զալ՝ ուր երի-  
տասարդը եկաւ կոթնեցաւ:

Պատուհանը զոցուեցաւ, և Ռիքարտոյ  
լսեց զուարթ երգի մը կրկնումը Բրոքու-  
րադիէ վէքքիէէն: Կարծելով թէ իր տէրն  
է որ իր կոնտուլան կ'երթայ. պատրաս-  
տուեցաւ կանխելու երթալու հոն: Սա-  
կայն յանկարծ զուարթ երգն մարեցաւ  
ցաւազին աղաղակի մը մէջ, և կոնտուլա-  
վարն որոշակի լսեց ծանր զանգուածի մը  
նման իյնող մարմնոյ մը աղմուկը:

սինդրոմ





— Իմ տէրս կը սպաննեն, պոռաց Ռի-  
քարտոն:

Առանց ուրիշ բան մը մտածելու վազեց  
աղմուկին ուղղութեամբ: Նոյն վայրկենին  
մարդասպանը որ իր գործը աւարտելով կը  
փախչէր հակառակ կողմը, մութին մէջ ըստ  
բախտին քալելու ատեն զարնուեցաւ Ռի-  
քարտոյի: Կոնտուլավարն բռնեց զինքը կո-  
կորդէն.

— Թշուառական, գոչեց, դու սպան-  
նեցիր իմ տէրս, ազնուական Ֆէլիչէ Պա-  
տէրը:

— Այո՛, ստոյգ է, զինքը սպաննեցի,  
ըսաւ մարդն խղրուկ ձայնով մը. բայց  
ես գործիք մ'եմ միայն ինձմէ զօրաւորնե-  
րուն:

— Դու այս բանս պիտի վկայես ա-  
վուկատորներուն դիմաց, ըսաւ Ռիքար-  
տոն, աւելի ևս սեղմելով իր անուրը:

Կոնտուլավարն իր առջևէն հրելով մար-  
դասպանը՝ միասին քանի մը քայլ ըրին  
լուռ ու մունջ. յետոյ այս վերջինն ըսաւ  
այնպիսի ձայնով մը որ Ռիքարտոյին սիր-  
տը թունդ հանեց.

— Սիրտդ առաջ պիտի երթայ հին  
բարեկամ մը սպաննել:



— Ո՞վ ես դուն, հարցուց Ռիքարտոյ մօտեցընելով իր դէմքը թշուառականին երեսին:

— Պետրո՞ս, պոռաց նա ճանչնալով զինքը: Ա՛խ, բարեբախտ ես դու, սրիկայ, իմ Ֆիլամէզդայիս հայրն ըլլալովդ:

Եւ բիրտ կերպով մէկ կողմը հրելով մարդասպանն, որ քանի մը քայլ անդին գնաց ինկաւ, վազեց փութանակի այն տեղն ուր պիտի գտնէր զոհին դիակը: Պըքսական պալատին պահապաններէն մի քանի հոգի ջահերով հասած էին հոն: Ռիքարտոյ ծոցաւ մէկէն իր դժբախտ տիրոջ մարմնոյն վրայ: Բայց հազիւ թէ նաւեցաւ երեսը՝ զարմացման ձայն մը արձըկեց:

Սպաննուած մարդը Ֆիլիչէ Պատոէրը չէր:

Է.

## ՆՇԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Ազնուական Օրիորդաց վանքն, ուր Վեներեան պիտի կենար մինչև Ֆիլիչէ Պատոէրին հետ պսակուելուն օրն, իսկապէս վանատուն մը չէր: Ինչպէս ուրիշ անգամ առիթ ունեցանք ըսելու, առանձնական հաստատութիւն մ'էր՝ ուր Վենետիոյ պատրիկները կ'ուղարկէին իրենց ազջիկները դաստիարակուելու համար: Ուստի այս հաստատութիւնը որ կրօնաւորական ո՛րևէ կարգի չէր պատկաներ, վանական կանոններու ամէն խստութիւնները չունէր:

Հոն կը գտնուէին ընդունելութեան սրահներ, նման Վենետիոյ սոսնակարգ պալատներուն մէջ գտնուածներուն. ասկէ զատ, վանական շրջանակէն դուրս, աշխարհիկ ուրիշ բաներու հետ այլին նաև աշխարհականաց յատկացեալ յարկաբաժիններ, որոնք մեծաւորուհիին հրամանով աշակերտուհեաց մայրերուն տրամադրութեան կը դրուէին, երբ Բատուա գալով



կ'ուշանային հոն, և չէին ուզեր անհան-  
գիստ ըլլալ գիշեր ատեն Պրէնդայէն վար  
իջնելով կտրել անցնիլ լճակները:

Վերի մեր պատմած վերջին տեսարա-  
նէն յետոյ, Ազրիականի աղջիկը միայ-  
նակ կ'ապրէր իր Ֆիամէզդա նաժշտին հետ  
ճոխ կերպով զարգարուած այս յարկա-  
բաժիններէն միոյն մէջ: Մեծ սրահը, ուր  
ընդհանրապէս Վենեճիան կը կենար, դաշ-  
տին վրայ կը նայէր: Պրէնդա գետը գրե-  
թէ իր պատուհաններուն տակէն կ'անց-  
նէր, անոր օձապտոյտ եզերքներն ծած-  
կուած էին ամարանոցներով, Բատուայէն  
սկսեալ մինչև ծով, որոնք այնքան գեղե-  
ցիկ և բազմաթիւ էին՝ որ քաղքին շրջա-  
կայից մշտատև զուարթ երևոյթ մը կու-  
տային:

«Եթէ աւանդութենէն չի գիտնայիրք,  
կ'ըսէր Կոստանդիանոս Պալէոլոկ, թէ Աս-  
տուած երկրային զբախտը հաստատած է  
Ասիայ, կարծեմ որ ուրիշ տեղ չէր կըր-  
նար ըլլալ, եթէ ոչ Բատուայի սահմանին  
մէջ:

Այն առաւօտ Վենեճիան ըստ իր սո-  
վորութեան՝ յարկաբաժնին սրահին պա-  
տուհաններէն միոյն արմկաւ կոթնած կը

դիտէր տարտամ կերպով և առանց տես-  
նելու շքեղ գիւղանկարն որ իր աչքին  
առջև կը պարզուէր, և որուն հորիզոնին  
վրայ կը գտնուէր Վենետիկը: Իր նաժիշ-  
տը Ֆիամէզդա՝ սաստիկ զբաղած էր և  
փութկոտութեամբ իր բոլորտիքը կ'եր-  
թեկէր: Կարասեաց վրայ կը տարածէր  
ոսկեթել մետաքսէ զգեստներ, ճամկաւոր  
դիպակէ շրջագգեստներ, թաւիշէ կրկնոց-  
ներ, շողշողուն մարգարտայեռ լանջանոց-  
ներ, քառամանեակներ, որոնց վրայ կար-  
ծես Արևելքի արևուն բոլոր ճառագայթ-  
ները վառուած էին, արուեստով քանդա-  
կեալ գեղեցիկ զարդեր: Ֆէլիչէ բոլոր այս  
զարդարանքի հրաշալիքը կրցեր էր հաւա-  
քել իր նոր բարեկամին, կուսակալ Մար-  
դինենկոյի օգնութեամբ, մեծամեծ ծախ-  
քեր ընելով:

Ֆիամէզդա, Եւայի ճշմարիտ դուստրն,  
աչքով կը լափէր բոլոր այս գեղեցիկ ի-  
րեղէնքը զանոնք չափակցեալ ոճով կար-  
գադրելու ատեն: Երբ ամէն ինչ ուզա-  
ծին պէս եղաւ, դարձաւ իր մանկամարդ  
Տիրուհւոյն և ըսաւ.

— Ահաւասիկ լրմնցաւ: Հիմայ, Տիրու-  
հիս կրնայ ընտրել այս բազմաթիւ ար-



դուզարդերէն ինչ որ յարմար կը դատէ կրելու իր նշանախօսութեան առաջին օրն, այսինքն՝ այսօր:

— Ինծի համար փոյթ չէ, տեսնենք ... քիչ վերջը.... պատասխանեց Վենեձիան անփութօրէն:

— Սակայն պատիւ կը համարիմ կրկրնելու Տիրուհւոյս՝ թէ այսօր պէտք է Բատուայի մայր եկեղեցւոյն մէջ պատարագի ներկայ գտնուիլ: Այսօրէն սկսեալ Ֆէլիչէ Պատոէրին նշանածն էր: Վաղը հանդիսականք մեծ շքով պիտի մեկնին կարտալիճը, ուր երկու օրուան մէջ պիտի հասնինք: Նաւակները կը սպասեն մեզի Բէսքիէրա, որպէս զի զմեզ նոյն երեկոյ Գեղեցիկ կղզիէ տանին, կուսակալին կալուածը, և յաջորդ օրը մեծաշուք հանդէսը տեղի պիտի ունենայ զոր կուսակալն յարգարած է ի պատիւ Տիրուհւոյս:

— Ա՛հ, այո՛, կուսակալն, ըսաւ Ազրիականի աղջիկը զողալով:

— Ի՛նչ ունիք, Օրիորդ:

— Այս մարդը ինծի վախ կ'ազդէ:

— Ա՛հ, սիրելի Տիրուհիս, ըսաւ նա՝ ժիշտն հուժկու բազուկներուն մէջ առնելով իր գեղեցիկ տիրուհին, ի՛նչ բանէ կը վախնաք:

— Ո՞վ գիտէ:

— Սիրտերնիդ հանդարտ բռնեցէք, սիրելի Տիրուհիս, աւելցուց Ֆիամէղդան բռնազբօսիկ Յպիտով մը՝ որով կը տեսնուէր թէ ինքն ալ կասկածի մէջն էր, կուսակալը հիմայ մտերիմ բարեկամն է Ֆէլիչէ Պատոէրին, հրաժարած է այլ ևս ձեր նկատմամբ յիմար զաղափարներէ:

— Երանի՛ թէ, ըսաւ Վենեձիան. բայց ես հանգիստ չեմ, ուշադրութիւն Ֆիամէղդա, այս կուսակալը դժոխային մարդ մ'է:

— Տիրուհիս շատ յոռետես է: Սակայն կը շաղակրատինք, ժամանակը կ'անցնի, աւելցուց Ֆիամէղդան կեղծ անհոգութեամբ մը: Տիրուհիս ի՛նչ զգեստ որոշած է կրելու:

— Սպիտակ զգեստ մը:

— Արծաթաթե՛լ:

— Առանց ո՛ր և է զարդարանքի:

— Ո՛հ, Տիրուհիս, ըսաւ Ֆիամէղդան շուարած. իսկ գլխուն զարդարանք:

— Վարդ մը մազերուս վրայ:

Նաժիշտը տխուր ակնարկ մը նետելով բոլոր այն շողշողուն և շքեղ արդուզարդերուն վրայ, զորս Վենեձիան արհամարհեր էր, աճապարեց իր Տիրուհւոյն ըն-



տրած զգեստը բերելու : Երբ Վենեձիան հագուեցաւ, այս կուսական զգեստին ներքեւ Ֆիամէղդային աչքին այնպիսի հրեշտակային գեղեցկութեամբ երևցաւ, որ չկրնալով ինքնզինքը զսպել ըսաւ.

— Եւ սակայն, Տիրուհիս, ձեր ըրածը նազանք մը չէր, այլ շատ իրաւունք ունէիր: Դուք շատ աւելի գեղեցիկ էք այս պարզ զգեստով, որ ձեր շնորհքները ցուցադրելու արգելք չըլլար, ինչպէս պիտի ըլլային այն ծանր զգեստներն որոնք իրենց մեծաշուք ծանրութեան ներքեւ պիտի ճնշէին ձեր մատաղ հասակը: Այո՛ յայտնի կը տեսնեմ թէ Աստուած միայն կարող է տալ ամենէն աւելի գեղեցիկ զարդարանքը: Սակայն, աւելցուց նա աղաչանքի ձևով, խեղճ Ֆէլիչէ Պատուէրը տժգոհ պիտի ձգենք և կարծես արհամարհած պիտի ըլլանք իր ընծաները:

— Ո՛հ, ո՛չ, ըսաւ Վենեձիան, ինքն այնքան բարի է որ չեմ ուզեր զինքը վշտացնել . . . . : Տուր ինձի սա մարգարտայեռ մանեակը:

Երբ Ֆիամէղդա կը ներկայացընէր իւր տիրուհւոյն՝ մանեակը՝ ճարմանդը քակելով, Աղբիականին աղջիկը կը քակէր իւր

ճոխ մազերն որոնք խուրձ խուրձ կ'իյնային անոր շուրջը իբր դեղին հունձքեր. և իւր նաժշտին օգնութեամբ հաստատեց զանոնք իւր ծոծրակին վրայ, և մարգարտները այնքան ճարտարութեամբ իւր պարանոցին բոլորտիքը շարուեցան, որ կարծես բնական կերպով հոն դրուած էին իբր ծաղկանց բաժակին մէջ ինկած ցողոյ կաթիլները:

— Եւ այս յակինթը ձեզի հաճելի չէ՞ արդեօք, հարցուց Ֆիամէղդան գետեղելով Վենեձիային ձեան նման ճակատին վրայ հրաշալի ճեղենակ մը (չէլէնկ):

— Եթէ դու կ'ուզես, պատասխանեց Վենեձիան անսխալութեամբ, որ կարծես հաճոյք կ'զգար իւր նաժշտին փոքրիկ բռնութիւններէն:

Ֆիամէղդան քանի մը քայլ ետ ետ գընաց դիտելու իր ըրած աշխատութիւնն, և երկու ձեռքերն իրարու զարնելով ըսաւ.

— Ազնիւ, այսպէս շատ գեղեցիկ էք, և թէ որ Ֆէլիչէ Պատուէրը զձեզ տեսնելով բոլորովին խելքը չի թոցունէ, ըսել է թէ շատ աւելի հաստատուն գլուխ ունի սիրելի տէրս, քան ինչ որ զինքը կը համարինք:



— Ժամանակն է, աւելցուց նա պատուհանէն վար նայելով, ահաւասիկ անտարակոյս: Բատուայի կողմէն կը լսեմ մարդկանց և ձիերու շոտաչը:

Յիրաւի ուղևորը կառավարութեան պալատէն մեկնելով կ'անցնէին այն պահուն Բուղէլլոյի Գոնէն և կը յառաջանային դէպի ազնուական օրիորդաց վանքը:

Այս ուղևորաց խումբը ստուար բազմութիւն մ'էր և անոր առջևէն առ նուազն հարիւր ձիաւոր զօրաց գունդ մը կ'երթար:

Ամբարտաւան կուսակալը կարծես կ'ախորժէր զինուորական մեծ ցոյց մը ընել, ամէն անգամ որ առիթը կը ներկայանար ինչպէս տեսանք Ֆրանչեսքոյ Ֆոսքարիի այցելութիւն տալու ատենը: Արդէն շատերուն նախանձը շարժած էր, և իր Բատուայի պալատը ճշմարիտ արքունիք մ'էր, ուր շողոքորթներու և պորտաբոյժերու բազմութիւն մը կը գտնուէր, ինչ որ սովորական էր տեսնել այն ատենի Եւրոպիոյ բոլոր իշխանական տուներուն մէջ: Պակաս բան մը չի կար, նոյն իսկ միմոս մը:

Այս միմոսն եկած էր Գաղղիոյ արքունիքէն, ուր Մարդինենկոյ Պերճափայլ Հա-

սարակապետութեան կողմէն դեսպան խաւրուած էր: Միմոսին անունը Սէն-Լէօէր կը կոչուէր, և կուսակալը սովորութիւն ունէր ըսելու թէ կարոլոս է. թագաւորն ընծայ ըրած էր զինքը: Սէն-Լէօէր գիտցաւ սիրելի ըլլալ բատուացուց, որոնց հետ այնքան ընտանեբար կը վարուէր որ ամէն ոք զինքը բարեկամս կը կոչէր:

Կուսակալին այս բռնած արքայական կերպերը աչքի գէշ կը զարնէին ոչ միայն տոժին, այլ նաև ամբողջ բարձր ազնուականութեան, որուն մէջ Մարդինենկոյ մէկ բարեկամ անգամ չունէր, բաց ի վերը յիշած ձերակուտական Յակոբոս Լորետանոյէն, որուն հետ Պոսքարի տոժին դէմ ոխակալութեամբ միացած էր:

Սակայն ոչ ոք համարձակեր էր տակաւին Բատուայի զօրաւոր կուսակալին դիմակը վար առնուլ: Իր դիրքովն թէ՛ տեղի էր և թէ զարհուրելի: Այնքան զարհուրանք ազդած էր, որ նոյն իսկ համոզուած էին թէ առիթի մը կ'սպասէ ինքզինքը անկախ հրատարակելու, անոր համար մօտէն կը հսկէին իր վրայ:

Չինուորական խմբին ետևէն կը տեսնուէր, ազատ ձգուած ընդարձակ միջոցին



մէջ, երիտասարդ Ֆէլիչէ Պատոէրն, որ Սպանիական մատաղածիու վրայ հեծած միայնակ կը յառաջանար, և Վենետկեցիի մը համար հազուագիւտ ճարպիկութեամբ կը վարէր: Մարդինենկոյ, նման Պատոէրին, ձիու վրայ՝ Աղբիականի աղջկան յատկացեալ փառաւոր դեսպակին դռնակին մօտէն կ'երթար: Դեսպակին ձախակողման դռնակին քովէն կ'երթար բացակայ տօժը ներկայացնող ազնուական մը: Ետեէն բազմաթիւ ուրիշ դեսպակներ կուգային, նշանածին դեսպակէն նուազ փառայեղ, որոնց մէջ նստած էին հանդէսին հրաւիրեալ Վենետկոյ և Բատուայի ազնուական տիկիները. և ասոնցմէ ոմանք ալ քաջաբար ձիերու վրայ հեծած էին: Յետոյ քիչ մը հեռուէն կուգային կուսակալին բարեկամներն և Ֆէլիչէ Պատոէրին հրաւիրեալները: Վերջապէս ուղևորաց խումբը կը վերջանար ոստիկանութեան պաշտօնեաներով որոնց կը հետևէին խառնիճազանճ բազմութիւն մը, քանի մը հազար անձինք:

Երբ Աղբիականին աղջիկը մեծաւոր մօր թէն անցած երեցաւ վանքին դրան վրայ, և անոր հետ փառաւոր դեսպակին մէջ

տեղաւորուեցաւ, բազմութիւնը սքանչացման աղաղակ մը արձըկեց:

Ուղևորաց խումբը կրկին նոյն կարգով շարուեցաւ ինչ որ էր գալու ատենը, և սկսաւ յառաջել դէպի Բատուայի մայր եկեղեցին, ուր նշանախօսութեան օրհնութիւնը պիտի տրուէր:

Մինչև հոս, Ֆէլիչէ և Վենեձիան բառ մը փոխանակելու առիթն ունեցած չէին: Երբ Աղբիականին աղջիկն երեցաւ, երիտասարդը գոհ եղաւ միայն խոնարհ ծոխի ձիւն թամբին վրայ, զոր բազմութեան ծափահարութեանց մէջ յաջողակութեամբ կը վարէր, և պէտք է արդեօք աւելցունել Պիամէդդային ծափահարութիւնը, որ մինչև այն ատեն Ս. Մարկոսի գաւթին վրայի պղինձէ ձիերէն զատ ուրիշ չէր տեսած:

Վասն զի նա ալ, փոքրիկ Պիամէդդան, հոն էր. իր տիրուհոյն հետևած էր մինչև դեսպակը, անոր զգեստին ծայրերը վեր բռնած մանկլաւիկի պաշտօնը կը կատարէր:

Արդ, Մարդինենկոյի կամ Ֆէլիչէ Պատոէրին ծառաները վանքին պարսպին երկայնութեանը շարուած էին որպէս զի ու-



դևորներուն ետեւէն իրենց յատուկ տեղը բռնեն . նաժիշտը ասոնց մէջ տարտամ կերպով նշմարած էր Գողիաթի նման հրակայ մը, որ բոլորովին այլանդակ տեսակէն ժապաւէններով զարդարուած , ձևեր և ձեքծեքումներ կ'ընէր: Առաջին անգամ Ֆիամէզդդան չի կրցաւ ճանչնալ այս հրակայն, որ սակայն թուեցաւ իրեն թէ սաստիկ վառուած աչքերով կը դիտէր զինքը: Երբ իր տիրուհւոյն խնամք տալու զբաղանքը լըմնցաւ, Ֆիամէզդդա իր աչքերը չորս բոլորտիքը պըտըտցուց տեսնելու իր Գողիաթը, և դժուարութիւն չի քաշեց զինքը գտնելու, որ ամէն գլուխներէն վեր կը բարձրանար, և ամէն ծիծաղելի ձևեր կ'ընէր, առանց մօտը եղողներէն քաշուելու. իր վրայ կրկին կրկին կը դառնար, որպէս զի իր անհետիւթ արդուզարդէն մաս մը անտես չի մնայ նաժըշտին աչքէն:

Ֆիամէզդդային բերանը բաց մնաց ճանչնալով, վերջապէս, համեստ կոնտուլավար Ռիքարտոն՝ այս խեղկատակ զգեստին տակ:

— Ֆիամէզդդա, Ֆիամմա, իմ Ֆիամմինա... գոչեց կոնտուլավարն, և իրեն սիրուհւոյն մօտենալու համար արմուկներով կոշտաբար կը հրէր զուրիշները:

— Ռիքարտոն, ինչպէս, դու այս ըզգեստները հագած. ըսաւ Ֆիամէզդդան:

— Այո, այս զգեստը շատ գեղեցիկ է և ինձի սքանչելի կը վայելէ: Իմ Ֆիլիչէ Պատոէր տիրոջս շնորհքներէն մին է, ըսաւ կոնտուլավարը բերանը ծամուկելով և սրունքով կտոր ձև մը ընելով որուն դիմացը նաժիշտը չի կրցաւ իր ծանրութիւնը պահել:

Կոնտուլավարին քթին շառաչալից խընդալ մը փրցուց և մինչև որ հանդարտեցաւ հինգ վայրկեան մ'անցաւ:

— Է՛ ուրեմն, ինչ եղար Ֆիամէզդդա, ըսաւ կոնտուլավարն այս անդէպ գուարթութեան վրայ քիչ մը շփոթած և բարկացած, զէջ կը գտնես իմ տիրոջս ինձի հագուեցուցած այս ճաշակաւոր ըզգեստը:

— Յիրաւի շատ ճաշակաւոր ըսաւ նաժիշտը որուն խնդուքը կրկին զրգուեցաւ տեսնելով հսկային արգահատելի կերպարանքը բանտարկուած իր սնդուսէ զգեստին մէջ:

Սակայն յանկարծ իր գեղեցիկ դէմքը տխուր կերպարանք մը առաւ և ըսաւ Ռիքարտոյին.



— Չե՞ս ամչնար այս խեղկատակ ըզ-  
գեստով փողոցներուն մէջ քալել:

— Չի հաննեցա՞ր ասոր, ըսաւ կոնտո-  
լաւարը բոլորովին շփոթած:

— Լաւ կ'ըլլայ թէ որ երթաս Սքիա-  
վոնիի քարափին վրայի լարախաղացնե-  
րու, Պոհեմիացիներու, կապիկներու և  
գնչուններու հետ խաղաս:

— Շատ խիստ կը խօսիս, Ֆիամէզդա,  
ըսաւ խեղճ Ռիքարտոն սաստիկ տրտմած:  
Եւ երբ կը մտածեմ, աւելցուց նա երկար  
շունչ մը առնելով....

— Ի՞նչ բանի:

— Ահա մեր տէրերը նշանուած, մեր  
կարգը ե՞րբ պիտի գայ սիրելի Ֆիամէզ-  
դա:

— Երբ փոխես այս զգեստդ, պատաս-  
խանեց նաժիշտը վազելով դէպի ուղևորաց  
խումբը:

Բարեմիտ կոնտոլաւարը գլուխը շար-  
ժելով ապշած մնաց, կը դիտէր ցաւօք իր  
կարմիր սնդուսէ զգեստը և կ'ըսէր ինքն-  
իրեն:

— Մե՛ղք, այս զգեստը սակայն շատ  
շիբ էր:

Մայր եկեղեցին տանող փողոցները՝

վանքերու նեղ սրահներու նման, երկայն  
ու նեղ էին, և անոնց երկայնքին վրայ  
կային լայն ճեմելիքներ կամ կարճ ու  
հաստ մոյթերով կամարակապ սրահներ,  
ամառուան ջերմութեան դէմ՝ պաշտպանե-  
լու համար բնակիչները: Բազմութիւնն  
կամարներուն ներքև խոնուած էր ուղե-  
ւորաց անցնիլը տեսնելու, որով հանդի-  
սին մասնակցողները շատ դժուարաւ կըր-  
նային առաջ երթալ այս նեղ փողոցնե-  
րուն մէջ:

Կուսակալին միմոսը՝ Սէն-Լէժէր, ա-  
նոնց մէջ աչքի կը զարնէր իր բարձր  
գլխանոցովը՝ գազաթէն մետաքսէ փունջ  
մը կախուած, իր վեղարածև ուսանոցով,  
մէջքէն կախուած երկու քսակներով և  
մանաւանդ իր մանեակով, զոր անդադար  
կը շարժէր: Միմոսը հանդիսակիցներուն  
մէջ որոշեալ տեղ մը չունէր, այլ (անոնց  
մէջ) շարունակ կ'երթևեկէր, ինչպէս շուն  
մը գեղջուկ պարողներուն մէջ, առանց  
երբէք հոգ ընելու անոնց կարգն աւրելուն  
համար: Բազմութեան մէջէն շատեր հե-  
ռուէն անոր խօսքեր կը նետէին.

— Է՛, բարեկամ, այսօր կուշտ մը պի-  
տի ուտես, կերակուրդ և Մոնթէֆիասքոյի  
գինիէն առատօրէն պիտի տրուին քեզի:



— Քեզի համար Գոնեւլիանոյի թեթև գինին ալ լաւ է:

— Բարեկամ, ըզեզիդ նման գլխարկդ ալ ծուռ դրեր ես:

— Է՛, խե՛նթ, խե՛նթ, խե՛նթ, կը պոռային քսան հոգի միանգամայն:

Սէն-Լէժէր լոռթիւն կը պատուիրէր բազմութեան ըսելով.

— Այսքան ուժով մի պոռաք, քիչ մը անդին ինձմէ աւելի խենթ մը կայ այսօր:

— Ո՞վ է, ո՞վ է:

— Ահա հոն ուղևորաց գլուխ կեցողն է, ըսաւ միմոսը, ցուցնելով ձեռքին մանեակովը Ֆէլիչէ Պատտէրն որ Սպանիական մատաղածիոյն վրայ հեծած կ'երթար:

Ինչպէս վերն ըսինք, ուղևորաց ճամբայ ելլելու ատեն՝ կուսակալը, վենեճիային ղեսպակին աջ կողմի դոնակին քովէն կ'երթար ձիու վրայ: Բայց ճամբաները նեղ ըլլալուն համար քաղքին մէջ չի կըրցաւ այս դիրքը պահել և ղեսպակէն քայլ մը առաջ անցաւ: Յետոյ յանկարծ կեցաւ և դարձաւ ղեսպակին կողմը, իր ետեւէն եկող ձիաւորներն ալ կեցան: Պատտէրն՝ որ կը շարունակէր առջևէն իր ճամբան,

այս կարճ ժամանակի մէջ բաժնուեցաւ ուղևորներէն, կրկին հեռաւորութեամբ պարսպ միջոց թողլով, քան ինչ որ որոշուած էր ճամբայ ելլելու ատենը:

Եւ որովհետեւ Ֆէլիչէն նորոգութեան մէջ եղող տան մը դիմացէն կ'անցնէր, յանկարծ անոր տանիքին վրայէն սաստիկ աղմուկ մը լսուեցաւ: Չին իրտչեցաւ և մէկէն դէպի ետ ոստում մը ըրաւ, որ Ֆէլիչէ Պատտէրին կեանքն փրկեց, վասն զի նոյն վայրկենին տանիքէն ահագին մեծութեամբ քար մը ինկաւ, և պիտի ջախջախէր անշուշտ երիտասարդ պատրիկն եթէ ձին հոնկից դէպի ետ ոստումն ըրած չըլլար:

Երբ այս շառաչը լսուեցաւ, կուսակալը մէկէն երեսը դարձուց, սակայն ամենուն աչքերն ուրիշ տեղ կը նայէին, և չկրցան տեսնել կոմսին գունատ դէմքն և իր գայրագին շարժումները, զոր չի կրցաւ զսպել երբ տեսաւ Ֆէլիչէ Պատտէրին հրաշքով մահուրնէ ազատիլը:

Միմոսը նոյն վայրկենին վազեց դէպի երիտասարդին ձին և բռնեց երասանակէն ըսելով.

— Չեմ փափաքիր որ այս յանդուգն



ձեռնարկութիւնը շարունակեա, բարեկամս, ինքզինքդ անխուսափելի վտանգի մէջ կը դնես:

Սակայն այսպիսի արկած մը ի՞նչպէս կըրցաւ պատահիլ:

Ահա ինչ որ ամենքն իրարու կը հարցնէին:

Տան աշխատաւորները վար իջան և բացատրեցին թէ ի՞նչպէս այն մեծ քարը բռնող պարանը փրթած էր: Պէկիչէ չուզելով որ այս ձախող պատահարը խնդրոյ նիւթ ըլլայ, հազիւ մտիկ ըրաւ և մէկէն աւել տուաւ փողոցը, յետոյ ուղևորը շարունակեցին իրենց ճամբան դէպի մայր եկեղեցին:

Ամբողջ կղերական դասը, որ եկեղեցւոյն յարկածածուկ գաւթին մէջ կ'սպասէր, խօսեցեալներուն և անոնց բարեկամներուն ղիմացէն սկսաւ յառաջել լայնատարած մայր եկեղեցիին մէջ:

Ժամանակին քրիստոնէութեան հարուստ եկեղեցիներէն մին էր, իր կանոնիկոսները գրեթէ ութ հազար ֆրանգ հասոյթ ունէին, որ մեծ գումար մը կը համարուէր այն ատեն, առանց հաշուելու պահարանին եկամուտը: Բատուայի եպիսկոպոսը փոքր

պապ մ'է, կ'ըսուէր, և թէ կանոնիկոսները կընային իրենք զիրենք Լոմպարտիոյ ծիրանաւորներ կոչել:

Նախ առաջնորդեցին խօսեցեալները եկեղեցւոյն աջակողմեան թեւն, ուր կը գտնուէր իտալիոյ պատկերհանութեան վերանորոգողին՝ Ճիոզզոյի, Աստուածամօր հոշակաւոր պատկերը: Բեղբարքա իր կանոնիկոսութեան ատեն, (Բեղբարքա բատուայի կանոնիկոս եղած էր), զայն մայր եկեղեցւոյն ընծայեց:

Ճիոզզո, Բեղբարքա! — թէպէտ այն ատեն իտալիոյ թատերարեմին վրայ անթիւ ոճրագործութիւններ կ'ըլլային, և որոնց փոքր արձագանգ մ'է այս մեր պատմածը, սակայն վերածնութիւնը սկսած էր արդէն դար մը առաջ արուեստից և գրականութեանց մէջ: Բայց ո՞րքան ուշացաւ բարուց վերածնութիւնը:

Եկեղեցական հանդիսաւոր արարողութիւններն աւարտելէն յետոյ, ամբողջ ուղևորը կառավարութեան պալատին մէջ ճաշեցին. և ապա առաւօտեան կարգադրութեամբ տարին նշանած օրիորդն ազնուական օրիորդաց վանքը, գիշերը հոն անցնելու:



Երկրորդ առաւօտ արշալուսին նոյն ուղևորք ճամբայ ելան դէպի Գեղեցիկ կղզին, ուր նշանախօսութեան մեծ խրախճանութիւնը պիտի կատարուէր:

Բատուայէն մինչև Կարտայի լիճը գրեթէ քսան մղոն է և որոշուած էր որ այս ճանապարհորդութիւնը երկու օր տևէ: Կանխաւ մարդիկ ղրկուած էին Չէուդոյ ըսուած փոքր գիւղը, որ Բատուայէն Բէսքիէրա երթալու ճամբուն կէսը կը գտնուի, որպէս զի հոն բնակարաններ պատրաստեն:

Երկրորդ օրը ժամանակին հասան Չէուդոյ, հոն ազատ օդոյ մէջ յանպատրաստից հացկերոյթ մը ըրին: Խեղճ գեղը չունէր բաւական ընդարձակ տուններ որպէս զի գէթ ուղևորաց մէկ մասը պատասպարէ:

Ազնուական կարաւանին կ'ընկերանար երաժիշտներու խումբ մը, որ կերակուրին ամբողջ տևողութեան ատեն նուագեց, և զուարթացուց ամենքը: Կերակուրէն յետոյ խոտի վրայ պարահանդէս մը սկսաւ:

Պարողներուն մէջ ամենէն զուարթը ծառայից խումբն եղաւ, ինչ որ սովորականն է: Ֆիամէզդա իր Ռիքարտոյին հետ նշանաւոր հանդիսացաւ, որ ուշադիր ե-

ղած էր կոնտրափարի զգեստն հագնելու, և շատ աւելի հանգիստ էր հաստ բուրդէ զգեստին մէջ քան մետաքսէ բաճկոնակով: Կտրիճ երխասարդն իր ընկերուհին կը ցատկեցնէր չուանէ փախած ուլի մը պէս:

Զուարթութիւնը այնքան մեծ էր որ նոյն իսկ Վենեճիան իւր լուրջ կերպարանքը թիչ մը փոխեց: Սակայն ճանապարհի յոգնութիւնը կ'զգացուէր. Վենեճիան ժպիտով մը իր ձեռքը Ֆէլիչէ Պատուէրին երկնցուց, ըսաւ.

— Վաղը:

Ասիկա նշան մը եղաւ ընդհանուր շարժման. ամէն ոք իրեն յատկացեալ բնակարանը քաշուեցաւ, որով երեկոյեան ժամը տասնին Չէուդոյ փոքր գիւղը իր սովորական լոին վիճակն վերստացաւ և ամենքն ալ կարծես խոր քունի մէջն էին:

Բայց այս հանդարտութիւնը երկար չի տևեց:

Կէս գիշերուան մօտ չարագուշակ աղօտ լոյս մը յանկարծ շառագունեց երկինքը: Լոյսը գիւղին արևելեան ծայրը գտնուող կղզիացեալ տունէ մը կու գար, որ նշանած Ֆէլիչէ Պատուէրին յատկացուած էր:



Տան մէջ կը գտնուէր երիտասարդ պատ-  
րիկն իրեններով և քանի մը ծառաներով:  
Ասոնց մէջն էր բնականաբար մեր բարե-  
կամը Ռիքարտոյ կոնտուլավարն, որ միւս  
ծառայից հետ շտեմարանին մէջ պառկե-  
ցաւ, և օդին տաքութեան պատճառաւ մը-  
տածեր էր դուռը բաց թողուլ:

Կտրիճ կոնտուլավարը շուտով մը քնա-  
ցաւ, ինչ որ սովորական էր իրեն, բայց  
ահաւոր շնչահեղձութեան մէջ իսկոյն ար-  
թնցաւ: Թէպէտ կրկին քնանալու պէտքը  
կ'զգար, սակայն կէս քուն կէս արթուն,  
պայծառ լոյս մը աչքին զարկաւ որ իր  
և ընկերներուն գտնուած մօտակայ շտե-  
մարանէ մը կու գար:

Նոյն պահուն կը թուէր իրեն լսել ա-  
ղետաւոր շառաչիւն մը, իբր բոցերու ճար-  
ճատիւն մը: Կոնտուլավարը մէկէն ցատկեց  
ոտք ելաւ և իր ստէնտորի ձայնովը պո-  
ռաց ուրիշներն ալ արթնցունելու:

— Ընկերք, ելէք, ելէք:

Ռիքարտոյ տեսնելով որ քնացողները  
շուտով չէին արթննար, սկսաւ ոտքի հա-  
րուածներով կոշտաբար մշտել: Վայրկենի  
մէջ ամենքն ալ ոտքի վրայ էին և դռնէն  
դուրս: Ռիքարտոյ չէր սխալած, ստուգիւ

հրդեհ կար, իր և ընկերներուն բնակած  
տունը կայրէր, բոցերը արագ արագ կը  
տարածուէին, վասն զի տունը փայտէ և  
շաղախէ շինուած էր և վրան ալ յարդով  
ծածկուած:

— Աստուած իմ, պոռաց Ռիքարտոյ՝  
դնելով երկու ձեռքերն իր խիտ ու խո-  
զանացեալ մագերուն մէջ, Փէլիչէ Պա-  
տէր տէրս հոն վերն է:

Առանց ուրիշ բան մտածելու նետուե-  
ցաւ մուխով ծածկուած սանդուխին վրայ  
և երեք ոստումով վրան ելաւ, ուժով մը  
հրեց սենեկին դուռը, ուր անշուշտ իր  
տէրը կը քնանար տակաւին: Բայց կամ  
այն է որ իր այլայլութենէն ձախաւեր  
կերպով գործեց, կամ ներսէն լաւ մը գո-  
ցուած էր, դուռը սկզբան տեղիք չի տուաւ  
իր ուժերուն: Վերջապէս յաջողեցաւ, բայց  
մինչև որ դուռը բացուեցաւ մի քանի  
վայրկեաններ անցան և հրդեհն իր աւեր-  
ներն առաջ կը տանէր:

Իսկ ներսէն ո՛ր և է աղաղակ, ո՛ր և է  
հեծկտուր չէր լսուեր. սակայն Ռիքար-  
տոյ ապահով էր թէ իր տէրը հոն է,  
ինքն անձամբ օգնած էր զգեստները հա-  
նելու և անոր պառկելէն յետոյ քովէն հե-



ուացած էր. ուրեմն զժբախտ երիտասարդն անտարակոյս մուխէն շնչահեղձ եղած է:

Երբ սենեկին դուռը տեղիք տուած էր վերջապէս Ռիքարտոյին ուժերուն, ներսէն եկած բոցերը բռնադատեցին կոնտոտողավարն ետ քաշուելու. վերստին փորձեց ներս մտնել և կ'ուզէր յուսահատաբար բոցերուն մէջ նետուիլ. նոյն միջոցին սենեկին տախտակամածը, կրակէն խալխլած՝ կործանեցաւ և ինկաւ գետնաշարկին մէջ՝ բոցերու, մոխիրներու և մուխի ահաւոր յորձանք մը հանելով:

Խենթութիւն էր անկէ վերջ ազատելու փորձ ընել, և նոյն իսկ չէր կարելի դժբախտ երիտասարդին ղիակը բոցերուն մէջէն դուրս հանել: Կոնտոլավարն վար իջաւ խելագարի ձևեր ընելով և մագերը փեթթելով:

— Ո՞ւր է ինքը, ո՞ւր է Ֆելիչէ Պատէր պատրիկը, կը հարցունէին բազմութեան մէջէն շատերն, որոնք՝ կրակ կայ, կրակ կայ ձայներէն հոն վազեր եկեր էին:

— Ո՞ւր է, կը հարցունէք թէ ո՞ւր է ինքն, նա հո՞ն. պատասխանեց կոնտոլավարն յուսաբեկ շարժմամբ այրած տունը ցուցնելով:

Կուսակալն ալ եկած էր հոն՝ աղէտքին տեղն և շատ զգացուած կ'երևար:

— Ապահով ես դու, ըսաւ կոնտոլավարին, թէ իմ շժբախտ բարեկամս յիրաւի կորսուած է:

— Ա՛խ, այո՛ տէր, պատասխանեց կոնտոլավարն:

— Կ'ենթադրես սակայն:

— Դժբախտաբար շատ ապահով եմ, տէր, երէկ իրիկուն ես անձամբ տարի զինքը իրեն յատկացեալ սենեակը. օգնեցի իրեն զգեստները հանելու, և պառկելէն քանի մը վայրկեան յետոյ հեռացայ իրմէ:

Խեղճ կոնտոլավարը չի կրնալով երկարատեն ինքզինքը զսպել, սկսաւ ցաւագին արցունք թափել: Բազմութիւնը տեսնելով այս հսկային լալը, անոնք ալ սկսան լալ:

Մարդինենկոյ, խորին տխրութեան մը ամէն արտաքին երևոյթները ցոյց տալով, ըսաւ.

— Այն ատեն ուրիշ ճար չկայ, դժբախտ բարեկամս մեռած է այլ ևս:

Նոյն վայրկենին տունը ամբողջովին կործանեցաւ, թղթէ շինուած զդեակի մը նման, և տեղւոյն վրայ մնաց միայն կայ-



ծերու տարափ մը, որոնք վեր բարձրանալով կրկին կ'իյնային զիտողներուն վըրայ:

Արքարտոյ բահ մը աննելով նետուեցաւ մխացող աւերակներուն մէջ, զանոնք շարժելու համար, ըսելով.

— Գէթ փորձենք իրեն զիակը գտնելու, և գերեզմանին մէջ թաղենք:

Այսպիսի դժուարին գործի մը ձեռնարկութիւնը շատ վտանգաւոր էր. այսու հանդերձ բազմութեան մէջէն կարիճ երիտասարդներ հետեւեցան կոնտրաւարին, և ամենքն միաբան սկսան աշխատիլ ամբոխին խորին լռութեան մէջ: Ժողովուրդը կը լռէ իսկոյն երբ իրմէ ոմանք այնպիսի գործի մը մէջ կը գտնուին որոնց կեանքը թեկէ մը բռնուած է:

Գիշերուան լռութեան մէջ յանկարծ զուարթ ձայն մը լսուեցաւ, ամենքն երեսնին անոր դարձուցին:

— Զարմանալի բան, իմ տո՞ւնս կայրի, ըսաւ այս ձայնը:

Խօսողը հրդեհին մնացած կայծերէն լուսաւորուած բարձր տեղ մը ոտքի վրայ կեցած էր, որով ամէն ոք կրնար զինքը տեսնել:

Երիտասարդ պատրիկն իրեն բնական զուարթաբանութեամբ պատմեց թէ՛ չի կրնալով քնանալ ելած գացած էր գիշերային պտոյտ մը ընելու դաշտերուն մէջ:

— Երոյն բանն է, բարեկամս, ըսաւ Սէն-Լէժէր միմոսը անոր մօտը կեցած, ահաւասիկ մի և նոյն օրուան մէջ երկու անգամ մահուընէ կ'ազատիս: Թէ որ ես քու տեղդ ըլլայի, այլ ևս չէի շարունակեր ճամբաս, և վէհետիկ կը դառնայի:

Ը.

#### ԳԵՂԵՑԻԿ ԿՂԶԻՆ

Գժուարին չէ գուշակելը՝ երիտասարդ պատրիկին կարևորութիւն չտալը՝ Միմոսին այնքան անկեղծօրէն տուած խորհուրդին: Վերստին ճամբան շարունակեց և առանց նոր պատահարի մը հասաւ Գեղեցիկ կղզին, ուր երեք օր վերջ կոմս Մարզինենկոյ շքեղ հանդէս մը տուաւ երիտասարդ խօսեցեալներուն:

Հանդէսը հոմերական զուարթ խնջոյքով սկսաւ: Գրեթէ հարիւր յիսուն հրաւիրեալը



կը գտնուէին զղեակին մեծ դահլիճին մէջ, և նոյնքան բազմականք կային պահակաց սրահը: Ասկէ զատ վարի կամարակապ ճեմելիքն ամառուան սրահի վերածելով՝ հոն ալ սեղան դրուած էր: Ստորին պաշտօնակալը մասնակից եղան հացկերոյթին պատուոյ գաւթին մէջ, որուն վրայ մեծ ծածկոց մը տարածեր էին, որպէս զի կէս մը պատսպարէ սեղանակիցներն ամառուան արևուն տաքութեան դէմ. բարեբախտաբար արևը խոնարհելու վրայ էր:

Գղեակին բազմաթիւ ծառաներուն համար ալ երկայն սեղաններ դրուած էին, որոնց վրայ կային Գոնելիանոյի գինիով լեցուն մեծ ամաններ և Վենետկեան լայն տաշտեր, ուսկից ծառայը իրենց ուզածին չափ կրնային խմել: Նմանապէս այս սեղաններուն վրայ կը տեսնուէին աւանդական զգմածը, փոքր դղումները, Պոլոնիոյ երշիկը, Ֆիորէնձայի պանրախառն խմորեղէնը, մանաւանդ եղջիւրներ, որոնք այնքան ախորժելի էին Վենետկոյ ժողովրդեան ստորին դասակարգին:

Առաջուց որոշուած էր որ Սէն-Լէօէր ծառայից սեղանին զլուխը բազմի և զանոնք զուարթացրնէ իր զաւեշտախառն

պատմութիւններով, որոնց առատ պաշարը ունէր միշտ իր հտպիտի պարկին մէջ: Այս բանս մեծ ուրախութիւն պատճառեց ծառայից: Սակայն միմոսը այս պատուէն ամենեին գոհ չէր, ինքն որ վարժած էր նշանաւոր իշխանաց հետ ընտանութիւն ընելու, այս պարագայիս մէջ ծառայից հետ սեղանակցութիւնը զինքը շատ մահացուց: Հասկցաւ թէ ասիկա տիրոջը կողմէն պատիժ մ'էր, իր լեզուին սովորական համարձակախօսութեան համար, զոր՝ երեք օրէ ի վեր ստէպ ցոյց կու տար: Փոխանակ երեսը կախած կենալու, միտքը դրաւ վրէժը հանել իրեն յատուկ գէնքը՝ իր լեզուն գործածելով:

Սէն-Լէօէր այս որոշումն ընելէն յետոյ՝ հացկերոյթին սկիզբը ցոյց տուած իր ցաւկոտ կերպը փոխեց, և իսկոյն իր միմոս սականութիւնը նորէն ձեռք առաւ. նոյն իսկ խոստացաւ հացկերոյթէն յետոյ իր կերածին դրամը վճարել՝ խիստ զուարթ պատմութիւն մը պատմելով անոնց:

Այս խոստումին վրայ, իր մօտը զըտնուողներն այլ ևս զինքը հանգիստ չձգեցին, ամենքը միաբերան կ'ստիպէին որ պատմութիւնը պատմէ:



— Քիչ մը սպասեցէք, ընկերներս, տակաւին ձեր գլուխները լաւ մը տաքցած չեն:

Երբ վերջապէս բաւական համարեցաւ զինիին ազդած զուարթութիւնը, ցատկեց սեղանին վրայ, և սարապ տաշտ մը աթոռ ընելով նստեցաւ և սկսաւ այսպէս:

— Ատենօք... Ո՛հ, ասկից շատ ու շատ տարի առաջ, հարիւր տարիէն աւելի, այս տեղէն հեռո՛ւ հեռու, երկրի մը մէջ կար մեծ և զօրաւոր իշխան մը, որ թագաւորէն յետոյ պետութեան մէջ առաջնակարգ դիրք մը գրաւած էր, և գունդստապլի աւագութեան հասած:

Ամբողջ ազնուականութիւնն և նոյն իսկ թագաւորը կը վախէր գունդստապլէն, և ամէն զգուշութիւն կ'ընէին չի վիրաւորելու այս վտանգաւոր իշխանին կասկածոտ հպարտութիւնը:

Փառասիրութիւնն զօրաւոր դեր մը խաղացած ըլլալով ազնուական իշխանին կեանքին մէջ, կրցաւ հեռու պահել զինքը ուրիշ ո՛ր և է կիրքէ: Քառասուն տարուան եղաւ առանց երբէք մտքէն անցնելու աղջկան մը հետ ամուսնանալ: Բայց օր մը անշուշտ երիտասարդութիւնը իր հատու-

ցումը պիտի ստանար այս անընկճելի սրբատէն:

Ինքն որ ազնուական օրիորդաց հանդէպ միշտ գոռոզ, արհամարտ և անտարբեր գտնուած էր, օր մը հանդիպեցաւ աղջկան մը որուն գեղեցկութիւնը առաջին տեսութեան այնպիսի տպաւորութիւն գործեց իր վրայ՝ որ անջնջելի պիտի մնար: Միտքը դրաւ այս աղջկան հետ ամուսնանալ, և կը կարծէր մեծ պատուոյ բարձրացնել զանիկայ իր տիտղոսին մասնակից ընելովը — Տիկին գունդստապլի: Ո՛վ կրնար անտարբեր մնալ այսպիսի պատուանունի մը մեծութեան դիմաց: Գոռոզ իշխանը՝ գէթ անգամ մը չի հարցուց թէ արդեօք աղջկան սիրտն ազատ էր: Այնքան սովորական եղած էր իրեն տեսնել շուրջն եղողներուն իր կամքին դիմաց խոնարհիւն, որ մտքէն անգամ չանցուց թէ արդեօք իր որոշողութիւնը հաճելի պիտի ըլլա՞ր օրիորդին, զոր մեծապէս պատուած կը համարէր իր ընտրութիւնը անոր տալովը: Անոր համար երբ մանկամարդ աղջիկն առանց տատամսելու վճռական շեշտով մերժողական պատասխանը տուաւ, գունդստապլը սաստիկ այլալեցաւ: Աղջիկը նշանուած



ըլլալով ուրիշի հետ բացարձակ յանձն չառաւ տուած խօսքին անհաւատարիմ ըլլալ:

Թէպէտ իշխանն այս չարաչար նախատանքին վրայ սաստիկ դժկամակեցաւ, սակայն գիտցաւ իր զայրոյթը ծածկել, վասն զի ապուշ մէկը չէր գունդստապլը, էհ, ոչ: Կախ հոգւոյ կատարեալ հանդարտութիւն մը ձևացուց, յետոյ այնպիսի ճարտարութեամբ գիտցաւ նշանած երիտասարդին վստահութիւնը շահիլ, որ այս վերջինը մի միայն իր բարեկամին՝ գունդըստապլին վրայ կ'երգնուր: Պիտի տեսնէք թէ այս մտերմութիւնն ինչպէս պիտի ծառայէ ոխակալ իշխանին ծրագրած վըրէժինդրութեանը:

Հարանիքէն քանի մ'օր առաջ, գունդըստապլը մանկամարդ խօսեցեալները մեծ հացկերոյթի մը հրաւիրեց զոր ի պատիւ իրենց սարքեր էր իր կալուածներէն միոյն մէջ: Խօսեցեալներն առանց կասկածի գրնացին հոն, թէպէտ գէշ գուշակութիւններ և նոյն իսկ ազդարարութիւններ պակաս չեղան: Արդ այն իրիկուան խրախճանութեանց նպատակն էր հրաւիրելոց ուշադրութիւնը ցրուել, գուշակեցէք հիմակ թէ ինչ պատահեցաւ հոն»:

Կոնտուլարն Ռիքարտոյ, թէպէտ գինիէն կէս մը թմրած էր, ինչպէս սեղանակիցներէն շատերն, որոնք անյագաբար, խմած էին Գոնելիանոյի զինին, միմոսին այս պատմութեան մէջ յայտնապէս ականարկութիւն մը տեսնելով իր տիրոջը գլխուն հանդիպածին, աչքերը բորբոքած, բռունցքները պինդ սեղմած, շրթունքները դողդոջուն, օտքի վրայ ելած՝ հրամայական շեշտով մը հարցուց.

— Այո՛, ինչ հանդիպեցաւ:

Բայց միմոսը յանկարծ խօսքը կտրեց, սկսաւ բարձրաձայն ծիծաղիլ ըսելով.

— Ինչ որ հանդիպեցաւ դուք պիտի չի գիտնաք, լաւ ուշադրութիւն չէք ըներ ըսածներուս, աւելորդ տեղ ձեզի պատմելու նեղութիւնը յանձն առի:

Յիրաւի Մէն-Լէժերի սեղանակիցները սովորած ըլլալով անոր կատակախառն զուարթ խօսակցութեանը, այս պատմութեան մէջ չի գտնելով ո՛ր և է կցկտուր անկապ խօսքեր, բոլորովին յուսախար եղան: Մտիկ ընելէ շուտով յոգնեցան, և սկսան իրարու հետ խօսիլ և կատակել:

Միմոսին անձնասիրութիւնը վիրաւորուեցաւ արդեօք, կրնայ ըլլալ. վասն զի



այս անյաջողութեան վրայ զայրացած՝ ուզեց իր վրէժը լուծել այնպիսի միջոցաւ մը, որուն յաջող արդիւնքը միշտ ապահով էր:

Միմոսն եզական յատկութիւն մ'ունէր. իր մարմնոյն արտակարգ կազմութիւնը կը ներէր իր երկայն վիզը ուսերուն մէջ ներս քաշելով՝ մէկէն կրկին կուզ ունենալ, թէ կոնակէն թէ առջևէն, որով կատարեալ հտպիտ մը կըլլար: Այս կերպարանափոխութիւնը՝ զոր սեղանակիցներէն շատերը չէին տեսած, երկար ծափահարութեամբ ողջունուեցաւ: Արդէն դարերով՝ հտպիտը նախամեծար զբոսանքն եղած չէր ամբողջ Իտալիոյ:

Պարոն հտպիտին կատակարանութիւնները վէնետկոյ ճամբաներուն և ամէն անցուղարձի անկիւններու վրայ, մանաւանդ Սքիավոնիի քարափին վրայ հաճոյք կը պատճառէին գռեհիկ հանդիսականաց: Կանխենք ըսելու թէ այն կատակարանութիւններն իրենց անտաշ կոշտութեան հետ խիստ խայթող էին ականջի, և մեզի ներելի չէ հոս զանոնք յառաջ բերելն: Աւելի այն դարուն ճաշակին յարմար էին, մանաւանդ անկիրթ ոամկին:

Գառնալով մեր Սէն-Լէֆէր հտպիտին, երբ չորս կողմէն կը ծրծագէին իր առած կերպարանքին վրայ, բերանը պողպատէ փոքր գործիք մը գնելով իր ձայնին տարօրինակ ելևեջներ կու տար: Այս գործիքն իր պաշտօնին կարևոր մէկ մասը կը կազմէր, և կը կոչուէր կախարդակք: Միմոսն այնպիսի ճարտարութեամբ կը գործածէր զայն, որ Գոնելիանոյի գինիով տաքցած գլուխները կեցցէներու մըրիկ մը փրցուցին որուն արձագանգները անտառը զղրկեցուցին լսողներն առ հասարակ յիմարօրէն կը խնտային. նոյն իսկ Ռիքարտոյ մոռնալով այն ծանր մտահոգութիւնները զոր պահ մը առաջ միմոսին խօսքերը պատճառած էին իրեն, ինքն ալ մասնակից եղաւ:

Սէն-Լէֆէր այս ահագին յաջողութենէ աւելի ևս վառուած, կը բազմապատկէր խեղկատակութիւնները, պոռալները, ծրու մըռկիւնները: Սեղանին մէկ ծայրէն միւսը կը վազէր, ոմանց հարցմունքներ, ուրիշներուն ծաղրական ձևեր ընելով՝ այնպիսի մոլեգլին խանդով մը՝ որ կարծես վերջը պիտի չի գար:

Սակայն Հտպիտը յանկարծ կեցաւ, իր



երեսին կամիր գոյնը կապուտոցաւ: Երկու ձեռքերով իր վիզը բռնած յետին աստիճանի հասարակ ձևերը կ'ընէր. ամբողջ մարմնովը տեսակ մը ջղաձգտմամբ կը շարժեցէր: Հտպիտին այս ըրածները տարօրինակ չէր համարուեր, ամէն ոք կը կ'արծէր թէ նոր ճարտար խաղ մը կ'ընէ, մինչև որ խեղճ միմոսը սեղանին վրայ անշնչացեալ ինկաւ մնաց և ամենքն փուլ թացին անոր քով:

Հազարումէկ կարծիք փոխանակուեցան. վերջապէս ներկաներէն մին ուրիշներէն աւելի ուշիմ գտնուելով, մտածեց իր երկու մատները միմոսին կոկորդը խոթել, և տազնապալից հանդիսատեսներուն պոռաց.

— Հտպիտը կըլլէր է իր կախարդանքը:

Սովորական արկած մը, ոչ ոք կասկած մ'ունեցաւ. ամէնքն կը կարծէին թէ խեղճ Սէն-Էթէրին խեղկատակութեան վերջին տեսարանն էր: Բազմութիւնը համոզուած անոր մեռնելուն վրայ սկսան դամբանականը ընել. սեղանակիցներէն ոմանք ուզեցին զղեակը փոխադրել արկածին զոհ գնացող թշուառը:

Սակայն Սէն-Էթէր հապճեպով պատրաստուած պատգարակին վրայ մինչև

զղեակը պիտի չի հասնէր: Հազիւ թէ տանողները յիսուն քայլ ըրած էին, յանկարծ այնպիսի զարհուրելի կերպով փոնգտաց, որ տանողները սարսափահար գետինը ձգեցին զինքը և փախան: Հտպիտը փոխանակ իբր մեռած անզգայ գետնի վրայ մնալու, ոտքի վրայ ցատկեց, անգամ մ'ալ իր երկայն վիզը ուսերուն մէջ քաշեց և խկոյն կրկին կուզերը ձեացան, սկսաւ իր կոկորդային ձայնովը կանչուրուտել:

Ամէն ոք ետին դարձաւ, և տեսաւ որ Հտպիտն ոստումներով և իր վայրկենի ձևերովն առաջինէն աւելի ողջ առողջ կը ցուցնէր ինքզինքը: Այս տեսարանին զիմաց ծառայից զուարթութիւնը չափ ու սահման չունէր. Հտպիտին այս նոր խաղը հանձարոյ ճշմարիտ թոխ մը համարուեցաւ:

Ամենէն աւելի Ռիքարտոյին հնչուն ծիծաղը կը լսուէր, իբր մայր եկեղեցոյ մեծ զանգակին զանգիւնը, որուն թաւ և խոր ձայնը կը տիրէ միւս զանգակներուն արծաթի ձայներուն:

Ռիքարտոյի ջղազար ծիծաղն ամենէն աւելի սաստիկն էր, և որպէս զի չափա-



ւորէ, այն՝ կաշմբունն ձեռքերովն իր կողերը կը սեղմէր։ սակայն յանկարծ իր խնդուքին սպայէն աւելի զօրաւոր ձեռք մը իր թևը ցնցեց։ Ետին դարձաւ և իր դէմն գտաւ Ֆիամէզդան. բայց ոչ այն սիրուն, զարդարուն, զուարթ Ֆիամէզդան, արտոյտի նման միշտ երգ մը բերանը, գարնան արևուն տակ, այլ գունատ, դողդոջուն։

— Ինչ ունիս, սիրուն Ֆիամէզդաս, հարցուց անոր Ռիքարտոյ, զարհուրած։

— Եկուր հոս, ըսաւ անոր Ֆիամէզդան, իրեն հետ առանձին տեղ մը քաշուելով։

Լուռ մունջ քանի մը վայրկեան քալեց աղջիկն և երբ ապահով եղաւ թէ ոչ ոք կրնայ զիրենք դիտել կեցաւ հոն։ Այն ատեն դառնալով Ռիքարտոյին.

— Չե՞ս ամչնար դու, կոնտուավար, ըսաւ անոր, կը ծիծաղիս, կը խմես, կ'երգես, մինչդեռ մեր տէրերը թէրևս ծանր վտանգի մէջն են։

— Ինչ վտանգ, Ֆիամէզդա, հարցուց բաջ կոնտուավարը։

— Ինչ վտանգ, ուժգին շեշտով մը պատասխանեց աղջիկը, բան մը չեմ գի-

տեր. սակայն հաւատարիմ աղախնոյ մը բնագղը կ'ըսէ ինծի թէ՛ այս ժամուս մեր տէրերը մահուան վտանգի մէջն են։

— Ո՞վ ըսաւ քեզի ասիկայ, սիրելի Ֆիամէզդա։

— Դու բնական կը համարիս ինչ որ կը պատահին քանի մը օրէ ի վեր մեր Ֆէլիչէ Պատտէր տիրոջ գլխուն։

— Որո՞նք։

— Ինչպէս, Ռիքարտոյ, դու ինծի՞ կը հարցունես. դու որ ձեռքովդ օգնեցիր երիտասարդ Լուչիանոն վերցունելու, երբ Բրոքսերադիէներուն ներքև սպանուեցաւ։ Արդ, պատասխան տուր ինծի, կը համարի՞ս թէ անոր սահմանուած էր դաշոյնի մահացու հարուածը։

— Ո՛չ, անշուշտ, և ոչ ոք զարմացաւ երբ ծռելով գոհին վրայ տեսայ թէ իմ տէրս չէր։

— Ո՛հ, սակայն այս գաղտնիքը պիտի յայտնուի, մենք պիտի գտնենք Լուչիանոյին մարդասպանը։

— Մարդասպանը գտնել, ըսաւ Ռիքարտոյ զարհուրանքով մը, այս բանս մի՛ փափաքիր Ֆիամէզդա։

— Ինչո՞ւ համար։



Որովհետև սպաննողը թերևս բոլորովին պատասխանատու չէ, ըսաւ Ռիքարտոյ, որ տակաւ կը յուզուէր մտածելով թէ թշուառական մարդասպանն իր նշանածին հայրն է: Յիրաւի մարդասպանը զարկաւ զինքը, աւելցուց նա, սակայն ուրիշէ մը բռնադատուած:

— Եւ այս ուրիշը կը ճանչնանք մենք, ըսաւ Ֆիամէզդաւն:

— Այո՛ կը ճանչնանք, կրկնեց Ռիքարտոյ բոռնցքները վերցնելով:

— Նշանտուքի արարողութեան օրն երբ հանդիսականք Բատուայի մայր եկեղեցին կ'երթային, այն ահագին քարն, որ տան մը վերէն փրթաւ և քիչ մնաց մեր երիտասարդ տիրոջը՝ Ֆելիչէ Պատտէրին վրայ իյնալով զինքը ջախջատէր, կը կարծես թէ դիպուածով ինկաւ: Բայց, Ռիքարտոյ, խղճիդ վրայ, չես համարիր թէ մասնաւոր խորհրդով եղած է:

— Այո՛, ըսաւ Ռիքարտոյ ձեռքը ճակտին գարնելով, նոյն բոպէին աչքերս կուսակալին վրայ ուղղած էի: Արդ, սիրելի Ֆիամէզդա, դու ինծի կը յիշեցըրես Ֆիամէզդա, դու ինծի կը յիշեցըրես այն վայրկենին անցած մանրամասնութիւն մը, զոր անշուշտ պիտի մոռնա-

յի, թէ որ գալովդ չարթնցունէիր անոր յիշատակը:

— Ո՞րն է:

— Պատահաբէն վայրկեան մը առաջ կուսակալն իր ձին չի կեցուց:

— Այո՛, դիտարկին պատուհանէն ներս դիտելու համար ուր կը գտնուէր Ադրիականին աղջիկը:

— Պատճառանք մ'էր անիկա: Արդ, հիմայ ապահով եմ թէ ճիշտ այն պահուն երբ ձին կեցաւ, կուսակալն իր աչքերը դարձուց վայրկեան մը, մանրերկրորդ մը այն տանը վրայ՝ ուսկից քարը ինկաւ:

— Նշան մ'էր անիկա ոճրագործներուն համար:

— Կը կարծես, Ֆիամէզդա:

— Կը տարակուսի՞ս, Ռիքարտոյ, կը տարակուսի՞ս, ըսաւ Ֆիամէզդա, յուսահատ շարժմամբ իր երկու ձեռքերն իրարու զարնելով:

— Ոչ, այլ ևս չեմ տարակուսիր, ըսաւ Ռիքարտոյ, որուն զուարթ դէմքը Ֆիամէզդային խօսակցութեան սկիզբէն մթազնիլ սկսած էր:

— Ուրիշ դիտողութիւն չունի՞ս ընելիք, հարցուց նաժիշտը:



— Այո՛, ուրիշ մ'ալ վասն զի պէտք է որ ամէն բան ըսեմք քեզի, այնպէս չէ՞ Ֆիլամէզդա:

— Ա՛խ, այո՛, ըսէ ինչ որ միտքդ կու գայ և գիտցիր թէ մեր սիրելի տէրերուն կեանքն անկէ կախումն ունի:

— Ա՛րդ, Բատուայէն բաժնուելու օրը, մասնաւոր ծառայութիւն մը չունենալով, վար ախոռն իջայ տեսնելու այն ձին ուրուն վրայ պիտի հեծնար իմ երիտասարդ տէրս: Ինչպէս դուն ալ տեսար, ձին գեղեցիկ կենդանի մ'էր. սակայն սաստիկ կրակոտ և անկէ աւելի խիստ խրտան: Երբ ձին պատրաստելու զբաղած էին, ես ալ կողմնակի դրուած հարուստ զարդարուն թամբ մը կը զիտէի, և յանկարծ աչքիս զարկաւ թամբին առջևի մասին՝ գունդին տակը գամ մը՝ որուն սուր ծայրը դուրս ցցուած էր այնպէս որ ձիուն վիզին վրայ պիտի գար, և պիտի վիրաւորէր և զրգոէր ձին՝ երբ ձիաւորն թամբին վրայ ելլէր:

— Աճրագործութեան նոր տեսակ փորձ մը:

— Աստուած իմ, սկզբան շինողին ապշութեան և ցախաւերութեան տուի, և գամը դուրս քաշեցի առանց մէկուն բան

մը՝ ըսելու: Սակայն հիմայ միտքս բերելով գամին տեղը, ստոյգ գիտեմ թէ մասնաւոր դիւսմամբ դրուած էր հոն:

— Ապահով եղիր, Ռիքարտոյ, որ մեր տէրերն որոգայթներով և վտանգներով շրջապատուած են, և մեր ուժերը պէտք է միացունենք անոնց՝ սպառնացող վտանգներէ ազատելու:

— Ի՞նչ պէտք է ընել, սիրելի Ֆիլամէզդա: Հրամայէ, կը հնազանդիմ:

— Աստուած իմ, կարծեմ թէ վախնալու բան չունինք երբ խօսեցեալներն ոչ միայն հացկերոյթին սրահին մէջն, այլ նոյն իսկ եթէ կղզիին ներսերը ըլլան: Թէ որ կուսակալը ուզէ զիրենք հոս զարնել տալ անպատճառ յայտնի կ'ըլլայ: Սակայն իմ մանկամարդ տիրուհիս փափաք յայտնեց դառնալ այս գիշեր Բատուա և հոն գիշերել, Ազնուական օրիորդաց վանքը: Ի՞նչպէս պիտի ըլլայ այս ճանապարհորդութիւնը, մանաւանդ Գեղեցիկ կղզիէն մինչև Բէսքիէրա:

— Ո՛հ, այս բանը ես վրաս կ'առնուամ: Իմ մեծերուս գտնուած նաւակին ես պիտի հրամայեմ, և իմ վստահանալի անձերէս զատ ուրիշ մը չեմ առներ հետս, անոնց ես երաշխաւոր կ'ըլլամ:



— Դու կը խոստանաս ինձի ասիկա,  
Ռիքարտոյ:

— Այո՛, քեզի ունեցած հաստատուն  
սիրոյս վրայ խօսք կուտամ, սիրելի Ֆիլա-  
մէզդաս:

— Քու խօսքիդ վրայ կը վստահիմ:  
Մինչև որ բաժնուելու վայրկեանը գայ,  
գնա՛ աչք մը տուր նաւակներուն: Ես դը-  
ղեակը կը դառնամ որովհետև իմ բացա-  
կայութիւնս կրնայ աչքի զարնել:

— Մեր հարսնիքն երբ պիտի ըլլայ,  
հարցուց Ռիքարտոյ բռնելով նաժիշտին  
շրջագագեստէն:

— Քիչ ատենէն:

— Եւ ինչուան այն ատեն:

— Ահաւասիկ իմ գրաւականս, լաւ  
հսկողութիւն ըրէ, ըսաւ մանկամարդ աղ-  
ջիկն իւր սիրուն մատներուն ծայրովն  
համբոյր մը զրկելով կոնտուլավարին:

Տակաւին իտալիոյ բարուց մէջ չափա-  
ւորութիւնը մուտք չէր գտած, ծառայից  
նման՝ մեծերուն կերակուրի ատեն ալ ան-  
կարգութիւնը կը տիրէր:

Հացկերոյթի մեծ դահլիճին մէջ ամենքն  
միանգամայն կը ծիծաղէին, կ'երգէին, կը  
խօսակցէին, միայն կուսակալը իր պաղ-

արիւնութիւնը պահած էր: Իսկ Ֆէլիչէ  
Պատոէր, թէպէտ միւս հրաւիրեալներուն  
չափ զուարթացած չէր, սակայն հանդէ-  
սին ոգին զինքն ալ գրաւեր էր. և չէր  
նշմարած վենեճիային գեղեցիկ դէմքին  
խոր տխրութեամբ մը պատիլը:

Այբիականին աղջիկը՝ գունատ, տխուր  
վհատութեամբ մը զգացուած, աչքերը  
ներքին տեսիլքի մը մէջ մոլորուն, սիրտը  
ճմուռած, կ'սկսէր իր շուրջն անցած դար-  
ձածին գիտակցութիւնը կորսնցունել:  
Միտքը կու գար իր սիրելի բնակարանը  
զոր քանի մը օրէ ի վեր ձգած էր, և քիչ  
քիչ իր երազանքին մէջ ընկղմելով, նախ-  
կին անցուցած կեանքն աչքին դիմաց  
կարգաւ կը պատկերանար: Թէ ինչպէս  
առաջին անգամ Ազնուական օրիորդաց  
վանքը հասնելուն, նոր բարեկամուհիներն  
իւր շուրջն առած կ'ուրախանային, կը  
տեսնէր իր վազվզելը մեծ պարտէզին ու-  
ղիներուն մէջ, ուր այնքան տարիներ  
թուջնոց դայլայլիկները խառն աշակերտու-  
հեաց արծաթեայ քրքիչներուն հետ հնչե-  
ցուցած էին: Այն քաղցրաբարոյ և իրենց  
սաներուն ամենափոքր պիտոյից հոգատար  
մայրապետներն, սիրելի մեծաւոր մայրն՝



որուն մեծ վիշտ պատճառած կը համարուէր պարտականութեան մը մէջ պակասիլն կամ լաւ ևս խաղալիք մը կոտորելն։ Սակայն վանքին մատուռն էր որ ամենէն աւելի քաղցր յիշատակներ կը զարթուցանէր Վենեճիային մտքին մէջ։ Ախ, այն մատուռն, Վենեճիային սիրտը կը հալէր միտքը բերելով իր վրայ ազգած հիացումն, երբ սրբազան երգերը խունկերու ծուխին հետ խառն կը բարձրանային դէպի երկինք, նոյն ատեն Ազրիականին ազջկան կը թուէր թէ իւր հոգին ալ թևեր առնելով խնկարկութեանց և երգերուն հետ կը թռչէր դէպի եթերաց կամարը։

— Ի՞նչ ունիք, հարցուց Ֆէլիչէ Պատտէր, յանկարծ զինքն այն անոյշ երազանքէն սթափեցնելով։

— Ե՛ս, պատասխանեց Ազրիականին ազջիկը սարսուելով, բան մը չունիմ։

Երկչոտ ակնարկ մը նետեց իր քովը կուսակալին գրաւած տեղոյն վրայ։ Սակայն այս տեղը պարապ էր։

Յիրաւի կոչնականաց ոգեւորութիւնն այնքան սաստիկ էր որ կոմս Մարզինենկոյ կրցեր էր հացկերութի սրահէն հեռաւնալ առանց մէկէ մը նշմարուելու։ Պատ-

ւոյ գաւիթն իջան, ուր ինչպէս վերն ըսինք, ստորին պաշտօնակալաց համար սեղաններ դրուած էին։

Բարթողիմէոս յիսնապետն այս սեղաններէն միոյն դիմացը նստած, իր ընկերակիցներուն զուարճութեանց քիչ կը մասնակցէր. մեծագոյն զգուշաւորութեամբ կ'սպասէր գալիք հրամաններուն։ Շատ խոհեմ մարդ էր Բարթողիմէոս, գիտէր թէ այն երեկոյ դժնդակ ծառայութիւն մը ընելու հարկը իր վրայ կը ծանրանայ։ Անոր համար հացկերոյթի ժամանակ, ինքն որ սովորաբար շատ կը խմէր, այս անգամ հագիւ շրթունքները թրջած էր։

Սակայն գործելու վայրկեանը կը մօտենար։ Յիրաւի շատ չանցած տեսաւ կուսակալը՝ պատուոյ գաւթին շէմին վրայ, որ գլխովն իրեն աննշմարելի նշան մը կ'ընէր։ Յիսնապետն իսկոյն ոտքի ելաւ և իր տիրոջն ետեէն գնաց։ Անցաւ անգաստակը և պարտէզ հանող դուռը հասաւ։

Մութը կ'սկսէր կոխել, մթնշաղն արդէն իր ստուերներով պարտէզին երկայն ճամբաները բռնած էր, և Բարթողիմէոս պէտք էր խիստ ուշադրութիւն ընել իր



տէրը աչքէ չի կորսնցունելու, որ առջևէն քսան քայլ հեռաւորութեամբ կ'երթար:

Երբ կուսակալը հասաւ այնպիսի տեղ մը, որ յարմար էր իր ծառային հետ ընելիք խօսակցութեան՝ կանգ առաւ.

— Ամէն ինչ պատրաստ է, հարցուց նա:

— Այո՛, տէր, պատասխանեց Բարթողիմէոս:

— Քու բռնած մարդուդ վրայ վստահ ես:

— Կատարելապէս վստահ եմ, տէր: Արդէն զինքը մեզի հետ միացնող այնպիսի կապ մը կայ՝ զոր չէ կարող փրցընել:

— Ի՞նչ կապ:

— Եթէ Ձեր վսեմութեան ծառայութիւնը ձգէ, այն ատեն պիտի պարտաւորուի երթալ Պետութեան ցոկանաւերուն մէջ թիավարելու, ուսկից փախած է:

— Լաւ: Բսէ հիմայ թէ ինչ զգուշութիւններ ձեռք առած ես այս երեկոյեան պատահելիք արկածներուն նկատմամբ:

— Տէր, երկու նաւակ ունինք, որոնց մին լճին մէջ երկաթ նետած է, ճիշդ գեղեցիկ կղզիին և Բէս:իէրայի մէջ տեղը:

— Այսինքն այնքան հեռաւորութեամբ զոր լողալով անցնիլը անկարելի է: Շատ լաւ: Եւ ասիկա այն նաւակն է ուր քու մարդդ և շու պիտի մտնէք դառնալու ատեն. . . . . խօսեցեալները տանելէն յետոյ:

— Մինչև կէս ճամբան, այո՛, տէր:

— Իսկ մի՞ւս նաւակը:

— Միւս նաւակը, տէր, կղզիին ծայրը փոքր խորշին մէջ իր սովորական տեղը կը մնայ: Այս նաւակին մէջ պիտի մտցընենք Ֆէլիչէ Պատոէրն և Աղբիականին աղջիկը:

— Նոր շինուած նաւակ մ'է:

— Անշուշտ ոչ, տէր, վասն զի հակառակ պարագային գործը շատ յայտնի կ'ըլլայ եթէ վաղը ապուշին մէկը յանդգնի ընկզմածը ըննել:

— Ո՞ր գործը:

— Դռնակն՝ որ պիտի բացուի ճիշդ այն վայրկենին երբ հասնինք միւս նաւակին:

— Որուն մէջ քու ընկերդ և դու պիտի ցատկէք յարմար ատեն, այնպէս չէ՞:

— Այո՛, տէր:

— Եւ այն ատեն...



— Այն ատեն խօսեցեալները կ'երթան Կարտայի լճին խորը իրենց մասնիները փոխանակելու:

— Եւ թէ որ անոնք ալ ցատկեն ձեզի հետ ազատարար նաւակին մէջ:

— Թիու հարուած մը բաւական է իսկոյն գործը լմնցնել: Սակայն այս կողմանէ վախ չի կայ: Նախ և առաջ երկուքն ալ միասին պիտի ընկղմին կամ ընկղմող նաւակին պիտի կառչին, որուն ծանրութիւնը գիրենք փութով ջուրին յատակը պիտի իջեցնէ: Նոյն միջոցին, կարելի եղածին չափ շուտ շուտ կը թիավարենք դէպի գեղեցիկ կղզին, ուր կը հասնինք բոլորովին թրջած:

— Ուրեմն արգելք մը չե՞ս տեսներ մեր ծրագրին գործադրութեան:

— Դժբախտաբար հատ մը կայ տակաւին, այն անիծած Ռիքարտոյ կոնտուլավարն: Թէ որ ժամանակին իմանայ, պիտի ուզէ ինքն ալ միատեղ գալ և պիտի պահանջէ նաւակը վարելու իր իրաւունքը, քանի որ իր տէրը մէջը կը գրտնուի:

— Ո՛հ, այս բանս նախատեսուած է, ըսաւ Մարդինենկոյ: Ռիքարտոյ և ո՛չ

պիտի իմանայ խօսեցեալներուն մեկնիլն, որովհետև մինչդեռ՝ ինքն ծառային սեղանին վրայ իրենց հետ նստած շիշերուն դիմացը, հարբելու ետև է...:

— Այդ ի՞նչպէս կ'ըլլայ, տէր:

— Օրիորդ վէնեճիա կը բաղձայ այս երեկոյ մեկնիլ Բատուայ, երթալ Ազնուական Օրիորդաց վանքը: Ըսի Ֆելիչէ Պատտերին. Չեր նշանածին հետ գլուխ գլխոյ մը կը պատրաստեմ. դուք զինքը միայնակ մինչև Բէսքիէրա պիտի տանիք: Ինքն շատ սիրով ընդունեցաւ այս առիթը:

— Այն ատեն ամէն ինչ ի կարգի է, տէր:

— Ամէն ինչ, մեր ուզածին պէս: Քու մարդդ ո՞ւր կ'սպասէ քեզի:

— Կղզիին ծայրը, նշանածներուն համար պատրաստուած նաւակին մէջ:

— Անոր քովը գնա՛: Քիչ ատենէն հոն կը բերեմ Ֆելիչէ Պատտերն և Աղբիականին աղջիկը:

Կուսակալը դղեակին ուղղութեամբ հեռացաւ, իսկ Բարթողիմէոսը նաւամատոյցը հասնելու համառօտ ճամբան բռնեց, ուր իրեն կ'սպասէր իր մեղսակիցը:

Չգուշութեամբ կը քալէր: Վասն զի գի-



չերը մուտ էր և լուսինը տակաւին կը դանդաղէր երևնալու: Յիսնապետն քանի մ'անգամ կեցաւ, ականջ դրաւ. կը թուէր իրեն ծառերէն ինկած տերևներուն խշրրտոցը լսել ուրիշի մը ոտքերուն ներքև: Թէպէտ սրտոտ մարդ էր, սակայն անծանօթ վտանգի մը սպառնալիքէն բռնուած մէկու մը նման՝ տարտամ զարհուրանք մը կ'զգար: Եւ յիրաւի յանկարծ վտանգն երևան ելաւ. և երկաթէ ձեռք մը յիսնապետին կոկորդէն բռնեց:

— Մեր երկուքին կարգն է, յիսնապետ Բարթողիմէոս, ըսաւ Ռիքարտոյին ծանօթ ձայնը:

— Ինչպէս. դո՞ւ իմ ազգականս, ըսաւ յիսնապետը խեղդուկ ձայնով մը, ինծի ըսելու բան մ'ունիս:

— Այո՛, քեզի ըսելիք մ'ունիմ, ըսաւ Ռիքարտոյ խիստ ձայնով մը:

— Խօսէ՛, ազգականս:

— Ազգական, այս պակաս էր մեզի, շարունակեց կոնտուլարն դառնազին ձայնով մը:

— Ինչո՞ւ:

— Հիմայ կը տեսնես: Ա՛հ, դու դըռնակով նաւակներ ունիս հէ՞, դու կ'ուզես

որ տէրս երթայ լճին խորը իր նշանախօսութիւնը կատարելու ա՛խ, դու դարան կը պատրաստես հէ՞: Ճշմարիտը կ'ըսեմ, Բարթողիմէոս, բացարձակ քու յուսացածիդ պէս ելք պիտի չունենայ, վասն զի ես հոն եմ:

— Ի՞նչ կուզես ուրեմն:

— Պարզապէս այս երկու ձեռքերովս քեզի երկաթէ անուր մը ձևացնել: Հա՛պա ուրեմն, եթէ կը հաւատաս Աստուծոյ, քու վերջին աղօթքդ ըրէ, վասն զի կ'երդնում թէ քիչ ատենէն անոր դիմացը պիտի ելլես:

Հասկցաւ Բարթողիմէոս թէ ամէն կեղծիք անօգուտ է եթէ ուզէր իսկ ընել՝ չէր կարող: Վասն զի կ'զգար թէ երկաթէ մամուլի մը նման պտուտակը կը դառնար և կամաց կամաց իր վզին յօդերը կը խախտէր: Արիւնը դէպի ըզեղը կը խուժէր, և քունքերը սաստիկ կերպով կը բարախէին իրենց մէջ պատեանը պայթեցնելու աստիճան: Թուխ ամպ մը կը տարածուէր իր աչքերուն վրայ: Կը հասկնար տարտամօրէն թէ իր մահը մօտալուտ է:

Յանկարծ անուրը թուլցաւ, երկաթէ ձեռքն անգործ դարձաւ և Բարթողիմէոսի



վզէն բաժնուեցաւ: Առանց բառ մը արտաբերելու, առանց ճիկ մը հանելու, կոնտուլավարն՝ որ զինքը կը խղզէր, զանգուածի մը նման ինկաւ, յիսնապետն ալ իր հետը քաշելով:

Նոյն պահուն ելլող լուսնակին անփայլ ճառագայթներուն ներքեւ տափաստանի մէջ մարդ մը տեսնուեցաւ, ձեռքն արիւնոտած դաշոյնով մը, զոր մինչև երեխակալը մխած էր Ռիբարտոյին կռնակն, այս մարդն էր կոմս Մարդինենկոյ, Բատուայի կուսակալը:

Թ.

### Ա Ռ Ա Ջ Ի Ն Ջ Ո Ն Ը

Երբ Ֆիլամէզդան դղեակին դրան կը մօտենար, իր դէմն ելաւ կուսակալին ծառայութեան մէջ գանուող փոքր աղջնակ մը, որ վերջերս իրեն ընկեր տրուած էր, օգնական ըլլալու Ազրիականին աղջկան նաժշտի փափուկ պաշտօնով:

Փոքրիկը Նինա կը կոչուէր. շատ ուշիմ, միանգամայն քաղցրաբարոյ, հաճո-

յակատար և եռանդուն: Ամէն փոքր զիտուութիւններն ուշադրութեամբ մտիկ կ'ընէր և իսկոյն կատարեալ յօժարութեամբ կը հնազանդէր: Այս պատճառաւ նորեկն առաջին իսկ տեսութեան՝ իւր մտերմութեամբը զբաւած էր Ֆիլամէզդան, և կատարեալ վստահութիւն ներշնչած էր անոր:

Արդ տեսնելով որ Նինան աճապարանօր դէպի իրեն կուգար, հարցուց անոր.

— Զի՞ս կը փնտռէիր, պզտիկ:

— Այո՛, օրիորդ, պատասխանեց աղջիկը, զձեզ կը փնտռէի, ձեզի ըսելիք ունիմ:

— Հիմակ... քիչ վերջը, պատասխանեց Ֆիլամէզդան, զինքը քովէն ձեռքովը հեռացրնելով, հիմակ ժամանակ չունիմ:

— Մակայն, օրիորդ, պնդեց Նինա:

Ֆիլամէզդան անհամբեր շեշտով անգամ մ'ալ ձեռքովը հրեց զինքն ըսելով.

— Նորէն կը կրկնեմ, պէտք է որ տիրուհւոյս քով փութամ, իմ բացակայութիւնս քիչ մը երկար պիտի գտնէ:

— Մանաւանդ թէ, պատասխանեց աղջիկը, կրնաք ըսել որ տիկինը երկարատեն սպասելէն յոգնելով վերջապէս, մեկնեցաւ:



— Հէ՞, գոչեց Ֆիամէղդան դառնալով դէպի փոքրիկ Նինան. չե՞ս համարիր թէ... Ա՛խ, սխալ լսեցի, այնպէս չէ՞: Գու չըսի՞ր ինծի թէ իմ տիրուհիս մեկնած է:

— Ներեցէք, օրիորդ, մեր տիրուհին զըզեակը չէ, մեկնեցաւ գնաց:

— Առանց ինծի:

— Առանց ձեզի

Ֆիամէղդան սրտաբեկ՝ բառ մ'անգամ չաւելցուց, և գլուխը կուրծքին վրայ խոնարհած,

— Բայց, աւելցուց Նինան աշխուժիւ, տիրուհին յատկապէս պատուիրեց ինծի զձեզ իրեն տանիլ՝ երբ դառնալու ըլլաք: Եթէ քիչ մը աճապարենք, ապահով եմ թէ կը հասնինք իրեն նաւակ մտնելէն առաջ, նաւամատոյցին վրայ:

— Կը հաւատա՞ս, հարցուց Ֆիամէղդան յուզեալ ձայնով մը:

— Ամենաապահով եմ, օրիորդ. ասկէ զատ տիրուհին զձեզ այնքան կը սիրէ, որ հարկաւ քանի մը վայրկեան կը սպասէ, ըսածս ստո՞յգ չէ:

— Անտարակոյս. եթէ այնպէս է, երթանք, ըսաւ Ֆիամէղդան առանց վարկեան մը իսկ խորհրդածելու, շուտով երթանք:

— Պատրաստ իմ, օրիորդ:

Այս խօսքերն ըսելէն յետոյ փոքրիկ Նինան ճամբայ ելաւ Ֆիամէղդային եկած ճամբուն բոլորովին հակառակ ուղղուած թեամբ:

— Սակայն ինչո՞ւ, ըսաւ նաժիշտը, կըցածին չափ շուտ շուտ քալելով, այս մեկնումն այսպէս հապճեպ եղաւ: Ճաշասրահէն ելլելու ատենս հազիւ անորոշ խընդիր մը կար մէջ տեղ, տիրուհւոյս պարզ մէկ փափաքն էր:

— Ասոր նկատմամբ չեմ կարող ձեզի պատասխանել: Միայն թէ տիրուհին զըզեակէն մեկնելու ատենը բարձագաւթին աստիճաններուն վրայ յանձնեց ինծի որ իր հրամանները հազորդեմ ձեզի. այս մուշտակն ալ, զոր պարտէզին մինչև ծայրը վրան կրելը ծանր կը համարէր թեւիս վրայ ձգեց կերպով մը հասկցնել ուզելով թէ նաւակ մտնելու ատեն միայն կուզէ հագնիլ:

Ֆիամէղդան իսկոյն վեներձիային կըրկնոցը ճանչնալով բոլորովին համոզուեցաւ փոքրիկ Նինային ըսածներուն: Արդէն տարակոյս չունէր, և բնաւ, ո՛ր և է կասկածի շուքն անգամ չանցաւ մտքէն:



Երկու մանկամարդ աղջիկները քով քով վի կը բալէին առանց խօսելու: Իրենց քայլերուն արագութենէն շնչառութիւնին կ'սկսէր դժուարանալ:

— Տակաւին շատ հեռո՞ւ է, հարցուց վերջապէս Յիամէդդան:

— Քիչ մ'ալ համբերութիւն, օրիորդ: Հինգ վայկեան ևս անցաւ:

— Է՞ ուրեմն, հարցուց նաժիշտը իւր փոքր ընկերուհւոյն:

— Միայն հարիւր քայլ ևս, պատասխանեց Նինա: Թէ որ ցորեկ ըլլար, կամ լուսինը ելած ըլլար, դուք պիտի նշմարէիք...

Փոքրիկ աղջիկը չկրցաւ լինցնել խօսքն և աղաղակ մը փրցնելով ինկաւ խոտերուն վրայ:

— Ի՞նչ եղար, հարցուց Յիամէդդան.

— Սխալ քայլ մը առի, պատասխանեց Նինա, ոտքս դարձաւ: Ախ, սաստիկ կը ցաւի, աւելցուց վշտագին ձայնով մը:

— Վեր ելի՛ր, սիրտ ըրէ, ըսաւ Յիամէդդա զինքը վեր վերցնելով: Քալել փորձէ, կ'օգնեմ քեզի:

Նինա ճիգ մ'ըրաւ, նորէն պոռաց և վերստին ինկաւ խոտերուն վրայ:

— Անկարելի է, ըսաւ:

— Այն ատեն մինակ կ'երթամ, կրկնեց Յիամէդդան, առէլով վենեճիային մուշտակը: Այս ուղղութեամբ, հարիւր քայլ հեռու, ըսի՛ր, այնպէս չէ՞:

— Հազիւ հարիւր քայլ: Չահերուն լոյսերը կ'առաջնորդեն ձեզի: Եթէ կանչելու ալ ըլլար կը լսեն:

— Շնորհակալ եմ, ըսաւ Յիամէդդան, միայնակ ճամբայ ելլելով:

Արդէն հինգ վայրկեան անցեր էր առանց իր փնտռածներուն հանդիպելու: Կանչեց, և ոչ ոք, պատասխանեց: Խոր մթութեան մէջ նոյն իսկ չէր զխտեր՝ որ ճամբուն հետևիլ, բարեբախտաբար նոյն ատեն լուսինը ելաւ:

Յիամէդդային մտքին մէջ յանկարծ կասկած մը արթնցաւ. իր ճամբէն ետ դարձաւ, եկաւ Նինան ձգած տեղը: Այս տեղը շատ դիւրութեամբ կարելի էր գտնել՝ խոշոր ընկուզենիի մը պատճառաւ, և որուն բունին մօտ ինկած էր փոքրիկ աղջիկը:

Յիամէդդան հասաւ ընկուզենիին քով, ի զուր փնտռեց, Նինան հոն չէր:

— Որոգայթի մը մէջ ինկայ, ըսաւ



բարկութեամբ ոտքերը գետին զարնելով: Այս, որքան յիմար եմ, հազար անգամ յիմար: Սակայն ինչպէս կրնայի մտածել թէ այս աղջիկն՝ որուն վրայ այնքան վստահութիւն ունէի, մատնութեան մը պատգամաւորն ըլլայ: Օ՛ն, ուրեմն, այլ ևս անոր վրայ չի մտածենք, անօգուտ է ողբալը, փոխանակ խօսելու, պէտք է գործել:

Առանց ուրիշ գանգատ մ'ընելու, կըտրի՞մ մանկամարդ աղջիկը ճամբայ ելաւ:

Հիմայ լուսնի լոյսը կ'օգնէր իրեն նըշմարել ինչ ինչ ծանօթ կէտեր, որոնք դըղեակին ուղղութիւնը գտնելը կը դիւրացընէին: Վերջապէս հասաւ հոն, սակայն շատ մը դարձադարձ շրջաններ ընելէն յետոյ, որոնք թանկագին վայրկեաններ կորսընցնել տուին իրեն: Երբ սիւնազարդ գաւթին դիմացը հասաւ, մեծ ճաշասրահէն կոչնականաց ժխորալից աղաղակները լսելով, համոզուեցաւ այս անգամ թէ իր կասկածներն իրօք ստոյգ էին, իր տիրուհին մեկնած էր:

Յիրաւի նաժիշտը սրահին դրան սեմը հասնելով դէպի ներս ակնարկ մը նետեց, չի տեսաւ հոն ոչ Աղբիականին աղջիկը,

ոչ Ֆելիչէ Պատոէրն և ոչ Բատուայի կուսակալը:

Սակայն քանի մը հարցմունքներ ըրաւ, պարզ ձևակերպութեան համար, որուն տրուելիք պատասխանները արդէն կը գուշակէր: Իմացաւ ստուգիւ թէ Աղբիականին աղջիկն ընկերակցութեամբ կուսակալին և իր նշանածին՝ գնացեր էր դէպի փոքր ծովախորշն, որ դղեակին նաւահանգիստն է:

Ֆիամէդդան, ուրիշ ծուղակի մը մէջ իյնալէն վախնալով, զգուշացաւ անկէ յետոյ նոր հարցմունքներ ընելու: Արդէն իրեն կարևոր եղած տեղեկութիւններն առեր էր:

Նաւակ մտնելու ծովախորշը դղեակին ճիշդ դիմացը կ'իյնար: Ֆիամէդդան բարձրագաւթին ստորոտը կեցած և կոնակը շէնքին դարձուցած, պէտք էր առանց շեղելու, ուղիղ գծով քալել ուղղակի նաւամատոյցը հասնելու համար: Այս շիտակ ճամբան չի կորսնցունելու համար իրեն իբր կողմնացոյց կը ծառայէին լուսնոյ ճառագայթները, որ այս վայրկեանին իրենց ստուերները ուղիղ անկեամբ իւր ձախ կողմը կը ձգէին: Ուրեմն պէտք էր ինքն



այս ուղղութիւնը պահել, ճամբէն չի շեղելուն ապահով ըլլալու համար:

Պարագաներուն բերմամբ, այս անդրադարձութիւններն արագօրէն ընելէն յետոյ, Ֆիւմէղղան սկսաւ պարտէզին մէջէն առաջ երթալ:

Արդէն բաւական ատեն աճապարանօք քալեր էր և հակառակ իր զգացած սրբտի բնական յուզմունքին, կը ջանար նաև սանձել իր վրայ եկած ջերմը, որ այտերը կը կարմրցնէր և ակռաները իրարու զարնել կու տար: Յանկարծ իր ոտքերն անակընկալ արգելքի մը մէջ բռնուեցան, քիչ մնաց զինքը գետին պիտի գլորէր: Մտեցաւ ոտքերը ազատելու, կարծելով թէ պատաստուկ բոյսի մը մէջ բռնուած են:

Ո՛րչափ մեծ եղաւ իւր զարմանքն երբ իր ձեռքերուն հանդիպեցաւ բրդէ երկայն գօտի մը. մանկամարդ աղջիկը զայն դէպի իրեն քաշեց: Գօտին թրջած էր, անշուշտ գիշերուան ցօղէն, որ ժամ մը առաջ սկսած էր առատօրէն իջնել:

Բայց չէ, ցօղէն չէր, կպչուն հեղուկ մ'էր, որուն անախորժ հոտը սիրտխառնուկ կու տար իրեն:

Թերևս արիւն է:

Ֆիւմէղղա զարհուրած՝ լուսնի ճառագայթներուն տակ իր ձեռքերը քննեց, ըստուգիւ արիւն էր:

Թէպէտ նաւամատոյցը հասնելու կ'աճապարէր, սակայն նոր աղէտի մը նախազգացումն ստիպեց զինքը գօտին բանալու: Անոր անկիւններէն միոյն վրայ տեսաւ Ք մը զոր ինքն իր ձեռքովը բանած էր: Այլ ևս տարակոյս չէր վերցնել, ասիկա Ռիքարտոյին գօտին է: Սակայն ո՛ր է ինքն, որ սովորաբար վրան կը կրէր զայն: Անշուշտ մեռած մարդասպանի մը հարուածներուն տակ. ա՛խ, այն ատեն ամէն ինչ կորսուած է:

— Ռիքարտո՛յ, Ռիքարտո՛յ, կ'աղաղակէր դժբախտ աղջիկը, խիտ մացառներուն մէջ նետուելով, ձեռքերը և երեսները մորենիի փուշերէն վիրաւորելով: Ռիքարտո՛յ ձայնս չէ՞ս լսեր:

Սակայն իւր աղաղակները խոր անտառին մէջ առանց պատասխանի կը մնային:

— Ռիքարտո՛յ, սիրելի Ռիքարտոյ, կը կրկնէր աղջիկը, ես եմ քու փոքրիկ Ֆիւմէղղան, դու այլ ևս չէ՞ս ճանչնար իմ ձայնս: Խօսէ՛ Ռիքարտոյ:

Կը լռէր, մտիկ կ'ընէր. միշտ նոյն լռութիւնն:



խեղճ Ֆրամէղդան երբ սրտին յուզմունքէն վհատած, փեկանի ծառին բունին զարնուած ինկաւ, այն ատեն կը թուէր իրեն նուազ հեծութիւն մը լսել մացառներէն անդին, իրմէ քանի մը քայլ հեռու:

— Ուրքարտո՛յ, դո՞ւ ես, հարցուց:

— Այո՛, ես եմ, պատասխանեց հազրու լսելի ձայն մը:

Ֆրամէղդան արդէն կոնտուլարին քովէր և զինքը իր բազուկներուն մէջ առած.

— Վիրաւորուած ես, հարցուց անոր:

— Այո՛:

— Ո՞ւր տեղէդ:

— Հոս, աջ ուսէս:

— Ծանր է վէրքը:

— Կը յուսամ թէ չէ. դաշոյնը սահեցաւ ուսոսկրիս վրայէն, որով կը յուսամ բժշկուիլ:

— Ո՞վ Աստուած իմ, կ'ըսէր խեղճ Ֆրամէղդան ձեռքերը իրարու կցելով:

— Մի՛ յուսահատիր, թերևս ոչինչ բան մ'է:

— Կը յուսանս, ստո՞յգ է, յիրաւի ըստո՞յգ է:

— Այո՛, սակայն շատ տկար կը զգամ,

չափազանց արիւն կորսնցուցի, պատասխանեց կոնտուլարը: Վայ, աւելցուց նա տեսնելով մանկամարդ աղջկան ձեռքը իր գօտին, գօտիս, — գօտիս գտեր ես դու: Աւելի աղէկ, զայն կը գործածես վէրքս պատելու, որպէս զի պէտք եղած ուժը վերստանամ պատմելու քեզի ինչ որ կարևոր է:

Ֆրամէղդան փութով մերկացուց կոնտուլարին ուսը և բացաւ վէրքը՝ ուսկից միշտ առատօրէն արիւն կը հոսէր, և խեղճ կոնտուլարին ուժը կը սպառէր: Ֆրամէղդան քակեց իր վիզէն թաշկինակը և զայն պատաստ մը ընելով վերքին վրայ դրաւ, արգիլելու համար բրդէ գօտիին պատճառելիք զրգուութիւնը որով ապա փաթթեց արիւնահոսութիւնը դադրեցունելու համար:

Այս ամէնը վայրկենի մը մէջ լըմնցուց:

Մինչ դեռ Ֆրամէղդան այսպէս վէրքը կը կապէր, բիրտ կոնտուլարն աչքերը գոցած կ'ըսէր.

— Ախ Ֆրամէղդա, սիրելի Ֆրամէղդա, կը նախընտրեմ ամէն օր վիրաւորուիլ, որովհետև այսօրինակ վէրքիս փաթթուիլը ինձի համար ամենէն մեծ երջանկութիւնն է:



— Լ՛ուռ կեցիր, ըսաւ նաժիշտը, ձեռքը կոնտուրավարին շրթունքներուն վրայ դնելով:

— Ի՞նչ կ'ընես. շարունակեց Ռիքարտոն, կը թուի ինձի թէ հրեշտակները իրենց լուսարձակ թևերուն վրայ զիս արքայութեան մէջ փոխադրած են:

— Հիմայ լաւագո՞յն ես:

— Այսինքն թէ բոլորովին լաւ:

— Խօսելու ոյժ ունի՞ս:

— Կարծեմ:

— Խօսէ հիմայ և կարճ կապէ, վասն զի մեր սիրելիները մահուան վտանգի մէջն են, այնպէս չէ՞:

— Այո՛, ըսաւ կոնտուրավարն խուլ ձայնով մը:

— Խօսէ՛ ուրեմն, ըսաւ Ֆիամէզդան ծոելով անոր վրայ:

— Արդ երբ դու ինձմէ հեռացար, շարունակեց Ռիքարտոն, շատ չանցած դիպուածով վրայ հասայ չարածողովի մը, կուսակալն իւր մեղսակից Բարթողիմէոսի հետ:

— Կը կասկածէի, ըսաւ Ֆիամէզդան, գարշելի մեքենայութիւն մը ըրած պիտի ըլլան:

— Ամենէն անօրէն երևակայութենէ դուրս՝ գարշելի բան մը: Այն նաւակն որ նշանածները գեղեցիկ կղզիէն Բէսքիէրա պիտի տանի, ներքեւ դռնակ մը ունի զոր անօրէնները պիտի բանան կղզիէն ցամաք երկիր երթալու կէս ճամբուն վրայ:

— Որով այս խեղճ երիտասարդները...

— Լճին մէջ պիտի խղղուին թէ որ դու ժամանակին չի հասնիս զանոնք փրկել:

— Ի՞նչպէս կրնամ այս բանս ընել:

— Ահաւասիկ: Նաւակ մ'ունիմ, զոր նախագգուշութեան համար թագուցած եմ ջրուսիներուն մէջ, ասկից քանի մը քայլ անդին, կրնաս զայն դիւրաւ գտնել և քեզի ծառայեցնել: Յիշէ, Ֆիամէզդա, թէ ձկնորսի մը աղջիկն ես, ոյժ ունիս և գիտես նաև թիավարել:

— Այո՛, այո՛, անշուշտ, կրնամ ընել ասիկա սակայն զքեզ, Ռիքարտոյ, հոս մինակ, այս խեղճ վիճակին մէջ ձգել երթալ, ա՛խ իմ կարողութենէս վեր է ասիկա:

— Է՛հ, ի՞նչ կը մտածես զիս. ամենէն առաջ զանոնք: Թէ որ պիտի մեռնիմ, Ֆիամէզդա, քու անունդ տալով կը



մեռնիմ: Քու հոս գալէդ վերջ մեռնիլն  
ինծի համար քաղցր է:

— Ինչպիսի բարի սիրտ. ո՛չ, դու պի-  
տի չի մեռնիս: Ըսածս ըսած է, և կը մեկ-  
նիմ: Բայց նախ կ'ուզեմ գիտնալ թէ ո՞վ  
զքեզ զարկաւ:

— Կուսակալը:

— Միշտ անիկա:

— Միշտ. Բարթողիմէոսին հետ իրեն  
ծրագիրը կարգադրելէն յետոյ, մեկնեցաւ  
դէպի զդեակը: Ես մօտեցայ և բռնեցի  
յիմնապետը կողորդէն զոր անտարակոյս  
պիտի խղզէի եթէ այն անիծած կուսա-  
կալը միտքը փոխելով կամ շշուկ մը լը-  
սելով իմ քովս չի գար և չի վարնէր զիս  
ետեէս:

— Սոսկալի բան:

— Հարուածն այնքան ահաւոր էր և  
այնպէս լաւ տեղւոյն վրայ տրուած, որ  
կուսակալը կարծեց թէ իմ կեանքս ընդ  
միշտ լըմնցած է: Այս գաղափարը փայ-  
լակի նման մտքէս անցաւ, և գետինը ճը-  
գեցի ինքզինքս միայն խուլ հառաչանք  
մը արձըկելով: Չեմ գիտեր ինչ բնագ-  
դումն կը դիտէր ինծի թէ մահուընէ խու-  
սափելու միակ միջոցն մեռած ձևացու-  
նելն էր:

— Եւ դու զարնուած տեղդ մնացի՞ր  
մինչև իմ գալս:

— Ոչ. հազիւ թէ կուսակալն և Բար-  
թողիմէոս հեռացան, ոտքի ելայ և աղէկ  
գէշ գօտիովս իմ վէրջս կապելէն յետոյ,  
դէպի նաւակս վազեցի: Սակայն չափա-  
զանց վստահացայ իմ ուժերուս վրայ:  
Գօտիս լաւ կերպով կապուած չըլլալուն  
քակուեցաւ, և զայն մացառներուն մէջ  
կորսնցուցի: Արիւնը առատօրէն կը հոսէր  
վէրքէս, նորէն ինկայ և մարեցայ այն  
տեղն՝ ուր քիչ առաջ զիս գտար:

— Ա՛խ իմ սիրելի Ռիքարտոյ: Սա-  
կայն վայրկեանները դարեր են. անշուշտ  
մեր սիրելի մեծերը նաւակ մտած են հի-  
մակ, դու ալ նոյնը չե՞ս կարծեր:

— Ոչ, չեմ կարծեր:

— Ինչ բանի վրայ վստահացած կ'ը-  
սես:

— Չեոք անցուցած նաւակը ջրուռի-  
ներուն մէջ ծածկեցի, որ բարեբախտա-  
բար թիեր չունէր: Այն ատեն նշանա-  
ներուն համար պատրաստուած նաւակին  
թիերը գնացի առի. որով այն նաւակը  
առանց թիի մնալով՝ պէտք պիտի ըլլայ  
ուրիշ թիեր ճարել. այս պատճառաւ կար-



ձեմ առ նուազն երեք քառորդ ժամ յապազումն պիտի ունենայ:

— Այն ատեն կրնամ ժամանակին հասնիլ: Յտեսութիւն, Ռիքարտոյ, կը յուսամ քիչ ատենէն:

— Յտեսութիւն, սիրելի Ֆիամէզդա:  
Հազիւ թէ նաժիշտը քանի մը քայլ հեռացեր էր, երբ կոնտրապարն նշանով մը կեցուց զինքը:

— Ի՞նչ կայ, հարցուց աղջիկը:

— Մտիկ ըրէ, ըսաւ Ռիքարտոն, ձայնը ցածցունելով և ականջը գետինը կըսուցունելով:

— Ի՞նչ կայ նորէն, հարցուց Ֆիամէզդան նոյն շեշտով:

— Իմ յուսացածէս աւելի շուտ շարժեցան: Կը լսեմ թիւրուն կանոնաւոր կերպով ջրին երեսը բախելն: Իրենց նաւակն է որ այս եզերքին մօտէն կ'անցնի: Աճապարէ՛ ուրեմն, Ֆիամէզդա, խնդրէ բարեւար Աստուծմէ՛ որ քեզ օգնէ և քեզի ոյժ տայ:

— Երթանք ուրեմն, ըսաւ Ֆիամէզդան:

Աղջիկը ծոցեցաւ կոնտրապարին վրայ՝ և անոր ճակատին համբոյր մը դրոշմեց այս առաջին անգամ:

— Խեղճ սիրելիս, ըսաւ նա զգացուած ձայնով մը, կը ձգեմ զքեզ հոս միայնակ և վիրաւոր:

— Ես մինակ չեմ հոս, ըսաւ կոնտրապարն: Կը տեսնես արդէն թէ՛ Նախախնամութիւնը կը հսկէ վրաս, քանի որ զքեզ հոս բերաւ: — Ասկէ զատ, ամենէն առաջ անոնք. աւելցուց նա անձնուրաց բարեմիտ մարդու դիւցազնութեամբ:

— Իրաւունք ունիս, Ռիքարտոյ, կ'երթամ: Ըսաւ Ֆիամէզդան: Կը ջանամ գանոնք ազատել կամ անոնց հետ մեռնիլ:

Ժ.

Թ Ա Կ Ա Ր Դ Ը

Գղեակին պարտէզին մէջ՝ կուսակալը՝ Բարթողիմէոսին հետ ըրած շահատակութենէն յետոյ ետ դարձաւ, և ծիծաղկոտ դէմքով մը հացկերոյթին սրահը մտաւ: Անտարակոյս շատ տարիներէ ի վեր իր շուրջը գտնուողներէն ոչ ոք այնքան զուարթագին տեսած էր զինքը: Վասն զի այս մարդուն երեսը սովորաբար կոփա-



ծոյ մարմարիոնէ ողբերգական դիմակի մը նմանութիւնն ունէր : Բայց այս պահուս իր դաժան դէմքը անուշցած էր, կարծես գոհունակութեան և բարեացակամութեան խաղաղ կերպարանք մը առած էր : — Թեբևս մարդ մը սպաննելուն հետեանքն էր :

Ֆէլիչէ Պատտէր քիչ մը գեղծած կ'երեւար Ֆալեռնոյի զինիով, որ այն ատեն տակաւին անուանի էր, և զոր Որատիոս բանաստեղծը ստէպ կը գովէ իր քերթուածներուն մէջ, տեսնելով Մարդինենկոյին ներս մտնելը՝ մէկէն սեղանէն ելաւ և շիտակ կուսակալին ընդ առաջ գնաց, իւր սրտագին գոհունակութիւնը յայտնելու արդէն քանի մը վայրկեան առաջ աչքովը փնտռած էր զինքը :

— Այս, սիրելի բարեկամ, ըսաւ, իւր երկու բազուկները անոր վզին շուրջն անցընելով, դուք յիշաւի շքեղ հանդէս մը տուիք մեզի : Ո՛րքան երախտագիտութիւն պարտիմ ձեզի և ի՞նչպէս կրնամ փոխարինել ձեր այս ըրած ծառայութեան :

— Գո՛հ էք, հարցուց կուսակալը նա յելով Ֆէլիչէ Պատտէրին երեսն, որպէս զի ապահովնայ թէ միւս բազմականնե-

րուն հաւասար վիճակի մէջ կը գտնուի՞ արդեօք. որոնց զուարթութիւնը Ֆալեռնոյի, Թորբայի և Բալմա-Քրիստիի զինիներուն ջերմացուցիչ զօրութեամբ աղմկալից եղած էր :

— Սքանչելի՛, սիրելի կուսակալս, զմայլելի՛, ըսաւ երիտասարդ պատրիկն, և իւր նոր բարեկամը համբուրելու կէս փափագ մը զգաց որպէս զի իւր երախտագիտութեան հաւաստին ցըցունէ անոր :

— Այն ատեն շատ լաւ, կրկնեց կուսակալը ժպտելով, և իմ նեղութիւններս բաւական իսկ վճարուած կը համարիմ :

— Սակայն գիտէ՞ք, աւելցուց նա, թէ օրիորդ Վենեձիային բացայայտ կամքն է նոյն իսկ այս երեկոյ մեկնիլ հոսկից և Բատուա դառնալ, ազնուական Օրիորդաց վանքը :

— Ինչո՞ւ մեկնիլ, հարցուց բարեմտութեամբ Ֆէլիչէ Պատտէր. հոս լաւագոյն է՞ :

— Սիրելի Ֆէլիչէ, ըսաւ կուսակալը ժպտելով, ձեր ըսածն ինծի համար խիստ թանկագին է, վասն զի անով ամենէն աւելի փաղաքշական և ամենէն աւելի անշահասէր մեծարանքն կ'ընէք ինծի : Սա-



կայն ներեցէք ըսելու թէ դուք չէք կարող առարկութիւն մ'ազամ յարուցանելու փորձն ընել:

— Ինչո՞ւ համար:

— Որովհետեւ. նախ պիտի վշտանաք ձեր նշանածին փափաքները չկատարելուն համար.....

— Անտարակոյս:

— Յետոյ, Օրիորդը Գեղեցիկ կղզւոյն մէջ իրեն համար յարկաբաժին մը պատրաստելուն հակառակ կեցաւ:

— Ա՛, յիրաւի՞

— Վերջապէս, եթէ հարկ է ամէն ինչ ըսել ձեզի, պէտք է որ օրիորդը փութով մեկնի հոսկից. մեր կոչնականները տակաւին կորսնցուցած չեն բոլորովին իրենց գլուխները, սակայն քիչ ատենէն այնպիսի տեսարան մը պիտի պարզեն՝ որուն պէտք չէ որ ձեր նշանածը հանդիսատես ըլլայ:

— Ստոյգ է:

— Իսկ դուք, անոր պիտի չընկերանաք:

— Այո՛, պէտք է. ըսաւ Ֆէլիչէ Պատէր տխուր ձայնով: Մեկնիլ ճիշդ այն պահուն երբ զուարթութիւնք կ'սկսին:

— Է՛հ, դուք մինչեւ Բատուա պիտի

չերթաք, ըսաւ կուսակալը, կրնաք քանի մը ժամէն դառնալ, ապահով եղիք: Չեր նշանածը բացի իր յատուկ ծառաներէն, ունի երկու քոյր մայրապետ, որոնք կ'սպասեն իրեն Բէսքիէրայի պանդոկը, ուր օրիորդը գիշերը պիտի անցնէ: Մինչեւ հոն կը տանիք զինքն և յետոյ կուգաք գիշերը հոս լուսցընելու, ուր մենք, ինչպէս կը տեսնէք, մեր ամուրի երիտասարդութեան կեանքը զուարթութեամբ թաղելու վրայ ենք:

— Հիմայ եղաւ, ըսաւ Ֆէլիչէ, որուն մանկական երեսը լուսաւորեցաւ: Քիչ առաջ տխրեցուցիք զիս:

— Ուրեմն քանի որ ամէն ինչ այսպէս կարգադրեցաւ, թերեւս կ'ուզէք երթալ տեսնել թէ ձեր ծառաներէն որոնք կարող են ձեզի հետ մինչեւ Բէսքիէրա գալ:

— Ո՛հ ինձի հետ մի միայն իմ կոնտոլավարս՝ Ռիքարտոն կ'առնում:

— Իմացուցէք ուրեմն իրեն, կարծեմ վարն է, ըսաւ կուսակալն առանց նոյն իսկ յուզում մը զգալու թշուառին անուշը լսելով, զոր քիչ առաջ զարկած էր: Ես կերթամ իմացունել ձեր նշանածին թէ մեկնելու համար ամէն ինչ պատրաստ է:



Հագիւ թէ Ֆէլիչէ Պատուէր հեռացաւ, կուսակալը գնաց սրահին խորը, դէպի պարտէզին վրայ նայող բաց մնացած պատուհանը: Վենեձիան պատուհանին կամարակապին ներքև ապաւիններ էր, հացկերոյթին անկարգութենէն զզուած, ուր ամէն ինչ տեսակ մը աւարառութեան կը յանգէր և անհնարին խառնակութիւն կը տիրէր: Վենեձիան կը դիտէր տարտամօրէն լուսինն որ կը բարձրանար գեղեցիկ կղզւոյն խիտ անտառին ետեւն, որուն թուխ կանանչութիւնը կը կտրատուէր իբր հսկայ սև ժանեակ մը՝ կապոյտ և աստեղազարդ աննման երկնքին վրայ:

— Օրիորդ, ըսաւ, վերջնականապէս որոշած էք այս երեկոյ գեղեցիկ կղզիէն մեկնիլ:

— Անպատճառ, տէր կոմս, ըսաւ Սրբիականին աղջիկը զգուանքի ակնարկ մը նետելով հացկերոյթի սեղանին, որ հաւոր խառնակութիւն մը կը ներկայացընէր և մոլեգին կոչնականքն տակաւին կը շարունակէին:

— Ո՛հ, լաւ կ'ըմբռնեմ ձեր զգացմունքը, օրիորդ, ըսաւ կուսակալը խոնարհ և զրեթէ աղերսական ձայնով մը: Չեր

երևակայած կենցաղը այս չէ, այլ Վենեկոյ ամբողջ երիտասարդութեան նման՝ ձեր կողակից ըլլալու սահմանուածին վարած կեանքն է: Ոչ, այս կեանքը ձեզի պատշաճ չէ, որ տարւոյն սկիզբէն մինչև վերջը շարունակ բարեկենդան մ'է: Տակաւին ժամանակ կայ ասկից խոյս տալու թէ որ կ'ուզէք, բաւական է բառ մը ըսէք:

Վենեձիան յանկարծ ետին դարձաւ և խստիւ կուսակալին երեսը նայեցաւ: Յետոյ, նշանով մը զինքը հեռացուց, պարզապէս այս խօսքը ըսելով:

— Թողուցէք որ անցնիմ, տէր:

Եւ առանց այլ ևս ուշ դնելու անոր, Ֆէլիչէ Պատուէրին քովը գնաց որ նոյն վայրկենին հացկերոյթին սրահը կը մըտնէր:

— Գնա՛ հիմա, ամբարտաւան աղջիկ, հծծեց կուսակալը, և քու ճակատագիրդ թող կատարուի:

— Չկրցայ գտնել իմ կոնտրավարս Ռիքարտոն, ըսաւ երիտասարդ պատրիկը: Կուսակալն Ֆէլիչէ Պատուէրին ձայնը լրսելով մօտեցաւ անոր աճապարանօք:

— Ներեցէք, ըսաւ, բոլորովին միտ-



քէս եւեր էր : Եկան ինծի իմացունելու թէ Ռիքարտոն Ֆիամէզդային հետ առաջուց մեկնած է, ինչպէս նաև օրիորդին ծառաներէն մի քանին : Դուք զանոնք Բէսքիէրա պիտի գտնէք, ուր անշուշտ ձեր նշանածին համար յարկաբաժին մը կը պատրաստեն զիշերը անցընելու :

— Եստ լաւ, եթէ այսպէս է երթանք, ըսաւ Ֆէլիչէ : Սակայն դուք մեզի չէ՞ք ընկերանար :

— Խիստ կը ցաւիմ որ կարող պիտի չըլլամ, ըսաւ կուսակալը, հոս տանտիրոջ պարտականութիւնն ունիմ կատարելիք :

Այսպէս խօսելով կուսակալը հասած էր բարձրագաւթին վրայ, հոն երիտասարդ պատրիկին ձեռքը սեղմեց վերջինն ողջոյնը տալով :

— Երթաք բարով, ըսաւ, երբ նշանածները սանդուխներէն վար կ'իջնէին :

Ֆէլիչէ ետև դարձաւ աշխուժիւ :

— Ո՛չ երթաք բարով, պատասխանեց երիտասարդ պատրիկը ժպտելով, կը յուսամ թէ ցտեսութիւն կ'ըլլայ :

— Յտեսութիւն ուրեմն, և բարի ճանապարհ, ըսաւ կուսակալը :

Թէ որ Ֆելիչէ Պատոէր բարեսրտութեամբ խնդացած չըլլար, անշուշտ պիտի նշմարէր Մարդինենկոյի տարօրինակ կերպով շեշտելն այս վերջին խօսքերը : Սակայն բարեմիտ Ֆէլիչէն միտքէն անգամ չէր անցներ իւր բարեկամ կուսակալին վրայ կասկածիլը :

Վենեճիան իւր բոլորտիրը ակնարկ մը նետելով, բոլորովին անձանօթ դէմքեր տեսաւ :

— Ինչո՞ւ համար, ըսաւ մերիններէն ոչ որ ունինք մեզի ընկերացող :

— Չի լսեցի՞ք կուսակալին ըսածը, պատասխանեց Ֆէլիչէ, նա իմացուց թէ Ռիքարտոն և Ֆիամէզդան մեզմէ առաջ մեկնած են, և զիրենք պիտի գտնենք Բէսքիէրա :

— Գէթ ինծի տարօրինակ կ'երևի թէ ինչպէ՞ս Ֆիամէզդան առանց իմ հաճուածութիւնս առնելու մեկնեք է. առանց նոյն իսկ իմաց մը տալու : Ասիկա ինծի բնական չերևիր, կը կնեց վենեճիան :

— Ասոր համար անհանգիստ պիտի ըլլաք :

— Ոչ թէ անհանգիստ, այլ քիչ մը սրտնեղած : Չեմ ախորժիր որ այսպէս համարձակ վարուին ինծի հետ :



— Այն խեղճ Թրամէդդան ձեզի խիստ անձնուէր է. գուցէ կարծեր է այնու հաճելի գործ մը ընել:

— Այո՛, իրաւունք ունիք, վրաս մեծ գուրգուրանք ունի, այս երեկոյ չար եղեր եմ: Սակայն այն անվերջանալի հացկերոյթը զիս չափազանց ջղագրգիռ ըրաւ:

— Թերեւս կը խորհիք, օրիորդ, թէ մենք բաւականաչափ զգաստ չեղանք, հարցուց երկչոտութեամբ երիտասարդը:

— Ասոր վրայ վերջը, կը խօսինք ըսաւ, Աղբիականին աղջիկը և իւր թաթիկը Թէլիչէին թևին վրայ դրաւ անոր ուշադրութիւնը իր վրայ դարձունելու համար:

Հասան փոքր ծավախորշն, ուր կ'սպասէր խօսեցեալները Բէսքիէրա տանող նաւակը: Կուսակալին կոնտրաւարները նաւակին մէջ իջած էին, և Թէլիչէ Պատտէր ու Վենեճիան՝ նաւամատոյցին վրայ կ'սպասէին նաւակին պատրաստուելուն, որուն ուշանալը կոնտրաւարներուն զայրոյթ կը պատճառէր: Այնպէս որ անոնցմէ մէկը յանկարծ վենետկոյ ռամկին բերանը եզրած հնչիւն յիշոցներէն մին դուրս տուաւ, որով Ողիմպոսի բոլոր աստուածներուն

կոչում կ'ըլլայ, մանաւանդ Բարոսին, կոնտրաւարներուն սիրական պաշտպանին:

— Ինչ կայ, խենթուկ, հարցուց Թէլիչէ, խիստ շեշտով մը:

— Ներողութիւն, Վսեմաշուք Տէր, ըսաւ կոնտրաւարն, թիերս գողցեր են:

— Մանաւանդ խոստովանէ, թէ անհոգ գտնուեր էք նաւակին կարևորները պատրաստելու:

— Կրկին ձեր ներողամտութիւնը կը խնդրեմ, Վսեմաշուք Տէր, կ'սպասույցընեմ զձեզ թէ թիերս ես իմ ձեռքովս կապած էի շղթայով հոս նաւակին եզերքը:

— Լաւ լաւ: Արդեօք բաւական հով չի կայ որ կարենանք առագաստով նաւարկել:

— Անշուշտ ոչ, Վսեմ. Տէր, ասկէ զատ հովը հակառակ պիտի ըլլայ, և պիտի հարկադրուինք շատ մը շրջաններ ընել, որով նաւարկութիւնը պիտի երկարի և տաղտուկ պիտի պատճառէ օրիորդին:

— Եթէ այնպէս է, շուտով վազեցէք դղեակը, ուրիշ զոյգ մը թի գտէք: Օրիորդն և ես հոս կ'սպասենք:

Կոնտրաւարն կրկնել չի տուաւ. ցամաք ցատկեց և իւր ընկերոջը հետ վա-



զելով զնաց: Իսկ խօսեցեալները նստեցան ծեր կաղնիի մը տակ, որուն դարաւոր բունին շուրջը բոլորածև նստարան մը շինուած էր: Վենեճիան հինաւուրց ծառին կռթընեցաւ, գլուխը կուրծքին վըրայ խոնարհեց թևերը վար կախած. այնպիսի մեղամաղձոտ խոկման մը մէջ թաղուեցաւ, որ երիտասարդ պատրիկը չի համարձակեցաւ անոր արգելքը ըլլալու: Իսկ ինքը կը ջանար իւր անգործութեան մէջ զբաղանք մը գտնել, աչքերն անթարթ դիմացը ուղղած՝ կ'աշխատէր զանազանել երկնքին կապոյտին և լճին կաթնագոյն սպիտակին մէջ՝ տկար և աննշմարելի զիծ մը, որ Լոմպարտիոյ երկիրը պիտի ըլլար: Նոյն վարկենին իր մօտ լսելով տկար հառաչանքի մը ձայնը, սթափեցաւ, և ետին դառնալով տեսաւ Վենեճիան արցունքներու մէջ:

— Ինչ ունիք, ըսաւ անոր, դուք կ'արտասուէք: Ինչո՞ւ կ'արտասուէք, օրիորդ:

— Կ'արտասուեմ, ըսաւ Ալբրիականին աղջիկը, Վենետիոյ վրայ, իմ սիրելի և ականաւոր տիրոջս, որուն օտարախորթ զաւակներն զինքը անդունդները կ'առաջնորդեն:

— Ո՞վ ըսաւ ձեզ ասիկա, սիրելի օրիորդ:

— Ո՞ւր է այն հայրենասիրութիւնն ազնուական Վենետիկեաց, որոնք հինգ դար Վենետիկը աշխարհի առաջին կայսրութիւնը ըրին: Ներկայիս Արևելքէն եկած թուլամորթ բարքերն՝ բոլոր այն հին ազնուականութիւնը ջլատեցին, որոնց նախնիքը Վենետիոյ հասարակապետութիւնը այնքան զօրաւոր և այնքան ահարկու ըրած էին: Ա՛խ, պարոն Ֆէլիչէ, այն տեսարանն՝ որուն ներկայ գտնուեցայ ակամայ քանի մը օրէ ի վեր, կարի ցաւալի է ճշմարիտ Վենետիկցիի մը սրտին:

— Ինչո՞ւ համար, օրիորդ, հարցուց երիտասարդը, բան մը ըսած ըլլալու համար:

Վենեճիան աւելի ոգևորուած, կրկնեց.

— Երբ միտքս կը բերեմ Մորոզինիները, Պէմպոնները, Զոճճիները, Գոռնարոնները, Պարոճճիները, — պէ՛տք է յաւելուլ Պատոէրները — և բոլոր այս նշանաւոր անձանց սերունդներն, որոնք հինգ դար Վենետիոյ անունը այնքան բարձրացուցին: Եւ երբ կը տեսնեմ նոյն ա՛նոնց սերունդներն որոնք ներկայիս ուրիշ



մտածմունք չունին բայց միայն իրենց զգեստուց համար ամենէն ազնիւ կերպասներ ընտրել, իրենց սեղաններուն համար ամենէն փափկաճաշակ կերակուրներն և ամենաընտիր գինիները, իմ հայրենեացս նկատմամբ վրաս յուսահատութիւն կը տիրէ:

— Ո՛հ օրիորդ, ըսաւ Ֆելիչէ, որ կը սկսէր զգալ իւր երակներուն մէջ իր հարց արեան եռալն, արդեօք ձեր հայրենասիրութեան վերջին խօսքն է, նզովք մը՝ հայրենեաց երեսը նետուած:

— Ափսո՛ս. կրկնեց վենեճիան, Պերձապայծառ Հասարակապետութեան անկումը թերևս այնքան մօտալուտ չըլլայ, սակայն անվրիպելի է, հաւատացէք ըսածիս. եթէ վենետիկեան ազնուականութիւնը առնացի որոշողութեամբ մը վերջապէս չարթըննայ իւր վատթար թմրութենէն, որուն մէջ ընկղմած կը տեսնեմ զինքը:

Ֆելիչէ, ո՛րչափ ալ իւր ժամանակին բարքերով վատթարացած էր, բայց այս դառն կշտամբանքը իւր սրտին մինչև խորը թափանցեց, մանաւանդ հազիւ վանքէն ելած մանկամարդ աղջկան մը բերնէն լսելով: Հազար տեսակ հակառակ զգացմունքներ

կը մաքառէին մտքին մէջ: Տակաւին շատ երիտասարդ էր ինքն, և կ'զգար թէ վենեճիային խօսքերն իր ազնուական սրտին մեծապէս կ'ազդէին: Սակայն չուզեց տեղի տալ, առանց գէթ առ երեսս պաշտպանելու իւր սկզբունքները և դիւրակեաց բարքն, որոնց մէջ մինչև այն ատեն քրնացած էր իր անզգայ երիտասարդութիւնը:

— Օրիորդ, ըսաւ վերջապէս, շատ խիստ էք հանդէպ ապրելու եղանակի մը, որ սակայն երկարատե քաղաքակրթութեան մը հետեանքն է:

— Քաղաքակրթութեան, կրկնեց մանկամարդ աղջիկը ճշմարիտ կորովի շեշտով մը, քաղաքակրթութեան գործն է բարքերը ազնուացնել և ոչ թէ զանոնք ապականել:

— Ո՛հ օրիորդ...

— Զանոնք ջլատել, եթէ կամիր: Կրնա՞ք ըսել թէ դուք կտրիճ ժողովուրդ մ'էք, դուք որ վարձկանաց կը յանձնէք ձեր զօրաբանակներուն հրամանատարութիւնը:

Քաղաքակրթութիւն՝ կրսէիք քիչ առաջ այո՛ պարտի նա ձեռք կարկառել, նեցուկ ըլլալ, օգնել տկարներուն, խեղճերուն և



փորձրկանց, սակայն պարտի նաև խրա-  
խուսել մեծերն իրենց պարտուպատշաճ  
պատուոյն մէջ մնալու, անոնց ներշնչել  
այն խանդն, այն մոլեռանդութիւնը, եթէ  
ներելի է ըսել, որով իրենց կեանքը նուի-  
րեն Պետութեան ծառայութեան, փոխա-  
նակ զայն կողոպտելու անպատիւ հաճոյք-  
ներով: Այս, թէ որ էրիկ մարդ ըլլայի...

— Ինչ կ'ընէիք այն ատեն, օրիորդ:

— Թէպէտ վենետիոյ մէջ սովորու-  
թիւն չըլլայ, սուրբ մէջքս կը կապէի,  
գոնդեր կը հանէի երթալու Հասարակա-  
պետութիւնը պաշտպանելու ամէն տեղ ուր  
որ պէտք ըլլար. Մօրէայի մէջ՝ որուն  
թուրքը աչք տնկած է, կրեաէի մէջ՝ զոր  
կ'ուզէ իւրացընել, Միլանու գաւառին մէջ՝  
ուր Ֆրանչեսքոյ Ֆոսքարիի տիրած եր-  
կիրները վտանգի մէջն են: — Սակայն  
կնիկ մարդ մ'եմ, աւելցուց վենետիան  
վհատութեամբ:

Ֆելիչէ Պատոէր այլայլած սրտիւ մտիկ  
կ'ընէր Ադրիականի աղջկան ըսածները:  
Յանկարծ իւր աչքերը փայլեցան, իւր  
նշանածին ձեռքը բռնեց.

— Կնիկ մարդ, գոչեց նա, ըստ ձեր  
կարծեաց կնիկ մարդ մ'էք: Ըսէք մանա-

ւանդ թէ դուք ներշնչումն, հաւատքն, ե-  
ռանդն էք, և ինչ որ ազնուական, ինչ որ  
մեծ է: Ո՞վ իմ սիրելի վենետիա, ձեր  
շնորհիւ ինչպիսի՞ նոր մարդ մը պիտի ըլ-  
լամ: Ձեր խօսքերը հոն հրավառ նետով  
գրուած են, իբր աստուածային հոգիով՝ որ  
հրեղէն լեզուներով կ'իջնէր առաքելոց  
վրայ: Դուք յղացող գլուխն պիտի ըլլաք  
և ես գործօն բազուկը: Եզերիա խորհրդ-  
դանշան մ'է. ինչո՞ւ պիտի չըլլաք Եզե-  
րիա մը նոր Նուամ Պոմպիլիոսի մը, վե-  
րանորոգուած այս խեղճ Ֆելիչէ Պատոէ-  
րի համար:

— Այս դերը կատարելու փորձութիւնը  
պիտի ունենամ, ըսաւ վենետիան ժպտե-  
լով:

— Ստանձնեցէք զայն ուրեմն, սիրա-  
կանս և անոր փոխարէն ձեր սրտէն մաս  
մը տուէք ինծի:

— Չայն ամբողջովին ձեզի, Ֆելիչէ,  
ըսաւ վենետիան յափշտակութեամբ մը,  
թէ որ ձեր խոստման համեմատ ըլլաք  
ստուգիւ այն մարդն:

Այս վայրկենին կուսակալին կոնտուա-  
վարները դարձան, իւրաքանչիւրն իր ու-  
սին վրայ թի մը շալկած: Երկուքն ալ



աշխուժիւ ցատկեցին նաւակին մէջ, և դրին զայն իրեն լայնութեան դիրքով, որպէս զի խօսեցեալները կարենան ներս մտնել:

Հազիւ թէ նստեցան Զմիւռնիոյ գեղեցիկ գորգին վրայ, որ նաւակին ամբողջ ետևի կողմը կը ծածկէր, թիերը իրենց տեղերը հաստատուեցան և նաւակը սկսաւ արագ և թեթևակի սուրալ, իւր լուսաւոր հետքը ձգելով խաղաղ լճին վրայ, որ լուսնոյ ճառագայթներուն ցոլացմամբ՝ պողպատէ հայելիի մը նման անշարժ և փայլուն կ'երևէին:

Փէլիչէ Պատոէրին բնութեան կարծես չէր պատշաճէր երկարատև յուզմունքներ: Արդ հակառակ իւր նշանածին հետ ունեցած լուրջ խօսակցութեան, փութով իւր զուարթաբանութիւնը ձեռք առաւ, և ցուցընելով Վենեճիային՝ Պետրոսն, իր թիւ վարելու տեղւոյն վրայ, որուն անկիւնային դիմագիծն երբեմն երբեմն կը տեսնուէր, թէպէտ ձկնորսի կնգուղը, երեսին մի մասը գոցած էր, ըսաւ Փէլիչէ:

— Ո՛րչափ տգեղ է այս մարդը:

— Խեղճ մարդ, ըսաւ Վենեճիան արգահատանօք, անշուշտ իւր կեանքն իրեն

նման շատերուն պէս յարատև տանջանք մ'է:

— Բայց մեկալը, շարունակեց Փէլիչէ, ցուցնելով երկրորդ թիւ վարն, կարծեմ թէ իւր հասարակ դէմքը բոլորովին ինձի անձանօթ չէ:

Երկրորդ թիւ վարն այս խօսքերն լսելով, իսկոյն իւր կնգուղը մինչև աչքերը իջեցուց:

— Է՛, բարեկամ, ըսաւ Փէլիչէ, չ'ըլլայ թէ դու Բարթողիմէոս յիսնապետն ըլլաս:

— Ո՛չ, տէր, պատասխանեց կոնտուավարն, յիսնապետ Բարթողիմէոսն իմ եղբայրս է:

— Հա՛, Բարթողիմէոս քու եղբայրդ է, և սակայն դու անկէ աւելի տգեղ ես:

Այնպէս չէ՞, օրիորդ:

— Հանգիստ ձգեցէք այս խեղճ մարդը, պատասխանեց Վենեճիան, և ինձի հետ զիտեցէք սա հրաշալի տեսարանը:

Այսպէս խօսելով Ադրիականին աղջիկն՝ իր ձեռքը ալիքներուն վրայ դրած, աչքերն երկնից կապոյտը ծակծրկող հազաբաւոր աստեղաց մէջ կը թափառէին:

Գեղեցիկ կղզիէն մինչև ցամաք երկիր



եղած ճամբուն կէսը կտրած էին : Լճին մէջ տեղը լքուած նաւակ մը կը տեսնուէր, վրան ո՛չ առագաստ կար և ոչ մարդ : Սակայն աւելի ուշադրութեամբ դիտելով, տարակոյս չէր վերցընէր՝ թէ նոյն տեղւոյն վրայ խարսխի մը կապուած էր . վասն զի քանի մը վայրկենէ ի վեր սկըսած հովը զայն յուշիկ յուշիկ կ'օրորէր առանց տեղէն քշելու :

— Նաւակ մը լճին մէջ տեղը խարսխին կապած, գոչեց Փէլիչէ Պատոէր, ի՞նչ կրնայ ըլլալ ասիկա :

— Ճշմարիտը, բան մը չեմ գիտեր . կ'ապահովցնեմ զքեզ, տէր, ըսաւ նաւավարներէն մին որ ինքզինքը յիսնապետ Բարթողիմէոսին եղբայրը կը կարծեցընէր, յիրաւի ես ալ ձեզի հաւասար հետաքրքիր եմ զայն հասկընալու :

Թիու մի քանի ուժգին հարուած տալով, երկու նաւակները իրարու մօտեցան և քով քովի կեցան : Այս վայրկենին Փէլիչէ Պատոէր գլխոյ պտոյտ մը զգաց . կը թուէր իրեն թէ իրենց նստած նաւակն՝ հտեի կողմէն ջրոյ մէջ կը սուզի :

Երբ տեսաւ թէ զգացածն երազ չէր, այլ ահաւոր իրականութիւն, երիտասար-

դին առաջին մտածմունքը վենեճիան եղաւ, որուն վրայ տագնապալի ակնարկ մը նետեց : Արդէն իւեղճ աղջկան մարմնոյն կէսէն աւելին ջրոյ մէջ ընկղմած էր : Փէլիչէ իր թևերուն մէջ առաւ զինքը և ջանաց փրկել . բայց շարժմունք մը չ'ըրած, զգաց թէ իր թանկագին բեռան հետ խորը կիջնէ, և նաւակը ջրոյն վրայ ըրած յորձանքին մէջը կը բաշէ զիրենք երկուքն ալ :

Իսկ նաւավարներն, այս պատահարին ատեն իրենց թիավարելու տեղւոյն վրայ կեցած էին, և ընկղմող նաւակը բոլորովին անյայտ չ'եղած՝ մօտիկ նաւակին վրայ ցատկեցին, հոնկից պաղ արեամբ հանդիսատես, եղան տխուր արկածին :

Այս ցաւագին տեսարանը հինգ երկվայրկեանէն աւելի չի տևեց :

Երկու նաւավարները, բոլորովին անկարեկիր և առանց իրարու բռն մը փոխանակելու, անդունդին վրայ ծոած տագնապեալ աչքով տեղւոյն վրայ խորութիւնը կը չափէին, ուր նաւաբեկութենէ յառաջ եկած պտոյտը կը տատանէր տակաւին ջուրին երեսը :

Երբ ապահովցան թէ ոչ նաւակն և ոչ



անոր հետ ընկղմած դժբախտ երիտասարդներն այլ ևս ջրին երեսը չէին երևնար, երկու մարդիկը թիերը կրկին շտկեցին և սկսան թիավարել իրենց ամբողջ ուժովն՝ դէպի գեղեցիկ կղզին:

Երբ հասան արկածին տեղէն այնպիսի հեռաւորութեան մը, զոր լողալով անցնեն՝ ամենէն կտրիճ լողացողի մը համար անկարելի էր, յանկարծ դադրեցուցին թիավարելն:

Այն ատեն իրենցմէ մին նաւակին արկղիկին մէջ ծածկուած գողի լապտերն և ջահ մը դուրս հանեց: Չահը վառելէն յետոյ, զայն երեք անգամ ցնցեց, սակայն այնքան ուժով որ հալած ուժինի հետ դուրս ցատկած կայծերն իսկոյն հրդեհեցին նաւակին կազմածները:

Վայրկենի մէջ կարտայի լճին ամբողջ այն մասը լուսաւորեցաւ հրդեհի մը տըժգոյն լուսով:



ԺԱ.

Ն Ե Ն Գ Ա Ի ՈՐ . . . .

Ֆիորէնձայի բնակիչներն, որ կը պաշտէին Գոզմի Մէտիչին, օր մը սակայն անգթօրէն ապերախտ գտնուեցան իրենց բարերարին դէմ, որուն՝ երախտագիտական խանդավառութեան մը միջոցին՝ «Հայր Հայրենեաց» շքեղ մակդիրը տուած էին:

Գոզմի Մէտիչի՝ որ արտակարգ եղանակաւ մը հայրենեաց բարգաւաճելուն պատճառ եղած էր՝ Արևելքի հետ վաճառականական յարաբերութիւն հաստատելովն, իր քաղաքակիցներէն արտուեցաւ, որոնք գաղտագողի ձեռքերէ խաբուելով՝ մղուեցան այն ատելի խեցեկոյտ վճռին:

Առանց գանգատանքի, առանց զուրիշները ամբաստանելու, մեծ քաղաքացին քաշուեցաւ վէնետիկ, իրեն հետ բերելով զիտնականներ, արուեստագէտներ, մատենագիրներ, որոնք իր արքունիքը կը կազմէին: Շատ չանցած՝ Ֆիորէնձացիք ճանչցան իրենց գործած սխալմունքը, և



աղաչելով ետ կանչեցին Գոգմի Մէտիչին. և հոչակաւոր հայրենասէրն վերադարձաւ իւր սիրելի Ֆիորէնձան, գրեթէ տարի մը արսորուած ըլլալով նախանձորդ և խարդախ բազմութենէ մը:

Բոլոր այն նշանաւոր անձինք, որոնք ընկերացած էին Գոգմի Մէտիչիին և անոր արսորանքին պատուակալ ընկերներ եղած էին, իրեն հետ հայրենիք վերադարձան:

Ասոնցմէ ոմանք թէպէտ մնացին Վենետիկ, բայց կանխենք ըսել թէ ասոնք ոչ նշանաւոր և ոչ ալ պատուաւոր անձինք էին: Մեծաւ մասամբ սուտ գիտնականք, շատ իսկ ծանօթք ամենուն, որով չէին կարող Գոգմի Մէտիչիին շուրջը եղող գիտնականաց կաճառին մէջ դիրք մը գրաւել: Անշուշտ կը յուսային տարբեր թատերաբեմին վրայ յաջողի՛լ՝ շլացնելու իրենց հայրենակիցներէն նուազ լուսաւորուած և նուազ նրբաճաշակ ունկնդիրները:

Այսու հանդերձ պէտք է խոստովանիլ թէ նոյն իսկ Ֆիորէնձայի մէջ, Գոգմի Մէտիչիէն օգնութիւն և պաշտպանութիւն գտնողներուն մէջ կային բազմաթիւ անձինք, որոնց քով գիտնականն և շաղա-

կրասն իրարու հետ միացած էին, ժամանակին գիտութիւնը գրեթէ միշտ հրաշալիքներուն հետ մի մարմին կը կազմէր: Ասկից ծագեցան այն սուտ գիտութիւններն որոնք բազում դարեր խաբեցին ամբողջ Եւրոպան, և կը կոչուէին աստեղագիտութիւն, քիմիագործութիւն, մոզութիւն և ուրիշներ:

Այս խաբերաներէն մին, մնացած էր Վենետիկի Պետութեան մէջ, իբր յիշատակ մը Գոգմի Մէտիչիին՝ Պերճափայլ Հասարակապետութեան տուած բոնադատ երկար ժամանակեայ այցելութեան: Օր մը ասիկա ներկայացաւ Մարդինենկոյի՝ Բատուայի կուսակալին.

— Վսեմաշուք տէր, ըսաւ անոր, կուզամ ձեզի կարևոր ծառայութիւն մը մատուցանելու:

— Եւ ո՞րն է այն, հարցուց անփութօրէն կուսակալը:

— Ասոնց փնտռելու, գտայ ո՞ր աստեղտակ ծնած ըլլա՞նիդ, և իմացայ թէ փառաւոր ճակատագիրներ ձեզ պահուած են:

— Ահ, և որոնք են:

— Վսեմաշուք տէր, Վենետիկ գտնուելէս ի վեր զիշեր մը անցուցած չեմ ա-



ուանց աստղերը քննելու, որպէս զի իմանամ, իրենց գաղտնիքն որ այս մեծ ժողովրդեանն ապագային պահած են. և որոշակի կարգացի թէ հայրենեաց բաղբը քիչ ատենէն պիտի յանձնուի իր ազնուագոյն գաւակններէն միոյն ձեռքը, ծնած Առիւծ համաստեղութեան տակ, Արեւուն փայլածուն հետ ունեցած լծակցութեան վայրկենին: Այս զաւակը դուք էք, տէր:

Թէպէտ աստեղագիտութեան յաջող ժամանակը չէր տակաւին՝ և դար մը յետոյ հասաւ իր գագաթնակէտին, սակայն զօրութեանց, բաղբերու, կախարչութեանց, մոգութեան, զիւահարցութեանց հաւտալը քիչ շատ տարածուած էր այն ատեն ի տալիոյ մէջ: Կուսակալը արտակարգ հաստատուն ոգի մը ունէր, սակայն հայրենեաց փոփոխութիւնը կ'երեւակայէր. և քիչ շատ իր ժամանակին նախապաշարմունքներով լեցուած, Ֆիրքէնձացիին ըրած մարգարէութեանը հանդէպ անզգայ չի մընաց, որ կ'իրականացնէր իր ամենէն ցանկալի և ամենէն գաղտնի յոյսերը:

Փառամու Մարդինենկոյ լսելով անոր բերնէն այս «Մարպէթ», դու թագաւոր պիտի ըլլաս» բառերը, սիրտը ճխաց, աչ-

քերը կը փայլատակէին, ամբարտաւան գլուխը իր երեւակայած դրսեական խոյրին ներքե՛ վեր կը բարձրանար: Աչքին զմացը կուգար Հսկայից սանդուխէն վեր ելլելով ամբողջ ժողովրդենէ իբր տոժ ողջունուիլն երբ յանկարծ մտքէն տարակոյս մը անցաւ՝ իբր թունաւոր սլաք մը:

Կուսակալը լաւ տեղեակ էր իր հայրենեաց վարչութեան և անոր բռնած ծամածուռ ճամբաներուն. և աղէկ զիտէր թէ ինքն ամենուն ատելի և անվստահանալի մէկն է, որով այս գուշակութիւնն աւելի ծանր մտատանջութեան մէջ ձգեց զինքը, կը մտածէր ինքնիրեն.

— Չըլլայ թէ այս աստեղագէտն զընուած ըլլայ Երից ժողովրէն. չըլլայ թէ այս Ֆիրքէնձացին Պետութեան խուզարկուներուն լրտեսն ըլլայ:

Այս բանս կարելի էր:

Ուստի զգուշաւոր զիրք մը առնելով իր խօսողին դէմ, Ֆիրքէնձացիին ճարտարախօսութիւնը կարճ կտրեց յայտարարելով թէ երբէք հաւատք չընծայեր իրեն բարբանջանքներուն և աստեղագիտութիւնը իրեն գաղտնեաց տեղեակ չի կրնար ըլլալ:

— Թէ որ ինձի ընծայելու ուրիշ բան



չունիք, ըսաւ անոր վերջապէս, կրնաք  
դուրս ելլել:

Ֆիորէնձացին առանց զգածուելու, յայտ-  
նեց թէ ամենէն նուրբ թոյնը շինելու ա-  
րուեստին վարպետն է:

— Լաւ լաւ, ըսաւ կուսակալն ծաղ-  
րածու շեշտով մը. սակայն դժբաղտարար  
թունաւորելու մէկը չունիմ: Ա՛յս է ձեր  
ամբողջ պաշարը:

— Ձեր վսեմութիւնն այս ամենը բա-  
ւական չի համարիր: Թերեւս Ձեր վսե-  
մութիւնն իրաւունք ունի, վասն զի կա-  
րող եմ իրեն սորվեցնել պատերազմական  
ահաւոր մեքենաներու շինութիւնն, գտած  
եմ նաև յունական կրակին բազազրու-  
թիւնը, որուն գաղտնիքը Կոստանդին Պէր-  
փերուփէն ծածուկ պահեց, և այս գաղտ-  
նիքը իրեն հետ թաղուեցաւ:

— Հա՛, հա՛, ի՞նչպէս ուրեմն կրցաք դուք  
գտնել այս գաղտնիքը. հարցուց կուսա-  
կալը միշտ ծաղրածութեամբ:

— Վսեմաշուք տէր, գտայ զայն կըրկ-  
նագիր մագաղաթի մը վրայ, որուն նախ-  
նի զիբերն կրցայ դուրս հանել իմ գտած  
քիմեական բազազրութեամբ:

Քիչ մնաց որ Մարդինենկոն պիտի

բունէր Ֆիորէնձացիին օձիքէն և դունէն  
դուրս նետէր, որպէս զի սորվեցնէ թէ  
կուսակալ մը ծաղրելն անպատիժ չի մնար:  
Սակայն աւելի ուշադրութեամբ քննելով  
աստեղագէտը, Մարդինենկոյին առաջին  
կասկածները փարատեցան, և ամբողջո-  
վին իր միտքը փոխեց: Մտածեց թէ այս  
մարդը կրնար իրեն օգտակար ըլլալ, և  
փոխանակ զինքը վունտելու՝ տարաւ մէկ  
առանձնոցի մը մէջ, ուր իր մարդիկնե-  
րէն անոնք միայն կը մտնէին, որոնց գաղտ-  
նի հրահանգներ կուտար, հոն երկար  
ատեն անոր հետ խօսակցութեամբ զբա-  
ղեցաւ:

Այն օրէն սկսեալ Ֆիորէնձացին կու-  
սակալին մտերիմն եղաւ. բայց Բատուա-  
յի մէջ երկար ատեն չի մնաց. Մարդի-  
նենկոյի հրամանաւ գեղեցիկ կղզւոյն մէջ  
հաստատուեցաւ, և զղեակին թևերէն միոյն  
ամենէն բարձր յարկաբաժնին մէջ՝ որ կը  
կոչուէր Արևելեան աշտարակ, գետեղեց  
իւր քիմիական աշխատանոցը:

Արդ խօսեցելոց տրուած հացկերոյթին  
իրիկունը, երբ Մարդինենկոյ՝ Ֆէլիչէ Պա-  
տտէրին և Ազրիականին աղջկան բարի ճա-  
նապարհ մազթելով անոնցմէ բաժնուե-



ցաւ, աճապարեց Արեւելեան աշտարակը՝  
քիմիագործին աշխատանոցը ելաւ:

Ֆիորէնձացին արմուկովն պատուհանի  
մը կոթընած էր, ուսկից լճին ամբողջ  
հարաւային մասը կը տեսնուէր, այսինքն  
այն մասը՝ ուր խօսեցեալները պիտի նա-  
ւարկէին դէպի Բէսքիէրա:

— Ի՞նչ կ'ընես հող, հարցուց կուսա-  
կալը:

Ֆիորէնձացին քթին տակէն սկսաւ խըն-  
դալ և իր մօրուքը շոյելով պատասխա-  
նեց:

— Հա՛, հա՛, կ'ուզեմ իմ պատրաս-  
տած փոքր հրդեհին հանդիսատես ըլլալ:

Կուսակալը բոլորովին գոյնը նետեց, և  
մօտենալով Ֆիորէնձացիին՝ պիշ պիշ ե-  
րեսը նայեցաւ:

— Ապահո՞վ ես գէթ յաջողելուն վրայ,  
հարցուց անոր:

— Կը տարակուսի՞ք, պատասխանեց  
Ֆիորէնձացին: Կեցէ՛ք ինձի հետ ժամ մը  
հոս, այս պատուհանին դիմացը, պիտի  
տեսնէք երկրորդ նաւակն՝ որ հիմայ լճին  
մէջ տեղը երկաթ նետած խաղաղ կը կե-  
նայ, և որուն մէջ պիտի մտնեն քիչ ա-  
տենէն Բարթողիմէոսը և նոր կոնտուլա-

վարն, առաջին նաւակէն քիչ յետոյ նա  
ալ պիտի ընկղմի:

— Ի՞նչ կերպով:

— Ա՛խ, ներեցէ՛ք, վսեմաշուք տէր,  
այս բանս իմ գաղտնիքս է:

— Կը գնեմ քեզմէ զայն:

— Շատ աղէկ, ձրիաբար կուտամ քե-  
զի: Ինչպէս որ համաձայնած էինք, հրա-  
մայեցիր Բարթողիմէոսին թէ՛ երբ խօսե-  
ցեալները տանող նաւակը ընկղմի, երկրորդ  
նաւակին վրայ ջահ մը վառուի՝ իբր նը-  
շան ձեր հրամանները զորձադրուելուն:

— Այո՛, նոյն իսկ պատուիրեցի իրեն  
շարժել այս ջահը երեք անգամ տարբեր  
եղանակաւ:

— Արդ, ուրեմն ապահով եղէք թէ այս  
պատուէրը չի լրացած նաւակը կրակ ա-  
ռած պիտի ըլլայ, վասն զի նաւակին  
կազմածները ծծումբի և փոսփորի նման  
ղիւրավառ նիւթերով ձեփուած են:

— Եւ դու ապահո՞վ ես...

— Թէ ժամէ մը պիտի ազատիք այն  
տաղտկալի Բարթողիմէոսէն, որ շատ բան  
գիտէ: Այո՛, տէր:

Կուսակալը ընդունները ժողվեց:

— Դուք ձեր չափէն դուրս կ'ելլէք,  
ըսաւ անոր:



— Ներեցէք, վսեմաշուք տէր, իմ  
գաղտնիքս անկեղծօրէն ըսելուս վրայ. Ը-  
սաւ Ֆիորէնձացին և դարձաւ արմկով  
կրկին կոթնեցաւ պատուհանին:

— Շատ աղէկ: Բաւական է, կրկնեց  
կուսակալը տիրաբար:

Բայց այնքան մտազբաղմանց մէջ ըն-  
կըզմած էր, որ ինքն ալ եկաւ Ֆիորէն-  
ձացիին քով պատուհանին կոթնեցաւ:

Մարզինենկոյ բոլորովին գոյնը նետած,  
քրտինքի խոշոր կաթիլներ իր ճակտին  
վրայ կը փալիլէին. աչքերը դատար-  
կութեան մէջ թափառական՝ կարծես դի-  
մացը հեռաւոր մտացածին տեսարան մը  
կը դիտէր: Կ'երեւակայէր լճին վրայ ա-  
ղիտալի արկած մը, և իրեն այնպիսի ա-  
հաւոր ներքին յուզմունք կը պատճառէր,  
որ երեսին դիմազիծերը բոլորովին այլա-  
կերպած էին. մինչդեռ լճին երեսը խոտ-  
վող օդոյ շարժում մը իսկ չկար:

Յանկարծ կուսակալն ոտքի ելաւ և գո-  
չեց.

— Ո՛չ, ոչ, չափազանց քստմենելի է  
այսօրինակ անոր մեռնելուն ականատես  
ըլլալը:

— Ի՞նչ ունեցաք հիմայ, տէր, հարցուց  
Ֆիորէնձացին:

Մարզինենկոյ անոր թեւէն բռնեց և ցու-  
ցընելով հեռաւոր հանդարտ լիճն, որուն  
մակերեսը լուսնոյ ճառագայթներուն ներ-  
քև արծաթի նման կը փայլէին.

— Չե՞ս տեսներ, ըսաւ, հոն կին մը  
որ զգեստներով ջրին յատակը կը սահի:  
Ո՛չ, ոչ, չեմ ուզեր: Ճամանակին պիտի  
հասնիմ զինքն այս ահաւոր մահուրնէ ա-  
զատելու:

— Ի՞նչ, տէր, կրկնեց Ֆիորէնձացին  
ապշած, կ'ուզէք դուք...

— Ո՛ւր կապուած է այն նաւակն, զոր  
քու անձնական գործածութեան համար  
տուած էի քեզ. հարցուց իշխանաբար կու-  
սակալը:

— Այս ծառուղւոյն ծայրն, կղզւոյն  
արևմտեան կողմը, Արևելեան աշտարա-  
կին դիմաց, պատասխանեց աստեղագէտն:

— Լաւ, կ'երթամ:

Այս խօսքերն ըսելով, կուսակալն վե-  
րարկուն թևին վրայ ծալլեց, որպէս զի  
իր քայլերուն արգելք չըլլայ:

Ֆիորէնձացին ոտքի ելլելով կը պատ-  
րաստուէր ընկերանալու իր տիրոջը:

— Չեմ ուզեր որ ինձի հետ գաս, Ը-  
սաւ կուսակալը կտրուկ շեշտով մը: Հոս  
կեցիր և սպասէ հրամաններուս:



Վայրկեան մը յետոյ Ֆիորէնձացիին կը տեսնէր իւր տէրն որ ուրուականի մը նըման ծառուղւոյն ծառերուն ներքեւէն կը սուրար:

Մենք դառնանք Ֆէլիչէ Պատտէրին և Ազրիականին աղջկան, որոնք բացուած յորձանքին մէջէն իրենց նստած նաւակին հետ ջրին յատակը իջան:

Ֆէլիչէ՛ իր նշանածը պինդ գրկած, գիրենք ջրին յատակը իջեցնող շարժման դէմ սկզբան ո՛ր և է ընդդիմութիւն չբռաւ: Երբ ինքզինքը տարածուած գտաւ բարակ աւազի վրայ, երիտասարդ պատրիկն սուր արագամտութեամբ մը, որ երբեմն օգնութեան կը հասնի՝ մեզ հանդիպած չարագոյն վտանգներու ատեն, մաներկորդի մէջ լաւագոյն խորհուրդն յղացաւ իր բըռնելիք եղանակին վրայ:

Նախ հասկցաւ ստուգիւ թէ ինքն և իւր նշանածն որոգայթի մը զոհ գնացած են, որով փոխանակ ուղիղ գիծով ջրին երեսն ելլելու, երկու ջուրերուն մէջ լողաց մինչև որ շունչը հատաւ, այն ատեն ջրին երեսն ելաւ: Հոս Վենեձիային զլուխը ջրէն վեր բռնելով, մեծագոյն զգուշութեամբ քանի մը վայրկեան գրեթէ ան-

շարժ կեցաւ, աննշմարելի շարժմունքներ ընելով՝ որպէս զի կարենայ ջրին երեսը կենալ: Միայն այն ատեն յանդգնեցաւ շուրջը դիտել: Ամէն կողմ լռութիւն, մի միայն թիերու ջրին երեսին տուած ամանակաւոր հարուածները կը լսուէին. մարդասպաններն էին որ կը հեռանային:

Ֆէլիչէ միտքը դբաւ իր և իր նշանածին կեանքը փրկել, ատանց երբէք յուսահատելու՝ վստահ իր լողալու կարողութեան վրայ, որ Վենետիոյ մէջ առակի կարգ անցած էր: Ասկէ զատ կը կարծէր Բէսքիէրայի մօտ գտնուիլ. հեռուէն տեսնուած մի քանի լոյսեր գինքը խաբած էին հեռաւորութեան վրայ. գէթ այս լոյսերը որոշակի կը ցուցնէին թէ դէպի ո՛ւր պէտք է ուղղուիլ, սկսաւ դէպի այն կողմը քաջաբար յառաջել:

Յանկարծ թուեցաւ Ֆէլիչէի թէ իր ետեւի կողմէն աղօտ լոյս մը բորբոքելով՝ կը լուսաւորէր լճին ամբողջ այն մասը: Կ'երևի թէ տեղ մը հրդեհ կայ, անտարակոյս Գեղեցիկ կղզիին մէջ կուսակալին դղեակը կ'այրի: Սակայն կորովի լողացողին համար կարևորութիւն չունէր ասիկա, վայրկեան մ'իսկ չի կորսնցուց՝



զլուսը դարձնելով նայելու թէ ի՞նչ էր հանդիպածը:

Արդէն քանի մը վայրկեան վերջ այն աղօտ լոյսը կարծես կը մարէր ինքնիրեն, և լիճը վերստին ինկաւ ամառուան, աստեղազարդ երկնից ներքեւ:

Փէլիչէ միշտ կը լողար՝ սակայն մէկ թևով. միւսովը վեր կը բռնէր Աղբիականին աղջիկը: Այս պատճառաւ կ'զգար իր ուժերուն աստիճանաբար նուազելը. քիչ քիչ իր շնչառութիւնը կ'երագէր, իր անդամները կ'ընդարմանային: Հանգիստ առնելու պէտքը մեծապէս զգալի կըլլար, գէթ վայրկեան մը: Դժուարին ձեռնարկութիւն մ'ուզեց ընել բայց երիտասարդը չի կրցաւ լաւ յաջողիլ: Իր կոնակին վրայ պառկեցաւ, երեսը երկինք դարձուցած և վերցնելով Վենեձիան կուրծքին վրայ առաւ:

Երկուքը միասին փնային այսպէս քանի մը վայրկեան անշարժ՝ ալեաց վրայ օրորուելով: Նաւաբեկեալներն եթէ այս անգամ խորասուզուէին ջրին յատակը, ա՛յլ ևս պիտի չէրենային, թէ որ մէկը չի գար զիրենք փրկելու:

Յիրաւի, Փէլիչէ կ'զգար իր ուժերուն

սպառիւն, ամէն հնարք իրեն համար լմընցած էր. կ'սկսէր յուսահատութեամբ խոստովանել թէ անկարելի էր ազատիլ առանց դրսէն օգնութեան: Եթէ մինակ ըլլար, անշուշտ պիտի կարենար լողալով եզերքը հասնիլ. ամէն անգամ որ ուժասպառ ըլլար՝ կոնակին վրայ հանգիստ կրնար առնուլ, ինչպէս ըրած էր հիմայ: Սակայն իր քաղցը և թանկագին բեռան հետ անկարելի էր այս բանս գործադրել: Իսկ լքանել Աղբիականին աղջիկն՝ և ինքզինքը միայն ազատել, այս զաղափարն երբէք չունեցաւ. հազիւ թէ նաւակը ջրասոյգ եղած էր, ըսաւ ինքնիրեն.

— Կամ կ'ազատեմ Վենեձիան, կամ լիճը մեր երկուքին գերեզմանը կ'ըլլայ:

Յանկարծ թուեցաւ իրեն — սակայն չըլլա՞յ թէ մտաց պատրանք ըլլայ — թուեցաւ իրեն թէ լուսնի ճառագայթներու ներքեւ՝ արծաթէ հայելիի նման փայլուն լճին վրայն՝ սև կէտ մը ջուրը ձեղքելով յառաջ կուգար: Արդեօք նաւակ մ'է:

Այո՛, նաւակ մ'է:

Սակայն կը վարանէր նա իր ճամբուն մէջ: Երբեմն կը մօտենար իրենց, և եր-



բեմն կը հեռանար, բայց միշտ այնպիսի սաստիկ երազութեամբ որ Ֆելիչէին տարօրինակ կ'երևար:

Ինչ կը փնտռէր արդեօք այս նաւակը:

Չինքն անշուշտ: Մակայն ազատելու կուգար թէ բոլորովին մեռցնելու: Դրժբախտ նաւաբեկելոց զտնուած ահաւոր դիրքին մէջ վտանգ մը աւելի կարևորութիւն չունէր, անկէ աւելի չարագոյն չէր կարող հանդիպիլ: Ուստի Ֆելիչէ միտքը դրաւ յուսահատական աղաղակ մը ձգել, իւր մնացած բոլոր ուժովը:

Երջանկութիւն. աղաղակը լրսուեցաւ: Ֆելիչէ տեսաւ նաւակին դէպի իրեն դառնալը, ջրին վրայ կը թռչի նա: Ահաւասիկ կը հասնի և արդէն Ֆելիչէ կը ճանչնայ նաւակին թիավարը:

— Մարդինենկոյ գոչեց նա, դ՞ուր էք:

— Այո՛, ես եմ, պատասխանեց նաւակէն ձայն մը: Սիրտ ըրէք, հիմայ կը հասնիմ ձեզի:

— Ա՛խ, Մարդինենկոյ, օրհնած ըլլաս:

Եւ ապա, իւր ուրախութեան ցնորքին մէջ դառնալով Ադրիականին աղջկան.

— Վենեճիա, ըսաւ անոր, ահաւասիկ օգնութիւն, ահա մեր բարեկամ կուսակալն, ազատեցանք:

Խեղճ վենեճիան մարած էր, չի կրցաւ լսել:

— Այո՛, այո՛, հոս եմ: Ի՛նչ մ'ալ համբերութիւն, կը գոչէր Մարդինենկոյ միշտ մօտենալով:

Վերջապէս նաւակը մօտեցաւ արկածելոց:

— Նախ աղջիկն, ըսաւ Ֆելիչէ, յոգնած թեւերով Մարդինենկոյի կարկառելով իր նշանածը:

Կուսակալն աշխուժիւ բռնեց Ադրիականին աղջիկը և նաւակին մէջ տեղաւորեց:

— Մարդինենկոյ, ըսաւ Ֆելիչէ, որ նաւակին եզերքին կառչած մէջը մտնել չէր յաջողեր, սիրելի Մարդինենկոյ, դուք բարեկամ մ'էք:

— Այո՛, ես բարեկամ մ'եմ, ըսաւ Մարդինենկոյ, որ ոտքի վրայ թիերէն մէկուն կոթնած կը դիտէր Ֆելիչէին ըրած անօգուտ ջանքերը:

— Ա՛խ, Մարդինենկոյ, չարաչար կերպով յոգնած եմ, ըսաւ Ֆելիչէ, միայնակ պիտի չի յաջողիմ:... Օգնեցէք ինձի, բարեկամս, ձեռքերնիդ երկնցուցէք:

Կուսակալը ահաւոր ակնարկ մը նետեց



դէպի իրեն երկարած պաղատող ձեռքին վրայ, և կոթընած թին վերցնելով ուժգին հարուած մը իջեցուց երիտասարդ պատրիկին գլխուն:

— Այ, նենգաւոր... պոռաց սա թողւով նաւակին եզերքը:

Փորձեց նորէն լողալ, սակայն այս անգամ ամէն ինչ անօգուտ էր, իր ուժերը բոլորովին սպառած էին: Յուսահատութեամբ կը տեսնէր Ադրիականին աղջիկը տանող նաւակին հեռանալը: Սակայն կը պոռար նորէն.

— Զի՛ս ալ, զի՛ս ալ, զի՛ս ալ...:

Վերջապէս զգաց թէ ամէն ինչ լմնցած է: Իւր աչքերը դէպի երկինք բարձրացուց, ոճրագործութեան զոհ գացած ըլլալուն վկայ զԱստուած կոչելով.

— Ո՛վ Աստուած իմ, ըսաւ դու տեսար: Վենեճ...:

Սակայն ուժ չունեցաւ նոյն իսկ իր սիրուհուն անունը ամբողջովին ըսելու: Իր շրթունքներուն վրայ մարեցաւ այս անունը: Դժբախտ Ֆելիչէին գլուխը ջրին մէջ գնաց, աներևոյթ եղաւ: Բնագրական շարժմամբ, իր երկու թևերը կը տատանէին տակաւին ջրէն վեր:

ԺԲ.

### ՎՏԱՆԳԱԻՈՐ ԱԶԱՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Բարեբախտաբար Ֆրամէզզան չէր մոռցած իր ընտանեաց ժառանգական դժնդակ արուեստը. կը յիշէր իր տղայութեան ատեն շատ անգամ լճակներուն վրայ թիավարելն: Ուստի մեծ դժուարութիւն չի բաշեց Ռիքարտոյի ցոյց տուած նաւակին մէջ ցատկելով, զայն լճին միապաղաղ ջրին երեսին վրայ սահեցընել արագօրէն, որչափ որ Ռիալտոյի կտրիճ կոնտրավար մը կընար ընել:

Ֆրամէզզա երբեմն երբեմն, առանց դադրեցնելու թիավարելը, կէս մը գլուխը ետին դարձուցած լճին վրայ ակնարկ մը կը նետէր: Վասն զի թիավարելու տեղւոյն վրայ նստած և երեսը դէպի գեղեցիկ կղզիին կողմը, դժուարին պիտի ըլլաւ տեսնել ինչ որ այնքան կարևոր էր իրեն:

Կղզիէն բաժնուելէն յետոյ հազիւ քսան վայրկեան անցած էր, տեսաւ որ իրեն



զուգահեռական ուղղութեամբ նաևակ մը կուգար, և իրեն հաւասար՝ արագօրէն կը սահէր: Բայց տարօրինակ բան, նաևակը լճին բացէն կուգայ. իր կոնսիլը Բէսսրիէ-րա դարձուցած շուտ շուտ թիւաւարութեամբ դէպի գեղեցիկ կղզին կը վազէ:

Մէջն ով կար արդեօք, ի՞նչ հոգ: Ո՞վ ալ ըլլան անոնք, ողջ և առողջ են: Պէտք է փութալ վազել անոնց՝ որ այս վայրկենիս թերևս խղղուելու վրայ են:

Փիամէզդա այս խորհրդածութիւնը ընելու ատեն, թուեցաւ իրեն թէ դիմացէն անցնող նաևակին մէջ քիչ մը հեռանալէն յետոյ, ջահ մը վառուեցաւ: Սակայն, սոսկալի բան, այս ջահին բոցը յանկարծ ահազին բարձրութեան հասաւ, իր բոլոր տիքը հագարաւոր կայծեր թօթափելով: Արդեօք մէջի եղողները ցախաւերութեամբ նաևակին կազմածներուն կրակ ձգեցին: Այլ ևս տարակոյս չէր վերցուներ. ստուգիւ հրդեհ մ'էր, Փիամէզդա սարսափահար՝ հանդիսատես կ'ըլլար:

Սակայն ի՞նչպէս հրդեհն այսպէս տարօրինակ արագութեամբ տարածուեցաւ: Կ'երևայ թէ հրձիգ նաև մ'էր, լեցուն դիւրավառ նիւթերով, բէտինով և բեւեկնի խէժով:

Բնագրմամբ և առանց խորհրդածութեան, կը դիտէր այս յուզիչ տեսարանը:

Սակայն սարսափն իր գագաթնակէտին չէր հասած: Հրդեհին սկսելէն քանի մը վայրկեան վերջ, Ֆիամէզդան տեսաւ թափանցիկ բոցերուն մէջ երկու մարդոց մուլեկան շարժմունքները: Այս մարդերէն մին շուտով ճանչցաւ, նա յիսնապետ Բարթոլիմէոսն էր:

Բայց ով է արդեօք միւս լերկ երեսով մարդը: Աչքերը ակնակապիճէն դուրս ելած, իր գլխուն աղէբեկ կարճ մազերը խոլ արհաւիրքով մը տնկուած, այս մարդուն կծկեալ զիմագիծը կը յիշեցնէր իրեն յոյժ հեռաւոր յիշատակներ:

Միտքն ինկան լճակները, տատանող տընակն՝ ուր ծնած էր ինքը, մեծ հայրը հոն իր ձկնորսի երգերով կ'օրորէր տղաքը, որոնց կ'ընկերանային հովին շառաչները. անոր մօտ Ֆովաննային ծանր և տխուր դէմքը, որ իրենց պառկելէն մինչև արթննալը շատ անգամ ամբողջ գիշերը կ'անցնէր ընտանեաց հին կարկտաններն ընելով. *povera madre Giovanna*, (խեղճ Ֆովաննա մայր):

Սակայն ինչո՞ւ իւր մանկութեան այս



յիշատակները կը ներկայանային իր մըտքին, անձանօթ մարդու մը պատճառաւ, որ սատանի մը նման այս հնոցին մէջ կը ցատկըռտէ: Այս, երկնային պատիժ, կը ճանչնայ այս մարդը հիմայ, իւր հայրն՝ Պետրոսն է:

Ֆիամէղգա ճիչ մը արձըկեց և իւր երկու ձեռքերով երեսը գոցեց չի տեսնելու համար այս ահաւոր տեսարանը: Երբ բարձրացուց գլուխն և մոլորեալ աչքով իւր բոլորտիքը դիտեց, նաւակն և մէջի գտնուողները անդունդին խորը իջած էին արդէն: Երբէք լիճը այսպէս խաղաղ եղած չէր, և իր արծաթեայ մակերևութին մէջէն լուսինը տխուր կերպով իր պատկերը կը ցոլացնէր:

Ֆիամէղգա սկսաւ լալ, և միտքը բերելով իր վրայ դրուած պարտականութիւնը, արխասիրտ աղջիկն նորէն ձեռքն առաւ իւր թին և կորովի թիավարութեամբ բռնեց այն ուղղութիւնը, ուր իր ներկայութիւնը ստիպողական կը համարէր:

Յանկարծ, նոր տեսիլք մը. ուրիշ նաւակ մը կ'անցնի իրեն զուգահեռական. անոր ետևի կողմէն երկար սպիտակ հագուստներ ջրին երեսը կը ծփան, մէջը կին մը պռոկած՝ թուի քնանալ:

Այս նաւակը տանող մարդը...: Բայց ոչ, տեսիլք մը չէ, կ'երևի որոշակի, բարձրանալով իր ամբողջ հասակովն և դէպի ետին ծռելով ուժգին մղում կուտար թիուն. այս մարդը Մկրտիչ Մարգրինեն կոն է, Բատուայի կուսակալը:

Թող անցնի, Ֆիամէղգային փնտռածն այն չէ:

Ինչ կայ նորէն...

Նուաղ ձայն մը կը լսէ, հոն դիմացը պղպըջացող ջրոյն մէջ մարդ մը կը մաքառի, կամ լաւ ևս անորոշ կերպարանք մը որ փոփոխակի կ'երևայ և կ'աներևութանայ:

Օն ուրեմն քաջութիւն, Ֆիամէղգա. թիու քանի մը ուժգին հարուած, թերևս ժամանակին կը հասնիս:

Կը հասնի, կը փնտռէ, մտիկ կ'ընէ և բան մը չի լսեր, զինքը հոն բերող հեռքն աներևոյթ եղած է:

Սակայն կը տեսնէ երկու ձեռքեր որոնք ջուրէն վեր շրագարութեամբ կը շարժին:

Աղջիկը կը բռնէ այս երկու ձեռքերն և բոլոր ուժովը կը յաջողի իր նաւակին մէջ առնուլ Ֆէլիչէ Պատտէրն, որ քիչ մ'ալ մնացեր էր բոլորովին անհետանար:



— Մինակ, ինչպէս, մինակ է նա-  
գոչեց Ֆրամէզդա զետեղելով երիտասարդ  
պատրիկը նաւակին խորը : Վսեմաշնոր  
տէր... տէր Պատուէր... :

Սակայն Ֆելիչէ չի պատասխաներ :

Ֆրամէզդա, որչափ իր աչքովը կրնար  
հետուն տեսնել, լծին ամէն կողմը խու-  
զարկեց : Ոչինչ, ուրիշ բան մը չի տե-  
սաւ : Եթէ նոր մահուան մը գազանիքը  
կայ, անշուշտ լիճը զայն իր խորը ծած-  
կած է :

Այն ատեն խեղճ Ֆրամէզդա յուսարեկ  
եկաւ Ֆելիչէ Պատուէրին քով : Երիտա-  
սարդն աշխատութենէ ոգեսպառ եղած է,  
սակայն Ֆրամէզդա, որ փորձառու էր,  
անոր վրայ խղդուելու նշան մը չի տե-  
սաւ : Յիրաւի քիչ ատենէն ինքզինքը զը-  
տաւ, աչքերը տակաւին զոյց են, սակայն  
թեթեւ հառաչանք մը արձրկեց, և իւր  
կիսաբաց շրթունքներէն անուն մը, իր սի-  
րուհւոյն անունը թուաւ :

— Վենեճիս... հեծեց նա :

Ֆրամէզդան զայն լսելուն Ֆելիչէին  
մարմնոյն վրայ զիմեց, և անոր զլուխը  
վերցնելով :

— Ա՛խ, խօսեցէ՛ք, ըսաւ, Վենեճիան,

իմ սիրելի տիրուհիս, ինչ եղաւ : Անշուշտ  
մեռած է :

— Ո՛չ, պատասխանեց Ֆելիչէ :

— Ա՛խ, օրհնե՛ալ Աստուած : Բայց հի-  
մայ ո՛ւր է նա : Գիտե՞ք զուր :

— Այո՛ :

— Ո՛հ, ըսէ՛ք խնդրեմ :

— Հիմայ, ըսաւ Ֆելիչէ, ջանալով իր  
զլուխը բարձրացնել :

Վայրկեան մը լուռ կենալէն յետոյ,  
կրկնեց :

— Կուսակալը... անի թշուառականը,  
ինձմէ յափշտակեց, տարաւ զինքը հոն  
վարը, գեղեցիկ կղզին, իւր որջն, անշուշտ  
իրեն ճարակ ընելու գազանն :

— Վերջապէս ողջ և առողջ է. ապա-  
հով վիճակի մէջն է. հարցուց Ֆրամէզդա :

Ֆելիչէ դառն ժպիտ մ'ունեցաւ :

— Ապահով վիճակի մէջ, ըսաւ, այո՛  
թէ որ կ'ուզես, ապահով վիճակի մէջ է :

— Լաւ, կրկնեց Ֆրամէզդան, կը հաս-  
կրնամ ըսածնիդ, բայց անոր վրայ յետոյ  
կը մտածենք : Հիմայ երթանք աւելի ստի-  
պողականին. ուրիշ զոհ մ'ալ կայ՝ որուն  
օգնութեան պէտք է փութալ նախ. այսօր  
կոնտրավարի մը կեսնքը, գէթ իմ աչ-



քիս, կ'արժէ որչափ ձերակուտականի մը կեանքը:

— Հէ՛, ուրիշ ի՞նչ կայ, ի՞նչ կ'ուզես ըսել:

— Դուք միայն չէք կուտակալին ձեռքին հարուածը, իմ խեղճ Ռիքարտոս, զոր թողուցի հոն ձեզի օգնութեան հասնելու համար, այս վայրկենիս ծանր կերպով և թերևս մահացու վիրաւորուած մնացած է միայնակ, գեղեցիկ կղզիին պարտէզին անկիւն մը:

— Խեղճ Ռիքարտոյ. շուտ երթանք:

— Իրաւունք ունիք տէր, խօսակցելու ժամանակ չէ:

Այս խօսքերն ըսելէն վերջ, թիերը ձեռքն առաւ և ուժով ուժով սկսաւ դէպի գեղեցիկ կղզին թիավարել. հասաւ եղէգնուտներուն՝ որոնց հտեր առջի երեկոյ Ռիքարտոյ ծածկած էր նաւակը:

Քաջ կոնտրալարն կը գտնուէր տակաւին կաղնիի ծառին տակ, ուր Ֆիամէզզան տեղաւորած էր զինքը:

— Ի՞նչ լուր, հարցուց երբ տեսաւ աղջիկը:

— Երկուքն ալ ազատած են, պատասխանեց Ֆիամէզզան:

— Այն ատեն ամէն ինչ ի կարգին է: Յետոյ, իբր թէ սպասած ըլլար որ իր սիրելի Ֆիամէզզան այն լուրը բերէր իրեն և ապա մարէր, կոթընած ծառին վրայէն գլուխը սահեցուց, և մեղմով մը ինկաւ գետին:

— Աստուած իմ, ըսաւ մանկամարդ աղջիկը, բաւական է թէ իմ ունեցած ուժովս կարենամ զինքը փոխադրել նաւակին մէջ:

Շիտակը՝ դիւրին գործ մը չէր, թէպէտ լճակի շղջիկը ուժով էր և միանգամայն՝ քաջասիրտ: Բայց յոյժ դժուարին էր վերցընել կոնտրալարը գետնէն և ուսերուն վրայ առնել:

Սակայն Ֆիամէզզան յաջողեցաւ. կը մնար իւր բեռը նաւակին մէջ դնել: Բարեբախտաբար նաւակին առջեւի կողմը փտած ծառի մը կոճղին մէջ մտած էր, որ զայն ուժով մը կը բռնէր, իբր թէ առջևէն և հտեէն կապուած ըլլար Ռիալդոյի օղակներէն:

Ֆիամէզզան երբ դրաւ Ռիքարտոն նաւակին խորը՝ իր տիրոջը քով, և նաւակը ազատ ջուրի վրայ հանեց, վայրկեան մը կեցաւ իր թիուն վրայ կոթընած՝



հարցնելով ինքնիրեն թէ զէպի որ կողմը պէտք էր ուղղել նաւակը: Կ'արժէր լաւ մը ուսումնասիրել խնդիրը: Վասն զի, անտարակոյս երկրորդ առաւօտ, և թերես նոյն գիշերը, կուսակալը պիտի իմանար կոնտուլավարին մարմնոյն անհետանալն և Ֆիամէզդալին փախուստը, և ետեէն խուզարկուներ պիտի ղրկեր, իրեն վէնետիկ հասնելուն արգելք ըլլալու, ուր իր ներկայութիւնը կրնար մրրիկներ հանել կուսակալին գլխուն: Ուրեմն Մարդինենկոյին մեծագոյն շահն էր ձեռք ձգել Ֆիամէզդան, և հետեւաբար ինքն՝ Ֆիամէզդան, բաւական վարպետութիւն չունէր այս ահաւոր որսորդին ձեռքէն ծածկել հալածուած որսին բռնած ուղին:

Ֆիամէզդան երկար ատեն տատամսելէն վերջ, որոշեց աւելի վտանգաւոր ճամբան բռնել, Բէսքիէրայի ճամբան: Անշուշտ կուսակալը նախ հոն պիտի ղրկէր իր մարդիկը. սակայն Ֆիամէզդա միտքը ղրած էր Բէսքիէրա չեւել: Քաղքէն մի քանի հարիւր քայլ հեռուն նշմարեց ձկնորսաց հինգ վեց հիւղեր, և Ֆիամէզդան վստահացած այն խեղճ մարդիկներուն ասպընջականութեան վրայ՝ միտքը ղրաւ անոնց ղիմել:

Այս որոշումը տալէն յետոյ, զէպի Բէսքիէրա ուղղեց իր ընթացքը:

Արշալոյսն ելլելու մօտ էր, երբ քաջասիրտ աղջիկը վստահաբար մօտեցաւ նաւամատոյցին. հոն ձկնորս մը իր ուսկանները նաւակը կ'իջեցնէր. առանց վայրկեան մը ուշանալու շիտակ անոր քովը գնաց: Իր ծրագիրը շինած էր. միտքը ղրաւ իր և ընկերներուն բախտը վստահիլ ձկնորսի մը ուղղամտութեան, որ կուսակալի մը ուղղամտութենէն աւելի ապահով էր:

Չկնորսին մօտենալով,

— Կուգամ, ըսաւ, խնդրելու քեզմէ ապաստանարան մը ինծի և միւս երկուքին, մինչև առաջիկայ գիշեր:

— Ապաստանարան, ըսաւ ձկնորսը քայլ մը ետ երթալով, ոճրագործ է՞ք ուրեմն դուք:

— Ո՛չ, այլ փախստականք:

— Ուսկի՞ց կուգաք:

— Գեղեցիկ կղզիէն, կուսակալին բարկութենէն կը փախչիմ երկու մարդոց հետ, որոնց մին կէս մը սպաննած է և միւսը ուզեց ջրին մէջ խղղել:

Չկնորսը գլուխը կախեց:



— Կուսակալն, ըսաւ, ահաւոր մարդ մ'է:

— Կը վախնաս ուրեմն ինքզինքդ վըտանգի մէջ դնելէ, հարցուց Ֆիամէզդդա աշխուժութեամբ:

— Իրաւցընէ ինքզինքս վտանգի մէջ կը դնեմ, պատասխանեց ձկնորսը. սաւկայն հոգ չէ, տունս բաց է ձեզի: Մտէք հոն. զձեզ պիտի պաշտպանեմ, նոյն իսկ Բատուայի կուսակալին դէմ, եթէ պէտք ըլլայ:

Չկնորսը մօտը կանչեց իր տասուերկու տարեկան տղան, և անոր օգնութեամբ իր տնակը փոխադրեց կոնտոլավարը, միշտ խղճալի վիճակի մէջ, և երիտասարդ պատրիկն, որ դանդաղօրէն կը վերստանար իր ուժերը:

Այս օտարականաց հասած վայրկեանին, ձկնորսը կը պատրաստուէր երթալ իր ուռկանները ձգելու. սակայն միտքը փոխեց, և որոշեց տունը մնալ մինչև երեկոյ, որպէս զի ո՛ր և է պատահելիք արկածներու դէմն կարենայ առնուլ: Յետոյ իր տղան մէկ կողմ կանչելով անոր ականջէն քանի մը խօսք ըսաւ. տղան մէկէն դուրս ելաւ և մէկ մ'ալ չհերեցաւ:

Քիչ ատեն անցնելէն վերջ, Ֆիամէզդդա տղուն ուշանալուն վրայ սկսաւ տագնապիլ: Յոռի գաղափար մը իր մտքին մէջ ծագումն առած էր:

— Ո՛ւր դրկեցիր տղան. հարցուց աղջիկն անձկութեամբ մը:

Չկնորսը հասկըցաւ աղջկան տագնապը, և ժպտելով պատասխանեց.

— Թէ որ զքեզ բերող նաւակը մնացած ըլլար իմ դրանս մօտ, զձեզ պիտի մատնէր և նոյն հարուածը զիս ալ պիտի ջախջախէր, վասն զի նաւակին կոնակը նկարուած են կուսակալին զինանշանները:

— Իրաւունք ունիս, ի՞նչ ըրիր ուրեմն զայն:

— Հրամայեցի տղուս հեռացնել զայն՝ ամբողջ օրը թիավարելով դէպի հիւսիս, և լճակին միւս ծայրը յայտնի տեղ մը ձգել: Վաղը ձեզ հալածողները պիտի գրտնեն հոն, և սխալ հետքի մը ետևէ պիտի երթան:

— Ո՛հ, ինչպէս շնորհակալ ըլլալ քեզի և քու ներողամտութիւնը խնդրել, ըսաւ Ֆիամէզդդա սրտի զեղմամբ մը ձրկնորսին ձեռքը սեղմելով, դու թէ նախատեսս ես և թէ համեստ, շիտակն ըսելով կասկածի գնացի:



— Մակարեբեցի զայն. սակայն հոգ չէ, զձեզ ազատելու համար ամէն կարելին պիտի ընեմ:

Համեստ Ֆիլամէդղային աչքերն արցունքով լեցուեցան, այս անձնանուէր պարզութիւնը սրտին դպեր էր:

Չկնորսը տեսնելով որ Ֆիլամէդղան աթոռին վրայ նստած կ'երերար, ըսաւ անոր.

— Քու երկու հիւանդներդ՝ շնորհիւ քու խնամոցդ, սկսան քնանալ. չնս ուզեր դու ալ երթալ քանի մը ժամ հանգչիլ:

— Այո՛, թերևս:

— Գնա՛ ուրեմն. վասն զի զօրանալու պէտք ունիս մինչև վեհատիկ կրելիք աշխատութեան տակալու:

— Իրաւունք ունիս, շատ յոգնած եմ, ըսաւ Ֆիլամէդղան նախանձու աչքով մը դիտելով խոտէ անկողինը, որուն վրայ կոնտուլալարն և պատրիկը, Ռիքարտոն և Ֆելիչէ Պատոէր, եղբայրաբար կը հանգչէին քով քովի:

— Դու զմեզ մինակ պիտի չի թողուս, այնպէս չէ՞, աւելցուց աղջիկն աղաչական շեշտով մը:

— Ամենեին մի՛ վախեր, ես կը հրակեմ, և նորէն կը կրկնեմ, վստահ եղիր թէ ինչ որ կարելի է պիտի ընեմ զձեզ կուսակալին վրէժխնդրութենէ ազատելու համար:

— Բարի՛ սիրտ:

— Ինչ սը կարող եմ կ'ընեմ, օրիորդ, ո՛չ աւելի, ոչ պակաս:

Այս խօսքերն ըսաւ մի և նոյն պարզութեամբ՝ առանց ճոռոմարանութեան:

Ֆիլամէդղան վերջին անգամ մ'ալ ակնարկով շնորհակալ եղաւ, որ ամէն խօսքէ աւելի պերճախօս էր, և գնաց տարածուեցաւ թարմ յարգերու վրայ, իբր ազատածներուն անկողնոյն ոտքը: Հինգ վայրկեան վերջ աղջիկը խոր քունի մէջն էր:

Արևն արդէն հորիզոնէն վեր շատ բարձրացեր էր, երբ փողի մը ձայնն ընդոստ արթնցուց Ֆիլամէդղան: Մանկամարդ աղջիկը իսկոյն ոտքի վրայ ցատկեց, իբր հաւատարիմ պահապան շուն մը՝ երբ իր տիրոջը բնակարանին վտանգ մը սպառնայ: Փողը լռեց. և իրմէ քանի մը քայլ հեռուն բարձր ձայնով մը սկսաւ կարգալ հետեւալ ծանուցումն, ուսկից աղջիկը բառ մը չի կորսնցուց:



«Երէկ երեկոյ, գեղեցիկ կղզւոյն մէջ, գարշելի ոճիր մը գործուեցաւ ազնուական և զօրաւոր՝ Նորին վսեմութեան Մկրտիչ Մարդինենկոյի, Բատուայի կուսակալին, Պերճապայծառ Հասարակապետութեան ծերակուտականի, գեղեցիկ կղզւոյն և այլ տեղեաց տիրոջ անձին դէմ: Իւր կորովը և իւր քաջութիւնը միայն ազատեցին զինքը: Յանցաւորն թշուառական կոնտուլավար մ'է, որ ազնուաշուք կուսակալին դէմ ըրած կուռն ատեն ինքզինքը վիրաւորեց: Ռիքարտոյ կրցաւ փախչիլ, և իւրեն փախստեան ձեռնտու եղաւ աղջիկ մը, օրիորդ վենեճիային, վենետկոյ որբուհւոյն, նաժիշտն:

« Հարիւր տուքադ ոսկի խոստացուած է իբր վարձք, անոր որ յանձնէ փախըստականներէն մին, բարձրապատիւ և զօրաւոր Մկրտիչ Մարդինենկոյի, Բատուայի կուսակալին»:

Երբ կարգացողը հեռացաւ, ձկնորսն և Ֆիամէդդան քիչ մը ատեն իրարու երես նայեցան առանց խօսք մը փոխանակելու: Ֆիամէդդան երեսին գոյնը նետած՝ ջրային դող մը ունեցաւ, զոր չէր կրնար զսպել: ձկնորսը զբաղմունքի մը պատրուակաւ,

պատին վրայէն ուռկան մը վար առաւ զայն կարկտել ձեացուց: Յանկարծ զլուսը վեր բարձրացուց և ժպտելով ըսաւ.

— Հարիւր տուքադ ոսկի, ինձի պէս խեղճ մարդու մը համար մեծ բաղդ մ'է. ճշմարիտ չէ՞, օրիորդ:

Ֆիամէդդան կ'ուզէր պատասխանել, սակայն Ֆելիչէ Պատոէր, փողին ձայնէն իր խոր քունէն արթննալով, անոր ժամանակ չի ձգեց: Ֆիամէդդային և ձկնորսին նըման ինքն ալ լսած էր խոստացուած վարձքը, ուստի իւր ասպնջականին ուռկանին մէջ իր քսակը նետելով ըսաւ.

— Դու զմեզ չի յանձնելովդ կը կորսընցնես հարիւր տուքադ ոսկի, բայց զմեզ ազատելովդ կը շահիս երկու հարիւր: Ուրեմն մի՛ գանգատիր:

Խեղճ մարդը բոլորովին շփոթեցաւ. երիտասարդը հաւատացած էր ըսածներուն, թէ ինքն արծաթսիրութեան համար այնպիսի վատ մատնութիւն մը ընելու կարող է:

— Ախ, մեծապատիւ տէր, ըսաւ, միթէ կեանքս վտանգի մէջ դրած չէ՛ր ձեր պատճառաւ, առանց վարձատրութեան մը յոյս ունենալու:



— Անտարակոյս, ըսաւ Ֆէլիչէ ժպտելով, սակայն այսօր քու աղքատին իբրև ճիթդ պատասպարեց Պատուէրներուն վերջին մնացորդն, այս բանս կ'արժէ որ քու բազդդ շինեմ:

— Ո՛հ, վսեմաշուք տէր, այնքան չեմ խնդրեր: Բաւական է թէ նոր նաւակ մը ունենամ:

— Դու ոչ միայն նոր նաւակ մը պիտի ունենաս կրկնեց Ֆէլիչէ, այլ նաև պարտէզով նոր տուն մը: Իսկ տղուդ գալով, իմ վրաս կ'առնում անոր ապագան:

Խեղճ ձկնորսը ուրախութենէ ինքիրմէ դուրս ելած ոսկեզօծեալ երազներու մէջ կը քալէր. և Ֆիամէզդան ջանաց համոզել զինքը որ աւելի պաղ արեամբ դիտէ իրերն, որպէս զի մերձակայ գիշերային փախստեան ծրագիրը կարենան իրարու հետ կարգադրել:

Դրացիներէն մէկը հին սայլակ մ'ուներ, իր բանջարեղէններն և պտուղները վերոնա փոխադրելու համար: Այս սայլակը նաւակի առագաստով ծածկեցին, և երեկոյեան անոր մէջ պառկեցուցին Ռիքարտոն և Ֆէլիչէ Պատուէրն, որ տակաւին շատ տկար էր: Ֆիամէզդան սայլա-

կին թևին ձախ կողմը նստած անձամբ կ'առաջնորդէր այս խղճալի խումբը դէպի վերոնա, բայց հոն պիտի չի մտնէր, ինչպէս նաև անկէ յետոյ՝ Բատուա ալ պիտի չի հանդիպէր: Պատուիրած էին Ֆիամէզդային որ ձին և կառքը Բատուայէն վար Պրէնդայի եզերքը՝ իջևանի մը յանձնէ: Հոն գրեթէ ո՛ր և է վտանգ չի կար, և փախստականները կրնային դուրս նաւակ մը գտնել՝ զիրենք վէնետիկ փոխադրելու, տաժանելի ճանապարհորդութեան վերջին կէտը:

Ամբողջ գիշերը գնացին առանց չափազանց յոգնութեան: Արշալուսին ճանապարհորդք կը գտնուէին վերոնային միւս կողմը և կը հասնէին խեղճ գիւղակ մը, ուր Ֆիամէզդա կ'ուզէր կենալ ամբողջ ցորեկը, և հետևեալ գիշերը վերստին շարունակել ճանապարհորդութիւնը: Սակայն Ֆէլիչէ ուզեց հասնիլ մերձակայ գիւղ մը, ուր թէ աւելի հանգիստ և թէ աւելի ապահով պիտի ըլլար: Որով սայլակը բռնադատեցաւ ընթացքը շարունակել անհարգ ճամբու մը վրայէն. և եթէ եղանակը յառաջ գնացած ըլլար՝ բոլորովին անանցանելի պիտի ըլլար:



Դժուարաւ առաջ կ'երթային. ֆիամէղ-  
դան միշտ սայլակին թևին ձախ կողմը  
նստած էր: Երկու ձիաւորը ճանապարհոր-  
դաց քովէն անցնելով գրեթէ հարիւր քայլ  
հեռացան: Յետոյ կեցան, դարձուցին ձիե-  
րուն գլուխները և տաք տաք խօսելով  
մօտեցան սայլակին:

Այս երկու ձիաւորները կէս մը քաղա-  
քային և կէս մը զինուորական զգեստ  
հագած, անշուշտ մերձակայ հարուստի մը  
վարձուոր զինուորներն էին, ինչ որ սո-  
վորութիւն էր տակաւին այն կէս աւա-  
տական դարուն մէջ: Երկուքն ալ անշնորհք  
կերպարանք մ'ունէին, երկայն պէրնեշտնե-  
րով, ծանր սուրեր վրանին, մեծխօսիկ  
քաջի մը հովն առած և միանգամայն իր  
տիրոջ անուամբ պաշտպանուած լաճի մը  
անձնավստահութիւնը, լրբութիւնն և քա-  
լուածքն ունէին:

— Ո՛ւր կ'երթաք, աղւորս, հարցուց  
անոնցմէ մին ֆիամէղդային, առանց այլ  
ևայլի կեցնելով սայլակը:

— Բատուա, տէր իմ:

— Ի՞նչ պիտի ընէք Բատուա:

— Հոն կը տանիմ իմ երկու եղբայր-  
ներս, որոնք ձեզի նման երկուքն ալ զի-

նուոր են, և Լոմպարտիոյ բանակին մէջ  
ջերմէ բռնուեցան:

Երկու ձիաւորները իրարու ակնարկ մը  
փոխանակեցին. և հարցնող ձիաւորն նո-  
րէն կրկնեց.

— Չըլլայ թէ սխալիք, աղւորիկս,  
և փոխանակ երկու եղբայրներու՝ դիպուա-  
ծով մէկ միայն ունենաք:

— Ներեցէք, ըսաւ ֆիամէղդան բա-  
նալով սայլակը ծածկող լաթն, ահա եր-  
կուք են:

Այս հաստատութիւնը կարծես շփոթ-  
ցուց երկու յիմարները: Սակայն մին որ  
աւելի յամառ կ'երևար՝ ըսաւ նորէն.

— Ինչո՞ւ համար Բատուա կ'երթաք:

— Վասն զի յանձնարարական մը ու-  
նիմ առ վսեմ. կուսակալն: Չիս ապա-  
հովցուցին թէ զմեզ խեղճութեան մէջ չի  
թողուր, ինքն այնքան բարի է, տէր  
կուսակալը:

Երկու զինուորները քահ քահ մը փըր-  
ցուցին և երբ անշնորհք խնտալնին դա-  
դրեցաւ, իրենցմէ մին՝ որ մինչև նոյն ա-  
տեն լուռ կեցած էր, ըսաւ ընկերոջ.

— Քեզի ըսի արդէն թէ սխալ հետքի  
մը վրայ կը գտնուինք:



— Ի՞նչ ընենք:

— Անշուշտ ետ պիտի դառնանք:

— Սակայն այս գեղեցիկ աղջիկը չի համբուրած ետ չեմ դառնար. ըսաւ առաջին զինուորն մօտենալով Ֆիամէզդանին:

— Տէ՛ր. պոռաց Ֆիամէզդան՝ ուզելով կառքէն վար ցատկել:

Սակայն կնահաճոյ զինուորն անոր ժամանակ չի ձգեց:

— Օ՛ն ուրեմն, աղւորս, ըսաւ նա, մէկ միայն համբոյր մը, և կ'երթամ:

— Թէ որ շարունակէք զիս նեղել, կը կանչեմ եղբայրներս:

— Քու եղբայրներդ մեզի նման զինուոր են, և թէ որ իմ տեղս ըլլային նոյնը պիտի ընէին: Համբոյր մը միայն. թէ որ մերժես մինչև Բատուա հետդ կու գամ:

Ֆիամէզդային դիրքը թէ նորօրինակ էր և թէ երկիւղալի: Կը դողար որ չըլլայ թէ իր կարծուած եղբայրներէն մին պառկած տեղէն ելլէ այս զինուորներուն լազաս մը տայ: Այն ատեն գուցէ երեքն ալ վերոնայի կամ Բատուայի բանտերը առաջնորդուէին: Խեղճ Ֆիամէզդան գեր-

մարդկային ճիգ մը ընելով, այս վտանգն անցնելու համար, իւր երկու թարմ այտերը ներկայացուց սրիկային ըսելով.

— Ա՛ռ ուրեմն.

Մինչդեռ քծնող զինուորն փոխանակ մէկի չորս համբոյր կը քաղէր, կառքին խորէն խուլ մռնչիւն մը կը լսուէր խառն բարձրաձայն ծիծաղի հետ:

— Երթաս բարով, աղւորիկ աղջիկ, ըսին երկու զինուորներն արշաւասոյր հեռանալով դէպի Մանդուա, կը տեսնուինք վենետիկ:

Եւ աներևոյթ եղան:

Ռիքարտոն կատղած և կառքին մէջ կէս մը վեր ելած, բուն ձևեր կ'ընէր, առանց մտածելու թէ այս մեջկատակ ուժգին ձևերն կրնային վէրքը կրկին բանալ:

— Ա՛խ, Ֆիամէզդա, պոռաց վշտացեալ սիրահարը, ոչ, երբէք չէի կարծեր թէ յանձն առնուա համբուրել տալ զքեզ զինուորի մը:

— Խեղճ Ռիքարտոյ, կ'ըսէր Ֆէլիչէ:

— Եւ իմ ներկայութեամբս, աւելցուց Ռիքարտոյ ողբերգական շեշտով մը:

— Հոգ չէ, ըսաւ Ֆէլիչէ, որուն խընդուքը կ'աճէր քանի որ իւր ճանապարհի



ընկերոջն ողբերգակատակերգակ բարկու-  
թեան աւելնալն կը տեսնէր, հանդարտէ  
այլ ևս, Ռիքարտոյ:

Պիամէզդա՛, այնպիսի պարկե՛շտ աղջիկ  
մը, ոչ, տէր, հաւտալս չի գար տակաւին:

— Ուրեմն աւելի նախամեծա՛ր կը հա-  
մարիս այն երկու յիմարներուն ընկերակ-  
ցութիւնը մինչև Բատուա, ուր կընային  
զմեզ բռնել տալ:

— Ինձի համար նոյն է, կը հծծէր  
վշտագին Ռիքարտոյ, յիրաւի շատ տխուր  
բան է տեսնել զիմացս իմ նշանածիս ու-  
րիշէ մը համբուրուիլը:

Խեղճ Պիամէզդան շփոթած պատասխան  
մը չէր տար և կըրցածին չափ կ'արագէր  
ձիուն ընթացքը, որպէս զի կառքին աղ-  
մուկը իր բարկացած նշանածին գայրոյթը  
ցրուել տայ:

Ճամբան շարունակուեցաւ առանց նոր  
պատահարի և առանց վտանգաւոր հան-  
դիպումի մը: Երեք օրէն յետոյ փախըս-  
տականները մտան վիենետիկ և իրենց նա-  
ւակը կեցաւ Պատոնէրին պալատան մար-  
մարիոնէ սանդուխին զիմաց. ուր ամէն  
ոք ահաւոր մտատանջութեան մէջ էր, չի  
գիտնալով թէ իրենց երիտասարդ տէրը  
ինչ եղած է:

Երբ Պիամէզդա ապահովցուց հիւանդ-  
ները Պատոնէրին պալատին մէջ, իր առա-  
ջին գործն եղաւ վագել Պրեսական պալա-  
տը: Տեղւոյն վրայ ունեցած ծանօթու-  
թեանց շնորհիւ, զժուարութիւն չի քաշեց  
Փոսքարին անձնական յարկաբաժինները  
մտնել: Հոն ծառայից չափազանց հոգա-  
տարութիւնը զժուարութիւններ հանեց տո-  
ժին ներկայանալու: Սակայն այնքան պըն-  
դեց աղջիկն որ վերջապէս ծառաներէն  
մին իր կողմը շահեցաւ և կըրցաւ Փոս-  
քարին ոտքն իյնալ, երբ նա իւր յար-  
կաբաժինէն կ'ելլէր՝ խորհրդարան երթա-  
լու:

— Ո՞վ ես դու, աղջիկս, հարցուց տո-  
ժը քաղցրութեամբ, որ զինքը չէր ճանչ-  
ցած:

— Պիամէզդան, Բարձրապատիւ տէր,  
փոքրիկ Պիամէզդան, Ադրիականին աղջ-  
կան կաթնքոյրը:

— Ի՞նչ կը խնդրես ինձմէ:

— Արդարութիւն, Բարձրապատիւ տէր,  
արդարութիւնն.....:



ԺԳ.

## Ֆ Ա Ն Դ Է Ն

Ութ օրէ ի վեր Ադրիականին աղջիկը բանտարկուած էր գեղեցիկ կղզւոյն դըղեակին մէջ, առանց դրսէն ո՛ր և է հաղորդակցութիւն ունենալու: Վենեճիան այս բանիս վրայ չէր զարմանար, վասն զի կը խորհէր թէ իրմով շահագրգռուողներն կը համարէին զինքը՝ իր նշանածին հետ կարտայի լճին խորը թաղուած: Սակայն իրեն շատ տարօրինակ կ'երևէր, որ ցարդ Հասարակապետութիւնը ո և է պաշտօնակալ մը չէր դրկած գեղեցիկ կղզին, իրեն անյայտանալուն պատմութեանը տեղեկանալու, որ գէթ ամենուն խորհրդաւոր բան մը երևցած պիտի ըլլայ: Ամէն օր տենդոտ անհամբերութեամբ, այս պատգամաւորութեան կ'սպասէր յուսալով անշուշտ՝ վարպետութեամբ կամ յանդգնութեամբ անոր հետ հաղորդակցութեան մէջ մտնել:

Մինչև այն վայրկենին հասնելուն՝ Վենեճիան իւր բոլոր ուժերն և իր կորովն



Ֆանդլ,



միացուցած էր՝ Մարդինենկոյի հանդէպ իր ունեցած դժուարութեանց տողալու, և կուսակալին կողմէն յառաջ գալիք ձեռնարկութեանց դէմ դնելու:

Ստոյգն ըսելով, Մարդինենկոյի բռնութիւններն գործնական կերպարանք մը առնելու երևոյթն չունէին, թէպէտ Աղբիականին աղջիկը միտքը բերելով այն չար հոգւոյն խորը քնացող մըրիկը, քանի մը անգամ սրտազոզ ունեցաւ:

Սակայն կուսակալն իր ձեռքին մէջ վենեճիան ունենալէն ի վեր, իր անձին տեսակ մը պատիւ սեպեց՝ առաջինէն աւելի ազատ ցուցընել իր գերին: Երբէք անոր չէր ներկայանար առանց կանխիկ իրեն հաճութիւնը ընդունելու: Անգամ մը երբ անոր դիմացը ներկայացաւ, նախ իր յիմար կրքին վրայօք մեծագոյն զգուշութեամբ խօսեցաւ. սակայն վենեճիային արհամարհանքէն զայրացած՝ իսկոյն մոռցաւ իրեն մտադրած ծրագիրն, և բարկութեամբ ահաւոր սպառնալիքներ բերնէն հանեց, ապա սկսաւ ջերմագին աղաչանքներ և խոնարհագոյն աղերսներ ընել: Ամէն ինչ անօգուտ. Աղբիականին աղջիկը թէ



խիստ և թէ անուշ խօսքերուն սա պատաս-  
խանը միայն կուտար:

— Կը սիրեմ Ֆէլիչէ Պատոէրը:

— Սակայն ինքը մեռած է, գոչեց  
կուսակալն, այս պարզ խօսքերէն խոցուած:

— Շատ ազէկ, պիտի սիրեմ իր յի-  
շատակը, պատասխանեց վենեճիան իւր  
սովորական քաղցրութեամբ: Երբ իմ ա-  
զատութիւնս վերստանամ, պիտի քաշուիմ  
Ազնուական Օրիորդաց վանքն, ուր ան-  
ցուցի իմ երջանիկ մանկութիւնս, սիրա-  
կան քոյրերս զիս ուրախութեամբ պիտի  
ընդունին, և Մեծաւոր մայրս պիտի բա-  
նայ ինծի իր բազուկները: Այսպէս պի-  
տի իրականանայ իմ ամբողջ կենացս և  
բազը. նուիրել կեանքս Աստուծոյ:

— Իսկ Աւագանին, ըսաւ Մարգինեն-  
կոյ:

— Աւագանին, կրկնեց վենեճիան, պի-  
տի չունենայ անշուշտ բարբարոսութիւնն՝  
ամուսնութեան մը դատապարտելու զոր  
իմ սիրտս կը մերժէ: Կարտայի լճին այն  
տխուր ողբերգութենէ յետոյ, որուն վրայ  
չեմ ուզեր խօսիլ, վստահ եմ հաստատա-  
պէս թէ ձերակոյտն, որուն որբուհին եմ,  
իմ ինդիրս սիրով պիտի ընդունի:

Այս էր մօտաւորապէս Ադրիականին  
աղջկան՝ կուսակալին հետ ըրած խօսակ-  
ցութիւնը: Մարգինենկոյ այս տեսակցու-  
թենէն յետոյ դուրս ելաւ՝ գրեթէ յուսա-  
հատութենէ խելագարած: Կը ջանար իւր  
ներքին մոնչող մըրիկն՝ մոլեգին գործու-  
նէութեամբ մը մարել: Կղզիին մէկ ծայ-  
րէն միւսը կը վազէր, իւրաքանչիւր կէտը  
ուր որ կրնար վտանգ մը սպառնալ պաշտ-  
պանողական վիճակի մէջ կը դնէր: Մար-  
գինենկոյ լաւ գիտէր՝ թէ Պերճափայլ Հա-  
սարակապետութիւնն առանց յոնքերը  
պոստելու պիտի չի տեսնէր իրեն ըրած  
յանդուզն գործերը: Սոյն անունը կուտար  
քանի մը օրէ ի վեր գործած ոճիւրներուն:  
Կուսակալը կը մտածէր թէ՛ Ֆիամէղդային  
փախուստն և Ռիքարտոյին անյայտանալը  
(չէր տարակուսէր գրեթէ ասոնց հետ նաև  
Ֆէլիչէ Պատոէրին անունն կցել), և ա-  
նոնց հաւանական ներկայութիւնը վենեա-  
կոյ մէջ՝ իր դէմ հասարակաց կարծիքը  
պիտի գրգռէր: Որչափ ալ իր իշխանա-  
կան դիրքը բարձր ըլլար, սակայն ձերա-  
կոյտը պիտի պարտաւորուէր միջամտելու:  
Արդ, այս մարդը իւր գոռոզ յիմարութիւնն  
այնքան հեռուն մղեց՝ որ միտքը զբաւ



ուժի դէմ ուժով դիմադրել: Անոր համար վեհապետի հովն առած՝ աճապարանօք ճշմարիտ փոքր զօրարանակ մը պատրաստեց, որուն ձեռքով կրնար եռապատիկ աւելի զօրութեան դէմ պաշտպանել ինքզինքը, շնորհիւ լճին մէջ կղզիի մը բնական ամուր զլրբին, առանց հաղորդակցութեան ո՞ր և է ծովու հետ:

Կղզւոյն այն կետերուն վրայ, զոր կուսակալը ամենէն աւելի վտանգաւոր կը համարէր, պահանորդաց փոքր զունդեր հաստատուած էին: Այս պահանորդաց միոյն մէջ կուզենք մեր ընթեցողը առաջնորդել քանի մը վայկեանի համար:

Չինուորները նստած իրենց զէնքերը կը փայլեցնէին, որոնց մէջ կը գտնուէր ծերունի մը գրեթէ ութսունամեայ, տեսակ մը ծերուկ պարտ՝ որ երկարատե պահպանութեան ձանձրոյթը փարատելու համար, անցած ժամանակներու զէպքերը կը պատմէր այս փոքր պահանորդ գնդին: Իրեն մեծագոյն ճարտարութիւնն էր պատմածներն ունկնդիրներուն հաճելի և հետաքրքրական ընծայել:

1. Վիպասան հին գաղղիացոց:

Ծերուկը այս պատմութիւններէն մին լըմնցուցած էր, իւր շուրջը գտնուողները կը գոչէին.

— Նորէն, նորէն, ուրիշ պատմութիւն մը:

— Է, ըսաւ ծերուկը ժպտելով, այնչափ պատմութիւն պատմեցի ձեզի որ բոլոր պաշարս սպառեցաւ: Նոր բան մը չեմ գիտեր:

— Այն տունն պատմէ մեզի ֆակոկե, ըսաւ մէկը:

— Այո՛, այո՛, ֆակոկե:

— Ֆակոկե, շատ աղէկ, ըսաւ ծերուկը:

Այս ֆակոկե շատ ախորժալուր պատմութիւն մ'էր, զոր ունկնդիրներէն իւրաքանչիւր ոք գրեթէ բերանացի գիտէր, սակայն ամէն անգամ պատմուելուն՝ նոյնպէս հետաքրքրական կ'ըլլար:

Ծերուկն իր բոլորտիքը ճարտարախօսի մը նշանակիչ ակնարկ մը պտըտցուց, իբր թէ կ'ուզէր իր ունկնդիրներուն համակրութեան վրայ ապահովնալ: Սկսաւ այսպէս.

«Գուրջ ամէնքնիդ ալ լսած էք Գարմաշի ոլին համբաւը: Շատ նշանաւոր սպարապետ մ'էր նա այս դարուս սկիզբը: Ես



որ կը խօսիմ ձեզի, իրեն հրամանատարութեան ներքև ծառայած եմ: Գարմանիօլը Միլանու դքսին բանակներուն հրամանատարութիւնը վարելէն յետոյ, զգուհելով իր տիրոջմէն եկաւ Վենետիոյ ծառայութեան մէջ մտաւ. ու իրեն յանձնուեցաւ այն զօրաբանակին հրամանատարութիւնն՝ որ պիտի կռուէր այլազգեաց դէմ, որոնք կրեատէ կղզին առած էին: Նոյն զօրաբանակին մէջ ես ալ կը գտնուէի: Բազում տարիներ տեսայ Գարմանիօլը գործի վերայ, նորէն կը կրկնեմ, հռչակաւոր զօրավար մ'էր, և երբ պէտք ըլլար առաջնորդել բանակին՝ յարձակում մը տալու, ինքն երբէք ծառայական խումբին մէջ չէր մնար: Ո՛ր և է վտանգէ չէր փախչեր, և իր անձին չափ՝ ուրիշներուն ալ հոգ կը տանէր: Ասոր համար զինուորները զինքը կը պաշտէին:

«Սակայն ձերակուտին աչքին՝ զօրավարը պակասութիւն մը ունէր: Իր ամբողջ յարգանքը կը կեդրոնացընէր անոր վրայ որ կը զգար սուրին բաղխիլն իր ձախ ազդրին: Իսկ անոնք որ մուշտակապատ թաւիշէ զգեստներ կը հագնին և բարձրագոյն խորհրդարանի մէջ կը նստին, ա-

նոնց հետ այնպէս կը վարուէր ինչպէս զինուոր մը զինիի պարապ ամանի մը հետ: Գուր ձեզմէ դատեցէք, միթէ իրաւունք չունէր: Քա՛ջ Գարմանիօլ»:

Հոս ձերուկն իր հին զօրավարին յիշատակին՝ աչքէն թափած արցունքի կաթիլը սրեց, յետոյ շարունակեց:

«Երբ ձերակոյտը որոշումն կուտար իր հրամանները կատարելու, գործը բոլորովին տարբեր կերպարանք կ'առնուր: Գուր ալ կրնաք խորհիլ թէ իմ Գարմանիօլս զանոնք իր ձիուն թամփին ներքևը կը դնէր, և իւր բոլոր յարգանքները, իւր հնազանդութեան հաւաստիքը յայտնելէն յետոյ ձերակուտին, իր գիտցածը առաջ կը տանէր, և շատ իրաւունք ունէր: Միթէ դժնդակ բան չէ՞, կը հարցունեմ ձեզի, քա՛ջ զօրավարի մը համար որ գաղափարի տէր է, իր գործին լաւ տեղեակ է, որ գիտէ թէ իր ձեռքով պատրաստած զօրաբանակէն ինչ օգուտ կրնայ քաղել, պատերազմի հրաման ընդունիլ կամ ասոր նման բան մը այն բարձրապատիւներէ՝ որոնք Ս. Մարկոսի հրապարակէն զատ ուրիշ պատերազմի դաշտ չեն տեսած, և կը յաւակնին զօրաբանակի մը



հրամայել, ինչպէս թէ՛ ես պատարագ քսելու յաւակնէի:

«Սակայն ծերակոյտը կը շարունակէր իր հրամանները տալու, և Գարմանիոլ զանոնք չի կատարելու:

«Ծերակուտին և մեր սիրելի զօրավարին մէջ եղած այս տարածայնութեան լուրը ամբողջ բանակին մէջ տարածուած էր, և մենք զինուորաց Գարմանիոլին իրաւունք կուտայինք, և կ'ըսէինք մեր մէջ.

— Մի՛ վախնար, Գարմանիոլ, հրամայէ մեզի սեւազգեստները զարնել, առանց տատամսելու կը կատարենք:

«Գարմանիոլ զիտէր արդէն այս մանրամասնութիւնները: Երբ բանակին մէջէն կ'անցնէր կը ժպտէր մեզի, և վստահանալով իւր քաջ զինուորաց կարծեաց, և ի հարկին՝ անոնց զէնքերուն վրայ, համարձակօրէն դէմ կը դնէր Աւագանուոյն:

«Գարմանիոլին յամառութիւնը՝ իր իրաւունքները պահելու և միայնակ վարելու իրեն յանձնուած զօրաբանակին հրամանատարութիւնը, ծերակուտին գործին չէր գար: Չանձրացած և զայրացած՝ տեսնելով որ Գարմանիոլը յամառութեամբ կը մերժէ իրեն հնազանդիւր, խորհրդա-

րանը կ'որոշէ վերջապէս զօրավարին պատգամաւոր մը զրկել, յանձնելով անոր՝ զինքը ետ կանչելու հրամանագիրը: Ծերակոյտն առանց վարանելու Գարմանիոլը հրամանատարութեան վար կ'առնու: Կրնաք երևակայել արդէն զաւակներս, թէ այս բանս՝ Գարմանիոլին խիստ ծանր պիտի գար: Ուստի սաստիկ զայրացած՝ իշու մը վրայ նստեցուց պատգամաւորը, և վիզէն նախատական խօսքերով տախտակ մը կախած՝ ամբողջ բանակին մէջ պտըտցնել տուաւ: Յետոյ վենետիկ վերադարձուց խեղճ պատգամաւորը, յայտարարելով վճռաբար թէ՛ պիտի շարունակէ գունդերուն հրամանատարութիւնը: Որչափ գոհ էինք մենք:

«Այս արկածին վրայ այլ ևս չէր մըտածուէր, երբ օր մը դաշտին մէջ գունդերը պատերազմի կարգով շարուած էին, զօրահանդէս կատարելու, ամենուս անձանօթ անձ մը, թէպէտ բարձր պաշտօնակալի համազգեստով, ձիու վրայ նստած անցաւ դրօշներու և զինանշաններու զինացան, և անոնցմէ տասը քայլ հեռաւու մացէն, և անոնցմէ տասը քայլ հեռաւուրութեամբ՝ զրեթէ մէջ տեղը կեցաւ, երեսը զինուորաց դարձուցած: Այն ատեն



իր գրպանէն հանեց կարմիր խոյր մը՝ վրան ձէգին մը կախուած և զայն զուլսը դրաւ:

« Դուք տակաւին չէք ունեցած նման զգացողութիւն մը. ամբողջ զօրաբանակին զօրաց վրայէն սարսուռ մը անցաւ:

« — Պանդէն, գոչեցին սարսափմամբ:

« Գիտէք թէ ո՞վ է Պանդէն: Ծերակուտին, Տասանց ժողովոյն, Երբց ժողովոյն փոխանորդն, կենդանի ներկայութիւնն. Խուզարկութիւնն՝ անձնաւորեալ մարդու մը մէջ, Մեծ Տաւուտեղն (Messer Grande): Մեզմէ ոչ ոք ցարդ առիթ ունեցած էր տեսնելու Պանդէն, որովհետև իր ներկայութիւնը քիչ անգամներ, և միշտ ծանր խնդիրներու ատեն կ'երևնայ: Ուստի երբ մենք յարգական սարսափման մը մէջ կը գտնուէինք, մի և նոյն ատեն Պանդէին տեսիլը կարծես հայրենեաց հոգին մեզի կը ներշնչէր և կ'արթնցնէր ազնուական զգացումներ:

« Այս մեծ Հասարակապետութիւնն, Ազրիականին թագուհին, այս ահաւոր զօրութիւնն, այս Վենետիկը կանգուն իւր լճակներուն մէջ, զինուորի մը հետտութիւնը անոր գոյութեանը սպառնա՞յ. ո՞չ, այս բանս կարելի չէր:

« Ահաւասիկ ինչ որ մեզմէ իւրաքանչիւր ոք կ'ըսէր՝ Պանդէն տեսնելուն: Որով Մեծ Տաւուտեղն իր բերանը չի բացած արդէն զմեզ իր կողմն շահած էր, և ամէն ոք կը կրկնէր ցած ձայնով այս խորհրդաւոր անունը.

« — Պանդէն, Պանդէն:

« — Այո՛, ըսաւ Պանդէն ուժգին ձայնով մը, որ իսկոյն լռեցուց բոլոր մեր ձայները. Ես եմ (Io sono):

« Յետոյ աւելցուց.

« — Ծերակոյտը հրամանատարութեանէն վար կ'անուր Գարմանիօլն և զինքն ամբաստանեալ կը հրատարակէ:

« Եւ զառնալով Գարմանիօլին սերտ բարեկամներուն, ըսաւ.

« — Չերբակալեցէք ձեր նախկին զօրավարն:

« Եւ անոնք զինքը ձերբակալեցին:

« — Շղթայի զարկէք զինքը:

« Եւ անոնք հնազանդեցան:

« Ահա եղածն, զաւակներս, և այն զօրավարն, զոր մենք ամենքնիս ալ կը պաշտէինք, Վենետիկ տարուեցաւ իբր վատ ոճրագործ մը, որուն դէմ մեզմէ ոչ ոք համարձակեցաւ բողոքել. և երբ ըրա-



ձէղղայի վրայ գլխատուեցաւ իբր մատ-  
նիչ պետութեան, ամենքնիս ալ գովեցինք  
դատակնիքը:

« Ահաւասիկ, զաւակներս, թէ ինչպի-  
սի՛ կարողութիւն ունի Պանդէն »:

Երբ բանակին երիցագոյնը իր երի-  
տասարդ զինուորակիցներուն Գարմանիու-  
լին պատմութիւնը կ'ընէր, կուսակալին  
պաշտօնեաներէն մին կը ներկայանար ի-  
րեն ծանուցանելու թէ՛ գործակալի նման  
մէկն, ընկերակցութեամբ իր գրագրին, եր-  
կուքն ալ սև բրդեայ զգեստներ հագած  
և գլուխնին նոյնպէս սև խոյր դրած, գե-  
ղեցիկ կղզին ցամաք ելած են:

— Գիտե՞ս թէ ինչ կ'ուզէ այս գոր-  
ծակալը, հարցուց Մարդինենկոյ:

— Այո՛, տէր, կը համարիմ թէ ծե-  
րակուտին վճիռը ձեզի հաղորդելու պաշ-  
տօնը ստանձնած ըլլայ:

Կուսակալը նախ ապշեցաւ, այնքան  
անկարելի կ'երևար իրեն այս լուրը —  
փոխանակ իր վրայ զօրաբանակ մը դրկե-  
լու, որուն կ'սպասէր, գործակալ մը  
դրկել — յետոյ անհաւատալի կատաղու-  
թիւն մը եկաւ վրան:

Ինչ պէտք էր ընել, ինչպէս պիտի  
ցուցնէր իր բոլոր արհամարանքը ծերա-  
կուտին վճոյն դէմ: Ուստի գոռոզ խե-  
լագարութենէ մը մղուած, ահա թէ ինչ-  
պիսի տարօրինակ եզրակացութեան յան-  
գեցաւ:

— Հոս կանչէ իմ Սէն-Լէփէր միմոսս,  
հրամայեց անոր:

Եւ հազիւ թէ Սէն-Լէփէր իր սենեակը  
մտած էր, ըսաւ:

— Կրնա՞ս դու իմ տեղս փոխանակել,  
և լաւ կերպով իմ դերս խաղալ:

— Դժուարին բան չէ, ըսաւ միմոսը  
լրբութեամբ: Խենթութեան մէջ, երեսդ  
զարնել չըլլայ, դու կրնաս ինծի դաս  
տալ:

— Հրամմէ՛:

— Քու դերդ բնական ոճով խաղալու  
համար պէտք է որ սովորականէն ա-  
ւելի յիմար ցուցնեմ ինքզինքս:

— Միմո՛ս, քու չափէդ դուրս կ'ելես:

— Բնականապէս, պատասխանեց Սէն-  
Լէփէր, որովհետև իմ կուսակալիս դերը  
կ'զգենում:

Մարդինենկոյ շրթունքներուն վրայ թէ-  
թև ժպիտ մը ունեցաւ և հաճեցաւ ըսելու.



— Լաւ ըսիր, իրաւ է: Նոյն կերպարանքը ա՛ն այն երկու յիմարներուն դիմաց՝ զոր ձերակոյտը յանդգնած է զրկելու ինծի: Զքեզ յաւակնոտ, ամբարտաւան և լիրբ ցըցուր, և այսպէս քու դերդ լաւ խաղացած պիտի ըլլաս:

— Ո՛հ, ես չեմ կարող քու բարձրութեանդ հասնիլ: Լրբութեան մէջ դու վեհագոյն տեսակէն ես, բարեկամս, ըստ անուղղայն Սէն-Լէժէր:

Կուսակալը զսպուած բարկութեամբ չի լսելու զարկաւ, և դառնալով իր ծառաներէն միոյն՝ որ իր հրամանին կ'սպասէր, ըսաւ.

— Հիմայ ներս մտցուր նորին վեհափառ գործակալը: Սակայն ոչ թէ հոս, թէ ատրոնը շատ նեղ կուգայ, դերակատարները չեն կարող հոս ազատօրէն շարժիլ: Մեծ գաւթին, այս ինքն զղեակին պատուոյ գաւթին մէջ. ուր նախ ժողովին ամբողջ իմ տանս մարդիկը, սկսեալ առաջին պաշտօնակալէ մինչև յետին ծառաները:

Կուսակալին հրամաններուն համեմատ ամէն ինչ կատարուեցաւ: Միմոսը գաւթին սանդուխներուն գլուխը կեցաւ, շրջա-

պատուած ծաղրածու արքունականներով, որոնք էին խոհեակներ, պնակ լուացողներ և գեղեցիկ կղզւոյն բոլոր ստորին ծառաները. ամէն ոք, ըստ հրամանի Սէն-Լէժէրի, քովէն կախած էր իր պաշտօնին գործիքներն, իբր շքանշան:

Ամբողջ սպասաւորը և զինուորականը, պատուոյ գաւթին բոլորտիրը կրկին շարք ձևացուցին, մէջ տեղը պարապ ձգուեցաւ:

Կուսակալը առանձին կը կենար գետնայարկին պատուհաններէն միոյն մօտ, երկաթեայ լայն պատշգամի մը ետին: Անկից կրնար տեսնել անցած դարձածն առանց ինքը յայտնի տեսնուելու:

Երբ ամէն պատրաստութիւնը աւարտեցան, Սէն-Լէժէր միմոսը հրամայեց վեհափառութեամբ խոհեակի մը, որ զինուորական պատգամաւորի կերպարանքն առած էր, ներս մտցունել գործակալն իրեն զրազրին հետ. հրամանը կատարուեցաւ:

Ասոնք երբ սրահին մէջ մտան, իրենց ետեէն դռները զոցուեցան, ծառաներուն և զինուորականաց շղթան նորէն ձևացաւ, և զայրոյթ զրգող երկու նորեկները պարապ ձգուած ընդարձակ միջոցին մէջ տեղը կեցան:



Ամենուն աչքերն այս երկու սևեր հա-  
զած մարդոց վրայ յառած էին: Գրագի-  
րը, հերակլեան կերպարանքով, բարձրա-  
հասակ կորովի անձ մը, համարձակօրէն  
կը ներկայացընէր իր դերը. սակայն գոր-  
ծակալը կարճահասակ ծեր մը, զլուխը  
երերուն, իր վրայ ուղղուած հազարաւոր  
աչքերուն հանդէպ յայտնապէս խռոված  
կ'երևար. թէպէտ կը ջանար կրցածին  
չափ անվեհեր կերպարանք մը ցոյց տալ  
և իր այլայլութիւնը ծածկել:

— Դճւր էր մեր գեղեցիկ կղզւոյն  
դղեակը մտնել ուզողները, հարցուց մի-  
մոսը գործակալին:

— Այո՛, պատասխանեց գործակալը:

— Ի՞նչ նպատակաւ:

— Վենետիոյ Պերճապայճառ ծերա-  
կուտէն ընդունած յանձնարարութիւնը գոր-  
ծադրելու նպատակաւ:

— Լաւ, ըսէ՛ք, ո՞րն է այն յանձնա-  
րարութիւնը, պատասխանեց միմոսն ա-  
ռանց կորսնցնելու իր միմոսական ծան-  
րութիւնը:

— Նախ կ'ուզեմ, ըսաւ սևեր հազած  
մարդն աւելի վստահաբար, Մկրտիչ Մար-  
դինենկոյի, Բատուայի կուսակալին ներ-

կայանալ, որուն հասցէին բերած եմ յանձ-  
նարարութիւնը:

— Բատուայի կուսակալն էս եմ, բա-  
ցականչեց միմոսն այնքան ծոմակելով որ  
բոլոր հանդիսատեսներն երկարօրէն ծի-  
ծաղցուց:

Այս միմոսաբանութեան վրայ կարճուկ  
ծեր գործակալը սաստիկ զայրացաւ, բան-  
ջարի պէս կասկարմիր եղած և կոռուղ  
աքաղաղի նման բխտերուն վրայ շտկուած.

— Դուք, ըսաւ, թէ որ չեմ սխալիր  
կուսակալին միմոսն էք, և ձեզի  
հետ բանակցութեան մտնելու միտք չու-  
նիմ. վասն զի այսու խաբեբայութեան  
մը ձեռնտու եղած պիտի ըլլամ, որ իմ  
ստանձնած պաշտօնիս յարգը կը նուա-  
սացընէ:

— Անշնորհք, ի՞նչ ըսել կուզէք, ըսաւ  
միմոսը Մարդինենկոյէն բարձր հով մը  
առնելով, անգամ մ'ալ կը ծանուցանեմ  
ձեզ թէ ես Բատուայի կուսակալն եմ:  
Խօսեցէք հիմայ, ի՞նչ ընելու եկեր էք  
տանս մէջ. լաւ գիտցէք թէ իշխանու-  
թեանս մէջ պատժելու և վարձատրելու  
կարողութիւն ունիմ, և կրնամ զձեզ այս  
պարսպաց կեռերէն կախել, որպէս զի



սորվիր մեր իշխանական անձին պարտուկատշաճ յարգանքը:

Խեղճ գործակալը զարհուրեցաւ. երկիւղագին ակնարկ մը պտըացուց զինեալ զինուորներով խոնուած գաւթին բոլորտիրը, զոր զրահապատ ցանցի մը նման շրջապատած էին, ուսկից անկարելի էր դուրս սահիլ. բոլորովին միտքը փոխած էր եկակոչ ընելու, բայց տեսնելով իր զրագրին անվեհեր կերպարանքը, որոշեց պատժել այս յանդգնութիւնը, և ամբողջ հանդիսատեսներէն լսելի՝ ամուր ձայնով մը ըսաւ:

— Առանց բողբոջելու պիտի չի թողում՝ ծաղրածել անձիս վրայ զիս հոս զրկող ազնուաշուք ձերակոյտը: Գուր Բատուայի կուսակալն չէք, դուք իրեն Սէն-Լէֆէր միմոսն էք: Սակայն հոգ չէ. կուսակալին ամբողջ ծառաները հոս ժողուած են. անոնց դիմացը կը խօսիմ որպէս զի ամէն ոք զիտնայ: Վենետիոյ ձերակոյտը զրկած է զիս հոս ծանուցանելու Մկրտիչ Մարգինենկոյի, Բատուայի կուսակալին, թէ ութ օրուան մէջ պէտք է ներկայանայ ձերակուտին ատեանին դիմաց որպէս զի իր գործոցը հաշիւն տայ և իր վրայ

ճանրացած ամբաստանութեանց դէմ ինքզինքն արդարացնէ: Ահա ըսելիքս:

Վենետիոյ կառավարութեան ներշնչած յարգանքն ու սարսափն այնքան մեծ էր ժողովրդեան աչքին դիմաց, որ գործակալին խօսքերը խորին լուսութեան մէջ մըտիկ եղան: Ասոր վրայ կարճուկ մարդը քաջալերուած կրկին սկսաւ խօսիլ, որուն ճարտարախօսութիւնը կ'երևի թէ չէր աւարտած:

— Պերճափայլ Հասարակապետութեան ինձի յանձնած պատգամաւորութիւնն այս է ահա, որուն վրայ հսկէ Աստուած: Գալով հոս ներկայացած յանդուգն կատակախաղին, իմ զրագիրս անոր տեղեկագիրը պիտի տայ, որպէս զի նորին Պերճափայլութիւնը ստուգապէս զիտնայ թէ Պետութեան պատուակալ անձ մը ինչ յանդգնութեամբ կը համարձակի զիս հոս զրկող ձերակոյտն՝ անձիս վրայ ծաղրածել:

Գործակալին խօսելու ատեն, Սէն-Լէֆէր միմոսն իր աթոռին վրայ կը ցատկոտէր, կրակ կտրած երկաթէ ցողունի վրայ խաղացող կապկի մը նման: Երբ կ'իջնէր լեզուով պատասխանելու կը պա-



տրաստուէր, կուսակալն երեցաւ գաւթին սանդուխին վրայ, ամէն որ աճապարեց անոր ճամբայ բանալու:

— Քաջ ես, միմոս, ըսաւ Սէն-Լէփէ-ըին, շատ լաւ խաղացիր քու դերդ:

— Անշուշտ, կարող չէիր դու այնքան յաջողիլ, պատասխանեց միմոսը իր սովորական համարձակութեամբ:

— Բաւական է, միմոս, ըսաւ կուսակալը իւր սե յօնքերը ամփոփելով: Վարձքդ կ'առնուս, քու դերդ լրմնեցաւ. լո՛ւ՛ դուն:

Այս անգամ Սէն-Լէփէր չի համարձակեցաւ խօսքով իր զգացմունքը արտայայտել, գոհ եղաւ միայն՝ միմոսական ծիծաղաշարժ ձևեր ընելով: Իսկ կուսակալը՝ գործակալին դառնալով, ըսաւ.

— Հիմայ ես պիտի պատասխանեմ այս գեղջուկ իմաստակիրն:

Այս խօսքերն ըսելու ատեն, օրինաց պաշտօնեային վրայ շեշտակի ակնարկ մը կը ձգէր իւր կապուտցած մեծ սև աչքերով, և իր դէմքն աներևակայելի կատաղի կերպարանք մը առած էր: Նշան ըրաւ շան պահապաններուն, որոնք գաւթին խորը փոքր դրան մը դիմաց կեցած՝ իր հրամաններուն կ'սպասէին, ըսաւ անոնց:

— Ի՛շտ, ձեզի կ'ըսեմ, բերէ՛ք շուները:

Մածուկ դուռը բացուեցաւ, տասուերկու հատ մոլոս ըսուած կատաղի շուներ կապուած՝ պահապաններու ձեռքը, զոյգ զոյգ բակին մէջ մտան: Գործակալը գունատած, սարսափահար կը դիտէր այս պատրաստութիւններն, իր սրունքները կը դողդոջային, սակայն քաջութիւն ունեցաւ դարձեալ՝ ըսելու.

— Աստուծոյ սիրոյն, ի՛նչ կ'ուզէք ընել:

— Թողուցէք շուները գործակալին վրայ, ըսաւ կուսակալը փոխանակ պատասխանելու:

Այս կէս վայրենի շուներն, արիւնարբու բերանին բացած կը նայէին, իրենց կապերը փրցնելու աստիճան ձգտելով:

— Օ՛, բռնէ՛, բռնէ՛, կը գոչէին պահապանները, ցուցնելով շուներուն՝ խեղճ գործակալը:

Շուները պէտք չունէին զրգուելու. հազիւ թէ կապերուն ճանկերը բացուեցան, ահաւոր գազանները յարձակեցան սարսափահար գործակալին վրայ, որ զրեթէ բնազդմամբ զրագրին կռնակը ապաստանեց:



տանած էր օգնութիւն և պաշտպանութիւն գտնելու համար անկէ, և յիրաւի՝ գտաւ այս պաշտպանութիւնը: Գրագիրը կը կենար բաց պատուհանին դիմաց ուր տեսանք կուսակալը, երբ Սէն-Լէժէր լրբօրէն կը խաղար միմոսական տեսարանին առաջին մասը: Այս գրագիրն, ինչպէս վերն՝ ըսինք, հսկայ երիտասարդ մ'էր. բռնելով իր տէրը մէջքէն և անհաւատալի ջղային զօրութեամբ, երկաթեայ պատշգամին վրայէն սրահին մէջ նետեց:

Ռամիկը միշտ կը հիանայ ֆրիզիական ուժին արտակարգ երևութիւն վրայ. անոր համար ամենքը միաբերան ծափահարեցին այս ճարտար գործը: Նոյն իսկ սքանչացողներէն քանի մը հոգի համարձակեցան գոչելու.

— Կեցցե՛ս, գրագիր:

Սակայն երբ գրագիրը երեսը դարձուց, վրայէն բրդեայ սև վերնագգեստը ինկած էր և հանդիսականաց դիմաց շնորհալի կերպարանքով ազնուական երիտասարդի մը երևոյթը ստացած էր սև թաւիշէ բաճկոնակ մը հագած: Չեռքը կարմիր խոյր մը, գայն գլուխը դրաւ:

Իսկոյն մեծ իրարանցում մը եղաւ:

— Պանդէ՛ն, Պանդէ՛ն, գոչեցին կուսակալին ծառաները շփոթած:

— Այո՛, ես եմ Պանդէն, ըսաւ ազնուական երիտասարդը խոյրին վրայէն կախուած ծէգինը ցուցնելով: Ես եմ *Messer grande* (մեծ տանուտէրն): Հոս ահա մինակ եմ ես և դուք հինգ հարիւրէն աւելի էք: Սակայն ես կը ներկայացնեմ օրէնքը և դուք թշուառական խոռովարարի մը գործիչներն էք, զոր ձեր դիմացը պիտի ջախջախեմ:

Կուսակալը տեսնելով Պանդէին բարձրագոյն հեղինակութեամբ խօսիլն, այնպիսի կատաղի բարկութիւն մը եկաւ վերան՝ որ նախ՝ միտքը բացատրելու բերնին խօսքերը կորսնցուց: Վերջապէս բակին սանդուխէն քանի մը աստիճան վար իջաւ և ցուցնելով Պանդէն՝ որ անվերջաւ և ցուցնելով Պանդէն՝ որ անվերջաւ հեր ոտքի վրայ, թեքը ծալած, միայնակ՝ սրահին մէջ տեղը կը կենար.

— Կը հրամայեմ ձեզի, ըսաւ իր շուրջը գտնուող պաշտօնակալաց, կը հրամայեմ, ձերբակալեցէք այս մարդը:

Սակայն պաշտօնակալները փոխանակ կուսակալին հրամաններուն հնազանդելու՝



բարեկեցին և մնացին անշարժ իրենց տեղերն: Այն ատեն կուսակալը դառնալով բազմաթիւ զինուորներուն որ բակին մէջ շարուած էին, գոչեց.

— Դո՞ւք ալ չի լսեցիր: Հրաման տուի ձերբակալել այս մարդն, որ ստախօսութեամբ ինքզինքը Ֆանդէ կը կոչէ:

Զօրաց մէջ, ալեկոծեալ ծովի մը կոհակներուն նման, խուլ շառաչ մը լսուեցաւ և ամէնքը միաբան բակին խորը քաշուեցան:

Այսքան զարհուրանք ներշնչած էր Ֆանդէին ներկայացուցած խորհրդաւոր իշխանութիւնը. բոլոր այս զինուորներն որոնք ո՞ր և է առիթի մէջ իրենք զիրենք մահուան վտանգի մէջ կը դնէին, Մարդինենկոյին մէկ նշանին, կը մերժէին ձեռք վերցնել միայնակ և անզէն մարդու մը վրայ, որ կը ներկայացընէր օրէնքը, Messer grande:

— Զեր մէջէն, ըսաւ Ֆանդէ, ո՞վ է բարձրագոյն պաշտօնակալը:

— Ե՛ս, ըսաւ ձայն մը:

— Յանուն խուզարկութեան, ըսաւ Ֆանդէ, կը հրամայեմ ձեզի ձերբակալել կուսակալը:

Առանց կրկնել տալու, պաշտօնակալը մօտեցաւ և կատարեց հրամանը, հակառակ կուսակալին տուած անէծքներուն, որ կը մաքառէր գոչելով.

— Կը բողոքեմ, գործակալը միայն ձերակուտին դիմաց ներկայանալու պատգամաւորութիւնը բերաւ:

— Դուք մերժեցիր այս պատգամաւորութեան հնազանդիլ, պատասխանեց Ֆանդէ: Երից դատարանը նախատեսելով այս բանը, զձեզ ամբաստանեալ վճռեց:

— Զիս դատող ատեանին նախագահն ո՞վ պիտի ըլլայ, հարցուց կուսակալը:

— Տոժն անձամբ:

— Շատ լաւ, ըսաւ Մարդինենկոյ, գոնէ անկէ վրէժս առնելու միջոցն ունիմ:



ժ.Գ.

## ԵՐԿՈՒ ՄՇՈՒՇԻ ՄԷՋ

Նախընթաց գլուխներէն միոյն մէջ պատմեցինք թէ ինչպէս Ֆրանչեսքոյ Ֆոսքարի տոժը անարգամեծար սիրով ընդունեցաւ Ֆիամէզդան:

Սկսաւ նախ ամենայն բարեսրտութեամբ մտիկ ընել, պահելով միշտ այն արժանաւժայել հանդարտութիւնը, որուն իր ծերութեան հասակը և մանաւանդ իր իշխանութեան փորձառութիւնը կարի ընտելացուցած էին: Սակայն քանի որ Ֆիամէզդան իր պատմութիւնը առաջ կը տանէր՝ ծեր տոժը կ'սկսէր քիչ քիչ իր պաղարիւնութիւնը կորսնցնել: Այտեքը թեթևօրէն կը կարմրնային, ճաղատ ճակտին խորշոմներուն մէջ մշուշներ կը խտանային. և երբ մանկամարդ աղջիկը Բատուայի կուսակալին անհաւատալի ոճիրներուն շարքը, սկսեալ Աղբիականին աղջկան նշանախօսութենէն, թուելը լրմնցուց, Ֆրանչեսքոյ Ֆոսքարիի վրայ կատա-

ղի զայրոյթ մը եկաւ: Պետութեան զըլխոյ մը բնական զգօնութիւնը յանկարծ տեղի տուաւ իր մէջն արթնցած հին զինուորի բնաւորութեան:

Կատաղի շարժմամբ մը, երկու ձեռքով իր տոժական խոյրը բռնելով նետեց զայն կարասիի մը վրայ: Սենեկին մէջ սկսաւ անկանոն երթևեկել երբեմն բերնէն զարմացական և կիսկատար բառեր կը հանէր: Յանկարծ Ֆիամէզդային դիմացը կենալով, ըսաւ անոր.

— Աղջիկս, կրնաս դու բոլոր պատմածներդ փաստով ցուցընել:

— Այո՛, Բարձրապատիւ տէր. կրնամ ցուցընել, պատասխանեց Ֆիամէզդան հաստատական շեշտով մը:

— Քու խօսքդ բաւական չէ ինձի: Կը հասկընաս միտքս, փաստեր պէտք են:

— Ունիմ, Բարձրապատիւ տէր: Ինձի հետ միատեղ բերի վենետիկ՝ Ֆելիչէ Պատոէր պատրիկն և Ռիքարտոյ կոնտուլավարն, որ երկուքն ալ զո՞հ պիտի երթային Բատուայի կուսակալին: Պատոէրի պալատան մէջ կ'սպասեն Ձեր բարձր հաճութեան:

— Հոն կ'երթամ, ըսաւ Ֆրանչեսքոյ



Պոսքարի իր տոժական խոյրը զլուխը  
դնելով:

Ֆիամէղդան ուրախութենէ կը ճառա-  
գայթէր, և տոժին դիմացէն յառաջանա-  
լով՝ սենեակին դուռը բացած կ'սպասէր:  
Սակայն ծերը յանկարծ կանգ առաւ, իբր  
թէ իր ոտքերը մոզայիքէ յատակին վրայ  
գամուած ըլլային: Իր ճաղատ զլուխը կը  
շարժէր մեղմաղձօրէն և իր երեսին վը-  
րայ խորին վհատութիւն մը կը նշմա-  
րուէր:

— Ի՞նչ ունիք, Բարձրապատիւ տէր,  
հարցուց անոր Ֆիամէղդան:

— Մոռցեր էի, ըսաւ Պոսքարին դառ-  
նութեամբ, թէ Վենետիոյ տոժն եմ և իմ  
վեհապետութեանս անուրն ոտքիս ան-  
ցուած է:

— Ի՞նչ կ'ուզէք ըսել, Բարձրապատիւ  
տէր:

— Այս պալատին մէջ բանտարկուած  
եմ, խեղճ աղջիկ, և առանց ծերակուտին  
թոյլտուութեան կարող չեմ ասկից դուրս  
ելլել:

— Գուր Վենետիոյ իշխանը չէ՞ք, գո-  
չեց Ֆիամէղդա:

— Այո՛, պատասխանեց ծերունին՝ տե-

սակ մը մտամոլորութեամբ, եթէ այնու  
կը հասկընաս թէ Հասարակապետութեան  
կալանաւորն եմ, և ազատութիւն չունիմ  
վայրկեան մը իսկ բանտէս հեռանալ, ա-  
ռանց Բրեկատնէրուէն արտօնութեան:

— Աւաղ տէր, ըսաւ Ֆիամէղդան, որ  
խիստ այլայլած էր ծերունի տոժին այս  
տարօրինակ գաղտնիքը լսելով:

— Հոգ չէ, ըսաւ Պոսքարին վերստա-  
նալով իւր ամբողջ արժանապատուութիւնը.  
դարձիւր Ֆէլիչէ Պատտէրին քով և վստա-  
հացուր զինքը մեր բարեացակամութեանը  
վրայ:

— Այո՛, տէր:

— Կեցի՛ր, բառ մ'ալ, աւելցուց Պոս-  
քարին: Երիտասարդն որչափ ալ տկար  
ըլլայ՝ կրնա՞յ արդեօք դքսական պալատը  
ներկայանալ երբ իրեն հրաման ընենք:

— Կը յուսամ թէ կրնայ. Բարձրա-  
պատիւ տէր:

— Թող սպասէ ուրեմն մեր կարգա-  
դրութեան, ըսաւ Պոսքարին ճամբելով  
նաժիշտը, չենք ուշանար զինքը կանչելու:

Ֆիամէղդան դքսական պալատէն դուրս  
ելաւ բոլորովին հիասթափ եղած Վենետ-  
կոյ իշխանին ամենակարողութեան վրայ,




զոր անոր զլիաւոր առանձնայատուութիւնը կը համարէր. այսու հանդերձ մեծագոյն վստահութիւն ունէր Ֆրանչեսքոյ Ֆոսքարիին խոստմանը վրայ:

Այս բանիս մէջ գէթ չէր սխալած, վասն զի հազիւ թէ նոյն օրը ձերակոյտը ժողովեցաւ Մեծ-խորհրդարանին սրահը, տո՛ժը ներկայացաւ հոն, ծանուցանելով թէ կ'ուզէ Աւագանւոյն տեղեկութիւն տալ խիստ կարեւոր խնդրոյ մը նկատմամբ:

Խսկոյն թոյլ տրուեցաւ իրեն խօսելու, և տո՛ժն՝ առանց կիրքի, կատարեալ պազ արեամբ պատմեց թէ ինչպիսի՛ ամբաստանութիւնը կը ծանրանային Բատուայի կուսակալին վրայ, առանց ծածկելու նաև թէ այն եղածները յայտնուած են իշխանութեան, ստորին դասակարգին պատկանող կնոջ մը կողմանէ:

Երբ տո՛ժը Բրեկատնկրուե արդարութեան կոչ ընելէն յետոյ նստեցաւ. ձերակուտին բոլոր անդամներն, որ անշշուկ լուսթեան մէջ ունկնդրած էին Ֆրանչեսքոյ Ֆոսքարիին պատմածներուն, իրարու կը նայէին առանց բառ մը ըսելու: Ամբաստանութիւններն այնքան ճիշդ էին, այնքան պայծառ, և Ֆիլիչէ այնքան հանրա-

Այդտեսակով ԳԴԱ





ծանօթ մէկն էր, որ անկարելի կը թուէր տարակուսի ներքև ձգել կուսակալին վրայ պատմուած ոճիրները: Ուստի հակառակ գայթակղութենէ մը խոյս տալու բնական զգացման, որուն մի մասը գէթ իրենց վըրայ պիտի ցայտէր, ծերակոյտը կը զգար թէ կատարուելիք քննութեան մէջ Մարդինենկոյին արդարանալը շատ դժուարին պիտի ըլլար: Միայն Յակոբոս Լորեսանոյ յանդգնեցաւ ձայն բարձրացընել ամբաստանեալ կուսակալը արդարացնելու համար:

— Չեմ տարակուսիր թէ, ըսաւ, այս գործին մէջ, որուն հետ Պատրիկի մը պատիւը սերտ յարաբերութիւն ունի, տոժը միմիայն արդարութիւնը և ճշմարտութիւնը յաղթանակել տալու փափաքէն մղուած է. սակայն ի՛նչ բանի վրայ կը հիմնուին Բատուայի կուսակալին նման նշանաւոր անձնաւորութեան վրայ ցարդ պատմուած ծանր ամբաստանութիւններն, աղախնոյ մը տուած վկայութեան վրայ:

— Հիմայ պիտի տեսնէք, ըսաւ տոժը աշխուժիւ, ուրիշ վկայութիւն տուող մը, զոր կը վստահացընեմ զձեզ թէ պիտի չի կարենաք տարակուսի ներքև ձգել. նոյն



ինքն զոհ զնացողն, որ իր զահիճին դէմ բողոքելու եկած է:

Պրանչեսքոյ Ֆոսքարիին տուած նշանի մը վրայ՝ իր անձնական սենեակը տանող զուռը բացուեցաւ և Ֆէլիչէ Պատոէր շէմին վրայ երեցաւ:

Ներխոսասարդ պատրիկը՝ տոժին պաշտօնակալներէն միոյն կռթնած, դանդաղօրէն առաջ եկաւ մինչև ատեանին մէջ տեղը. թէպէտ իւր քայլերը զոգոջուն էին, սակայն հաստատուն և համարձակ ակնարկ մը պտըտցուց ամբողջ ժողովականաց վրայ: Ներս մտնելու ատեն իր տեսքը հետաքրքիր և կարեկցական յուզում մը յառաջ բերաւ, և երբ քիչ շատ հանդարտութիւն տիրեց, հրաման տրուեցաւ անոր խօսիլ և իր բողոքները պարզել, մի միայն եղածները պատմելով առանց մեկնութիւններ տալու:

Ֆէլիչէ Պատոէր գլուխը խոնարհեցնելով յարգանօք վեհաժողովն ողջունելէ յետոյ, պատմեց յստակօրէն ինչ որ պատահած էր, Բատուայէն մեկնելէն մինչև նաւաբեկութեան վայրկեանը, յորում հրաշքով ազատած էր մահուրէն: Վերջացուց ըսելով.

— Շատ կը կասկածիմ թէ կուսակալը ուզեց ջախջախել զիս Բատուայի փողոցներուն մէջ, փորձեց ողջ ողջ այրել զիս Չէուզոյ գիւղին մէջ. ինքը...

— Բաւ է պատմել այն արկածները զոր կրնաք ապացուցանել, ըսաւ ծերակուտին նախագահը, առանց փաստի ենթադրութիւններ պէտք չեն:

— Շատ լաւ, ըսաւ Ֆէլիչէ Պատոէր: Արդ, առանց հաշուելու Ռիքարտոյ կոնտրափարն, զոր կուսակալն դաշոյնով զարկաւ կոնակէն գեղեցիկ կղզւոյն մէջ, երդմամբ կը հաստատեմ թէ ուզեց նա խողել զիս Կարտայի լճին մէջ թիւ հարուած մը իջեցնելով գլխուս, երբ նաւաբեկեալ վիճակի մէջ կը ջանայի մտնել այն նաւակն ուր էր Ադրիականին աղջիկը:

Այս անգամ ամբաստանութիւնը անվիճելի, բացայայտ էր, չէր կարելի հերքել կամ արհամարհել՝ ամբաստանողին ռամիկ դասակարգէն ըլլալուն պատճառաւ: Անոր համար ծերակուտէն մէկ անձ միայն, որ պահ մը առաջ ոչ պաշտօնապէս ջատագով եղած էր կուսակալին, Լորետանոյ, և ոչ փորձ ըրաւ եղած ամբաստանու-



Թիւնը հերքել, որուն Մարդինենկոյին հետ  
ունեցած յարաբերութեան կապերը Վե-  
նետոյ մէջ ամէն ոք գիտէր: Միայն խըն-  
դրեց որ, փոխանակ իբր ամբաստանեալ  
ձերբակալելու, հրաւիրուի կուսակալն ժո-  
ղովոյն ղիմացը, որպէս զի հոն կարենայ  
իր վրայ դրուած ոճիրներուն դէմ ինքզին-  
քը արդարացընել: Սակայն իրմէ զատ  
ոչ ոք համախոհ զանուեցաւ այս կար-  
ծեաց:

— Վենետոյ Ծերակոյտը դատարան  
չէ, ըսաւ ձերունի Պէմպոյ, որուն խօսքին  
մեծագոյն կարևորութիւն կը արուէր ժո-  
ղովոյն որոշողութեանց մէջ: Ծերակոյտը  
կրնայ քննութիւն մը բանալ, երբ իւր ան-  
դամներէն մին ամբաստանուած է առանց  
յայտնի ապացոյցներու. բայց երբ ոճիրն  
այսքան բացորոշ է, ձերակուտին ուրիշ  
բան չի մնար ընել՝ բայց եթէ յանցաւորը  
ժամանակաւոր իշխանութեան ձեռքը յանձ-  
նել:

Ոչ ոք ղիմադրեց այս առաջարկութեան,  
Բատուայի կուսակալին խնդիրը յանձնուե-  
ցաւ Տասանց ժողովոյն, և սա ալ Երից  
Ժողովոյն ատեանին առջևը հանեց: Այս  
կարգադրութեան հետեանօք տեսանք նա-

խընթաց գլխուն մէջ թէ ի՛նչպէս Պետու-  
թեան խուզարկութեանց ներկայացուցիչն,  
Պանդէն, ձերբակալեց Մկրտիչ Մարդի-  
նենկոն իր հպատակաց ներկայութեանը:

Վենետոյ մէջ երբ փոքր կասկած մը  
ըլլար թէ խնդիր մը յանձնուած է ահա-  
ւոր Երից ժողովոյն, ոչ ոք կը յանդրգ-  
նէր բառ մը փոփոսալ: Այսպէս երեք չորս  
օր Բատուայի կուսակալին անունը և ոչ  
բերան անուեցաւ Ս. Մարկոսի հրապա-  
րակին, ոչ Պրոլիոյին, ոչ Գազինոներուն  
և ոչ Բրոգուրադիէներուն տակ: Քանի  
մը օր անցնելէն վերջ երիտասարդ պա-  
տրիկներէն ամենէն յանդուգներն ականջէ  
ականջ կը փոփոսային թէ Պետութեան խու-  
զարկուներն որոշած են խնդիրն փակել,  
որովհետեւ յանցաւորը Հասարակապետու-  
թեան նշանաւորագոյն անդամներէն մին է:

Սակայն, ինչպէս տեսանք, Պետութեան  
խուզարկուներուն արդարութիւնը չէր քը-  
նացած, թէպէտ Վենետոյ մէջ հակառա-  
կը կը խորհուէր: Անոր համար մեծ զար-  
մանք պատճառեց, երբ Վենետիկեան թե-  
թեամտութիւնը կը սկսէր արդէն մոռնալ  
Մարդինենկոն, յանկարծ առաւօտ մը Բա-  
տուայի կուսակալին ձերբակալումը լսուե-



ցաւ, և Մեծ-Ջրանցքէն իջնող փոքր նաւակախումբ մը տեսնուեցաւ, որուն ղիմացէն կուգար կոնտուլայ մը մէջը Ֆանդէն նստած, գլուխը կարմիր խոյրը դրած՝ վերան ոսկի ծէգինով:

Կուսակալը՝ իբր ռամիկ ոճրագործ մը Սըխավոնի քարափին բանտերը փակուեցաւ: Բոլոր այս նուաստութիւնները կարծես չէին ընկճեր այս գոռող մարդը, վայրկեան մը իսկ իւր ամբարտաւան քաջասրտութիւնը չի ձգեց: Իրեն սահմանուած խցիկին երկաթեայ վանդակով պատուհանը՝ որ գրէթէ Հառաչանաց կամրջին ներքէն կ'իյնայ, դքսական պալատին ետևի կողմը կը նայէր. Մարդինենկոյ հոն մտնելով և ոչ փոքր այլայլութիւն մը ցըցուց: Յետոյ երբ խուզարկուներէն միոյն ղիմաց տարուեցաւ, որ նախնական հարցաքննութիւնները պիտի ընէր, հարցուց անոր, ինչպէս ըրած էր արդէն գեղեցիկ կղզիին մէջ.

— Ձիս դատող ատեանին նախագահը ո՞վ պիտի ըլլայ:

— Տո՞ն անձամբ, պատասխան տրուեցաւ:

— Շատ լաւ, աւելցուց, անոր ներ-

կայանալուս միայն պիտի խօսիմ: Մինչև այն վայրկեանն ինձմէ բան մը մի՛ սպասէք: Միայն կը խնդրեմ, որ իբր ամբաստանեալ՝ իմ իրաւունքս է, քանի մը հարցմունքներ ուղղուին գեղեցիկ կղզւոյն մէջ տուած հացկերութիւն կոչնականաց գլխաւորներուն:

Իր այս փափաքը նկատողութեան առնուելով ստորագրուեցաւ, սակայն երբ խուզարկուն ուզեց շարունակել հարցաքննութիւնը՝ ոչ աղաչանք, ոչ սպառնալիք չի կրցան կուսակալին բերնէն բառ մը խլել:

Իսկ Ադրիականին աղջիկը կուսակալին հետ վէնետիկ բերուեցաւ. տո՞ժը յայտարարեց թէ վէնետկոյ որբուհիին համար միակ պատշաճագոյն տեղը Դքսական պալատն է: Յարկաբաժին մը պատրաստուեցաւ անոր, ուր նոյն օրը մտաւ վէնեձիան:

Կոնտուլավարն Ռիքարտոյ՝ Պատտէրին պալատը կը կենար բաւական ծանր վիճակի մէջ: Յոգնութիւնը, ինչպէս նաեւ յուզմունքները՝ սաստիկ ջերմ բերած էին. իր վէրքը յոռի վիճակ մը առած էր և տասներհինգ օրէն աւելի կենաց և մահու մէջ մնաց:



Ամբողջ այս ժամանակամիջոցին՝ Ֆիլամէդդա վայրկեան մ'իսկ ըովէն չի հեռացաւ, գիշեր ցորեկ մայրական խնամքով կը հսկէր անոր վրայ:

Սակայն թեթեւ բարւոքում մը կը նըշմարուէր հիւանդին վրայ: Կը սկսէր իր ճանաչողութիւնը վերստանալ, և իր շուրջը անցած դարձածին գիտակցութիւնն ունենալ: Ամենէն առաջ Ֆիլամէդդան ճանչցաւ և թուեցաւ իրեն թէ անոր տեսքը զովացուց իր արիւնը և իսկոյն իջեցուց ջերմը:

Երբ մանկամարդ աղջիկը կը մօտենար անոր հարցնելու թէ բանի մը պէտք ունի՞, Ռիքարտոն նաժշտին ձեռքը իրեննէրուն մէջ կ'առնուր և կ'ըսէր.

— Ահաւասիկ իմ վէրքիս վրայ դնելու լաւագոյն բալասանն: Ախ Ֆիլամէդդա, իմ Ֆիլամիինաս, լաւագոյն կ'զգամ, շատ ազէկ եմ:

Ֆիլամէդդան կը ժպտէր Ռիքարտոյին երեսը, իր ձեռքն ետ քաշելու թեթևօրէն փորձ մ'ընելէն յետոյ, ի վերջոյ կոնտուլավարին կը ձգէր գայն: Ռիքարտոյ իր աչքերուն մօտ բռնելով այս սիրուն զիրուկ ձեռքը կը փայփայէր գայն յուշիկ,

շատ անգամ այս վիճակի մէջ քունը կը տանէր: Այս էր իր նշանածին հետ ըրած՝ սիրահարութեան եղանակը:

Սակայն իր ապաքինումն արագ արագ կը յառաջանար, և վերջապէս կըրցաւ Ռիքարտոյ ոտքի ելլել և իր սիրելի Ֆիլամէդդային օգնութեամբ սենեկին մէջ քանի մը շրջան ընել:

Նոյն օրը նաժիշտն իմացուց Ռիքարտոյին թէ Պատուէրի պալատին մէջ իր ներկայութիւնը անհրաժեշտ չըլլալով այլ ևս, պիտի երթար իր տիկնոջ ըով, որ երկարատեան իր խնամքներէն զրկուած էր: Այս ծանուցումն մեծ մտահոգութիւն պատճառեց բարեմիտ Ռիքարտոյին, որ իւր ապաքինութեան խնդրութեանց մէջ շփացած՝ չէր ուզեր անոր վերջանալը տեսնել:

— Ինչպէս, դու պիտի ձգես գիս, հարցուց Ֆիլամէդդային, նայելով անոր վշտագին կերպարանքով մը:

— Անշուշտ, պիտի ձգեմ զքեզ, ըսաւ նաժիշտը, դու հիմայ բուրբուլին առողջացած ես:

— Այո՞, այնպէս կը տեսնուի, ըսաւ կոնտուլավարը ողորմուկ ձայնով, սակայն



հաւատա՛ ինձի, սիրելի Ֆիամէղդաս, իրօք բոլորովին աղէկ չեմ:

— Ի՞նչ ունիս որ, հարցուց նաժիշտը աշխուժիւ:

— Վերստին անկումէ մը կը վախնամ, ըսաւ կոնտոլավարն տխուր շեշտով մը:

— Վերստին անկո՛ւմն:

— Աւա՛ղ, այո՛ Ֆիամէղդա, և դու գիտես թէ, աւելցուց բարեսիրտ Ռիքարտոն ցաւագին կերպով գլուխը տատանելով, վերստին անկումը գրեթէ միշտ մահացու է:

Խեղճ Ֆիամէղդան ի սկզբան կոնտոլավարին խաղալիք եղաւ և հաւատաց թէ ստոյգ վտանգ մը կայ, գոյնը սաստիկ նետեց: Սակայն փութով հասկցաւ թէ Ռիքարտոյ զինքը իր մօտը պահելու համար այս կատակախաղը կը խաղար իր զըլխուն: Աղջիկը միտքը դրաւ անմեղ վրէժ մը լուծել քաջ կոնտոլավարէն, ինքն ալ անոր զլխուն նոյն տեսակ խաղ մը խաղալով:

— Ի՞նչպէս, ըսաւ աղջիկը խորապէս զգածեալ երևոյթով մը, լսեցի՞ր ուրեմն բժշկին ըսածը վերջին այցելութեան առտեն:

— Այո՛, ըսաւ Ռիքարտոյ առանց ետև առաջ մտածելու, որ ամենևին բան մը լսած չէր:

— Ա՛խ, գոչեց Ֆիամէղդան երկու ձեռքով իր երեսը զոցելով, գիտես ուրեմն թէ նոյն իսկ այս երեկոյ սաստիկ ջերմի նոպայէն պիտի բռնուիս:

— Հէ՛, ըսաւ կոնտոլավարն մեծ մեծ աչքերը բանալով, ե՛ս, սաստիկ ջերմի նոպայ մը:

— Այո՛, շարունակեց Ֆիամէղդան ցաւագին շեշտով մը, բժիշկը զայն առաջուց գուշակեց. ըսաւ թէ վրադ կատաղութիւն պիտի գայ և թէ պէտք պիտի ըլլայ առնուազն չորս մարդերու, որպէս զի կա կատաղութեանդ նոպային ատեն զքեզ կարենան զսպել:

— Չո՛րս մարդեր:

— Չորս հատ ուժեղ պահապաններ: Բժիշկը զանոնք իր հետը բերաւ:

— Ի՛նչպէս:

— Չորսն ալ քովի սենեակն են:

— Ի՞նչ կ'ըսես, Ֆիամէղդա, կ'երազե՞ս, ըսաւ Ռիքարտոյ իրապէս շփոթիլ սկսելով:

— Աւա՛ղ, չեմ երազեր, ըսածս ամենաստոյգ է, ինքը, բժիշկն ըսաւ:



— Սակայն կ'ապահովցնեմ զքեզ, Ֆրամէդդա, ըսաւ կոնտուլավարն ոտք ելլելով նաժշտին քովն երթալու համար, կ'ապահովցնեմ զքեզ թէ ամէն ատենէ աւելի լաւ վիճակի մէջն եմ:

— Նորէն կը կրկնեմ, բժիշկը պատուիբեց ինծի ո՛ր և է պատճառանք մը փնտոել մօտ եղող պահապանները իմ տեղս փոխանակել տալու:

— Ֆրամէդդա՛, ըսաւ կոնտուլավարն անհամբերութեամբ մը ոտքը գետին զարնելով:

Նաժիշտը սուր ճիչ մը արձկեց.

— Ողորմած Աստուած, գոչեց աղջիկը, ահաւասիկ սկսաւ:

— Իմ սիրուն Ֆրամէդդաս:

— Մի՛ մօտենար ինծի, ապա թէ ոչ չորս մարդերը կը կանչեմ:

— Կ'ապահովցնեմ զքեզ... Ֆրամմա, Ֆրամմինաս... կ'ըսէր կոնտուլավարն սաստիկ վշտացած:

Սակայն անօգուտ: Նաժիշտն որ սաստիկ վախէ բռնուած կը ցուցնէր ինքզինքը, մտիկ անգամ չէր ընէր անոր: Կարասիններուն ետև ապաւինած՝ զանոնք իբր պատնէշ կը գործածէր կոնտուլավարին մօտենալն արգիլելու համար:

— Նոպայ, նոպայ, կը գոչէր աղջիկը, ահաւասիկ նոպան բռնեց զինքը:

— Ամենեկին, Ֆրամմա, ամենեկին, այլ ևս ջերմ չունիմ, երբէք այսպէս հանդարտ եղած չեմ: Հաւատա՛ ինծի, կ'աղաչեմ, կը պաղատիմ:

Որչափ Ռիքարտոյ կը բողոքէր, այնքան աւելի Ֆրամէդդան կը պոռար, մինչև որ վերջապէս տեսնելով խեղճ կոնտուլավարն իր զիմաց երկու ծունկի վրայ եկած և ձեռքերը միացուցած, յանկարծ բարձրաձայն քրքիչ մը արձրկեց չարաճճի աղնարկ մը նետելով անոր վրայ:

— Հէ՛, ըսաւ կոնտուլավարն, ի՞նչ կը նշանակէ ասիկա:

— Ասիկա կը նշանակէ, պատասխանեց Ֆրամէդդա, թէ երկուքնիս ալ կատակախաղը ներկայացուցինք: Սակայն մեզմէ ո՛վ աւելի ճարտարութեամբ խաղաց, հէ՛, ի՞նչ կը կարծես Ռիքարտոյ:

Ռիքարտոյ սաստիկ գոհ այս ելքէս, փոխանակ իր սիրուհւոյն յիս պահելու, ըսաւ անոր.

— Ա՛խ, իմ Ֆրամմինա, թէ ասոր մէջ, և թէ ամէն բանի մէջ կրնաս դու ինծի դաս տալ:



Սակայն երիտասարդ Ֆելիչէ Պատուէր բոլորովին ապաքինած իր ջրահեղձութեանէ, իր օրերուն մի մասը դքսական պալատին մէջ Աղբիականին աղջկան քով կ'անցնէր : Երկու խօսեցեալներն իրենց ժամանակը կ'անցնէին երկար խօսակցութեամբք, որոնց մէջ Վենեճիան շարունակ խօսքը կը դարձնէր իր սիրական նիւթին վրայ : Միշտ նոյն կորովով և նոյն եռանդեամբ զորս ցըցուցած էր գեղեցիկ կղզւոյն մէջ նաւարեկութեան գիշերը, կը պնդէր երիտասարդ պատրիկներուն պարտականութեան վրայ, չի վատնելու իրենց կենաց գեղեցկագոյն տարիները թոյլ անհոգութեան մը մէջ :

— Քանի որ զինուորական կեանքը միայն հաճելի է ձեզի, կ'ըսէր աղջիկը Ֆելիչէին, (թէպէտ և իմ և բոլոր Վենետիկեցւոց աչքին դիմաց, ազնուական մը ինքզինքն այն մեծղի վաճառականութեան տալով, որ Վենետիկոյ հարստութիւն և ուժ բերաւ, իր ազնուականութեան աստիճանէն չիյնար) շատ աղէկ, աճապարեցէք ուրեմն զինուորական կեանքը ընդգրկելու :

Չենք ուզեր մեր ըսածները նորէն կըրկ-

նել, այսչափ միայն ըսենք թէ նոր պատճառաբանութեանց վրայ հիմնեալ այս խորհրդածութիւններն, որոնց նպատակը պատիւ և հայրենասիրութիւն էին, Ֆելիչէ Պատուէրին վրայ ստուգիւ մեծ ազդեցութիւն ըրին :

Իրիկուն մը Ֆելիչէ մտնելով տոժին յարկաբաժինը, ուր ըստ սովորութեան Վենեճիան իրեն կ'սպասէր, իմացուց անոր թէ առանց այլ ևս ուշանալու, վաղը պիտի մեկնի գնդի մը գլուխ անցնելու, զոր իրեն ծախքով խմբած և զինած է. և կ'սպասէ Վիլլաֆրանգայի դաշտերուն մէջ իր երիտասարդ հրամանատարին՝ փոքր զօրաբանակի մը ընկերակցութեամբ, կազմ և պատրաստ տակաւին անձանօթ արշաւանքի մը համար :

Այսօրինակ գործերը կարգադրելէն յետոյ, երկու երիտասարդք ցած ձայնով կը շարունակէին իրենց խօսակցութիւնը լայն պատուհանի մը կամարին ներքև նստած :

Պատուհանը բաց էր, ամառուան գեղեցիկ երեկոյ մը. լուսարձակ աստղերը կարծես երկինքէն լճակին ջուրերուն մէջ կ'իջնէին, և հեզիկ հովին ամենափոքր փշումէն կը դողդղային : Հոս հոն կոն-



տողի մը լապտերը կը տեսնուէր, ջուրեւրուն վրայէն լոխկ սահելով. և լիտոյի միւս կողմը Ադրիականին ալիքները ջախջախուելով, միօրինակ և մեծափառ ձայնին նուազեալ արձագանգը մինչև դքսական պալատը կու գար:

Ծեր տոժը միշտ ներկայ կ'ըլլար Վենեճիային և Ֆէլիչէ Պատոէրին տեսակցութեան: Այն երեկոյ կէս մը քունը տարած էր իրեն թեկնաթոռին մէջ. երիտասարդաց խօսակցութեան ձայնը չի լսելով արթնցաւ, որ մինչև այն ատեն զինքն որորած էր:

Իր դէմը խօսեցելոց շնորհալի զոյգը տեսնելով, որոնց զիմագիծերն աստղալից երկնքին հետ կը խառնուէին, ծերունիին սիրտը սեղմուեցաւ և իր աչքերը լեցուեցան: Միտքն ինկաւ իւր Յակոբոս որդին, աքսորուած Բարձրագոյն Խորհրդարանին բարբարոսութեամբ, և աքսորուած ընտանիքով կրէտէի կիզիչ հողին վրայ: Թէ որ Աւագանին անողորմ չի գտնուէր, իր սիրելի զաւակը իրեն կնոջը հետ՝ հոն պիտի գտնուէր, ուր այս ժամուս Վենեճիա և Պատոէր կը գտնուին: Տղաքները, — իւր վերջին զաւակին տղաքները, երեք ժա-

ռանգներէն միակ ողջ մնացածին, զորոնք Աստուած իւր ողորմութեամբ իրեն պարգևած էր և իր սրտմտութեան ատեն իրմէ առած էր, — հազիւ կը յիշէ, անոնց դէմքերը տարտամ կերպով իր յիշողութեան մէջ կը ծփան, ինչպէս պատկեր մը՝ որուն նկարը աւրած է ժամանակն: Եթէ ծերակոյտն անգուժ չըլլար, Յակոբոսին տղաքները պիտի խաղային հիմայ հոն իր ոտքերուն քով. պիտի լսէր անոնց արձաթի քրքիջներն, անոնց մանկական զլուխներուն խարտեաշ մետաքսաթել գանգուր և փափուկ մազերուն մէջ պիտի տաքցունէր տարիքէն սառած իւր ձեռքերը: Եթէ հոն գտնուէր մանկամարդ աղջիկը, գէթ ընտանեկան վառարանին քաղցր և հանդարտիկ ուրախութեանց մէջ ծեր տոժը պիտի հանգչէր իր ծանր մտատանջութիւններէն, զոր Պետութեան ամենօրեայ գործերը կը պատճառեն:

Աւա՛ղ, այս ամէնը խարուսիկ երազ մ'է: Ութսունամեայն մինակ մնացած է այս աթոռին վրայ, ուր ծերակոյտին կամքը զինքն ալ աքսորած է, մինակուկ իբր կայմերը կտորած նաւ մը, Ովկիանոսին մէջ՝ ալէկոծութեան ձեռքը մատնուած:



Երբ Ֆրանչեսքոյ Ֆոսքարի այս դառն խորհրդածութեանց մէջ կը թափառէր, պաշտօնակալ մը լուր զրկեց թէ պետութեան խուզարկուններուն կողմէն իրեն հազորդելու ստիպողական տեղեկութիւն մը ունի:

— Թող մտնէ, ըսաւ Ֆրանչեսքոյ Ֆոսքարի. իմ պարտքս է միշտ և ամէն վայրկեան պատրաստ կենալ Երից ժողովին տրամադրութեան:

Պաշտօնակալը յետ ողջունելու տոժը, ըսաւ.

— Բարձրապատիւ տէր, Խորհուրդը կը փափաքէր որ Ձեր բարձրութիւնը հաճի ներկայ ըլլալ վայրկեան մը Բատուայի կուսակալին հարցաքննութեան. որովհետև ամբաստանեալը կը մերժէ բացարձակ բառ մը բերնէն հանել մինչև որ Ձեր բարձրութենէ չհարցաքննուի:

— Շատ լաւ, ըսաւ տոժը: Գնացէք ապահովցուցէք Խորհուրդը թէ փութով պիտի գամ իր փափագը կատարելու. Ձեր ետեւէն ես ալ կու գամ:

Տոժը քանի մը քայլ առաւ և տեսնելով երիտասարդ խօսեցեալներն որ իրեն հետ ոտքի ելեր են, ձեռքով բարեկամա-

կան նշան մը ըրաւ հրաւիրելով զանոնք որ անհանգիստ չըլլան:

— Սպասեցէք ինծի հոս, ըսաւ տոժը, կը յուսամ թէ Խորհուրդը զիս երկարատեն քովը չպահեր:

Ֆելիչէ Պատոէր շատ գոհ մնաց իւր նշանածին հետ զլուխ զլիսի մնալու, զոր զիպուածով ձեռք բերած էր, ուզեց ասկից օգուտ քաղել իր վերջին բարեկերպ տալու, զորս Վենեճիան թերևս քիչ մը սաստիկ զգայուն գտնելով թեթև կերպով ետ կը հրէր երիտասարդը:

— Վաղը պիտի մեկնիմ, կ'ըսէր Ֆելիչէ աղերսալի ձայնով մը. ո՞վ գիտէ թէ պիտի վերագառնամ:

— Ինչ կը խօսիք:

— Պէտք է նկատողութեան առնուլ պատերազմին անյաջող ելքը: Մահը չի զարհուրեցնէր զիս. թէ որ մեռնիմ՝ գէթ հետս տանելու ձեզմէ բառ մ'ունենամ, Վենեճիա, որ ցուցնէ թէ սիրտ մը թողած եմ հոս որ իմ սրտիս հետ ներդաշնակ կը բաբախէ:

Աղբիականին աղջիկն իր ձեռքը կարկառելով Ֆելիչէին համբուրելու, ըսաւ.



— Գնացէ՛ք և լաւ գիտցէ՛ք թէ՛ ձեզի հետ են իմ բոլոր իղձերս :

Հազիւ թէ վենեճիան այս խօսքերն աւարտած էր, տոժը ներս մտաւ գունատ, ընկճուած, այլայլած, և թիկնաթոռի մը վրայ ինկաւ ուժաթափ :

— Ի՞նչ ունիք, հայրիկ, հարցուց վենեճիան զէպի անոր վազելով :

— Ա՛խ, ըսաւ ծերունի Ֆոսքարին խղզուկ ձայնով մը, այս Մարդինենկին... ինչպիսի՛ դժոխային միջենայութիւն :

ԺԵ

#### ՎՐԷԺԻՆԴՐՈՒԹԻՒՆ ՄԱՐԴԻՆԵՆԿՈՅԻ

Երբ տոժը Հառաչանաց կամուրջէն անցաւ, որ միակ ճամբան էր դրսական Պալատէն բանտերը երթալու, չի կրցաւ իր յուզմունքը զսպել : Վերջին անգամ այս չարաշուք կամուրջէն անցած էր, նոյնպէս հարցաքննելու համար ամբաստանեալ մը. սակայն այս ամբաստանեալն իւր զաւակն էր, իր վերջին ծնունդը, իր սիրելի Յակոբոսն : Եւ որովհետև ամբաստ



Հառաչանաց կամուրջը



տանեալը չէր խոստովաներ իրեն վերագրուած ոճիրը, խորհուրդին ստիպման վերայ, հայրը հրամայեց — այսպէս կ'ուզէր անողոր օրէնքը — որ Յակոբոսը տանջանաց ենթարկուի:

Ինչո՞ւ ծեր Պրանչեսքոյ Փոսքարիին ձեռքը չի չորցաւ այս բարբարոս վճիռը ստորագրելէն առաջ: Սակայն ստորագրեց, և բոլորովին այլայլած՝ իսկոյն իր պալատին ճամբան բռնեց: Թէպէտ իր քայլերը կը փութացընէր, բայց դահիճներն իրմէ աւելի շուտ կը քալէին, և երբ ծերունին ոտքը դրաւ այս մահաշջուկ Հառաչանաց կամուրջին վրայ որ կարի բացայայտ կը ներկայացնէ վէնետկոյ կառավարութիւնը — պալատ մը և բանտ մը միացած իրարու հետ այս սևադէմ միաւորութեան գիծով, — Հառաչանաց կամուրջով, — վշտագին աղաղակ մը լսեց: Այս աղաղակը դահիճները հանել կուտային իր խեղճ Յակոբոսին:

Մերունի տոժը գլուխը թօթվեց իր վերայ յարձկած այս տխուր մտածմունքները վանելու, յետոյ արագելով իր քայլերը կը յառաջանար ստորին սրահը ուր իրեն կը սպասէին Մարդինենկոյ և Տա-



սանց ժողովին նուիրակները. Գրանչեսքոյ  
Պոսքարի սպանահան ձե մը ըրաւ և ցած  
ձայնով ըսաւ :

— Ո՞վ իմ սիրելի Յակոբոս, փութով  
պիտի լսես այս ուրախալի լուրը քու  
աքսորավայրիդ մէջ. ինքն հոս իմ ձեռ-  
քիս մէջն է, քու թշուառութեանդ գլխա-  
ւոր պատճառը, քու հայրդ վրէժդ պիտի  
հանէ, կ'երգնու քեզի :

Երբ տոժը մտաւ ընդարձակ սրահին  
մէջ ուր հարցաքննութիւնը պիտի կատա-  
րուէր, ամէնքն ոտքի ելան և զլուինին  
բացած կեցան : Երունի տոժը, այս իս-  
բերայ յարգանաց արտաքին սուտ երևու-  
թիւն վրայ դառն ժպիտ մը ստացաւ, վայր-  
կեան մը ինքն ալ դրան շէմին վրայ կե-  
ցաւ. ապա աթոռ մ'առնելով՝ ըսաւ .

— Նստեցէք, տեարք, ժողովը բա-  
ցուած է :

Յետոյ անմիջապէս իր աչքերը շուրջը  
պտըտցուց և չի տեսնելով Մարգինենկոն,  
հարցուց .

— Ո՞ւր է ամբաստանեալը :

— Ահաւասիկ հոս եմ, իշխանդ իմ,  
պատասխանեց կուսակալը թերաստուերէն  
դուրս ելլելով, որ լայնատարած լուսամ-

փոփներով գոցուած կանթեղներուն լոյսը  
մինչև հոն չէր հասած :

— Մինչև ցարդ, ըսաւ Պոսքարի, յա-  
մատութեամբ մերժեցիք պատասխանել բո-  
լոր հարցմունքներուն : Որոշած էք վերջա-  
պէս խօսիլ :

— Դժուարութիւն մը չունիմ Ձեր վե-  
հափառութեան ներկայութեանը խօսելու,  
ըսաւ Մարգինենկոյ ծունկի վրայ գալով :

Թեթև կարմրութիւն մը ծածկեց տոժին  
այտերն այս կեղծաւորական յարգանքին  
վրայ, խուլ գայրոյթ մը կը սկսէր ար-  
թըննալ իր մէջ :

— Շատ լաւ, տէր, ոտքի վրայ ելէք,  
ըսաւ տոժը խիստ շեշտով մը : Դուք ամ-  
բաստանեալ էք կրկին ոճրագործութեանց  
համար : Կը խոստովանի՞ք այս երկու ո-  
ճրագործութիւնները :

— Ներեցէք, իշխանդ իմ, ոչ մին և  
ոչ միւսը : Ոչ կոնստաւար Ռիքարտոն  
զարկած եմ և ոչ ծերակուտական Ֆէ-  
լիչէ Պատտէրը :

— Այն ատեն ինչպէս կը մեկնէք եր-  
կու զոհերուն ձեր դէմ ըրած այնքան բա-  
ցորոշ ամբաստանութիւնները, հարցուց  
տոժը :



— Անոր բացատրութիւնը ժամանակին պիտի տրուի, պատասխանեց կուսակալը մեծագոյն հանդարտութեամբ, սակայն առ այժմ երգմամբ կը հաստատեմ թէ, ոճրագործութեան իրիկունը հացկերոյթին սրահէն դուրս չեւայ: Քանի մը վկաներ արդէն այս ըսածս հաստատեցին, ուրիշ նորեր ալ կրնամ ներկայացնել որ նոյնը վկայեն:

— Ի՞նչպէս, կը համարիր թէ վայրկեան մը իսկ դուրս ելած չէք:

— Գէթ խօսեցեալներուն մեկնելէն յետոյ երբէք:

— Այն ատեն կը ստիպուիմ վերստին իմ հարցմունքս կրկնել, ի՞նչպէս կը մեկնէք Ֆէլիչէ Պատոէրին և Կոնտոլավարին միաձայն ամբաստանութիւնը: Կը յանդրգնիք զիրենք ամբաստանելու թէ միացած ըլլան ձեզի դէմ չարիր ընելու:

— Քաւ լիցի, վեհափառ տէր, թէ տէրն և թէ ծառան երկուքն ալ ողջամիտ անձինք են: Անոնք սխալած են արտակարգ նմանութենէ և զիս կարծած են զիրենք զարնող մարդը:

— Բացատրեցէք ըսածնիդ, չեմ հասկընար:

— Քսան անձինք կրնան վկայել տարորինակ գործի մը իրականութեան գոր պիտի պատմեմ: Բոլոր հրաւիրեալներն, ես ալ միասին, ուշադրութիւն ըրէք, հացկերոյթին սրահն էինք: Խօսեցեալներուն մեկնումէն զրեթէ երկու ժամ վերջը մարդ մը ճիշդ ինծի պէս հագուած և այնքան ինծի կը նմանէր, իբր այլ ոմն ես, սրահը մըտաւ ուր ամենքնիս միատեղ կը զբտնուէինք: Իւր բազուկներուն վրայ կը կրէր Ադրիականին աղջիկը մարած վիճակի մէջ. թիկնաթոռի մը վրայ դրաւ զինքը, անոր մօտ բաւական ժամանակ կեցաւ որով ամէնքն ալ կըցան զինքը տեսնել, և ընդհանուր ապշութեան մէջ յանկարծ աներևոյթ եղաւ առանց բռն մը արտաբերելու:

Կուսակալն լռեց. իսկ տոժը խորհրդարանի ստոլին վրայ գտնուած մագաղաթները տենդոտ ձեռքով կը ճմռթկէր: Խօսք առնելէն առաջ կը ջանար զսպելու Մարդինենկոյին ինքզինքը պաշտպանելու յանդուգն եղանակէն պատճառած սրտմտութիւնը:

— Նորէն կը կրկնեմ, ըսաւ երկար լռութենէ վերջ, Ֆէլիչէ Պատոէր, ինչպէս նաև կոնտոլավարը՝ ճանչցան զձեզ.



և դուք կը հաստատէք թէ ոչ մին, և ոչ միւսը ձեզի դէմ առելութեան կամ վրէժ-խընդրութեան պատճառ մը չունին:

Իսկ կոչնականներն, որոնց վկայութիւնը առաջ կը բերէք, անոնցմէ ոմանց քսածները լսեցինք. ձեր կարծածին չափ հաստատական չեն: Կախ իրենց պատասխաններուն մէջ տատամսեցան, կարծես օտար ազդեցութեան մը բռնութեան ներքեւ են:

— Վեհափառ, ըսաւ կուսակալը սաստիկ բորբոքած, առանց իմ ամբաստանեալ դիրքիս վրայ խօսելու որ թերևս արժանի է ակնածութեան մը, ձրի կը նախատէք վկաներն որոնց մէջէն ոմանք պետութեան նշանաւոր պաշտօններու կոչուած են:

— Մարդինենկոյ, ըսաւ տոժը տխուր շեշտով մը, իբր հայր սաստիկ կրած եմ զաւակիս համար երբ ամբաստանեալ դիմացս ներկայացաւ, մինչդեռ իբր դատաւոր և իշխան, զիտեմ յարգել պաշտպանութեան սրբազան օրէնքները: Դուք կրնաք ամենայն ազատութեամբ խօսիլ և թէ որ յուզում մը ցոյց տուի ձեր անձը պաշտպանելու եղանակին նկատմամբ, կը ցա-

ւիմ անոր վրայ: Այսու հանդերձ իմ պարտականութիւնս զիս կը բռնադատէ ըսելու թէ ձեր յառաջ բերած փաստերը՝ ոչ հաստատական են և ոչ համաձայնք: Եւ պարտիմ յաւելուլ որ հարցաքննեալ վկաները կը խոստովանին թէ այն մարդը, զոր դուք ևս կը համարիք այլ ոմն Մարգինենկոյ, երբ հացկերոյթին սրահը մտաւ, բուր կոչնականներն այնքան պատիւ ըրած էին ձեր շոյայլած ազնիւ զինիներուն, որ անոնց մէջէն ոչ ոք կարող պիտի ըլլայ յիշելու, գէթ շփոթ եղանակաւ, իր տեսածները:

Հարցաքննութեան ներկայ եղող ձերակուտականներէն մին հարցուց Մարգինենկոյի.

— Ձեր կոչնականներուն մէջ կը գրտնուի՞ արդեօք մէկը որ կարենայ ըսել թէ տեսած է մի և նոյն ատեն զձեզ, կոմս Մարգինենկոյ, և անիկա զոր դուք այլ ոմն Մարգինենկոյ կը կոչէք:

— Ձեր հարցմունքը զիս կը շփոթցնէ, ըսաւ Մարգինենկոյ ծիծաղելով, վասն զի թէ որ այժմ պատասխանեմ, նորին վեհափառութիւնը պիտի համարի թէ փախեման հին զինիս զօրութեամբ իմ կոչնականներս իրերը կրկին կը տեսնէին:



— Մարդինենկոյ, ըսաւ խստութեամբ տոժը, շատ ծանրակշիռ դիրքի մէջ կը գտնուիր և պէտք է որ հանդարտ կենար. զձեզ հարցաքննողներն բարձրաստիճան անձինք են, զորս պարտիր յարգել: Անգամ մ'ալ չի թերանար: Եւ հիմայ ես ձեր տեղը կը պատասխանեմ. Ոչ, հարցաքննուած վկաներուն մէջ ոչ որ մի և նոյն ատեն տեսած է երկու Մարդինենկոյ հացկերութիւն սրահին մէջ:

— Այսինքն թէ, կրկնեց կուսակալը մեծագոյն աշխուժութեամբ, այն մարդուն ներկայութիւնը՝ իւր բազուկներուն մէջ կրելով Ադրիականին աղջիկը մարած վիճակի մէջ, կոչնականաց վրայ այնպիսի յուզում և այնպիսի խառնաշփոթութիւն ձգեց որ ամենուն աչքն այս զոյգին վրայ յառած էին, մինչ դեռ ես սրահին միւս ծայրն էի: Այն ատեն աճապարեցի մօտեցայ թիկնաթոռին ուր թշուառ աղջիկը մարած մնացած էր: Այս միջոցին անձանօթն աներևոյթ եղաւ, և ես եղայ վենեձիան տանող՝ այն սենեակը, զոր յատկապէս իրեն համար պատրաստել տուած էի, եթէ ուզեր Գեղեցիկ կղզիին մէջ մնալ: Հասնելով սենեակը, իրեն ծա-

ռայութեան յատկացեալ կնոջ յանձնեցի զինքը:

— Մարդինենկոյ... ըսաւ տոժն անհամբեր շարժմամբ մը:

— Ներեցէք վայրկեան մը, վեհափառ տէր, շարունակեց կուսակալն, տակաւին չեմ լրմնացուցած ըսելիքս: Կրկին կը հաստատեմ, թէ ես — զոր բազմաթիւ վկաներ կրնան ըսածս ստուգել, — խօսեցեալներուն մեկնելէն յետոյ վայրկեան մը իսկ չեմ հեռացած հացկերութիւն սրահէն, մինչև այն ատեն երբ այն վերի ըսած անձանօթն իր բազուկներուն վրայ առած բերաւ հոն Ադրիականին աղջիկը բոլորովին զգայազուրկ: Այն ահաւոր գիշերուան արկածներուն յառաջ բերած բնական այլայլութեան մէջ Ֆէլիչէ Պատտէր և Ռիքարտոյ զիրենք զարնող մարդը Բատուայի կուսակալը կարծեցին. սակայն անոնք նմանութենէ մը խաբուած են, մանաւանդ որ ճիշդ ինծի նման հագուած էր, որուն անունը չգիտնալով կը բռնադատուիմ զինքը ա՛յլ ոմն Մարդինենկոյ կոչել:

— Այս տեսակ պաշտպանութեան դրութիւնն այնքան անհաւանական է որ բռնութեան չենթարկուիր, ըսաւ տոժը կըրցա-



ծին չափ ինքզինքը գսպելով: Մինչև հիմայ վենետոյ մէջ մէկը լսած չէ թէ մարդ մը այնքան ձեզի հետ նմանութիւն ունենայ որ կարելի ըլլայ ձեզի հետ շփոթուիլ:

Օքերակուտական Լորեստանոյ, որ մինչև այն ատեն միայն հանդիսատես եղած էր հարցաքննութեան՝ առանց ո՛ր և է դիտողութիւն մը ընելու, ոտք ելաւ և ըսաւ:

— Ներեցէք, վեհափառ տէր, ըսաւ, այս առաջին անգամ չէ որ նման դէպք մը կը պատահի և թէ Բատուայի կուսակալը կ'ամբաստանուի ուրիշէ մը գործուած ոճիրին համար:

Գիտենք արդէն թէ տոժը Տասանց ժողովոյն և ձերակուտին մէջ թշնամիներ ունէր, բայց ոչ Լորեստանոյի նման ոխերիմ թշնամի մը: Նոյն ինքն էր որ յանդրգնեցաւ վաճառականութեան տետրակներուն վրայ գրելու. Պարտի տոժն Պոսքարի՝ Պետրոս և Մարկոս Լորեստանոյի մահուան, իմ հօրս և իմ հօրեղբորս ևն.:

Ուստի ձերունի տոժը լսելով իր տանը ոխերիմ թշնամւոյն ձայն բարձրացրնելը, յոռի նախազգացումն ունեցաւ: Սակայն դրսէն բան մը չի յայտնեց և ընդհակառակն հանդարտութեամբ ըսաւ.

— Բացատրեցէք ըսածնիդ, Լորեստանոյ:

Լորեստանոյ դառնալով ժողովականաց ըսաւ.

— Աւագանւոյդ մտքին մէջ կ'ուզեմ հին յիշատակները արթնցնել: Թէպէտ մենք ամենքնիս ալ բաւական տարիքնիս առած ենք, այնու հանդերձ յիշելիք դէպքերն տակաւին թարմ են ձեր յիշողութեանց մէջ: Պրէշիայի պաշարման ատեն, 1439<sup>ին</sup> աշնան, Մկրտիչ Մարդինենկոյ, իր հօրեղբորորդին Պողոս և ես, միասին կը պատերազմէինք և իւրաքանչիւր ոք կը հրամայէր նետածիգ ջոկատի մը: Այն օրն որ յարձակում պիտի ընէինք, մենք առաջին կարգին վրայ կը պատերազմէինք և գրեթէ քով քովի կը քալէինք: Մկրտիչին ջոկատը՝ Պողոսին և իմ ջոկատներէն քանի մը քայլ առաջ էր: Պատնէշներէն արձկուած հրացանի հարուած մը եկաւ մահացու կերպով զարկաւ Պողոսը՝ ինձմէ քանի մը քայլ անդին: Ժամանակին փութացի զինքն իմ բազուկներուս մէջ առնելու: Մկրտիչ Մարդինենկոյ, ներկայիս Բատուայի կուսակալը, ինչպէս ըսի, կը կուռէր մեր դիմացը:



նոյն իսկ իր հօրեղբոր որդւոյն մահը պատերազմը լրմննալէն յետոյ միայն իմացաւ: Արդ գտնուեցան այն ատեն թշուառականներ որ վատութեամբ ամբաստանեցին ազնուական պատրիկը թէ իր հօրեղբոր որդին Պօղոսը կռնակէն զարկած է:

— Այս ամբաստանութիւնը երբէք հասարակաց զիմաց մէջտեղ չեւաւ. զիտեւ տուաւ տոժը:

— Ոչ, վեհափառ, սակայն ժողովըրդեան մէջ նոյն զրոյցը շրջեցաւ, նոյն իսկ բանակին մէջ ալ տարածուեցաւ: Որով կը հետեցնեմ թէ ասկից ծագեցաւ ուրիշ թերեւ աւելի հրեշային ամբաստանութիւն մը: Պրէշիային առնուելէն քանի մը օր վերջ, Պօղոսին կինն ու աղջիկն, որ տակաւին տարուան մը չկար, քանի մը ժամուան մէջ երկուքն ալ մեռան, և միասին հանդիպած այս երկու մահերուն հանգամանքները չեմ ուրանար, տարօրինակ են, և սակայն երկու մահերն ալ Մկրտիչ Մարգինենկոյի վերագրուեցան:

— Այս ողբալի արկածին հետեանօք՝ Պօղոսին միակ ժառանգը չէ՞ր ըլլար ինքն, հարցուց տոժը:

— Անտարակոյս, բայց ասիկայ փաստ մ'է:

— Գէթ կասկած մը:

— Ինչպէս կարելի է:

— Կը պատմուի թէ ոմանք տեսած և ճանչած են Մկրտիչ Մարգինենկոն իր հօրեղբոր որդւոյն ընտանեացը բնակած դղեակին մէջ, նոյն իսկ ոճրագործութեան վայրկեանը, մօրը և աղջկան մահուան օրը:

— Ահաւասիկ ճիշդ այս կէտիս կ'ուզէի գալ, շարունակեց Լորետանոյ: Այո՛, համակարծիք եմ ձեզի. նոյն օրը մարդ մը տեսնուեցաւ դղեակին մէջ, զոր ամէն ոք Մկրտիչ Մարգինենկոն կարծեց, և սակայն նոյն օրը նոյն ժամուան Մկրտիչ Մարգինենկոյ Պրէշիայի պարիսպներուն տակ բանակին մէջ կը գտնուէր, ես կը վկայեմ:

Այն ատեն ծերակուտական մը սա խորհրդազածութիւնն ըրաւ.

— Ես գիտէի թէ՛ նոյն ինքն Մկրտիչ Մարգինենկոյ խոստովանած է թէ անձամբ իր հօրեղբոր որդւոյն կնոջը բնակած դղեակը երթալով իմացուցած է անոր Պօղոսին սպաննուիլը Պրէշիային պարիսպներուն տակ:



— Այս գրոյցն այժմ, վսեմաշուք տէր, տարածուեցաւ սակայն իրականութիւն չունի, ըսածիս կը վկայէ նոյն ինքն Մարզիկնենկոյ:

— Ես երբէք բանակէն չի հեռացայ, պատասխանեց կուսակալը, և եթէ ուզէի ալ՝ բնաւ չէի կարող: Հեռանալը խստիւ արգիլեալ էր, և ո՛ր և է պաշտօնակալ եթէ քանի մը ժամ բացակայ գտնուէր, բանակը վերադառնալուն՝ իբր դասալիք պիտի դատուէր:

Այն ատեն Լորետանոյ կրկնեց.

— Ուրեմն Մկրտիչ Մարզիկնենկոյ բանակէն չի հեռացաւ. ահաւասիկ ինչ որ կը ջանայի հաստատել աներկբայ եղանակաւ: Ոչ, չկրցաւ ձգել բանակը, և սակայն այն ատեն կար արդէն սուտ Մարզիկնենկոյ մը որ զինքը կը ներկայացնէր:

Այս խաբեբան ահա պիտի գտնենք այսօր:

Կուսակալին նկատմամբ Լորետանոյին այս եռանդուն քան համոզմամբ ըրած ջատագովութիւնը մեծ հաւանականութիւն մը չէր յայտներ. սակայն եղած դէպքերուն վրայ ստուեր մը ձգելով խնդիրը շփոթելու կը ծառայէր, որոնք առաջ այնքան

պայծառ և այնքան անուրանալի կ'երևէին: Խորամանկ ձերակուտականը սոյն արգիւնքը կ'ուզէր ձեռք բերել: Լաւ գիտէր թէ ժողովը պատճառանք մը կը փնտռէր Մարզիկնենկոն անպարտ հռչակել իր վրայ եղած ամբաստանութիւններէն. և Լորետանոյ՝ հաւանօրէն համաձայնելով կուսակալին հետ, այս պատճառանքը կ'ուզէր ներկայացնել բարձրագոյն դատարանին:

Յանդուգն կատակախաղն երբէք չէր կարողացած խաբել տոժը. այլ ընդհակառակն անամօթ ստախօսութեան մը պատճառած գայրոյթը կը ջանար զսպելու: Վերջապէս ըսաւ Լորետանոյի.

— Ճատ յանդուգն ցրցուցիք զձեզ Բատուայի կուսակալին շահը պաշտպանելով:

— Ես արդարութեան և ճշմարտութեան շահը կը պաշտպանեմ, կրկնեց գոռոզութեամբ ձերակուտականը:

— Հակառակը չեմ պնդեր, շարունակեց հանդարտօրէն տոժը. սակայն ես ալ իմ կարծիքս կը պաշտպանեմ. այսօրի նակ անցած դէպքերը վերյիշելն տարօրինակ միջոց մ'է ամբաստանեալը պաշտպանելու: Չեզի նման մենք ալ չենք մոռ-



ցած և յատկապէս կը յիշենք թէ, Մարգինենկոն ամբաստանող հասարակաց բըրթմընջիւնն այնքան զօրաւոր էր այն ատեն, որ հարկ եղաւ Պօղոս Մարգինենկոյի կնոջ և աղջկան մարմինները գերեզմանէն հանել: Որովհետեւ նոյն օրը մեռած էին երկուքն ալ, զանոնք միասին թաղելու հրաման տրուած էր: Արդ, ահա թէ ինչ պատահեցաւ. այժմ կոմսուհւոյն մարմինը գտնուեցաւ իրեն դազաղին մէջ, սակայն աղջկան հետք մը չի կար: Քննութիւն բացինք, և նոյն իսկ տեսնուեցաւ թէ Պօղոսին աղջկան մահը չէր հաստատուած ստուգապէս: Այս գործին մէջ ամէն ինչ զաղանիք էր: Ի՛նչ ալ ըլլայ աղջիկը, մեռած թէ ողջ՝ աներևոյթ եղաւ և այն ատենէն վերջ ոչ որ անոր վրայ խօսիլը լսեց:

— Կ'ուզէք ուրեմն, Վեհափառ, ըսաւ Լորետանոյ, մեղմով ահնարկել թէ աղջկան աներևութանալը Բատուայի կուսակալին գործն է:

— Ո՛չ, երբէք ահնարկութիւն. ինչ որ կ'ըսեմ, յայտնապէս կ'ըսեմ: Մէկզի ձգենք ենթադրութիւնները: Բռնադատեալ հասարակաց կարծիքէն հրաման տրուե-

ցաւ դիագնոստիկան և նշանաւոր Սալոնարուա կատարեց զայն: Իւր տեղեկագրին մէջ Սալոնարուա կ'ըսէ թէ, յայտնապէս ուժով թոյնի մը հետքերը կը զբոնուէին կոմսուհւոյն աղետաց մէջ:

— Կ'ընդունինք զայն, ըսաւ Լորետանոյ:

— Արդ ժողովրդեան բըրթմընջիւնն այնքան աւելի կը սաստկանայ ամբաստանելու Մարգինենկոն իբր հեղինակ ոճրագործութեան, որքան որ իրեն շահաւոր էր կոմսուհւոյն և անոր աղջկան մահը, որոնց ինքը միակ ժառանգն էր: Արդ թէ որ դուք Մարգինենկոյի բարեկամն էք...

— Այո՛, և ըլլալուս վրայ կը պարծիմ, ընդմիջեց Լորետանոյ:

— Ուրեմն, դարձեալ կը կրկնեմ, ձեր կողմանէ յետին աստիճանի անխոհմտութիւն է մէջ տեղ բերել այնպիսի դէպքեր՝ որոնք շատոնց մեր յիշողութեան մէջ կը քննային:

— Դուք իբրևունք պիտի ունենայիք, Վեհափառ, պատասխանեց Լորետանոյ, թէ որ կարելի ըլլար յանցաւոր համարել իմ Մարգինենկոյ բարեկամս: Սակայն այն ժամանակ որ այս դէպքերը պատահեցան,



և հակառակ գծուձ խառնիճաղանճի մը բողբոջ աղաղակներուն, որոնց վեհեակոյ տոժի մը կողմանէ յառաջ բերուելուն վըրայ կը զարմանամ, Մարդինենկոյ և ոչ այլայլեցաւ:

— Կ'ընդունիմ ըսածդ:

— Եւ գիտէք թէ ինչո՞ւ: Վասն զի հինգ հարիւրէն աւելի պաշտօնակալներ ինքնարեքարար եկան երաշխաւոր ըլլալու իրեն, յայտարարելով թէ Մարդինենկոյ որ մը, ժամ մը հեռացած չէ բանակէն:

— Սակայն ո՞ճիրը գործուած էր, զիտեի տուաւ տոժը:

— Ոչ միայն չեմ ուրանար, վեհափառ, այլ և զայն կը հաստատեմ: Այո՞, ոճիրը գործուած էր. սակայն անոր հեղինակը ո՞վ է: Մարդ մը որ այնքան նըմանութիւն ունէր Մարդինենկոյին՝ մինչև անգամ երիտասարդ զօրավարը մօտէն ճանչցողներն ալ խաբուեցան, և հաստատեցին թէ կոմսուհւոյն մեռած օրը տեսած են զղեակին մօտերը համարձակօրէն անոր շրջագայիւն: Արդ Մարդինենկոյին բարեկամներն իրաւունք ունին հաւտալու թէ այս այլ ոմն Մարդինենկոյ՝ որ ար-

դէն բազում անգամ կուսակալին զլիսուն վրայ ծանրացուց մահապարտ ամբաստանութիւն մը, իր հօրեղբօր որդւոյն ծառայութեան մէջ գտնուող մարդ մ'է:

— Ինչո՞ւ այնպէս կ'ենթադրէք, քանի որ Մարդինենկոյ միակ ժառանգն ըլլալով, իրեն անձին յատուկ շահն էր ազատիլ կնկանէ և կաթնկեր տղայէ մը, որոնց ապրիլը զինքը միայն կը նեղէր:

— Կը պատասխանեմ միանգամայն՝ թէ հարցման և թէ պատճառաբանութեան, գոչեց Լորեստանոյ բուն կերպով: Նոյն ժամանակ ստուգուեցաւ թէ մեծ գումար մը աներևոյթ եղած էր, և որ այլ ևս չի գտնուեցաւ: Անշուշտ կոմսուհին թունաւորող մարդը գողցած է զայն:

— Յանկարծ բռնուած գող մը, պատասխանեց տոժը խոհականութեամբ, դաշոյն կը գործածէ և ոչ թոյն, և ասկէ զատ ժամանակ չ'անցնէր քանի մը ամսուան մանուկ մը աներևոյթ ընելու որուն ներկայութիւնը ո՞ր և է զիպուածի մէջ չէր կարող զինքը ամբաստանելու:

Ժողովին բոլոր անդամները տագնապով կ'ունկնդրէին այս վիճաբանութեան՝ յորում իրենցմէ միոյն պատիւը վտանգի մէջ էր:



Անշուշտ ողջմտութիւնն և ճշմարտութիւնը տոժին կողմն էին, և հասարակաց գործոց փորձառութիւն ունեցող այս ծերունեաց մէջ վարժուած անակնկալներու, լոկէայնականարկութեանց, որոգայթներու, խուսափողական պատճառանքներու, երկղիմի խօսքերու, փախստական միջոցներու, խորամանկութեանց, խարդախութեանց, որսնը Վենետիոյ վարչութեան խորամանկ քաղաքականութեան հիմերն էին, չի կար մէկն՝ որ խարուած ըլլար կուսակալէն և հաւտացած ըլլար անոր իբր այլ ոմն Մարդինենկոյի. ընդհակառակն ամենքն ալ համոզուած էին անոր ոճրագործութիւններու, ոչ միայն ներկային, այլ և անցեալին մէջ: Սակայն տժգոհ էին Մարդինենկոյին դէմ տոժին ցրցուցած հալածոց կատարութեան: Ինչո՞ւ համար. որովհետև կուսակալը Վենետիոյ Ոսկեգրքին (Livre d'or) մէջ գրած էր իր անունն իրենց անուններուն քով. վասն զի կը պատկանէր այն զօրաւոր ազնուապետութեան՝ որուն սերտ յարակցութեան շնորհիւ երկար ժամանակ սակաւուց ձեռքը մնաց այն իշխանութիւնը որ Վենետիոյ Հասարակապետութիւն կոչուեցաւ. վասն

զի այս մարդուն իրենք զիրենք համերաշխ կը համարէին, վասն զի իրենցմէ միոյն շըքուած աղաք բոլոր պատրիկութեան վըրայ կը ցատկէր:

Բատուայի կուսակալը կը տեսնէր դատաւորաց ճակատը մշուշով ծածկուած, և անոնցմէ ոմանք հազիւ կը զսպէին իրենց բարկութիւնը զոր կը զրգոէր տոժին ցրցուցած արդար ցասումն: Հասկըցաւ թէ մէկ բան միայն կը մնար իրեն՝ որպէս զի նժարը իր կողմն հակի: Վայրկեանն եկած էր միջամուխ ըլլալու. ուրեմն խօսք ուզեց, և իսկոյն շնորհուեցաւ իրեն:

— Վսեմաշուք տեարք, ըսաւ կուսակալն, աւելի ժողովականաց խօսիլ ձեացունելով քան տոժին, կ'աղաչեմ նկատողութեան առէք նախագահ տոժին կողմանէ իմ անձնապաշտպանութեանս ազատութեան արգիլուիլը:

— Այո՞, իրաւունք ունի, ըսաւ Կորեստանոյ:

— Կը սխալիք, կուսակալ, պատասխանեց տոժը, թէ նախագահը և թէ ժողովը կը ջանան պարզապէս լուսաւորուիլ և այս միջին գործին վըրայ լոյս սփռել:



Այն ատեն ձայն մը, որ Լորեստանոյինը չէր, այս տարօրինակ խօսքերը արտաբերեց.

— Սակայն բանէ մը մի՛ վախնաք, Մարդինենկոյ, մեր դատաստանին անկողմնակալութիւնը յայտնի է ձեզի: Ուրեմն համարձակօրէն խօսեցէք, և ամենէն աւելի՛ զձեզ պաշտպանելու միջոցները լաւ կըռեցէք:

Կուսակալը հասկըցաւ թէ իր դատաստանը կէսէն աւելին շահած էր. անոր համար ազնուութեամբ բարեւեց շնորհակալ ըլլալով խօսող ձերակուտականին: Յետոյ շարունակեց ամենայն հանդարտութեամբ և պաղարիւնութեամբ:

— Արդէն այն ժամանակ, և անկէ վերջ շատ անգամներ քիչ մնաց որ զոհ պիտի երթայի անձիս դէմ լարուած դաւրանակալութեան մը: Մանաւանդ երկու դիպուածներու մէջ ճանչցայ մարդասպանն, զոր տասնըհինգ օր առաջ վերստին տեսայ գեղեցիկ կղզւոյն մէջ:

— Ինչո՞ւ համար իւրաքանչիւր անգամուն ձեր գանգատները դատարանին չի ներկայացուցիք, հարցուց տոժը:

— Ուրիշներուն համար, պատասխա-

նեց գոռոզութեամբ Մարդինենկոյ, կ'ընդունիմ Պետութեան միջամտութիւնը, սակայն երբ իմ անձիս վրայ է խնդիրը, կը համարիմ թէ բաւական ոյժ ունիմ ինքզինքս պաշտպանելու:

Այս ամբարտաւան խօսքերը հաճութեան շէնչիւնով մը ընդունելի եղան: Այս շէնչիւնը կը նշանակէր. Ահաւասիկ պատրիկի մը արժանի լեզու: Տոժը ուզելով մինչև ծայրն երթալ, ըսաւ պարզապէս.

— Առաջ տարէք:

Կուսակալը կրկնեց.

— Երկար ատեն խորհելով այս զանազան պատահարներուն վրայ՝ վերջապէս համոզուեցայ թէ, այն մարդն որ շատ տարիներէ վեր ինձի և իմիններուս դէմ ոխերիմ թշնամին է, կ'ուզէ զիս մէջտեղէն վերցնելով իմ տեղս անցնիլ և ըլլալ վերցնելով իմ ես եմ: Այն ժամանակ ամէն ինչ կը մեկնուի, նոյն իսկ կոմսուհւոյն մահը, նոյն իսկ աղջկան անյայտանալը, նոյն իսկ...

— Նոյն իսկ Փէլիչէ Պատտէրին և կոնտողավար Ռիքարտոյին դէմ գործուած ուճիւրը, նոյն իսկ Աղբիականին աղջկան գրաւիլը, նոյն իսկ ձեր յանդուգն դիմա-



դրութիւնը ձերակուտին հրամաններուն ,  
գոչեց Պոսքարին սպառնալից ձայնով մը :  
Ինչպէս պիտի արդարացնէք ձեր ընթաց-  
քը . դուք պետութեան ծառայ , և հասարակապետութեան վարչութեան զէմ սպասամբ կը գտնուիք :

— Ինձի ուղղուած հարցմունքներուն պատասխանելէն առաջ , կրկնեց Մարդի-  
նենկոյ կարճ լուսթենէ մը վերջ , կ'ուզեմ իշխանիս հարցմունք մ'ընել :

— Հոս իշխան չի կայ , խստօրէն պատասխանեց տոժը , մի միայն դատարանին նախագահը կայ ուր կոչուած էր դատուելու :

— Այդպէս ըլլայ , ըսաւ Մարդինենկոյ :  
Արդ , քանի որ այսպէս է , կը հարցնեմ ժողովրդին նախագահին , չի՞ ճանչնար արդեօք մէկն որ իմ մահուան դատապարտուելուս փափագի , որպէս զի զինքը տանջող և վտանգաւոր վկայ մը մէջ տեղէն վերցուի :

— Ո՛չ , ըսաւ Պոսքարի . և չեմ հասկընար ձեր հարցման նպատակը :

— Ե՛ս կը ճանչնամ այս մարդն , ըսաւ կուսակալն , որուն աչքերը յանկարծ չարագուշակ լուսով մը փայլեցան : Նա

կը կոչուի Պրանչեսքոյ Պոսքարի , վե-  
նեակոյ տոժը : Գուր , վեհափառ Տէր :

— Ի՛նչ , կը յուսկնի՞ս ըսելու , կուսակալն , պոռոպ Պոսքարին , այնպիսի աշխոյժ շարժմամբ ոտքի ելլելով որ իր յանաջացած տարիքէն չէր սպասուեր : Պիտի յանդգնի՞ս ուրեմն զիս նոր ոմն Մարինոյ Պալիէրոյ ցուցընել :

— Խնդիրը ոչ այնչափ ձեր վրայ է , վեհափառ , ըսաւ կուսակալը , որչափ ձեր որդւոյն վրայ :

— Իմ որդին , ըսաւ տոժը խուլ ձայնով մը . և ինկաւ իր նախագահի աթոռին վրայ :

— Զգուշացէ՛ք , կուսակալ , ըսաւ ժողովականներէն մին որ մինչև այն վայրկեան խօսք մը ըրած չէր . ամբաստանողի դերը ձեզի պիտի չի պատշաճի . կ'իմացնեմ ձեզի որ յոռի ճամբու մը մէջ մտար :

— Գլուխս կը դնեմ ըսած խօսքերուս , գոռոզութեամբ կրկնեց Մարդինենկոյ , արդէն ինչ որ պիտի ըսեմ տոժը ինքնին կրնայ հաստատել զայն :

— Բացատրեցէք ուրեմն ըսածնիդ :

— Հազիւ ամիս մը կայ , կրկնեց կուսակալը , երբ Բատուայի իմ կառավարու-



Թեանս մէջ Միլանու սահմանագլխին վըրայ լաւագոյն պահպանութիւնը կ'ընէի և կը հսկէի թշնամուոյն հնարքներուն դէմ, յանկարծ իմ զինուորներէս ջոկատ մը ձերբակալեց Միլանու դքսին գնացող գաղտնի պատուիրակ մը որ կը ջանար մեր զիծերուն մէջէն կտրել անցնիլ: Այս մարդը իր տիրոջը, Միլանու դքսին, ուղղեալ կարևոր նամակներ ունէր վրան: Գրաւուած բազմաթիւ թուղթերուն մէջ կը գտնուէր նամակ մը Միլանու դքսին հասցէին ուղղեալ, պետութեանս թշնամուոյն, որուն հետ գէնքը ձեռքերնիս կը պատեւրագմէինք: Արդ երևակայեցէք թէ այս նամակին ստորագրողն ո՞վ արդեօք կրնար ըլլալ: Յակոբոս Պոսքարին, տոժին գաւակը, զոր իրաւամբ արսորեցիք կրետէ:

Այս անակնկալ յայտնութեան դիմաց մեծ իրարանցում մը տիրեց ժողովքին մէջ և ամենուն աչքերը դարձան ձերուսի Պոսքարիին վրայ: Ուզեց խօսիլ, սակայն կուսակալը չի ձգեց:

— Ներեցէք, վեհափառ, ամէն բան չըսի տակաւին: Իմ անձուկ պարտականութիւնս էր թերևս այս նամակը ձեր ձեռքը հասցընել, վսեմաշուք տեսրք,

ըսաւ Մարդինենկոյ, միշտ ժողովականաց ուղղելով խօսքը, բացի տոժէն, այո՛ պէտք էր որ ընէի, սակայն սրտիս մէջ մարդասիրութիւնը յաղթեց պարտաճանաչութեանս, և այս նամակը տարի տուի Պրանչեսքոյ Պոսքարի տոժին, որ գայն այրեց:

— Թշուառակա՛ն, ընդմիջեց տոժը Մարդինենկոյի դառնալով. ահա թէ ի՞նչ պէս կը մեքենայես իմ տանս դէմ: Երբ այս նամակը յանձնեցիր ինձի, ես ինքն չառաջարկեցի՞ քեզ գայն ժողովի սեղանին վրայ դնելու: Ախ, ինչո՞ւ չըրի ես գէթ այսու պահած կ'ըլլայի խեղճ գաւակիս ինձի գրած նամակն ալ, որ կը բացատրէր իր գործած յանցանքին շարժառիթը:

Այն վայկենին, կուսակալին երեսին վրայ չար ժպիտ մը տեսնուեցաւ:

— Հրէ՛ջ, գոչեց տոժը բարկութենէ խելայեղեալ, կը ծիծաղիս, վասն զի գիտես թէ այս նամակը միւս նամակին հետ մէջտեղէն վերցուած է: Սակայն կը համարձակի՞ս մէջի պարունակութիւնն ալ ուրանալ: Վսեմաշուք տեսրք, յանուն իմ սպիտակ մագերուս, յանուն պետութեան ծառայութեան նուիրեալ բոլոր կենացս



կ'երզնում թէ իմ զաւակիս Միլանու զըքսին նամակ գրելուն միակ նպատակն էր ոճիր մը ստեղծել, որով կարենայ իր սիրելի վենետիկը մտնելու դառն գոհունակութիւնն ունենալ, թէպէտ դահիճին տապարին տակ իր գլուխը իոյնալու հաւանականութեամբ: Գէթ, կը գրէր նա, իմ գերեզմանս վենետիկեան հողին մէջ փորուած ըլլայ:

— Ժողովը, պատասխանեց հեզնօրէն կուսակալը, պիտի գնահատէ ձեր պատճառարանութեան արժէքը: Իսկ ներկայիս, կ'երզուընցնեմ զձեզ, վեհափառ, պատասխանեցէք պարզապէս սա հարցմանս: Կ'ընդունի՞ք զուր թէ այս նամակը Յակոբոս Ֆոսթարիէն գրուած է և թէ ինքը զայն Միլանու գրսին զրկած է:

— Այո՛, տխուր իրականութիւն մ'է. ըսաւ թշուառ հայրը խուլ ձայնով մը:

— Արդ ուրեմն, շարունակեց կուսակալը դառնալով ժողովին անդամներուն, կը հարցնեմ ձեզի վսեմաշուք տեարք, ըրած յայտնութեանս հետեանօք իրաւունք չունի՞մ մերժելու Ֆրանչեսքոյ Ֆոսթարիին որ իբր նախագահ դատարանի՝ հրաւիրուած է զիս դատելու:





ՅՐ. Ֆոսթարի

— Իւ ես իսկոյն կը հրաժարիմ այս պաշտամանէս, ըսաւ տոժը ոտքի ելլելով, և իսկոյն քաշուեցաւ իւր բնակարանը:

Ժողովականաց մէջէն երիցագոյնը՝ Թիկնաթոռին վրայ նստելով ըսաւ.

— Ֆանուն Աւագանւոյն, Բատուայի կուսակալին հարցաքննութիւնն առ այժմ կը դադրի: Պահապանը, ամբաստանեալն վերստին տարէք իր բանտը:

ԺԶ.

#### ԵՐԿՈՒ ՖՈՍԳԱՐԻՆԵՐ

Երբունի տոժը՝ Մարգինենկոյի այս արտակարգ հարցաքննութեան առեւն կրած գլխակորութեան պատճառաւ՝ չարաչար վշտացած էր. ուր՝ շնորհիւ ժողովոյն անդամներուն հաճոյակատարութեան և կողմնակալութեան՝ ամբաստանեալը ամբաստանողի յեղաշրջեց: Սակայն տոժը ուզեց միայնակ իր վշտովը տառապիլ, և վիսեճիային ու Պատուէրին գորովական հարցմունքներուն խուսարողական պատասխաններ կուտար:



Այդ օրէն սկսեալ տոժը այլ ևս ժողովի չի գնաց. իր պաշտօնին վերաբերեալ ամէն գործէ քաշուեցաւ, և շարունակ իւր յարկարաժնին մէջ փակուած կը մնար՝ ուր մի միայն իրեն մտերիմները կրնային մտնել, որոնց մէջ խօսեցեալներն առաջիններն էին:

Պրանչեսքոյ Պոսքարի այնպիսի տխուր վիճակի մը մէջ կը գտնուէր որ նոյն խակ եւրիտասարդ խօսեցեալները համաձայնեցան Ֆէլիչէին վիլլաֆրանգա մեկնումը հետաձգել:

Սակայն ձերուներն տեղեակ էր երիտասարդաց ծրագրին, ժամանակ մը անցնելէն յետոյ կը զարմանար այս ծրագրին գործադրութեան ուշանալուն վրայ. և գուշակելով թէ Ֆէլիչէ Պատտէրին տագնապալից գորովանքը կը բռնազատէր զինքն իր մօտ կենալու, ոգւոյ հանգստութիւն մը կեղծեց, քան ինչ որ չէր, և երիտասարդ պատրիկին մեկնումն վերջնականապէս որոշուեցաւ:

Տոժին թախանձանաց վրայ միաձայնեցան որ վենեճիան ալ ընկերանայ իր նշանածին մինչև վերոնայ, ինչպէս նաև Պիամէղգա և Ռիքարտոյ ճանապարհոր-

դակից պիտի ըլլային: Քաջ կոնտուլավարն ահամայ յանձն առած էր իր տիրոջն ընկերանալ զէպի զօրաբանակը. ինքը նախամեծար կը համարէր մնալ վենետիկ իւր սիրելի Պիամէղգային մօտ: Կարևորութիւն մը չէր տեսներ թողուլ իր կոնտուլն և այն լճակներն որոնք իրեն այնքան ընտանի էին, և երթալ զօրաբանակին մէջ զեղարդ և հրացան գործածել: Նաժիշտն որպէս զի կարենայ համոզել Ռիքարտոն ժամանակաւոր աքսորանքի մը կարևորութեան, կը ջանար միտքը բերել այն ամէն զեղեցիկ փաստերը զորս վենեճիան իր նշանածին զիմացը զրած էր: Սակայն բոլոր այս պատճառաբանութիւնք հիմնովին խառնակուած էին փոքրիկ Պիամէղգային ըզեղին մէջ. ըսած խօսքերուն մէջ քիչ շատ իր մտքին շփոթութիւնները կը տեսնուէին: Որչափ որ քաջ կոնտուլավարը կրնար հասկընալ, իւր հաստ ողմտութեան թեւազրածին չափով սապէս կը խորհրդածէր:

— Պիամմինա, Պիամէղգաս, կարծեմ թէ տարբերութիւն կայ պատրիկի մը և կոնտուլավարին մէջ. և օրիորդ վենեճիային յառաջ բերած գաղափարները թերևս



խիստ պատշաճ ըլլան Ֆելիչէ Պատոէրի, սակայն չեն յարմարիր կոնտրափար Ռիքարտոյի:

Ըրած անգրադարձութիւնը շատ ստոյգ էր: Ֆիամէղդա գիտնալով հանդերձ զայն, սկսաւ նեղանալ, և փոքրիկ ոտքը գետինը զարնելով կը գոչէր.

— Եւ ես կուզեմ այո՛, որ դու իբր ազնուական մը գործես:

Ֆիամէղդան այս տարօրինակ յաւակնութիւնն ընելու ատեն այնպիսի զուարթ թախառն խոժոռ գէմը մը կը ցուցնէր, որ Ռիքարտոյ մեծ քահ քահ մը փրցուց:

— Ա՛յ քեզի կնիկ, գոչեց նա, կը ջանան միշտ բանական խելքը հակառակ կողմը շրջել: Սակայն չե՞ս յիշեր երբ դու կը ծաղրէիր — և իրաւունք ալ ունէիր — իմ անդուսէ զգեստս և մետաքսէ ժապաւէններս որոնք փետուրներու նման կը ծածանէին ուսերուս վրայ:

Ֆիամէղդա թթու կերպարանք մը առաւ:

— Դարձեալ ի՞նչ կայ, հարցուց Ռիքարտոյ:

— Այս կայ որ, պատասխանեց սաստկուրթեամբ Ֆիամէղդա, գէշ կերպով իմ

միտքս կը բացատրեմ, բայց լաւ կը մըտածեմ: Տիկնոջ մը պատճառաբանութիւններն չեն պատշաճիր նաժշտի մը բերնին, և պահ մը առաջ ուզելով տիկնոջս լեզուն գործածել սխալեցայ: Սակայն անա թէ ի՞նչ կը մտածեմ, և այս անգամ ինչ որ պիտի ըսեմ իմ անձնական մտածմունքս է: Գու, կոնտրափար Ռիքարտոյ, քեզի ամօթ չե՞ս համարիր որ տէրք առանձին մեկնի դէպի զօրաբանակը, և ինքզինքը միայնակ հազար տեսակ կարելի վտանգներու ենթարկէ:

— Ստոյգ է, ըսաւ կոնտրափարն ամօթահար, այս բանս չէի մտածած: Անկարելի է:

— Ուրեմն համակարծիք ենք:

— Սակայն սիրելի Ֆիամէղդա, և մեր հարսնի՞քը:

— Թէ որ միտքդ դրեր ես թէ վատութիւն ընելով, անոր ժամանակը պիտի փութացնես, շատ կը սխալիս, Ռիքարտոյ:

Կոնտրափարը գլուխը քերելով վայրկեան մը լուռ կեցաւ. վերջապէս համակամեալ շեշտով մը ըսաւ.

— Իրաւունք ունիս, Ֆիամէղդա, պէտք







նոնց ետեէն Ռիքարտոյ և միւս ծառաները կուգային, հսկելով բեռները տանող կառքին:

Այս փոքր խումբը յաջող ճամբորդութեամբ մը երկրորդ օրը զիշերէն առաջ մտաւ Վերոնա: Քաղքին մէջ, ինչպէս վերն ըսինք, Վենեճիա պիտի բաժնուէր իր նշանածէն: Սակայն թէ Ֆելիչէ և թէ Ֆրամէզդա իրենց փախստեան արկածներն այնպիսի ազդեցիկ նկարագրականով պատմած էին որ Ադրիականին աղջկան վրայ խոր տպաւորութիւն ըրած էր, ուզեց անոր հետքին մինչև ծայրը երթալ, և տեղւոյն վրայ պատմել տալ այն վտանգալից ճամբորդութեան ամէն մանր պարագաները: Վենեճիա ամենէն աւելի կը փափաքէր երթալ անձամբ սրտագին շնորհակալութիւն յայտնել այն բարի ձկնորսին՝ որ իր կեանքը կամ գէթ իր ազատութիւնը վտանգի մէջ դնելով քաջութիւն ունեցեր էր (շատ հազուագիւտ այն ատենի ժողովրդեան դասակարգին մէջ) իր խրճիթը ժողովել փախստականներն, որոնց գլխոյն գինը կտրուած էր Բատուայի կուսակալին կողմանէ:

Ուստի երկրորդ առաւօտ փոխանակ Վե-

նետիկ դառնալու, Վենեճիային ղեսպակը դէպի Կարտայ լիճը ճամբայ ելաւ:

Բէսքիէրային մօտ Ֆրամէզդա այն փոքրիկ կարաւանին առաջնորդութիւնը ինքն ստանձնեց: Հրաման տուաւ ջորեպաններուն իրենց ձախ կողմը ձգել քաղաքն և ուղղակի լիճը տանող ճամբան բռնել: Սակայն հոն ամէն ինչ նոր կ'երևար Ֆրամէզդային, ղեսպակին մէջէն գլուխը դուրս կը կարկառէր, ուր նստած էր Վենեճիային զիմաց, սակայն չէր տեսներ ձկնորսի խեղճ խրճիթներէն ոչ մին, ուր ինքն և իր փախստեան ընկերները պատասպարան գտած էին քիչ ժամանակ առաջ: Փոխանակ իրեն ծանօթ խղիկներու, կը տեսնէր երեք հատ նոր և քիչ շատ գեղեցիկ տուներ, մեծ պարտէզի մը մէջ շինուած:

Այս փոքրիկ գեղեցիկ տուներէն միոյն շէմին վրայ մարդ մը ոտքի վրայ կեցած, իր ձկնորսի գլխարկը մինչև աչքերը իջեցուցած փրկստիպայօրէն իր ծխափողը կը ծխէր, բայց այս օտարականաց մօտենալը տեսնելով՝ ծխափողն և գլխարկը մէկ դինետեց, և իր խոշոր ձայնով գոչեց.

— Per bacco! տիար Պատոէրն է:

— Նոյն ինքն, ըսաւ երիտասարդը, գուարթօրէն դէպի ձկնորսն երթալով:



— Այս բարձրապատիւ տէր, ինչպիսի՛ ուրախութիւն զաւկիս և ինձի համար, գոչեց ձկնորսը: — Սակայն Ձեր վսեմութիւնը դժուարութիւն կը բաշէ յիշելու, աւելցուց նա տեսնելով երիտասարդ պատրիկին զարմանքով աչքերը իր շուրջը պըտըտցնելը:

— Այո՛, ինքնիրենս կը հարցընեմ, պատասխանեց Պատուէր, թէ ո՛ր բարի պարիկն անցած է ասկից, որ իր փոքր գաւազանին մէկ հարուածով կերպարանափոխ ըրած է իմ ճանչցած խրճիթներս այսպիսի գեղեցիկ տուներու:

Ղկնորսը սկսաւ ըսն, բա՛ն խնտա՛:

— Բարի պարիկը դուք էք, վսեմ, Տէր, գոչեց նա: Ձեր առատաձեռնութեան շնորհիւ իմ բարեկամներս և ես այս երեք փոքր պալատներու տէր եղանք, առանց հաշուելու վարը կապուած նաւակս բոլորովին նորոգուած, սկսեալ առջևի գերանէն մինչև յետինը:

Ճանապարհորդները մանրամասնօրէն այցելեցին այս երեք տուները, և բարի ձկնորսին ընծայած հիւրընկալութիւնն ընդունեցան: Վենեճիային համար վերջին երջանիկ գիշերն եղաւ այս:

Երկրորդ առաւօտ Ազրիականին աղջիկն արթնցաւ, առանց յայտնի պատճառի, խորին տխրութեամբ մը համակուած: Իրեն կը թուէր թէ մեծ դժբախտութիւն մը կ'սպառնայ իրեն և իր սիրականներուն, առանց կարող ըլլալու այս նախազգացման մեկնութիւն մը տալ:

Սակայն բաժնուելու վայրկեանն եկած էր, և Ազրիականին աղջիկն ընկերակցութեամբ իւր հաւատարիմ Ֆրիամէդգային՝ դէպի Վենետիկ ճամբայ ելաւ, իսկ Ֆելիչէ և Ռիքարտոյ գնացին Վիլլաֆրանզայի բանակը:

Բայց մանկամարդ աղջիկը չուզեց ուղղակի Վենետիկ երթալ: Վերադարձին կը փափաքէր կարճ այցելութիւն մը տալ Ազնուական օրիորդաց վանքին, ուր, կ'ըսէր իր նաժշտին, այնքան երջանիկ օրեր անցուցած եմ: Նրախկին աշակերտուհւոյն այցելութիւնն բարի մայրապետաց մեծ ուրախութիւն պատճառեց, որ իրենց ամենէն սիրելի զաւակն եղած էր:

— Դուք մեր մէջը մեծ պակաս մը ձգած էք, ըսաւ անոր մեծաւոր մայրը թեւերուն մէջ առնելով զինքը, այս պակասը լեցունելու եկաք:



Ամենքն անոր շուրջն առած զուարթ ընդունելութիւն կ'ընէին, սակայն միանգամայն մեծ փոփոխութիւն կը տեսնային Վենեճիային վրայ: Չէր այն մանկամարդ աղջիկը զոր ամէն ոք կը ճանչնար իբր կատակասէր, զուարթ, քացրաբարոյ, — արևու ճշմարիտ ճառագայթ մը, ինչպէս զինքը կը կոչէին — որչափ ժամանակ որ Ազնուական օրիորդաց վանքը մնացած էր: Փոխանակ արծաթի քրքիչներու, որոնց ստէպ արծագանգ եղած էին վանքին հին պատերը, հազիւ ժպտի մը նշմարը կը տեսնուէր իր շրթունքներուն վրայ: Իւր գեղեցիկ աչքերն, գարնան երկինքի նման կապոյտ, ալեկոծեալ խոր ծովու խիստ գոյնը առած էին:

Իրեն ամենէն մտերիմ հին բարեկամուհիներէն մին ըսաւ.

— Պարտէզ երթանք տեսնելու այն գեղեցիկ ծաղիկները զոր ձեռք ձեռքով մը շահելն այնքան սիրելի էր ձեզի:

Սակայն Վենեճիա գլխի նշանով մը մերժողական պատասխան տուաւ, և մեծաւոր մօր ձեռքը բռնելով համբուրեց և ըսաւ.

— Մայր իմ, ձեզմէ շնորհք մը պիտի խնդրեմ:

— Ո՞ր շնորհքը, զաւակս, հարցուց անոր սրբակեաց կինը:

— Կը փափարիմ որ հրաման տայիք ինձի, սիրելի մայր, երթալ առանձին վանքին մատուոր իմ ջերմեռանդութիւնս ընելու:

Հրամանը խեղոյն տրուեցաւ. և Վենեճիան այնքան երկար ատեն մնաց աղօթքի մէջ որ, քոյրերը սկսան տագնապիլ այս երկար բացակայութեան վրայ: Երկու աշխատաւոր քոյրեր զրկուեցան անոր քով, որոնք գտան զինքը մատրան մոզայիքէ յատակին վրայ ինկած մարած: Երբ արթնցաւ թմրութենէ՝ խեղոյն այս խօսքերն ըսաւ.

— Պէտք է որ մեկնիմ, և շուտով մեկնիմ:

— Ի՞նչ ունիք, զաւակս, հարցուց անոր մեծաւոր մայրը:

— Սիրելի մայր, ըսաւ Վենեճիան արտասուելով, ըիչ առաջ տեսայ յայտնապէս կայծակ մը որ Ֆոսքարիի կիսաւեր հին տանը վրայ կ'իյնար: Թոյլ տուէք ինձի փութով վերադառնալ իմ տիրոջս, իմ իշխանիս և իմ հօրս քով:

— Գնացէ՛ք զաւակս, ըսաւ մեծաւոր



բուհին առանց փոքր զարմանք մը յայտնելու վենեճիային ըսած արտասովոր խօսքերուն վրայ:

Այս միատիկականութիւնն, որուն հետեանքն էր զառանցանքը, — եթէ երբէք յարգանքի դէմ չէ այս բացատրութիւնը տալը — դարուն ճաշակին կը համապատասխանէին: Եոյն դարուն մէջ կրօնքն աշխարհիս ամենէն աւելի մեծ բանաստեղծութիւնն էր: Հասարակաց և առանձնականաց ոճիրներուն մէջ, որոնց թատերաբեմն էր հնգետասաներորդ դարը, խանդակաթ հոգիները աղօթից մէջ ապաստանարան մը գտնէին: Իրենց բարեպաշտութեան եռանդեան մէջ ապագային վոայտեսիլքներ, յայտնութիւններ կ'ունենային, և — այս երևոյթներու չենք ուզեր մեկնութիւն մը տալ — շատ անգամ ճիշդ կ'ելլէին կամ կը հանդիպէին:

Վենեճիա աճապարանօք մեկնեցաւ և իւր արագաշարժ թիավարներուն շնորհիւ, քանի մը ժամուան մէջ ճամբորդութիւնը լըմնցուց:

Երբ Բիաձէզդա ելաւ, Ադրիականին աղջիկն ամէն կողմ մեծ իրարանցում մը նշմարեց: Բազմութիւնը կ'սպասէր սկսեալ

Պաղիսդերիոյէն, Բիաձէզդայի, Սքիավոնի բարափին վրայ, մինչև Արսէնալը (նաւարան): Անշուշտ այս ժամուս վենետիոյ մէջ արտասովոր բան մը կը պատահէր: Յիրաւի ամենքն կը ղիտէին սպարապետական ցոկանաւն, որ անտարակոյս արշաւանքէ մը կը դառնար և կ'աճապարէր Օրֆանոյ ջրանցքէն անցնիլ, որպէս զի մակընթացութենէն օգտուելով կարենայ բարափին մօտենալ:

— Սակայն ուստի՞ կու գար սպարապետական ցոկանաւր:

— Ո՞ր արշաւանքէն:

— Ո՞վ կար վրան:

Այս զանազան հարցմունքներուն, սա պատասխանը տրուեցաւ Վենեճիային. Սպարապետական ցոկանաւր ծերակուտին հրամանով ետ կը դարձնէր Կրէտէի արսորավայրէն Յակոբոս Ֆոսքարին:

Վենեճիան այս լուրը առնելուն չափէ դուրս ուրախացաւ: Ուրեմն խաբուած էր իր նախագուշակութեանց մէջ, Ֆոսքարիի տունն իր կարծածին համեմատ կործանման սպառնալիք չունէր:

Ահա ինչ որ կ'ըսէր Վենեճիան ինքն իրեն, աճապարելով Բիաձէզդան անցնելու



և գրասական պալատը մտնելու: Երբ հասաւ հոն, իսկոյն վազեց տոժին անձնական յարկարածինը: Սակայն փոխանակ ձերուներն կատարեալ ուրախութեան մէջ գտնելու իր Յակոբոս զաւակին դարձին վրայ, աւելի տխուր և աւելի յուսահատ տեսաւ զինքը քան ինչ որ ձգած էր:

— Չեր Յակոբոս զաւակն միթէ իր արտուանքէն չի՞ դառնար, ձերակոյտը վերջապէս ետ չի՞ կանչեց զինքը, հացուց աղջիկը:

— Այո՛, պատասխանեց տոժը սրտի դառնութեամբ մը, ձերակոյտը կանչեց յիւրաւի... նորէն զինքը դատելու, և անտարակոյս կրկին անգամ տանջանքի ենթարկելու համար: Սակայն գէթ այս անգամ բրեկատները զիս իրենց մեղսակից պիտի չունենան: Պիտի հրաժարիմ, որովհետև չեմ ուզեր նորէն դահիճ ըլլալ իմ վերջին զաւակիս:

Հագիւ թէ տոժը կը վերջացնէր իր խօսքը, նոյն պաշտօնակալն, որ քանի մը շաբաթ առաջ եկած էր Ֆրանչեսքոյ Պոսքարիին քով Տասանց ժողովքին կողմանէ, նորէն ներկայացաւ:

— Ի՞նչ կուզես ինձմէ, ըսաւ տոժը իր թաւ յօնքերը պոստելով:

— Վեհափառ, պատասխանեց պաշտօնակալը խոնարհելով, Տասանց ժողովը կը ներկայացնէ իր յարգանքները բարձրապատիւ, մեծագոր տոժին Վենետոյ...:

— Անցի՛ր, ըսաւ Պոսքարին ընդհատելով զինքը, խնդիրն ի՞նչ է: Տասանց ժողովն ի՞նչ կուզէ ինձմէ:

— Վեհափառ տէր, շարունակեց պաշտօնակալը նորէն խոնարհելով, ժողովը իր գումարման սովորական վայրը կ'սպասէ Չեր բարձր հաճութեան, շնորհք ընէիք նախագահելու:

— Կը մերժեմ, ըսաւ Պոսքարի: Գնա իմացուր զքեզ զրկողներուն:

Սակայն պաշտօնակալը տեղէն չի շարժեցաւ: Տոժին զիմացը ոտքի վրայ, անշարժ և անխօս կեցաւ:

— Չի հասկցար ըսածներս, հարցուց Պոսքարին:

— Վեհափառ տէր, պատասխանեց պաշտօնակալը երկու ծունկի վրայ գալով, հաճեցէք խորհելու թէ անկարելի է ինձի բարձրագոյն ժողովին հաղորդելու պատասխան մը որ վտանգի մէջ կը դնէ ոչ միայն զիս նուաստս, այլ նաև իմ Վեհապետս:



— Ո՛վ տէր իմ, ո՛վ իշխանն իմ, ո՛վ հայր իմ, ըսաւ Վենեձիան տոժին ոտքերն իյնալով, այս մարդն իրաւունք ունի : Քաջութիւն ունեցէր անձամբ ներկայանալու ժողովին և բացատրելու անոր պատճառներն որոնք զձեզ կը բռնադատեն այս անգամ հրաժարել նախագահելու պատուէն : Ժողովը մարդերէ կազմուած է . . . :

— Ըսել կ'ուզես վագրներէ, ընդհատեց Պոսքարին :

— Կ'ուզեմ հաւատալ թէ անոնք ալ մարդիկ են, շարունակեց Վենեձիան, մարդիկ՝ որոնք ձեր արդար խնդիրը մերժելու բարբարոսութիւնը պիտի չունենան :

— Շատ աղէկ, ըսաւ Պոսքարին, դժբախտան խոյրը զլուխը դնելով, իր պատուոյն խորհրդանշանն. անգամ մ'ալ խմենք այս դառն բաժակը :

Երբ տոժը ներկայացաւ ժողովի սրահն, միևնոյն ձևակերպեալ սին յարգանքով մը ընդունուեցաւ, ինչպէս ամէն ուրեք իր ստապատիր վեհափառութիւնը : Նշանով մը հրաւիրեց ժողովականքը նստելու : Յետոյ ըսաւ .

— Բարձրապատիւ տեարք, կու գամ խնդրելու ձեզմէ որ ութսունամեայ ձերու

մը վրայ իրեն ուժէն վեր բեռ մը չի դնէք : Կը յուսամ թէ պիտի հաճիք, ինչպէս բրիք Մարդինենկոյի վերջին հարցաքննութենէ յետոյ, ուրիշ մը ընտրել ժողովոյն նախագահելու՝ տեղի ունենալիք ցաւագին պայքարին ատեն :

Լորետանոյ ձերակուտականն իսկոյն պատասխանեց .

— Ծերակոյտն արդէն այս խնդրոյն վրայ խորհրդակցեցաւ, և կանխեց մերժեց տոժին խնդրանքը :

— Այն ատեն, ըսաւ Պրանչեսքոյ Պոսքարի, պատիւ կը համարիմ ժողովոյն սեղանին վրայ դնելու տոժական պատուոյ իմ հրաժարականս պերճափայլ Հասարակապետութեան, զոր դուք երկու անգամ մերժեցիք :

— Եւ մենք երրորդ անգամ մ'ալ կը մերժենք, ըսաւ Լորետանոյ : Դուք առանց ձերակուտին հաճութեան իրաւունք չունիք հրաժարելու :

— Այն ատեն ի՞նչ կը պահանջէք ինձմէ :

— Նախագահէք ժողովոյն որ իբր դատական ատեան մը խմբուած է Յակոբոս Պոսքարին դատելու, ամբաստանեալ իբր



մատնիչ և դաւադիր ոճրագործ մը Պե-  
տուժեան ապահովութեան դէմ:

Տոժն իր աչքերն երկինք վերցնելով  
ըսաւ.

— Դու, Աստուած իմ կը լսես, և կը  
հանդուրժես ասոր:

Յետոյ զլուխը կուրծքին վրայ խոնար-  
հեց և խուլ ձայնով ժողովոյն ուղղելով  
խօսքն ըսաւ.

— Այդպէս ըլլայ, այս ցաւազին գոր-  
ծին մինչև ծայրը պիտի երթամ: Տեարք,  
նիստը բացուած է:

Այն ատեն ժողովին զիմացը բերուե-  
ցաւ Յակոբոսը. բոլորովին գունաթափ ե-  
ղած, տարտամ ժպիտ մը ունէր իր շքե-  
թունքներուն վրայ: Իր հայրը տեսնելով  
կանգ առաւ, ձախ ձեռքը սրտին վրայ  
դրած, աջ ձեռքին մատուղներուն ծայրով  
համբոյր մը խաւրեց ձեռունի տոժին: Ծե-  
րունին աչքերը խոնարհեցուց ծածկելու  
համար իր թարթիչներուն վրայ դողդո-  
ղացող արցունքը: Յետոյ Յակոբոս ող-  
ջունեց ժողովոյն անդամներն և ըսաւ.

— Վսեմաշուք տեարք, նախ և առաջ  
շնորհակալ եմ ձեզի որ առիթ տուիք ինձի  
վերջին անգամ մ'ալ շնչելու իմ սիրելի  
վենետիոյ օդը:

Հարցաքննութիւնը սկսաւ. առանց փոքր  
ինչ դարձուածքի, Յակոբոս խոստովանե-  
ցաւ Միլանու դքսին նամակ գրած ը-  
լաւը:

— Ինչ նպատակաւ գրեցիք այս նա-  
մակը, հարցուց ձերակուտականերէն մին:

— Իմ միակ նպատակս էր տեսնել  
վերատին վենետիկը, պատասխանեց ամ-  
բաստանեալը. և այս նպատակիս հասայ:

— Ինչ փորձով կրնաք ցուցնել ձեր  
ըսածին ստուգութիւնը:

— Այն նամակով զոր գրած եմ հօրս,  
մի և նոյն ատեն որ գրած էի Միլանու  
դքսին:

— Այն նամակը պէտք է վիճարանու-  
թենէ դուրս հանել, սաստկութեամբ գո-  
չեց Լորետանոյ ձերակուտականը: Այն  
նամակը դատը շահելու զիտաւորութեամբ  
միայն գրուած է. և սակայն այն նամակը  
այրած է: Ուրեմն աւելի հեռուն երթալէն  
առաջ, կ'առաջարկեմ տանջանքի ենթար-  
կել Յակոբոս Փոսքարին, որպէս զի խոս-  
տովանի իր ոճիրները:

Այն ատեն ձերակուտական մը զիտել  
տուաւ թէ, բանի որ ամբաստանեալը կը  
խոստովանի Միլանու դքսին նամակ գրելն,



անգթութիւն է տանջանքի ներքեւ ձգել զինքը :

— Միայն այս ոճիւրը չէ որ կը ծանրանայ իր վրայ, պատասխանեց սաստկօրէն Լորետանոյ : Յակոբոս Պոսքարի վենետիոյ դէմ դաւադրութիւն ըրաւ : Օրէնքը բացայայտ է և կը պնդեմ որ տանջանքը գործադրուի ամբաստանեալին վրայ, մինչև որ ժողովը լսէ անոր բերնէն բացայայտ խոստովանութիւն մը :

Ժողովականք խորհրդակցեցան, և մեծամասնութիւնը վճռեց որ խիստ միջոցներ ձեռք առնուին, և նոյն իսկ ամբաստանեալն ժողովոյն դիմաց տանջանքներու ենթարկուի :

Մինչև այս կէտը թշուառ հայրը բառ մը չ'ըսաւ. բայց երբ տանջելու գործիքները բերուեցան, ոտքի ելաւ գոչելով :

— Ո՛չ, իմ ներկայութեամբս չըլլայ :

— Հայր, ըսաւ Յակոբոս անուշ ձայնով մը, մի՛ վախնար, պիտի տեսնես թէ որքան քաջութիւն ունիմ :

Հայրը՝ խղճուկ հեծութիւն մը հանելով նստեցաւ վերստին : Տանջանքը սկսաւ . որքան ալ կապիճները պատժեալին սրունքները կը պրկէին կաղնիին կոճղին մէջ,

որքան որ դահիճը սեպերը ներս կը մխէր և ոսկրները կը ջախջախէին այն ուժին տակ, տանջանքին ամբողջ տևողութեան մէջ Յակոբոս Պոսքարի իր հօրը նայելով կը շարունակէր ժպտիլը : Սակայն անգամ մը ցաւը յաղթեց քաջութեան և անոր բերնէն ցաւագին ճիչ մը հանել տուաւ, այս ձայնէն ձերունի տոժը դողըղաց :

— Կը խոստովանի՞ք... հարցուց անոր Լորետանոյ ձերակուտականը :

— Կը խոստովանիմ, պատասխանեց Յակոբոս :

— Վենետիոյ կառավարութեան դէմ դաւադրութիւն ընելդ :

— Կը խոստովանիմ թէ կը պաշտեմ վենետիկը, ըսաւ պատժաւորն միշտ անուշ ձայնով :

Լորետանոյ այն ատեն անհամբերութեան շարժուձև մը ցոյց տուաւ, և ձերակուտականներէն մին խնդրեց որ տանջանքը դադրի ժողովին խորհրդակցութեան ատեն :

Խորհրդակցութիւնը նոյն տեղւոյն վրայ եղան, ժողովին անդամները այլ ևս չի բռնադատեցին ձերունի Պոսքարին անոր մասնակցելու : Արդէն ձերունին բոլորովին



ընկճուած կ'երևէր. և կարծես այն պղինձէ սիրտերուն գութը վարկեան մը շարժեցաւ:

Տասանց անդամները իսկոյն իրենց տեղերը նստեցան, և անոնց մէջէն երիցագոյնը յայտարարեց թէ ժողովոյն մեծամասնութիւնը վճռած է դադրեցնել ա՛յլ ևս տանջանքը, և նոյն իսկ հարցաքննութիւնը չի շարունակել: Նկատելով որ Յակոբոս Պոսքարի կը խոստովանի Միլանու դքսին նամակ գրած ըլլալը, ժողովը կը շնորհէ անոր կեանքը: Պիտի դառնայ իր արքայութեանը՝ Կրէտէ:

Այս ծանուցագրին ընթերցման ատեն, ձերունի տոժը կարծես քիչ քիչ իր խորատու գեղացի թմրութենէն կ'արթնար, ուր ընկղմած էր իր զաւակին հարցաքննութեան առաջին վայրկեանէն: Գլուխը բարձրացուց և հարցուց.

— Յակոբոս վերստին Կրէտէ՞ պիտի դառնայ:

— Այո՛, ձեր բարձր հաճութեամբ:

— Այսօր պիտի մեկնի. հարցուց տոժը, յուզեալ շեշտով մը ցուցնելով իր թշուառ զաւակին շախշախուած սրունքը: Ժողովն չի հասկնալ ձևացուց տոժին

խօսքերուն հեզութիւնը, նորէն խորհրդագծութեան մտաւ, և Տասանքն իրարու հետ քանի մը խօսք փոխանակելէ յետոյ, անդամներէն երիցագոյնը յանուն միւսներուն ըսաւ.

— Յակոբոս Պոսքարի կրնայ մնալ Վենետիոյ մէջ, և նոյն իսկ դքսական պալատը, իր հօրը հետ նոյն յարկին ներքեւ, մինչև իրեն կատարեալ ապաքինումը:

Աւագ այս զթութիւնը շատ ուշ կը հասնէր: Տանջանքը խեղճ Յակոբոսին վերայ մնացած այն քիչ ուժն ալ սպառած էր: Երբ դքսական պալատը փոխադրեցին զինքը, դժբախտ երիտասարդն ինկաւ մարեցաւ, և միայն երեկոյեան դէմ արթնացաւ: Երբ սթափեցաւ, տեսաւ իր շուրջը հայրը և Ազրիականին աղջիկն, որոնք իր մօտ կեցած էին, և աչքովն նշանացի ցուցնելով անոնց՝ իր դէմն եղող պատուհանն որ Սքիավոնիի քարափին վրայ կը նայէր, հագիւ լսելի ձայնով մը ըսաւ.

— Բացէք սա պատուհանը:

Երբ պատուհանը բացուեցաւ, դրսէն եկած օդն շնչելու համար ինքնիրէն ոյժ տուաւ և ըսաւ.

— Փչէ՛ իմ կիզած ճակատիս, անոյշ



հովիվդ Աղբրիականի, վերջին անգամ մ'ալ շնչեմ գրեց: Այն սիրտն որ ծնեկէս ի վեր վենեակոյ համար բարախած է, արդ ահաւասիկ կը դադրեցնէ իր երակներուն զարկը: Նոր հայրենեաց մէջ, ուր բիչ ատենէն պիտի մտնեմ, եթէ կարելի է հոն ասոր յիշատակը պահել, պիտի ըսեմ թէ՛ վենեակոյ մէջ չար մարդկանց հանդիպեցայ, սակայն զանոնք կրող երկիրն երկնային է և սրբազան: Եթէ մարդիկ զիս հալածեցին, գէթ սա միսթարութիւնը ունիմ թէ այս ջախջախած անդամներս պիտի հանգչին վենեակեան հողի մը մէջ...: Մնաս բարով իմս վենեակ...: Աչքերս կը մթաքնին...: Հայր, քու օրհնութիւնդ:

Մերունի Պոսքարին առանց բառ մը ըսելու՝ իր ձեռքերը գաւկին վրայ զրաւ և դժբախտ երիտասարդն այնպիսի նուազեալ վիճակի մէջ ինկաւ որ ոչ վենեաձիան և ոչ տոժը կրցան գիտնալ ճշդիւ թէ զիշերուան ո՛ր ժամուն հոգին աւանդեց:

Ահաւասիկ թէ ինչ կերպով Յակոբոս Պոսքարի երիտասարդն իր կեանքը կնքեց, վենեակը այնպիսի եռանդագին սիրելուն համար որ զրեթէ յիմարութեան կը մօտենար:

Տոժը վենեաձիային ընկերակցութեամբ ուզեց հսկել իր սրբուոյն մարմնոյն մօտ: Սակայն կէս զիշերէն յետոյ մանկամարդ աղջիկը համոզուց զինքն որ երթայ հանգչի, որուն այնքան պէտք ունէր:

Երբ աղջիկը մինակ մնաց, Յակոբոսին մարմնոյն հանգչած անկողնոյն մօտ ծունկի վրայ եկաւ սկսաւ աղօթել: Յանկարծ թուեցաւ իրեն թէ մերձակայ սենեակէն ձայներ կու գային. մտիկ ըրաւ և արտասովոր խօսակցութիւն մը լսեց: Իմացաւ թէ Տասանց ժողովը՝ միացընելով իրեն հետ վենեակոյ առաջնակարգ ընտանիքներէ ընտրեալ քսանը հինգ ձերակուտականները, ամենքն միաբան յետ խորհրդակցելու որոշած են կամաւ կամ բռնի Պրանչեսքոյ Պոսքարին հրաժարեցնել իշխանութենէ:

Աղբրիականին աղջիկը սաստիկ այլայլած տոժին սենեակը վազեց, որպէս զի եթէ յանկարծ Տասանքն անոր դուռը բռնարարեն, գէթ անոնց ներս մտնալէն առաջ կարենայ պատրաստել ձերունին՝ վենեակոյ պատմութեան աննախընթաց այս լուրին:

Տոժը նոր արթնցած էր, և տեսնելով մանկամարդ աղջիկն ըսաւ.



— Ո՛հ, վենեձիա, յիրաւի ստոյգ է ուրեմն, իմ ֆակորոս զաւակս մեռաւ. ըստ պաննեցին զինքը. բարբարոսներ:

— Տէր իմ...:

— Աւա՛ղ, իմ վերջին զաւակս էր:

— Քաջութիւն, վեհափառ տէր:

— Քաջութիւն, չունիմ ա՛յլ ևս:

— Սակայն պէտք է ունենալ:

— Զաւկիս մեռնելէն յետոյ, անկէ աւելի ի՛նչ հարուած կրնամ ունենալ:

Այն վայրկեանին որ վենեձիա կը սկսէր միտքը բացատրել, պաշտօնակալ մը եկաւ ծանուցանելու թէ Աւագանիին վեց անդամներէ և Տասանց ժողովոյն գլխաւորէն կազմուած պատուիրակութիւն մը նորին վեհափառութեան ներկայանալու շնորհը կը խնդրէ:

— Ներս մտցուր, ըսաւ ծերունին: Ի՛նչ կրնան ուզել ինձմէ, աւելցուց նա դառնալով վենեձիային:

Մանկամարդ աղջիկը քաջութիւն չունեցաւ պատասխանելու և իր գլուխը երկու ձեռքերուն մէջ ծածկեց, իսկ պաշտօնակալը ներս կը մտցնէր պատուիրակութիւնը սովորական արարողութեամբ:

Երբ երկու կողմանէ զիրար ողջունեցին Պրանչեսքոյ Պոսքարի հարցուց.

— Ազնուաշուք տեարք, ձեր այցելութեան շարժառիթն ի՛նչ է արդեօք:

— Ամենէն առաջ, ըսաւ ժողովոյն գլխաւորը, Ձեր վեհափառութեան կը ներկայացընենք մեր ցաւակցութեան հաւատիրքը Ձեր ընտանեկան դժբախտ հարուածին նկատմամբ:

— Այո՛, ըսաւ տոժը առանց կեղծելու դառն շեշտով մը, զիտեմ թէ ինչպիսի՛ ինամբ կը տածէիք որդւոյս: Սակայն կ'ենթադրեմ թէ ձեր այցելութեան նպատակն այս չէ միայն:

— Ստոյգ է, վեհափառ:

— Եթէ պետութեան գործոց վրայ է խնդիրը, մտիկ կ'ընեմ, խօսեցէք. թէ ոչ, ուրիշ բան մտիկ ընելու ժամանակ չունիմ:

— Խնդիրը հասարակաց գործոց վրայ է, վեհափառ: Յանուն Տասանց և մաս մը ձերակուտին համագումար ժողովոյն, ըստ անձնած եմ հաղորդելու Ձեզ՝ եղած որոշողութիւնը: Նկատելով ձեր յառաջադրուած տարիքն և ներկայիս ձեր կրած զբոսախառութիւնը, ժողովն որոշեց վեհապետի մը պատշաճ ամէն յարգանքով յորդորել ձեր իմաստութիւնը, որ յանձնէք դքսա-







— Ուրեմն, հարցուց Տասանց գլխաւորը, կը մերժէ՞ք մեր ձեռքը յանձնել ձեր կամակար հրաժարականը:

— Արդէն պատասխանը տուի:

— Այն ատեն վեհափառ տէր կը ցաւիմ ըսելու թէ՛ գլխ կը բռնադատէք ծանուցանելու ձեզ համագումար խորհրդարանին տուած վճիռը: Վեհափառ, այլ ևս տոժ չէք. իբր վեհապետ ազատ էք ձեր երզումէն և պէտք է մերկանաք ձեր տօժական պատմուճանք:

Քրանչեսքոյ Ֆոսքարի լուսթեամբ և անայլայլ գէմբով մտիկ ըրաւ առանց յայտնի ընելու այս վայրագ ծանուցումին պատճառելիք ներքին յուզումը: Վայրկեան մը լուսթենէ յետոյ Տասանց գլխաւորը կրկնեց.

— Ի՞նչ պատասխան կուզէք որ տանինք խորհրդարանին, վեհափառ տէր:

Այն ատեն ձերունի տոժը ծանր ծանր այս բառերը սկսաւ ըսել:

— Բսէք թէ... պիտի հնազանդիմ: Ահաւասիկ մատանին և ահաւասիկ ապարօշը: Այբրիականն ազատ է հիմայ փեսայ մը առնելու: Այս է ամէնը, թէ՛ ունիք ուրիշ բան մը աւելցնելիք:

— Վերջին պայման մը. Չեզի երեք օր պայմանաժամ կը տրուի պալատէն ելլելու:

— Ես երեք ժամ չեմ խնդրեր. այս վայրկենիս կը մեկնիմ, գոչեց Ֆոսքարին զէպի դուռն ուղղուելով:

— Այսքան աճապարանք կարեւոր չէ, ըսաւ Տասանց գլխաւորն, բռնելով զինքը:

Տոժը դառն ժպիտով մը, զոր միշտ իւր դողդոջուն շրթանց վրայ կը կրէր՝ կրկնեց.

— Քիչ առաջ դուք, տիար, ըսիք թէ ձերացած եմ. ուրեմն նոյն իսկ կարճ ճամբայ մը ընելու համար կանուխէն ճամբայ ելլելու եմ: Կրնամ գոնէ իմանալ իմ յաջորդիս անունը:

— Բասքալ Մալիբիէրոյ է:

— Աստուած օրհնէ իր տոժութիւնը. իրեն կը ձգեմ իշխանութիւնս:

— Պալատին մինչև դուռը պիտի ընկերանանք ձեզի, ըսաւ ձերակուտական մը, զէթ ձեզի պատուոյ ուղղելից ըլլանք:

Տոժը ցուցնելով վէնեճիան, որ այս արտասովոր տեսարանին սկիզբէն անշարժ և լռիկ կը կենար ընդարձակ սրահին մէկ անկիւնը, պատասխանեց.

— Այս մանկամարդ աղջիկէն զատ



մարդու պէտք չունիմ: — Վենեձիա, դու  
չես մերժեր ինձի նեցուկ ըլլալ:

— Ո՛վ իշխանն իմ... ո՛վ հայր իմ...  
ըսաւ Աղբիականին աղջիկը տոժին դիմացը  
ծունկի վրայ գալով:

Այս միջոցիս Տասանց գլխաւորը պա-  
տուիրակութեան միւս անդամներուն մօ-  
տենալով խորհրդակցեցաւ անոնց հետ.  
յետոյ Ֆոսքարիին մօտենալով ըսաւ.

— Քանի որ կը պնդէք այսօր մեկնիլ  
պալատէն, պատշաճ չէ՞ք համարիր դէպի  
ջրանցքը տանող ծածուկ սանդուխով դուրս  
ելլել:

— Կը մերժեմ, ըսաւ սաստկութեամբ  
տոժը: Իշխանութեան բարձրանալուս ա-  
տեն այս պալատին մարմարիոնէ գաւի-  
թէն և Հսկայից սանդուխէն մուտքս ըրի,  
և անոր գլուխը զգեցայ տոժական պա-  
տիւր: Հսկայից սանդուխէն իջնելով պի-  
տի մեկնիմ ասկից, վռնտուած ձեզմէ,  
գրեթէ երեսունը հինգ տարի տոժութիւն  
ընելէն յետոյ: Իմ զաւակս և ես միասին  
կը մեկնինք. Յակոբոս իր գերեզմանին  
մէջ իջնելու, ես իմ գերեզմանիս սպա-  
սելու: Մնաք բարով, տեարք:

Այսպէս խօսելէն յետոյ, ձեռունի տոժը

բռնեց Վենեձիային թիւր: Չախ ձեռքով  
կը յենուր ճերմակ մեծ գաւազանի մը  
վրայ, որ իրեն նահապետի մը կերպա-  
բանքը կուտար: Այսպէս ելաւ իր յար-  
կարածինէն և հասաւ Հսկայից սանդուխը:

Երբ աստիճաններէն վար կ'իջնէր, ձե-  
րունին սարսըռաց և կեցաւ յանկարծ: Ս.  
Մարկոս մայր եկեղեցւոյն խոշոր զան-  
գակին ձայնը կը լսէր. այս զանգակը մի  
միայն եզական հանդիսաւոր պարագայի  
մը ատեն կը զօղանջէր, նոր տոժի մը իշ-  
խանութեան բարձրանալուն ատեն:

— Ս. Մարկոսի խոշոր զանգակը, գո-  
չեց: Ո՛հ, կը յիշեմ այս ձայնը. երեսու-  
նը հինգ տարի առաջ լսեցի զայն. և  
քանի որ կենդանի էի պիտի չի գարնէր:  
Ո՛չ, պիտի չի լսուէր, բայց միայն իմ  
մահուանս երկրորդ օրը: Լաւ, նա իմ մա-  
հէս քանի մը վայրկեան յառաջ կը կան-  
խէ: Ահաւասիկ ամենայն... Վենեձիա,  
շուտ երթանք:

— Հայր իմ... գոչեց մանկամարդ  
աղջիկը իր թեկերուն մէջ առնելով ձե-  
րունին:

Տոժը քանի մը անհասկանալի խօսքեր  
ալ ըսաւ և ինկաւ ձեռակուտականաց թե-



ւերուն մէջ, որոնք վազած էին անոր եւրերալը տեսնելով : Աճապարեցին զինքը իր յարկարածինը փոխադրելու զոր բիչ առաջ լքեր էր . և երբ իր անկողնոյն վըրայ հանգչեցուցին, այն ատեն միայն իմացան թէ մեռած էր :

— Ո՞վ հայր իմ, կ'ըսէր աղջիկն իր համբոյրներով և արցունքներով ծերունւոյն զգեստին դրօշակը ծածկելով :

— Ոտք ելէք, աղջիկս, ըսաւ անոր Տասանց գլխաւորը :

— Այո՛ տէր, ըսաւ Վենեձիան իր արցունքները սրբելով, սակայն շնորհք ըրէք ինձի այս ծերունւոյն յուզարկաւորութիւնը : Կատարելու իրաւունքը, զոր իբր հայրս սիրած էի և որ իբր պարզ քաղաքացի մը մեռաւ :

— Կը սխալիք, աղջիկս, ըսաւ Տասանց գլխաւորը, Ֆրանչեսքոյ Ֆոսքարի Վենեալոյ տոժ մեռաւ, և միայն Պետութեան պարտքն է անոր փառաւոր թաղումը կատարել : Հանգուցելոյն մարմինը սովորական շքով ի տես պիտի դրուի և մինչև վերջին քնարանը Բասքալ Մալիբիերոն պիտի հետևի անոր իբր պարզ ծերակուտական մը : Կոր տոժը այն ատեն

պիտի հռչակուի երբ Ֆրանչեսքոյ Ֆոսքարիին վրայ գերեզմանաքարը կնքուի :

Վենեձիան սոսկումով մը ետ քաշուեցաւ :

— Ո՞վ Վենեալեան խարդախութիւն, կը գոչէր աղջիկը վազելով իր սենեակն ուր իրեն կ'սպասէր Ֆրամէզզան :

— Ի՞նչ ունիք, տիրուհիս, հարցուց նաժիշտը :

— Քոյր իմ, քոյր իմ... կ'ըսէր Վենեձիան աղէխարշ ձայնով, առանց կարենալու ուրիշ բառ մը աւելցնել :

Յետոյ յանկարծ ետ ետ քաշուելով ցըցուց ջրանցքէն անդին երկու աչքեր, որ զրեթէ ջրին մակերեսին վրայ կը փայլէին, բանտերուն պատուհանի մը երկաթ ձողերուն մէջէն :

— Ո՞վ է այն մարդը, հարցուց :

Ֆրամէզզան պատասխանեց :

— Մկրտիչ Մարզինենկոյ, Բատուայի նախկին կուսակալը :



ժէ .

ՎԻԼԼԱՖՐԱՆԳԱՅԻ ԲԱՆԱԿԸ

Բատուայի կուսակալը մինակ էր այս ժամուս իրեն յատկացեալ բանտին մէջ : Արևուն տկար և խոտոր ճառագայթ մը կը ջանար այս տխուր բնակարանին մէջ թափանցել և յաջողած էր պատուհանէն ներս մտնել, որուն յենարանին վրայ երկար ատենէ ի վեր Մկրտիչ Մարդինեն կոյ արմկովը կոթնած էր :

Ինչ կը զննէր արդեօք կուսակալը այսօրան խորին մտադրութեամբ : Միթէ ջրանցքը՞, որուն ջուրը մակընթացութեամբ կը բարձրանար և կ'սպաննար իր մակերեսին մօտ գտնուող պատուհանէն ներս խուժել : Եւ կամ կը ջանար իր բանտին խորը թափանցող անցորդ այցելուին՝ արևուն ճառագայթին մէջ տապըլտրկող անասնիկները և փոշիի հատիկները զանազանել :

Ոչ : Բատուայի կուսակալին հայեացքը բոլորովին ներքին էր : Կարծես կը փրնտէր, կը պատրաստէր ծրագիր մը . ա-

նոր զանազան մասունքը իրարու ըով կը բերէր, որպէս զի անոր գործադրութիւնը ապահովցընէ, անոր յաջող կամ ցախող պատահարներուն վրայ կը խորհրդածէ, անոր վտանգները կը չափէ : Եւ երբ ձեռք բերելիք յաջողութիւնները իրեն ըիչ շատ հաւանական երևնային, Մկրտիչ Մարդինեննկոյին խիստ զէմքը կը լուսաւորուէր տժգոյն և խուսափողական ժպիտով մը, կամ՝ ցուրտ անզթութեան մը և կամ դառն հեզնութեան մը երևոյթն կ'աւնուր :

Երկար ատեն այսպէս մնաց, և ո՞վ կրնայ պատմել այն ոճրագործ խորհուրդներն որոնք երկարատե խոկման ատեն կը լկէին այս չար հոգին :

Արևը, որ վայրկեան մը առաջ յանդըզնած էր մինչև խցիկին խոնաւ պատերուն վրայ զարնել, շատոնց աներևոյթ եղած էր զըսական պալատին ետին, սակայն Բատուայի կուսակալը տակաւին փոքր շարժմունք մը ըրած չէր :

Յանկարծ թուեցաւ թէ գտած էր վերջապէս ինչ որ երկար ատենէ վեր կը փնտռէր : Ոտքի վրայ ցատկեց և իւր սև մագերը թօթվելով սկսաւ իր բանտին մէջ մեծ մեծ քայլերով շրջագայել :



Պատուհանէն դէպի իրեն խցիկին կոածոյ դուռը կերթար: Ամէն երկու կամ երեք շրջանին այս դրան զիմաց կանգ կանուր, և քանի մը վայրկեան մտիկ կ'ընէր լսելու թէ արդեօք սպասած այցելութիւնը աւետող ձայն մը կայ: Քան մը չի լսելով, անհամբերութեամբ ոտքը գետինը կը զարնէր և վեստին կը սկսէր իր չզագար քալուածքը, երթեկեկելով այն փոքրիկ միջոցին մէջ:

— Այս ապուշ ծեր Նէլլոն շատ կուշանայ, կ'ըսէր, ամէն անգամ դրան զիմաց կանգ առնելուն: Ինչուան հիմայ իմ ընթրիքս բերած պիտի ըլլար:

Իր խցիկին մէջ երեք, չորս անգամ ալ շրջան ըրաւ ահուաներուն մէջ այս խօսքերը ծամելով:

— Պիտի ընդունի՞ արդեօք իմ առաջարկներս, կարելի է: Մինչև ո՞ր կետը կրնամ վստահիլ իր անձնուիրութեան վերայ... կամ իւր արծաթսիրութեան վերայ: Մին կամ միւսը, ցածութիւն կամ մեծութիւն հոգոյ. ինչ հոգս, բաւական է թէ իմ նպատակիս հասնիմ: Ինչ տեսակ շարժառիթէ ալ մղուի, ամէնն ալ լաւ է, միայն թէ գործիքը հաստատուն ըլլայ և իմ ձեռքիս մէջ չի ջախջախուի:

Բատուայի կուսակալն այս խորհրդածութեանց մէջն էր երբ բանտին կամարներուն հնչուն արծազանգը լսեց, որ իր անհամբերութեամբ սպասած այցելութիւնը կ'աւետէր: Սակայն պէտք էր իր սրտին յուզումը ծածկել, անոր համար իսկոյն իր գոռոզ և արհամարոտ անտարբեր դիրքը առաւ, զոր բանտարգելութեան առաջին օրէն կը ջանար կեղծել իրեն քովը մօտեցողներուն, ինչ դասակարգի անձինք որ ըլլային, դահիճք, պահապանը կամ ծերակուտականը: Երբ դրան ճանչելով բացուիլն ու փակուիլը լսեց և ոչ ետին դարձաւ ահնարկ մը նետելու այցելուին:

Այս այցելուն էր բանտապանը:

Խուցը մտնելու ատեն վայրկեան մը լուռ մունջ կեցաւ, կը դիտէր կուսակալն որ իրեն ներս մտնելէն ի վեր պատուհանին կռթրնած, կռնակը դարձուցած կը մնար:

Տեսնելով որ ազնուական Մարգինեն կոյ իրեն հետ խօսակցութեան փափաք չէր ցուցըներ, հետը բերած սակառին մէջէն դուրս հանեց փոռոց մը և սեղանին վրայ փռեց: Յետոյ սեղանոյ սպասները շարեց և ձոյլ արծաթեայ պնակներուն մէջ պարպեց հետը բերած կերակուրնե-



ըր: Այս արծաթեղէնքն և ձեան պէս ըս-  
պիտակ Ֆրիզի կտաւէ սփռոցը յայտնա-  
պէս կը ցուցնէին թէ ձերակոյտը որքան  
խնամք կը տանէր իրենցմէ միոյն, թէպէտ  
բանտուած, թէպէտ ահաւոր ոճրագործու-  
թեամբ ամբաստանեալ:

Երբ ամէն պատրաստութիւնը լմնցան,  
բանտապանը երկիւղածութեամբ մօտեցաւ  
Քատուայի կուսակալին և ըսաւ.

— Տիար, Ձեր վսեմութիւնը կը հաճի՞  
հրամմելու:

Մարդինենկոյ անսիրտօրէն ետին դար-  
ձաւ և առանց բառ մը ըսելու սեղանին  
դիմացը նստեցաւ և սկսաւ իր ընթրիքը  
ընել:

Քանտապանը դիմացը ոտքի վրայ կե-  
ցած ուշադրութիւն կընէր գուշակելու դի-  
մացինին լռելեայն հրամանը և յարգանաց  
ամէն արտաքին նշաններով կը ծառայէր  
իր բանտարկեալին:

Կերակուրը աւարտեցաւ առանց Մար-  
դինենկոյ խօսք մ'ըսելու իւր առ հարկի  
հիւրին. որ տեսնելով կուսակալին ոտք  
ելլելն երեք անգամ խոր հառաչ արձրկեց,  
բայց բանտարկեալն և ոչ ուշադրութիւն  
դարձուց: Վերջապէս բանտապանը կար-

ծելով թէ այս մունջ կերպը ուշադրու-  
թեան չ'առնուիր, համարձակեցաւ ըսե-  
լու.

— Այո, տէր, ինչպիսի՞ դժնդակ գործ:  
Ձեր տանը հին և հաւատարիմ ծառայ մը  
ձեր անձին դահիճ ըլլալ:

Կուսակալն անոր վրայ ակնարկ մը նե-  
տեց և կեղծ անուշադրութեամբ մը պա-  
տասխանեց.

— Սոոյգ է, Նէլլոյ, կը թուի ինձի  
թէ զքեզ տեսած եմ, ասկից շատ տարի  
առաջ, Մարդինենկոյի պալատին ծառա-  
ներուն մէջ: Եւ կարծեմ թէ հայրս յատ-  
կապէս զքեզ իմ անձիս կցորդած էր:

— Այո՛, տէր, պատասխանեց մար-  
դուկը, ճանչցուած ըլլալուն վրայ մեծ  
գոհունակութեամբ: Ձեր նաւավարն էի,  
վսեմ, տէր, և քանի՛ քանի՛ անգամներ,  
երբ շատ փոքր էիք, զձեզ գիրկս առած  
ձեր կոնտուլը տարած եմ, որպէս զի մեր  
Վենետկոյ ամառուան յաճախակի գեղե-  
ցիկ երեկոյները պըտըտցնեմ զձեզ ամբողջ  
լճակին վրայ:

— Այս երեկոյ ալ անոնց նման գե-  
ղեցիկ է, ըսաւ Մարդինենկոյ ցուցնելով  
ցորեկուան վերջին նշոյլներն որոնք բան-



տին երկաթեայ ձողերէն ներս կը մղուէին, և սակայն դու կ'արգելուս ինծի այսօր նման շրջագայութիւն մը, ստոյգ չէ՝ Նէլ-Լոյ:

— Ախ, տէր, ըսաւ ծերուկը եռանդազգին, թէ որ մի միայն ինձմէ կախումն ունենար ուզածնիդ, իմ մնացած օրերուս կէսը կու տայի — և բազմաթիւ ալ չեն, վասն զի ծերացած եմ — զձեզ գոհացընելու և Ձեր վսեմութիւնն այս գարշելի բանտէն ազատելու:

— Բարի կամքի մը այսքան մեծ զոհողութեան պէտքը չի կայ, Նէլլոյ. ըսաւ անփութօրէն կուսակալը, և նոյն իսկ առանց բանտապանին երեսը նայելու:

Սակայն Նէլլոյ աշխուժիւ մօտեցաւ.

— Ի՞նչ, տէր, ըսաւ, կրնամ միթէ ձեզի ծառայութիւն մը ընել:

— Այո՛, ըսաւ Մարդինենկոյ, միշտ նոյն անշահագրգիռ ոգին կեղծելով, արդէն ես խորհած եմ: Քեզմէ չեմ ուզեր — ըսածըս ազէկ ըմբռնէ — որ զիս բոլորովին ազատ ձգես. այլ կը փափագիմ միայն որ ինծի օգնես երթալու քանի մը ժամ դուրսի օդը շնչելու:

— Աւա՛ղ, տէր, ի՞նչպէս կարող պիտի ըլլամ, հարցուց բանտապանը:

— Այս բանիս վրայ քիչ վերջը կը խօսինք: Բայց նախ զնա՛ հոն անկողնոյս սնարը:

— Ահաւասիկ, տէր, հոս, պատասխանեց ծերուկը իբր ինքնաշարժ պաճուճապատանկ մը՝ մեքենաբար հնազանդելով:

— Լաւ. վեր ա՛ռ վերմակը. ի՞նչ կը գտնես բարձին տակ:

— Պարկ մը, ո՛հ որքան ծանր է: Ոսկիով լեցուն է, այնպէս չէ՞, տէր. հարցուց բանտապանը այլայլած ձայնով մը:

— Այո՛, ոսկի է, պատասխանեց կուսակալն, և այս դրամին կէսը քեզի է, թէ որ թոյլ տաս ինծի տասներկու կամ տասնըհինգ ժամ բացակայելու, յետոյ՝ խօսք կու տամ քեզի, պիտի վերադառնամ հոս իմ տեղս:

— Բայց, ի՞նչպէս դուրս ելլել, և մանաւանդ ի՞նչպէս նորէն ներս մտնել, հարցուց Նէլլոյ:

— Ասոր ճարը գտնելն քու գործդ պիտի ըլլայ:

Մարդուկը վայրկեան մը մտախոհ մնաց. կը թուէր իրեն թէ ըզեզը եռացման մէջն է:

— Թէ որ ձգելու ըլլամ որ դուրս ել-



լէք, ըսաւ վերջապէս, ո՞վ ինձի պիտի ապահովցընէ ձեր վերադարձը:

— Միթէ քեզի պատույ խօսք չի տուի, հարցուց գոռոզութեամբ կուսակալը:

Բայց ձերուկը պնդեց.

— Եւ թէ որ հակառակ ձեր կամքին, ըսաւ, ո՞նչ և է արգելք մը, ո՞նչ և է նիւթական խոչընդոտ մը անկարելի ընեն ձեր տուած խոստման կատարումը:

— Այս պարագային, պատասխանեց Մարդինենկոյ, տասը հազար ոսկի տուազը ըստ հարստութիւնդ պիտի ըլլայ: Միթէ բի՛չ կը համարիս ասիկա, Նէլլոյ:

Բանտապանը կը թուէր ղեղելի. սակայն տակաւին կը վարանէր: Կուսակալն ամբողջ պարկը պարպած էր. ոսկիին ձայնը քողարկ կը հնչէր ականջին և անոր ղեղին ցլմունքները թշուառ Նէլլոյին աչքերը կը շլացընէին:

— Մտոյգ է, մրմնջեց Նէլլոյ, Ձեր վսեմութիւնն իրաւունք ունի. այսքան գումարի մը փոխարէն ինձի նման խեղճ մարդ մը կընայ քսան անգամ իր կաշին վտանգի մէջ դնել:

— Ուրե՞մն, հարցուց կուսակալը:

— Ուրե՞մն, վսեմ. տէր, պատասխանեց

Նէլլոն, յիշաւի չեմ գիտեր թէ կարելի պիտի ըլլայ մեզի յաջողիլ այս ձեռնարկութեան մէջ, սակայն գէթ պիտի փորձեմ: Գիտեմ թէ մեծամեծ վտանգներու մէջ ինքզինքս կը դնեմ, սակայն ձեզի ծառայելու որոշումս տուած եմ:

— Վերջապէս, լաւ ուրե՞մն, ըսաւ կուսակալը. միջոց մը գտար:

— Ձեր խօսակցութիւնը սկսելէն ի վեր, վսեմ. տէր, անոր վրայ կը մտածէի, և կարծեմ թէ վերջապէս գտայ:

— Տեսնենք ո՞րն է:

— Վսեմաշուք տէր, որդի մը ունիմ, որուն կըցայ կաղամբ փոխադրելու պաշտօնը հայթայթել, այսինքն ցամաք երկրէն վենետիկ՝ բանտի մէջ գտնուողներուն պէտք եղած բանջարեղէնքը կը բերէ նաւակով:

— Այս փոխադրութիւնը ցորե՞կ ատեն կ'ըլլայ. երբէք չեմ դիտած:

— Ոչ, տէր, որդիս զիշեր ատեն կ'ընէ ծառայութիւնը, հոս կը հասնի առաւօտեան ժամը երեքին միջոցները:

— Ժամանակը կարելի եղածին չափ յարմար է:

— Այո՛, տէր. միայն թէ պահապան-



ները սովորած են տեսնելու զաւակս, սա-  
կայն ոչ որ ուշադրութիւն կ'ընէ, և այն  
ժամուն ամէն որ բանտին մէջ կը բնա-  
նայ:

— Այն ատեն պիտի կարենաս զիւրաւ  
մինչև հոս մտցունել տղադ:

— Տարակոյս չի կայ, տէր. Չեր հա-  
գուտները անոր հագուտներուն հետ կը  
փոխէք և այսպէս ծպտեալ դուրս կելլէք,  
և Պօղոս որդիս բանտին մէջ ձեր տեղը  
կը բռնէ:

— Գու գաղափար ունեցող մարդ ես,  
Նէլլոյ:

— Կը փափաքիմ ձեզի ծառայել, վը-  
սեմ, տէր: Սակայն որպէս զի մեր յա-  
տակագիծն ամէն կողմանէ ապահով ըլ-  
լայ, պէտք է որ կազմըներու նաւակը  
մինչև իր սահմանեալ վայրը կարենաք  
տանիլ:

— Թէ որ չի գիտնամ թիավարել,  
ինչպէս վենետկեցի կ'ըլլամ:

— Այն ատեն ամէն ինչ կարգին է:  
Պօղոսին նաւակովը կ'երթաք, և հետեալ  
գիշերը կը դառնաք կու գաք հոս նոյն նա-  
ւակով: Իմ որդիս կըլին իր տեղն կ'առ-  
նու և դուք ալ ձերինը: Ինչպէս, լաւ

կարգադրուած կերևի՞ Չեզ այսպէս. վսեմ,  
տէր:

— Ամենալաւ, և մեր ձեռնարկութեան  
յաջողելուն ո՛ր և է խոչընդոտ մը չեմ տես-  
ներ:

— Գուք ինձմէ տասուերկու ժամ կու-  
զէիք, ես ձեզի քսանը չորս ժամ կու  
տամ. բաւակա՞ն է:

Ինձի պէտք եղածէն աւելի է: Սակայն  
բան մը մոռցանք:

— Ո՞րն է, տէր:

— Քննիչին այցելութիւնը, որ օրն եր-  
կու անգամ տեղի կունենայ:

— Իրեն շրջանին ատեն ըստ սովո-  
րութեան ես պիտի ընկերակցիմ անոր:  
Իմ որդիս ձեր անկողնոյն մէջ պառկած  
պիտի ըլլայ, և ձեր զգեստներն այս ա-  
թոռակին վրայ դրուած, յայտնի տեսա-  
նելի: Կ'ըսեմ պաշտօնակալին թէ կը քը-  
նանաք դուք և ինքը պիտի չի համար-  
ձակի ձեր բունը խոտվել:

— Շատ լաւ:

— Ե՞րբ կուզէք այս բանս գործադրել,  
տէր:

— Նոյն իսկ այս գիշեր: Ըսի՛ր թէ որ-  
դիդ առաւօտեան ժամը երեքին կը դառ-  
նայ:



— Այո՛, վսեմ, տէր:

— Հիմայ երեկոյեան ժամը ինն է, ձգէ որ քանի մը ժամ հանգիստ առնում. ու՛ ժի պէտք ունիմ՝ իմ ձեռնարկութիւնս յաջողցնելու համար: Գնա՛ հիմակ և ժամանակին դարձիր եկուր:

Կերուկն ողջունեց զինքն և գէպի-դուռը քայլ մը առաւ, յետոյ ետ դարձաւ և ըսաւ Մարդինենկոյի.

— Կերողութիւն, վսեմ, տէր, դուք լաւ գիտէք թէ ձեզի համար ոչ միայն իմ գլուխս վտանգի մէջ կը գնեմ, այլ և որդւոյս գլուխը: Այս բանս ընելէն առաջ, Չեր վսեմութիւնը արդեօք արդար չի՞ համարիր աւելի բացատրութիւն մը տալ ինձի, ինչ որ ըրած չէ:

— Ի՞նչ կ'ուզես հասկընալ:

— Ի՞նչ պատճառաւ կուզէք այս սակաւ ժամանակի ազատութիւնը ձեռք բերել:

— Տասը հազար տուրքը միթէ բաւական գազտնեաց վստահութիւն մը չե՞ն. ըսաւ խստութեամբ կուսակալը:

— Ետ առէք զանոնք, տէր, պատասխանեց Ետեղոյ: Ես ձերացած եմ, կենացս վերջին օրերը չեն արժեր պաշտպանել և

սիրով ձեզի համար կը զոհեմ զանոնք. սակայն չեմ կարող զաւակիս կեանքը ձեզի վաճառել:

— Եթէ քու հարցմունքիդ պատասխանեմ, այս թանկագին կեանքը վտանգի մէջ կրնաս դնել քանի մը ժամ ազատութիւն տալու համար ինձի, քու հին տիրոջդ զաւակին:

— Այո՛, տէր, առանց տարակուսելու:

Մարդինենկոյ կարծես քանի մը վայրկեան իր անձին հետ խորհրդակցեցաւ. յետոյ ըսաւ.

— Շատ լաւ. սակայն իմ ծրագիրներս քեզի վստահանալով, ոչ միայն զքեզ ինձի հաւասար ըրած կ'ըլլամ, այլ և ոտքերս և ձեռքերս կապած քեզի կը յանձնեմ: Անգամ մը որ յայտնեմ զանոնք, բաւական է բառ մը բերնէդ հանես՝ զըլուխս գետին կ'իյնայ: Անոր համար պէտք է որ քու վրայ անսահման վստահութիւն ունենամ, և քու կոյր և բացարձակ անձնուիրութեանդ ապահով ըլլամ:

— Պիտի գիտնամ զիս արժանաւոր ցուցընել այս վստահութեան, և այս անձնուիրումն արդէն շահած էք, տէր:

— Կը վստահիմ անոր: Արդ հիմայ



ըսէ ինծի, զիտեսս արգիօք ո՛ր և է ան-  
զազանապահութենէ, թէ Տասանց ժողո-  
վոյն զիմաց զիս պաշտպանելու ինչ մի-  
ջոցներ ձեռք առած եմ:

— Աչ, տէր:

— Արդ, պնդեցի թէ երկրիս վրայ  
մարդ մը կայ որ ինծի հետ այնքան ճշ-  
տիւ նմանութիւն ունի, որ իմ ամենէն  
մտերիմ բարեկամներս անգամ կրնան խա-  
բուիլ. և ամբաստանեցի այս մարդը իրը  
միակ հեղինակ իմ վրայ դրուած ոճիրնե-  
րուն: Կրնաս գուշակել թէ ոչ որ հաւատք  
ընծայեց այս յերևրանքիս, ես ալ առա-  
ջուց զիտէի: Մակայն քու շնորհիւդ, պաշտ-  
պանութեան այս եղանակն, որ իբր յան-  
դուզն ստախօսութիւն մը համարուեցաւ,  
կ'ըլլայ իրականութիւն մը, որուն վրայ  
ոչ որ պիտի համարձակի տարակուսիլ:  
Վաղն, այն ժամուն՝ յորում ամբողջ Վե-  
նետիկը զիտէ թէ Մարդինենկոյ, բատուա-  
յի կուսակալը, այս պատերուն մէջ փա-  
կուած է, ուսկից ցարդ բանտարկեալ մը  
չէ փախած, յանկարծ ուրիշ Մարդինեն-  
կոյ մը պիտի երևնայ հասարակաց տեղ-  
ւոյ մը վրայ, ասկից քանի մը քսան մը-  
դսն հետու, օրինակի համար Վիլլաֆրան-

գայի բանակին մէջ, և երեք հազար հոգի  
պիտի կարենան հաստատել իրօք զինքը  
տեսած ըլլալին:

— Բանտէն փախած պիտի կարծեն  
զձեզ, տէր:

— Անտարակոյս. պիտի վազեն հոս,  
ապահով զիս բանտիս մէջ չի գտնելու.  
սակայն միջոցներ ձեռք պիտի առնում ա-  
նոնցմէ առաջ հոս գտնուելու:

Ձիս փնտոողները պիտի հաստատեն  
բանտին մէջ գտնուիլս և պիտի կարենան  
ցուցընել թէ, ես հոս էի երբ ամբողջ  
Վիլլաֆրանգայի բանակը կը համարէր տե-  
սած ըլլալ զիս բանակին մէջէն կտրել  
անցնելու ատենը: Անկէ յետոյ ոչ որ պի-  
տի յանդգնի տարակուսիլ իմ նմանիս  
պատմութեան իրականութեան, որուն վը-  
րայ պիտի յենու իմ պաշտպանութիւնս —  
և այս անգամ յողթական ձեռով — Տա-  
սանց ժողովրին զիմաց: Հիմայ, Նէլլոյ,  
դուն ամէն ինչ զիտես. կը հաւատաս ձեռ-  
նարկիս յաջողութեանը:

— Այո՛, տէր, կը հաւատամ, և վերս-  
տին կը կրկնեմ, բոլորովին ձերինն եմ:

— Լաւ: Խօսք մ'ալ: Մանրամասն  
տեղեկութիւններու պէտք ունիմ Թէլիչէ



Պատուէրի Վիլլաֆրանգայի բանակին մէջ ունեցած կենցաղավարութեան վրայ: Գուկընաս տալ այս մանրամասնութիւնքը: Ըսէ տեսնեմ, ինչ տեսակ կեանք կը վարէ հոն երիտասարդ Պատուէրը:

Այս հարցման վրայ ծերուկը գոյնը նետեց: Քաջ գիտէր թէ այս ահաւոր մարդը չարիք ընելու որքան կարող է, և երիտասարդ պատրիկին նկատմամբ խիստ կասկածներու մէջ ինկաւ, որուն վրայօք կուսակալն այնքան փութոյ պնդութեամբ կ'ուզէր տեղեկութիւն առնուլ: Ուստի այլայլած ձայնով հարցուց Մարդինենկոյին:

— Ինչ կ'ուզէք անկէ, տէր:

— Միթէ չի խոստացա՞ր ինծի կոյր և անպայման անձնուիրութիւն մը, ըսաւ կ'ուսակալը, խեղճ բանտապանին վրայ շեշտակի իր աչքերը դարձնելով:

— Ստոյգ է, տէր:

— Այն ատեն ըսէ՛ ուրեմն: Ֆէլիչէ Պատուէր օրական ինչ սովորոյթներ ունի Վիլլաֆրանգայի բանակին մէջ:

— Ամէն առաւօտ իր ծախքովն կազմուած գնդին մարզանքներ ընել կու տայ:

— Ո՞ր ժամուն կ'ըլլայ այս մարզանքը:

— Առաւօտեան ժամը ութէն տասը:

— Անկէ յետոյ ինչ կ'ընէ:

— Բնակարանը կը քաշուի, զգեստները կը փոխէ, կէսօրին կը ճաշէ և մինչև ժամը երեքը կը հանգչի:

— Բոլորն ա՞յսչափ է:

— Ոչ, տէր: Ժամը չորսին, նորէն մարզանք և մեծ զօրահանդէս: Այս ժամուս, բոլոր գունդերը զէնքի տակ են դաշտին մէջ և ընդհանուր սպարապետին ղիմացէն տողանցրով կ'անցնին:

— Այս բանս ամէն օր ա՞յսպէս տեղի կ'ունենայ:

— Ամէն օր, այո՛, տէր:

— Լաւ. բաւական է ինծի այսչափ տեղեկութիւն, ըսաւ կ'ուսակալը, և ճամբեց բանտապանն ըսելով. Գնա՛ հիմակ դուն, և երբ գործելու վայրկեանը հասնի եկուր իմացուր ինծի:

Այն գիշեր, զիպուածով, կաղամբատաւրը սովորականէն զրեթէ ժամ մը առաջ հասաւ. սակայն ծեր Նէլլոն նախատեսած էր այս զիպուածը: Կէս գիշերին բանտին դռնապանը քնանալու խաւրելով, անոր խուցը ինքն սպասեց, և ինքն բացաւ դուռը իր որդւոյն:

Այս անձը բարձրահասակ և ուժեղ ե-



բիտասարդ մ'էր և քիչ մը բթամիտ: Բնութիւնը շոայլած էր անոր ֆիզիգական ուժեր, սակայն ըղեղ տալու զլացած էր: Բնաւորութիւնը քաղցր և հանդարտարարոյ էր, զուրկ բոլորովին նախաձեռնութենէ, երջանիկ կ'զգար ուրիշին հնազանդելուն մէջ. մանաւանդ իր հօրը, զոր իբր պատգամատու մը կը նկատէր: Անոր համար երբ Նէլլոն հրամայեց իր ետեէն գալու, երիտասարդն անոր քայլերուն հետեւեցաւ, առանց նոյն իսկ հարցընելու թէ ո՞ւր կ'երթայ:

Կուսակալին կեցած խուցը հասնելով, հայրն, առանց ո՛ր և է բացատրութեան, ըսաւ անոր:

— Պօղոս, հանէ՛ քու զգեստներդ և շուտով այս ազնուական մարդուն զգեստները հագիր:

Պօղոս հնազանդեցաւ առանց զարմանք և հետաքրքրմութիւն ցուցնելու:

Ուրեմն ամէն ինչ յաջող կ'ընթանար: Կուսակալը իսկոյն հագաւ ձկնորսի տափատն և հաստ կտաւէ վերնազգեստը, բրդէ գլխարկը մինչև աչքերն իջեցուց, անցաւ բանտին դռնէն, արուեստին վարժ մարդու նման ցատկեց աշխուժիւ ծանր

նաւակին մէջ, և ճանկաւոր ձողով հրեց զայն ուժով դէպի բացն, անցաւ Սքիւվոնիին քարափն և մտաւ Մեծ Զրանցքին մէջ:

Արշալոյսը կ'սկսէր. Ռիալոյ շուկային բանջարավաճառներն՝ նաւակներով հոն կ'երթային, տեսան բանտերուն կաղամբատար նաւակն որ լճակին մէջէն դէպի Մեսդրէ կ'ուղղուէր:

Նոյն օրն օդը շատ գեղեցիկ էր. զանազան գունդեր միանալով Վիլլաֆրանգայի դաշտին մէջ, զարմանալի ճշդութեամբ մարզանքներ կ'ընէին: Վերոնայէն, Վիլլաֆրանգայէն և նոյն իսկ Մանդուայէն եկող հետաքրքիրները յափշտակուած էին այս շքեզ զօրաբանակը դիտելով:

Ֆէլիչէ Պատոէր իր գունդին ղիմացէն կը ձիավարէր գեղեցիկ յովատակի մը վըրայ հեծած, և ամենուն բերնէն գովեստներ կը խլէր: Վասն զի իրմէ աւելի երիտասարդ, աւելի կայտառ և աւելի կտրիճ երևոյթ ունեցող զօրավար մը չի կար: Եւ Ռիքարտոյ բազմութեան մէջ խառնուած, չէր զաղբեր այս փայլուն ասպետին վրայօք տեղեկութիւն հարցնողներուն կրկնել:



— Տեար Ֆելիչէ Պատուէրն է . վե-  
նեակոյ նշանաւոր անուններէն մին, և ես  
ալ իրեն ծառան Ռիբարտոն եմ :

Բնդհանուր սպարապետը դաշտին գըլ-  
խաւոր մուտքին վրայ ձի հեծած իր սպա-  
յակուտին գլուխը կը կենար : Այն վայր-  
կենին որ զօրաց տողանցքը պիտի սկսէր,  
ձիաւոր մը իր դիմացէն անցաւ արշաւա-  
սոյր, դէպի մարզանքի դաշտին կեղրոնը  
ուզզուելով : Անշուշտ երկարատե արշա-  
ւանքէ մը կու գար, իր ձին լորձունքնե-  
րով ձերմկած էր :

Չիաւորն հագած էր՝ Հոլանտայի կա-  
շիէ մեծ կօշիկներ, որոնք իրեն ծնկերէն  
վեր կը հասնէին և սև թաւիշէ բաժկոնակ  
մը, վրայէն գոմշու մորթէ վարսպանակ  
մը . և ի վերջոյ ոսկի ժապաւենով մեծ  
ու սև վերարկու մը, որուն լայն ծալքերն  
ձիուն գաւակին վրայ իյնալով, անոր զի-  
նուորական մը ըլլալը կը յայտնէին :

Երբ սպայակոյտին դիմացէն անցաւ,  
պաշտօնակալաց բազմաթիւ խումբէն միայն  
քանի մը քայլ հեռուէն ողջունեց ընդհա-  
նուր սպարապետն, և այնքան շնորհալի  
ու ազնուական կերպով որ իր թաղիքէ  
գլխարկին վրայի կամիր երկայն փետու-

ըը մինչև գետինը քսուեցաւ քանի մը  
մանրերկրորդ :

Չիաւորը կը գտնուէր յայտնի լուսոյ  
մէջ, և որչափ ալ իր ձիուն վագուածքն  
արագ ըլլար, սակայն սպայակոյտը կազ-  
մող պաշտօնակալներէն շատերը ճանչցան  
զինքը :

— Կոմս Մկրտիչ Մարզինենկոյ է, ը-  
սին ոմանք :

— Բատուայի կուսակալը, կը պա-  
տասխանէին ուրիշները :

— Ուրեմն վենետկոյ բանտերէն ելած  
է :

— Ազատեր է :

— Ես արդէն երէկուրնէ գիտէի, կ'ը-  
սէր մին անոնցմէ որոնք միշտ կ'ուզեն  
ուրիշներէն առաջ տեղեակ ըլլալնին ցոյց  
տալ :

— Իր դատը չէ՞ր շարունակուէր :

— Համոզուած էիք ստուգիւ թէ պի-  
տի համարձակին դատարանի մը դիմաց  
հանել Մկրտիչ Մարզինենկոյի նման մարդ  
մը, նոյն իսկ երկոց ժողովին դիմաց :

Այս ազաղակներէն մաս մը հասան  
մինչև ձիաւորին ականջը : Առանց ձիուն  
ընթացքը թուլցընելու իր ասպանդակնե-



բուն վրայ կազնած ետին դարձաւ և ձեռքով ողջունեց, շարունակելով միանգամայն իր կատաղի վազուածքը:

Վերջապէս Ֆէլիչէ Պատոէրին հրամանին ներքե կանուոյ գնդին ղիմաց կանգ առաւ: Կանչեց երիտասարդ զօրավարը՝ քանի մը անգամ և բարձր ձայնով անոր անունը տալով:

Ֆէլիչէ լսելով իրեն կանչուիլը, իր ձին քշեց գէպի ձիաւորին ղիմացը: Երկուքն իրարու մօտեցան մարզանքի դաշտին պարսպ մնացած ընդարձակ տեղւոյն մէջ: Քանի մը բառ փոխանակեցին, յետոյ այս ձիաւորն, զոր Բատուայի կուսակալը կը համարէին, քաշեց իր սուրը և զայն Ֆէլիչէ Պատոէրին մարմնոյն մխեց:

Երիտասարդը թեւերն երկնցուց և ինկաւ իր ձիուն գաւակին վրայ, մինչդեռ մարդասպանն արշաւակի կը հեռանար գէպի վերոնայի կողմը:

Ահա ինչ որ կրցան տեսնել հինգ հազար անձինք, և ոչ որ անոնցմէ միտք ըրաւ մարդասպանին ետեւէն վազել, այնքան այս պակուցիչ տեսարանը շուտափոյթ տեղի ունեցաւ:

Թ.Լ.

#### ԱՎՈԿԱՏՈՐՆԵՐՈՒ ԱՏԵԱՆԸ

Թշուառ Ֆէլիչէ Պատոէր այս երկրորդ անգամ զոհ կ'երթար ոճրագործութեան, և անոր պատճառած բնական շփոթութեան հետեանօք թանկագին վայրկեաններ կորսուեցան:

Չինուորաց շարքերը քակուեցան և զօրավարներէն ոչ որ փորձ փորձեց արգիլելու զինուորներն որ չի խմբուին Ֆէլիչէին զարնուած տեղւոյն վրայ: Պաշտօնակալները ամէն կողմ կը վազէին պոռակով թէ պէտք է մարդասպանը ձերբակալել, երբ սա արդէն կարի հեռացած էր:

Սակայն այս խառնակութեան միջոցին անձ մը յառաջ եկաւ: Երիտասարդ պաշտօնակալ մը, ընդհանուր սպարապետին անձին կցորդ: Մարդասպանը իր ղիմացէն անցնելու ատենը գրեթէ զինքը քերած անցած էր, ամենէն աւելի առանց տարակուսելու ինքն լաւ ճանչցեր էր անոր Մկրտիչ Մարդինենկոյ, Բատուայի կուսակալն ըլլալը:



Եթէ յանդուգն խաղ մը խաղացուած է այս ողբերգական նպատակին հասնելու, միտքը զբաւ այս մեքենայութիւնը ջախջախել, առանց վայրկեան մը կորսնցուցնելու և արշաւասոյր դէպի Վենետիկ վազելով, որպէս զի այս նոր ոճրագործութեան լուրը հոն չի հասած՝ ինքն նախ հասնի: Կը մտածէր նաւակէն ելլելուն պէս Բանտերուն վազել, և թէ որ, ինչպէս ամէն ինչ կարծել կուտար, չի գտնէր հոն Մարդինենկոն, այն ատեն այս արիւնհարբու կնճռոյն հանգոյցին ծայրը պիտի գտնէր:

Պաշտօնակալը կը կոչուէր Մարկոս Պէմպոյ, ինչպէս իր անունը կը ցուցնէ, սոժական ընտանիքի մը կը պատկանէր: Բնդհանուր սպարապետին յայանելով իր ծրագիրը, անոր հաւանութեամբ Մարկոս Պէմպոյ փութով ճամբայ ելաւ:

Նախ մէկ շնչով մինչև Բէսքիէրա գնաց. հոն ձին փոխեց և այնպիսի արագութեամբ վազեց որ երեկոյեան ժամը տասներմէկ չի զարկած լճակը կտրելով մեծ ջրանձքը մտած էր: Այս նաւարկութիւնը, կրցաւ ընել երկզուգաթի նաւակով մը. զոր գտած էր ծովեզերքի ձկնորսէ մը:

Հինգ ժամուան մէջ քսան մղոնէն աւելի տեղ կտրած էր. որով գրեթէ անկարելի էր որ ուրիշ մը կարենար անկէ առաջ հասնիլ:

Ս. Մարկոսի հրապարակին խոշոր ժամացոյցը կէս գիշեր կը զարնէր, Պէմպոյ զօրավարն այն վայրկենին կը ներկայանար բանտերուն դուռը:

Նոյն իսկ մեծ դրան վրայի փոքր պատուհանն ալ բանալու ինչ ինչ դժուարութիւններ հանեցին, այն փոքր պատուհանին մէջէն բանտապանը խօսեցաւ:

— Ի՞նչ կուզէք, հարցուց անոր:

Զօրավարը ուրիշ հարցումով մը պատասխանեց:

— Բատուայի կուսակալը հոս բանտին մէջն է:

— Անտարակոյս, ըսաւ բանտապանը, որո՞ն հրամանով արձրկուած պիտի ըլլայ:

— Կը փափաքէի, շարունակեց Մարկոս Պէմպոյ, այս վայրկենիս անոր խցիկը մտնել:

— Չեր կարծածին չափ դիւրին բան չէ ըսածնիդ, մանաւանդ այս ժամուս, դիտել տուաւ բանտապանը: Չեւակերպու-



թիւններ կան ըլլալիք. և ես կարող չեմ անձ մը բանտերուն մէջ մտցունել թէ որ Քառասնից ժողովոյն երեք զուխներէն (capi) միոյն կամ Տասանց ժողովոյն անդամներէն միոյն արտօնութիւնը չունենայ: Այսպիսի հրամանագիր մը ունի՞ք ձեռքերնիդ:

— Ոչ, պատասխանեց երիտասարդն, որ չէր նախատեսած այս արգելքը:

— Այն ատեն, ըսաւ բանտապանը, կարելի չէ որ կարենամ թոյլ տալ ձեզի նոյն իսկ զոնապանի սենեակը մտնել:

Անկէ յետոյ ինչ ալ ըսաւ Մարկոս Պէմպոյ անօգուտ եղաւ: Պատուհանը գոցուեցաւ, ձգելով զօրավարը վարաման և բռնորովին յուսահատութեան մէջ: Բարեբախտաբար հօրեղբայր մը ունէր, կարողոս Պէմպոյ անուամբ, որ բարձրագոյն ժողովոյն անդամ էր, Մարկոս միտքը զրաւ փութով երթալ զինքը գտնել, արթընցունել և պատմել անոր իւր ձախողանքն և ընդունիլ անկէ պէտք եղած արտօնութիւնը:

Որչափ ալ փութով գործեց, սակայն այս ծրագիրը յաջողցնելու համար ժա-

մանակի պէտք ունէր. և գրեթէ ժամը առաւօտեան մէկուկէս էր երբ Մարկոս կրկին բանտին դիմաց ներկայացաւ ընկերակցութեամբ իր հօրեղբոր կարողոս Պէմպոյի, որ ուղած էր Մարկոսին ամէն կարելի ձեռնտուութիւնն ընձեռել:

Ահաւոր ժողովոյն անդամներէն միոյն դիմաց հարկ էր իսկոյն ամէն դուռ բացուիլ: Սակայն նիւթական արգելք մը դէմ զրաւ երկու պատրիկներուն փութանակի ներկայանալու բանտերուն գլխաւոր դրան դիմաց: Բանջարեղէններով լեցուն խոշոր նաւակ մը, որուն մէջ երկու մարդ կային, ջրանցքին անցքը կը խափանէր, և նոյն ինքն կաղամբատարն էր:

— Բացուեցէք, տխմարներ, ըսաւ կարողոս Պէմպոյ երկու նաւավարաց:

Մարդիկներէն մին դիտել տուաւ թէ նաւակն այնքան ծանր էր, զոր զարձնելը դժուարին կ'ըլլար: Նոյն վայրկենին իր ընկերը բանտին դուռը զարկաւ, իսկոյն բացուեցաւ դուռը:

Բանտապանը երեցաւ դրան շէմին վերայ, և պահապաններէն մին ջահ մը բերելով լուսաւորեց ջրանցքը: Բանտապանը տեսնելով կոնտու մը որուն անցքը կը



խափանէր կաղամբատարն, հարցուց մէջն եզող անձնաւորութեանց ինքնութիւնն. երբ իմացաւ թէ Տասանց ժողովոյն անդամներէն միոյն հետ է գործը, աճապարեց օգնելու բանջարներով լեցուն ծանր նաւակը հեռացունելու, և երկու Պէմպոնները վերջապէս կրցան մօտենալ:

ժամը առաւօտեան երկուքն էր, գրեթէ կէս ժամ կորսնցուցած էին կաղամբատարին ըրած արգելքին պատճառաւ:

Կարոլոս Պէմպոյ բանտապանին սենեակը մտնելով նախ նշմարեց մարդ մը ձկնորսի տեսակ մը զգեստ հագած. լայն տափառ, կտաւէ կոշտ զգեստ մը, հաստ բրդէ գլխարկով: Հարցուց.

— Ո՞վ է այս մարդը:

Բանտապանը անփութօրէն պատասխանեց .

— Ծեր Նէլլոյին որդին, Պօղոսն է. բանտին ծառաներէն մին:

— Հոս ի՞նչ կ'ընէ:

— Իր ծառայութիւնը, վսեմ. տէր, ինքն է որ ամէն գիշեր վէնետիկ կը բերէ բանտին մէջ գտնուող անձանց պէտք եղած բանջարեղէնքը: Արդէն, Չեր վսեմութիւննը տեսաւ վայրկեան մը առաջ իրեն հոս մտնելը:

— Մեր տեսածը, դիտել տուաւ Մարկոս, այսքան երկայնահասակ և այսքան երիտասարդ մէկը չերեցաւ ինծի:

— Մութին մէջ Չեր վսեմութիւնը որոշակի տեսած պիտի չըլլայ: Ասկէ զատ ուրիշ ո՞ր է մարդ չի մտաւ:

Ծեր Պէմպոյ ուշադրութիւն չի դարձուց իր եղբորորդոյն ըրած առարկութեան վրայ:

— Տար զմեզ Բատուայի կուսակալին բնակած խուցը, ըսաւ բանտապանին:

Բանտապանը բանալիներն առնելով այցելուններուն դիմացէն կ'երթար: Երբ խուցը մտան, Մարդինենկոյ խոր քունի մէջ ինկած էր, և շատ դժուարութիւն քաշեցին գլինքն արթնցնելու:

Մարկոս Պէմպոյ խուցին մէջ մտնելով առաջին գործն եղաւ կուսակալին զգեստներուն վազել, որոնց կէսը աթոռակին վրայ և կէսն ալ Մարդինենկոյին պառկած անկողնոյն վրայ դրուած էին: Սակայն բացի սե թաւշեայ բաճկոնակէ, իր քննած զգեստներուն մէջ ուրիշ համազգեստ մը չէր յիշեր զոր թշուառ Ֆէլիչէ Պատոէրին մարդասպանը հագած ըլլար: Դարձեալ այս հարուստ բաճկոնակին ոչ



մէկ ժապաւէնը ճմռթկած էր, մեքաբսէ նոր կապերուն ծայրերն ամէնքն ալ իրենց երկաթները ունէին...: Անկարելի էր որ այս զգեստները հագած ըլլայ ձիաւոր մը որ քսանըչորս ժամուան մէջ քառասուն մղոնէն աւելի վազած է արշաւակի:

Երբ վերջապէս արթնցուցին կուսակալը, կարողոս Պէմպոյ ձերակուտականը, անդամ վեհագոյն ժողովոյն, սկսաւ իր հարցաքննութիւնը:

— Գուր երէկ ցորեկ ատեն հեռացա՞ք ձեր բանտէն. հարցուց կուսակալին:

Այս հարցմունքը կրնար միամիտ երևնալ: Սակայն Մարդինենկոյ զգուշացաւ ծիծաղէ, և ընդհակառակն ամենայն քաղցրութեամբ և կատարեալ հանդարտութեամբ պատասխանեց.

— Հեռանալ բանտէս. վսեմ. տէր: Նայեցէք այս պատերուն և այս պատուհանին երկաթ ձողերուն: Ի՛նչպէս կըրնայի ասոնցմէ դուրս ելլել:

Կանչուեցաւ Նեւոյ բանտապանը, ուրիշ պահապաններ և վերջապէս ծառայութեանց քննիչ պաշտօնակալն, որուն յանձնուած էր օրն երկու անգամ և զիշերը մէկ անգամ բանտարկեալներուն իւ-

րաքանչիւրին խուցը այցելել: Այս այցելութիւնը թէ՛ ամբաստանեալներուն և թէ՛ դատապարտեալներուն կը տրուէր:

Նեւոյէն բան մը չի կրցան իմանալ: Ճարպիկութեամբ ինքզինքը կատարեալ ապուշ մը երեցուց: Իր կցկտուր պատասխաններէն ինչ որ կրնային հասկընալ այս եղաւ թէ սովորութեան համեմատ օրն երկու անգամ կերակուր կը տանէր կուսակալին խուցը: Բանտարկեալը հիւանդ ըլլալով քանի մը օր անկողնէն չէր ելած, իրեն զիմացը զրուած կերակուրներէն քանի մը հատին հազիւ կը դպչէր: Նեւոյ ասկէ զատ բան մը չէր գիտեր:

Կարողոս Պէմպոյ մտածեց այնպիսի հարցմունք մը ընել անոր որ կրնար զինքը շփոթել:

— Ներկայ կը գտնուէ՞ր, հարցուց անոր, քննիչին իւրաքանչիւր այցելութեան:

— Այո՞, տէր, պատասխանեց Նեւոյ, երբէք պակաս չեմ:

— Այս այցելութիւնները կանոնաւորապէս եղան:

— Այո՞, վսեմ. տէր:

Սակայն խարէբայութիւն մ'էր ասիկայ: Կանոնագիրը կը հրամայէր որ ցորեկուան



այցելութեանց ատեն բանտարկեալին ինքնութիւնը հաստատուի քննիչին կողմանէ։ Այս բանս չէր կատարուած. որովհետեւ կուսակալին և Նէլլոյի մէջ կարգադրուած ծրագրին համաձայն, ամէն անգամ որ քննիչն առաջի իրիկուրնէ սկսեալ ներկայացած էր, կարծեցեալ Մարդինենկոյ հիւանդ ձեանալով անկողին մնացած, երեսը դէպի պատը զարձուցած էր։ Բատուայի կուսակալին նման անձնաւորութեան նկատմամբ քննիչը համարեցաւ թէ կրնար կանոնազանցութիւն ընել, և չէր համարձակած կարծեցեալ Մարդինենկոյին քունը վրդովել։

Յետ հարցաքննելու Նէլլոյ բանտապանը, ձերուցի Պէմպոյ հարցուց.

— Ո՞ւր է ծառայութեանց քննիչը։

— Հոս եմ, ահաւասիկ տէր, ըսաւ պաշտօնակալ մը յառաջ գալով։

Կարուոս Պէմպոյ հարցուց անոր.

— Առջի գիշեր կամ երէկ գիշեր քու այցելութիւններդ ըրի՞ր բանտարկեալներուն, կանոնազրութեան տուած հրահանգին համաձայն։

— Այո, վսեմ. տէր, պատասխանեց պաշտօնակալը։

— Եւ իւրաքանչիւր անգամուն կրցա՞ր կալանաւորին ինքնութիւնը հաստատել։

Պաշտօնակալը լաւ գիտէր թէ ի՞նչ վրտանգի մէջ կրնար իյնալ թէ որ ճշմարիտն ըսէր. նոյն գիշերն իսկ կրնար Օրֆանոյ ջրանցքին հետ ծանօթանալ։ Անոր համար զգուշացաւ Նէլլոյ բանտապանը սուտ հանել. ընդհակառակն պարտք համարեցաւ խարեյութիւնը հաստատել։

— Իւրաքանչիւր անգամ որ ներկայացայ հոս, ըսաւ նա, համարձակեցայ հարցունելու տէր կուսակալին, որ հիւանդ էր, իր առողջութեան մասին տեղեկութիւններ, և միշտ բարեսիրութեամբ պատասխանեց ինձի։

— Այսչափ բաւական է, յայտարարեց ձերուցի Պէմպոյ. յետոյ կուսակալին զառնալով հարցուց.

— Մարդինենկոյ, կը հաճի՞ք ըսելու թէ բանտապան Նէլլոյին և քննիչին ըսածները ստոյգ իրական են։

— Այո՛, անտարակոյս, պատասխանեց Մարդինենկոյ։ Սակայն ներեցէք որ զիտեղ տամ ձեզ թէ պարզապէս պատշաճութեան դէմ չի մեղանչելու համար յանձնկառնում պատասխանել ձեր հարցմունքը.



ներուն: Չեմ գիտեր թէ ի՞նչ բանէ շարժած — վասն զի այս մասին բացատրութիւն մը չի տուիր — կը համարիր թէ բանտէն ելած ըլլամ երէկ ցորեկ ատեն: Կարծեմ թէ ճշմարտութիւնը հաստատուու համար խուզարկութիւն մը կ'ընէք. այս ձեր գիտնալու բանն է. սակայն ըստ արդարութեան ինձի՞ կ'լինայ օգնելու ձեզ՝ անձիս դէմ եղած զործի մը մէջ:

Մարդինենկոյի այս խօսքերուն վրայ հարցաբնութիւնը լրմնեցաւ: Ծերունի Պէմպոյ իր պալատը քաշուեցաւ, և երկրորդ առաւօտուն իր բնակարանը կանչեց ոչ միայն Տասանց ժողովն, այլ և ամբողջ ձերակոյտը, խորհրդածել և ելք մը գտնել այս ծանր խնդրոյն:

Ծերակուտին վիճաբանութիւնները խիստ աղմկալից եղան: Կախ երկու հակառակ կարծիքներու բաժնուեցան, մէկ մասը կը կազմէր Մարդինենկոյի կողմնակիցները, միւսը՝ իր հակառակորդները: Այս մասը բազմաթիւ էր երկու Ֆոսքարիններուն մահունէ յետոյ: Կերկայապէս քաղաքական նպատակը յաջողած ըլլալով, իրենց սըրտին մէջ տեսակ մը գթութիւն արթնցեր էր և այս ատելի մեքենայութեանց զոր-

ծիր եղողներուն դէմ կը դառնային: Ստէպ կը գանգատէին թէ Լորեստանոյի գաղտնի հնարքները և կուսակալին խարդախութիւնները պատճառ եղան Ֆոսքարի նշանաւոր ընտանեաց անկման:

Սակայն այս երկու կուսակցութենէ դատ, որոնք կը կանխէին կամակար արդարացունել կամ դատապարտել Մարդինենկոյ, երրորդ մ'ալ կար, որ ձերակուտին միջին կարծիքը կը ներկայացընէր, կեղրոնն, ինչպէս պիտի ըսէինք այսօր մեր ներկայ լեզուի բացատրութեամբ: Այս կուսակցութիւնն աւելի բազմաթիւ էր, և կը ներկայացընէր ձերակուտին չափաւորական, և թերևս աւելի քաղաքագէտ մասը, վասն զի միանգամայն թէ այնքան յուզեալ և թէ այնքան ազդուած չէր, նուազ ջղային եթէ հաճիր: Կեղրոնն — եթէ ներելի է մեզ այս բառին ժամանակագրական վրիպակը — միշտ գէշ աչքով կը դիտէր Մարդինենկոյին դէմ մղուած դատաստանը: Այս խնդիրն զոր ձեր տոժը ձգած էր Հասարակապետութեան իբր ժառանգութիւն, փոքր պատճառ մը չեղաւ Ֆրանչեսքոյ Ֆոսքարին անկման: Ծերակուտականք իրենց ետասէր քաղաքականու-



թեան մէջ ահաւասիկ թէ ինչ լեզու կը գործածէին: Պէտք է զգուշանալ մերիններէն միոյն դպչիլ: Բոլոր պատրիկները որոնց անունները գրուած են Ոսկէզենիկ մատենին մէջ, Վենետիոյ պսակը կը ձևացունեն: Անպատիժ չի դպչուիր անոր: Իրեն ծաղկեայ զարդերէն մին եթէ ջախջախէք, պսակը կ'աւրուի և շուտով փոշի կը դառնայ: Անտարակոյս եթէ արգարութեան շահը կը պահանջէ, պէտք է պատժել յանցաւորը ուր ալ գտնուի, և ինչ բարձր աստիճան որ ունենայ: Սակայն հոս ոչ միայն տարակոյս կայ, այլ նաև նիւթապէս անկարելի է որ կուսակալը նոր ոճիւր մը գործելու կարող եղած ըլլայ: Արդ եթէ բռնագատինը ընդունելու անձին նմանութեան խնդիրը այս վերջին ոճրին մէջ, պէտք է նմանապէս ընդունիք նախընթացներուն մէջ, վասն զի այս խաւարամած գործոյն մէջ իրարու հետ կապակցեալ են: Ամէն պարագայի մէջ կ'ստիպուինք հրատարակել ազնուական կարողոս Պէմպոյի ըրած քննութիւնը, անշուշտ արդարութեան սիրոյն համար:

Երբ այս որոշումն ձերակուտին կող-

մէն հաստատուեցաւ, Վենետիոյ մէջ ամէն որ իմացաւ թէ եղած քննութեան արդիւնքն հետևեալն է.

«Բատուայի կուսակալը վայրկեան մը խակ իր բանտէն հեռացած չէ, և հետևարար այս անգամ Ֆէլիչէ Պատոէրը զարնող մարդը չէր կրնար Մկրտիչ Մարզինենիոյ ըլլալ»:

Պէմպոյի ընտանեաց բոլոր անդամներն սխերիմ թշնամի էին կուսակալին. արդ այս ընտանեաց ձեռքով եղած քննութիւնը պէտք էր որ ամենայն խստութեամբ և առանց ո՛ր և է կողմնակալութեան կատարուած ըլլայ: Ոչ որ կը տարակուսէր ասոր վրայ. որով այս գործին նկատմամբ եղած հետաքրքրութեան շուրջը պատած մթութիւնը կրկնապատկեցաւ: Վենետիոյ մէջ ամէն որ կը վիճաբանէր Մարզինենիոյ վերագրուած ոճիրներուն վրայ, սկսեալ առաջին պատրիկէն մինչև Ռիալ-դոյի յետին բեռնակիրը:

Այս արիւնալից արկածներուն մէջ զրոնուած անձնաւորութիւնը Վենետիոյ ժողովրդեան խիստ ծանօթք էին: Աղբիականին աղջիկը անոր խանդակաթ սիրելին էր, մանաւանդ ռամիկ դասակարգը



հաճոյք կը զգար խորհիլն թէ զինքը որդեզրած էր, նա իւրաքանչիւրին որբուհին էր: Ֆէլիչէ Պատոէր նշանաւոր իր խենթութեամբքն, որուն ներած էր ինչպէս մայր մը կը ներէ իր շփացած զաւկին քմահաճոյքներուն: Ֆիամէզդա և մանաւանդ Ռիքարտոյ ձկնորսներուն և կոնտոլավարներուն սիրելին էր, վերջապէս Մարդինենկոյ իր ետին ունէր իր տխուր վէպը որ զինքը Հասարակապետութեան ամենէն աւելի ճանչցուած դէմք մը և նաև ամենէն աւելի զգուելի մէկն ըրած էր: Այս բոլոր պատճառներուն համար Բատուայի կուսակալին դատավարութիւնը վէնեսկոյ մէջ ամենուն հետարբքութեան առարկայ եղած էր:

Սակայն ամէն ինչ կը նպաստէր կուսակալին յանցապարտութիւնը անկարելի ցուցնելու: Երկու ամբաստանիչ վկաներն, ինչպէս ներկայիս պիտի ըսէինք, երկուքն ալ աներևոյթ եղած էին: Ֆէլիչէ Պատոէր, մահացու կերպով զարնուած, ինչպէս կարծած էին և ինչպէս տակաւին կը կարծուէր Վիլլաֆրանգայի բանակին մէջ, դեսպակի մը մէջ դրուած և կրօնաւորի մը հսկողութեամբ Վիլլաֆրանգա

քաղաքը տարուած էր: Կրօնաւորը պահանջած էր որ ինքը մինակ ըլլայ հոգեվարքին ըով, որպէս զի եթէ զգայութիւնը վերստանայ՝ կարենայ խոստովանցնել զինքը:

Գեսպակը մեկնած էր այս սուրբ անձին և երկու ջորեպաններու հսկողութեան ներքև. սակայն անոնցմէ ոչ մին քաղաք մտած էր, և ոչ ոք զիտէր թէ ինչ եղած են կրօնաւորն և հոգեվարքը:

Իսկ կոնտոլավարն Ռիքարտոյ, այն ալ յանկարծ աներևոյթ եղած էր, իր տիրոջը վերջին անգամ զարնուելէն յետոյ ոչ ոք անոր վրայօք տեղեկութիւն մը առած էր:

Տասանց ժողովոյն մեծամասնութիւնը, վերը մեր յիշած քաղաքական պատճառներուն համար, կը ցանկաբ կուսակալին անպաբտ ելլելը տեսնել իր վրայ դրուած ամբաստանութիւններէն: Եւ սա եզրակացութեան հասաւ թէ կարելի պիտի չըլլայ լուսաւորել այս կնճոտ խնդիրը, և թէ նիւթական ապացոյցներու պակսելովը կուսակալին դատապարտութիւնը անկարելի պիտի ըլլայ: Այն ատեն ժողովն այնպիսի որոշում մը տուաւ որ շատ զար-



մացուց զանոնք — և ասոնք սակաւաթիւ չէին — որ համոզուած էին թէ Տասանքն իրենց վրայ առնելով խնդրոյն դատաստանը ուզած էին խղզել զայն: Մեծ-Խորհրդարանը որոշեց Ավոկատորներուն դատարանին յանձնել՝ զործը առաջ տանելու, յայտարարելով թէ նիստերը հասարակաց զիմաց պիտի ըլլան: Այս որոշման վրայ Վենետիոյ ամբողջ ժողովուրդը ծափահարեց Մեծ-Խորհրդարանը, զովելով անոր զարմանալի անկողմնակալութիւնը:

Ոճրագործութեանց այս մեծ դատաստանն, որուն անհամբերութեամբ կ'սպասէր Վենետիոյ ժողովուրդը, վերջապէս սկսաւ:

Կուսակալն իր դատաւորաց զիմացը ներկայացաւ համեստ արժանապատուութեամբ մը, որով իսկոյն իր կողմն շահեցաւ հասարակաց համակրանքը: Ինչպէս այս մարդն, այնքան գոռոզ և այնքան խրոխտ, կրցեր էր այսպէս չափաւորել ինքզինքը: Ինչպէս յանձն առեր էր ներկայանալ առանց ամբարտաւանութեան ինչպէս նաև առանց սուտ խոնարհութեան, ատենի մը զիմաց որուն ան-

դամներն ոչ թէ իրեն հաւասարներէն, այլ ստորիններէ կազմուած էին զինքը դատելու:

Կուսակալին հոն ցոյց տուած ընթացքը Վենետիոյ ժողովրդեան շատ հաճելի եղաւ: Իսկոյն ժողովրդեան այս սքանչացումը, որ կը ներէ բարձր շրջանակի վրայ գտնուող անձանց, երբ յանձն կ'առնուն հաւասարութեան լուծին տակէն անցնիլ, հասարակաց հարծիքը — այն մեծ փոփոխամիտը — զրեթէ միաբերան Քատուայի կուսակալին նպաստաւոր կը խօսէր, զոր մինչև այն ատեն իրաւամբ նզոված էր:

Սակայն վիճարանութիւնները շփոթ և մութ էին, և կանչուած բազմաթիւ վկաները զրեթէ անկարող կ'ըլլային անոր վրայ լոյս մը սփռել:

Այս վկաներուն մէջ առաջիններն էին՝ գեղեցիկ կզղւոյն մէջ կուսակալին կողմանէ տրուած հացկերութիւն կոչնականները: Սակայն ասոնց յիշածները խառնակ էին, չէին յանդգներ ոչ ժխտելու և ոչ հաստատելու թէ տեսած են մի և նոյն ժամանակ երկու Մարզինենիոյ: Գրեթէ ամենքն ալ միամտաբար կը խոստովանէին թէ կուսակալին կողմանէ հրամցուած



համեղ գրիններուն այնքան լաւ պատիւ  
ըրած էին երեկոյթին ամբողջ տեւողու-  
թեան ատեն, որով այն պահուն իրենց  
բանավարութիւնը քիչ շատ պղտորած էր:  
Այս խոստովանութիւնը թէ՛ հանդիսա-  
տեսներն և թէ՛ դատաւորները քանիցս ծի-  
ծաղեցուց:

Կախընթաց ոճիրներուն նկատմամբ տը-  
րուած վկայութիւններէն երեք չորս հատը  
միայն սկզբան աւելի հաստատական էին:  
Սակայն Վիլլաֆրանգայի նոր ոճրագոր-  
ծութեան զիմաց, զոր բանաւոր կերպով  
չէր կարելի կուսակալին վերագրել, քանի  
որ ինքն Վենետիոյ մէջ բանտարկեալ էր,  
իրենց տուած առաջին յայտարարութիւնը  
կը փոխէին և գրեթէ ըսածնին ետ կառ-  
նէին:

Իսկ Վիլլաֆրանգայի վերջին ոճրագոր-  
ծութեան համար արուած վկայութիւններն  
ընդհակառակն ամենքն միարեբան և հա-  
մաձայն էին: Սուուգիւ Մարդինենկոն էր  
որ ողջունելով անցած էր սպայակուտին  
զիմացէն. նոյն ինքն էր որ վայրկեան մը  
յետոյ զարկած էր Փէլիչէ Պատոէրը հինգ  
հազար հոգիէն աւելի ժողուած անձանց  
զիմաց: Սակայն միւս կողմանէ եղած քըն-

նութիւնը կը ցուցնէր թէ կուսակալը չէր  
կարողացած բանտէն դուրս ելլալ. որով  
պէտք էր իրաւամբ Մարդինենկոյին ըրած  
յայտարարութիւնն ստոյգ համարել, թէ-  
պէտ վերջին ոճրէն առաջ ըրած էր:

Ուրեմն անկարելի կ'երևէր կուսակա-  
լին դատապարտութեան վճիռը տալ:

Այս մեր պատմած գէպերն և անոնց-  
մէ ծագած հետեանքները թերևս ճշմարիտ  
չի թուին մեր ընթերցողաց ոմանց: Սա-  
կայն պէտք է այն դարուն ոգին նկատի  
առնուլ: Այս պատմութիւնը՝ զոր ջանա-  
ցինք այնպէս կենդանի նկարագրել ինչ  
որ մեզի տեսնուեցաւ ուսումնասիրելով  
անցեալին վիճին մէջ անյայտացած քա-  
ղաքակրթութիւնները. այս պատմութիւնը՝  
զոր պատմեցին ինծի ոչ միայն Վենետ-  
կոյ զիւանն, այլ նաև անոր եկեղեցիներ-  
ըր, պալատները, թանգարանները, իւր  
գեղարուեստները, Ս. Մարկոսի գանձա-  
րանը, Ֆրարի, Սքալցի, Արսէնալը և մին-  
չև անգամ իր թխաթոյր կոնտունները,  
զուարթ ոսկեվառ դրօշներով ծածկուած  
կայմերը և աշխարհիս միակն իր տեսա-  
կին մէջ այս քաղաքին լուին ջրանցքնե-  
րը. — այս պատմութիւնը կը ներկայա-



նայ հինգեսասաներորդ դարուն կիսուն, այսինքն վերածննդեան արշալուսին ատեն, ժամանակ անմեղուկ դիւրահաւանութեան, կատարեալ սգիտութեան. յորում գրեթէ ամէնքը, նոյն իսկ մեծամեծները յարեալ էին հրաշալեաց. յորում կախարչութիւն, աստեղագիտութիւն, մեռելահարցութիւն, դիւթութիւն՝ բռնակալութեան անկասկած լուծին ներքև անրանացած կամ թմրած խաժամուժին մը հաւատալեաց հիմունքն էին:

Սակայն կուսակալը բոլորովին իր անձին տէր, առանց կիրքի, առանց գոռուութեան, կատարեալ հանդարտութեամբ կը պաշտպանէր ինքզինքն: Ինչպէս ուրիշներն, ինքն ալ իր անձին վերագրուած ոճիրներու շարքին մէջ շատ բան անմեղներէ կը գտնէր: Ո՞վ էր ուրեմն այս ոճրագործն: Եթէ, ինչպէս ինքն կը համարէր, դէմքերու նմանութեանց զո՞հ գացած չէ, այն ատեն ինքն մեծ ոճրագործ մ'է և առանց տատամսելու պէտք է զինքը դատապարտել:

Այս անստուգութեանց մէջ հարցաքննութիւնը դանդաղօրէն առաջ կ'երթար. երբ Ազրիականին աղջկան նաժիշտն՝ Ֆիամէզդան, ներկայացաւ:

Սրտայոյզ տեսարան մը պարզուեցաւ այն ատեն:

Ֆիամէզդա փոխանակ իրեն ուղղուած հարցմունքներուն պատասխանելու և իր վկայութիւնն տալու, վայրկեան մը իր աչքերը կուսակալին վրայ սեեռեց, յանկարծ սկսաւ զողողալ բոլոր մարմնովն և սաստիկ լալ:

— Ախ սիրելիս, սիրելի Ռիքարտոյ, կ'ըսէր նա:

Նախագահը ջանաց զինքը հանդարտեցնել:

— Ո՞վ տէր, զոչեց նա ուժգին, ինչպէս կուզէր որ հանդարտիմ, քանի ես պատճառ եղած եմ իմ խեղճ Ռիքարտոյիս դէպի մահ երթալուն, և սակայն զիտէի թէ մարդասպաններուն դաշոյնը զինքը կը հալածէր տակաւին, և ես հոն չէի անոր օգնութեան հասնելու:

Չանացին դիտել տալ նաժշտին թէ փաստ մը չկար որ Ռիքարտոյին դարանի մը զոհ երթալը հաստատէ, սակայն չի կրցան հանդարտեցունել, հատկեալ ողբերէն զատ ուրիշ բան անկարելի եղաւ բերնէն քաղել: Որով Ֆիամէզդա, որ մինչև այն ատեն միշտ այնքան քաջա-



սիրտ և զօրաւոր երեցեր էր, չի կարողացաւ իր վկայութիւնը տալ և հարկ եղաւ իրեն նստարանը դարձունել:

Վերջապէս երեցաւ նա, որուն ամենքը ակընկառոյց կ'սպասէին, Վենեճիա: Ազրիականին աղջիկը ներկայացաւ սրահին մէջ, ուր գումարուած էր Ավոկատորներուն ատեանը:

Ունկնդիրներուն երկար իրարանցում մը սկսաւ երբ տեսան այն գեղեցիկ և տժգոյն դէմքը, սուգի երկայն զգեստներուն մէջ, որոնց արուեստին ճարտարութենէ աւելի իւր վրայ կը տեսնուէին բընազգեցիկ ամօթխածութեան և վեհ արժանապատուութեան շարժումները:

Մինչև Ատեանին դիմացը հասնելով, հոն անշարժ կեցաւ սպասելով իրեն ըլլալիք հարցմունքներուն, և երբ իր ներկայութեան պատճառով համակրական հծծանքը դադրեցան, նախագահը հարցուց Վենեճիային թէ ի՞նչ զիտէ Բատուայի կուսակալին, Մկրտիչ Մարզինենկոյի վերագրուած ոճիրներուն նկատմամբ:

Ազրիականին աղջիկը մինչև այն վայրկեան կեղծած էր Մարզինենկոյի չի նաշիլ: Դարձաւ անոր կողմը և անհաւա-

տալի կորովի շարժմամբ ձեռքն երկնցնելով:

— Կը հաստատեմ, ըսաւ խոր ձայնով մը, թէ անհաւաստիկ է Ֆէլիչէ Պատտէրին սպաննողն: Նախ ուզեց սպանել մեր նըշանախօսութեան օրն ջանալով ջախջախել զինքը Բատուայի փողոցներուն մէջ: Ճանապարհորդութեան ատեն այրել տուաւ այն տունն ուր կը կարծէր թէ Ֆէլիչէ կը քնանայ. ուզեց զինքը խեղդել և մեռցնել կարտայի լճին մէջ, և վերջապէս չըկարենալով յաջողիլ այս զանազան փորձերով, իր բանտին պահապանները դրամով կաշառեց և յանդգնեցաւ բացակայիլ անկէ բաւական երկար ժամանակ, և զընաց զարկաւ Ֆէլիչէ Պատտէրն անոր զինուորաց և Վիլլաֆրանգայի դաշտին մէջ գտնուած ամբողջ զօրաբանակին աչքին դիմաց:

Այս վերջին վկայութիւնն անուղղակի կերպով Պերճափայլ Հասարակապետութեան կառավարութեան կը դպչէր, անոր համար Ավոկատորներուն դատարանին նախագահը ընդհատեց Վենեճիան նուրբ յանդիմանութեամբ մը:

— Օրիորդ, Բատուայի կուսակալին



դէմ եղած ամբաստանութիւններն արդէն երկարօրէն բանաձևուած են: Մեր փրճատածն հիմակ ապացոյցներն են, ունի՞ք հատ մը դատարանին ներկայացնելու:

— Աչ, ըսաւ աղջիկը վհատութեամբ, չունիմ: Սակայն նորէն կը կրկնեմ այս ոճիրներուն երկար շարքին մէջ այս մարդուն ձեռքը կը տեսնեմ:

— Օրիորդ . . .

— Ի՞նչ, գոչեց աղջիկն ընդհատելով նախագահին խօսքը գերագոյն ուժգնութեամբ մը, չէ՞ք կարդար իր ճակտին վրայ թէ այս մարդն հրէշ մ'է: Առաջին անգամ որ իմ դիմացս ներկայացաւ Բատուայի Ազնուական օրիորդաց վանքին մէջ, սոսկումի բնազդեցիկ շարժմամբ մը ետ ետ քաշուեցայ: Իր ետին տեսայ որոշակի իր նախկին ոճրագործութեանց ուրուականները, որոնք զինքը մատնանիշ ընելով կարծես կ'ըսէին ինծի. Ձգուշացի՛ր, զգուշացի՛ր:

Այս արտասովոր խօսքերուն վրայ, կուսակալը չի կրցաւ իր յուզումը զսպել, սակայն իսկոյն յաղթեց անոր երբ նախագահը հարցուց:

— Ի՞նչ ունիք պատասխանելու:

Կուսակալը փոխանակ կիրք ելլելու, ինչպէս ամէն ոք կ'սպասէր, մեծ հանդարտութեամբ և քաղցութեամբ յայտարարեց թէ յառաջ բերած անհիմն վկայութեան մը ի՞նչ կրնար պատասխանել, որուն մէջ և ոչ համոզիչ ապացոյց մը կար: Յետոյ տեսակ մը խանդաղատանօք կրկնեց, որ լսողներուն վրայ խոր տպաւորութիւն ըրաւ:

— Չեմ մեղադրեր օրիորդին զգացած վիշտը, նոյն իսկ երբ այս վիշտը մոլորելով կ'սկսի նախատել փոխանակ ապացուցանելու, մինչև անգամ զառանցանքի պատմութիւնը առաջ բերել հոս, որ անշուշտ իր ստացած վանական դաստիարակութեան խստակեաց կենաց հետեանքն է: Սակայն վէնետիկեան դատաւորներէ կազմուած ատեանի մը դիմացն ինք, որ հիւանդ ըղբի մը խորհրդական երագանքներէ աւելի ուրիշ բան մը կը պահանջէ մարդու մը գլուխը կտրելու, նոյն իսկ եթէ այս մարդն ըլլայ Բատուայի կուսակալն, Մկրտիչ Մարգինենկոյ:

Երբ ամբաստանեալն արտասանեց այս վերջին խոսքերն արհամարհօտ զթութեամբ մը, նախագահն դարձաւ վէնեճիային և ըսաւ.



— Լսեցիր թէ կուսակալն ինչպիսի՛ չափաւորութեամբ ինքզինքը բացատրեց: Նոյնպէս ըրէք. ձեր յուզումը զսպեցէք, և թէ որ ասպոցոյցներ ունիք, վայրկեանն է զայնս դատարանին դիմաց հանելու:

— Ասպոցոյցներ, զոչեց վենեճիա, անգամ մ'ալ կ'ըսեմ, չունիմ: Սակայն բացարձակ ստուգութիւն ունիմ: Գալով ասպոցոյցներու, աւելցուց նա կուսակալին ըրած շարժման մը պատասխանելով, չեմ յուսահատիր գտնելու, և Աստուծմէ կ'սպասեմ, որուն կ'աղօթեմ գիշեր ցորեկ այս արկածներէն յետոյ, ինձի հայթայթելու, իմ բոլոր յոյսս իրեն վրայ դրած եմ:

— Եւ այս յոյսը պիտի չի խարուիրսաւ հաստ և ուժով ձայն մը ուկնդիրներուն մէջէն:

ԺԹ.

### Հ Ա Յ Ր Ն Յ Ա Կ Ո Ւ Ռ Ս

Վենեճիան՝ որ մինչև այն վայրկեանն այնքան կորովի երեցաւ, յանկարծ սաստիկ տկարութիւն մը զգաց. դէպի իրեն յառաջ բշտած թիկնաթոռին վրայ աւելի ինկաւ քան թէ նստեցաւ, քանի որ կրօնաւորն իր վեղարն գլխէն իր ուսերուն վրայ կը նետէր:

Այն ատեն ամբողջ բազմութեանն ճանչցաւ Հայր Յակոբոսն որուն դիմագիծն վենետկոյ մէջ ամենուն ծանօթ էր արդէն, ինչպէս որ այս գրքիս առաջին գլուխներուն մէջ առիթ ունեցանք ըսելու:

Այս անակնկալ երևումին վրայ Ավուկատորներուն նախագահը յօնքերը պոստեց: Վասն զի երբ Հ. Յակոբոս սրահին խորը տեսնուեցաւ, ուր մինչև այն ատեն ծածկուած էր բազմութեան մէջ, դատարանը բարոյապէս վճիռը տուած էր. և սպասոցոյցներու պակասութեամբ Բատուայի կուսակալն անպարտ պիտի արձրկուէր:



Սակայն կրօնաւորին զգեստն և մանաւանդ Հ. Յակոբոսին վաթսուն տարինեւրու առաքինի կեանքով ստացած մեծ հեղինակութեան յանգանքն չէր ներեր՝ անոր հետ թեթեւօրէն վարուիլ: Ուստի նախագահն բազում ակնածութեամբ հարցուց.

— Հայր սուրբ, Բատուայի կուսակալին դատին նկատմամբ կրնամք վկայութիւն տալ:

— Այո՛, պատասխանեց Հ. Յակոբոսը Կոստանի շեշտով մը, թէ ներկայ խնդրոյն նկատմամբ, և նաև ուրիշ գործերուն վերաբերելով:

— Խօսեցէք, Հայր, մտիկ կընենք. կրկնեց նախագահն հրաւիրելով զինքը առաջնին զիմացը նստելու:

— Նախ կ'ուզեմ մի առ մի թուել իս' ամբաստանութիւններս, ըսաւ Հ. Յակոբոս:

Կուսակալն իր աթոռէն վեր ելաւ. Հ. Յակոբոս դարձաւ անոր և ըսաւ.

— Մի վախնար. իսկոյն իմ ապացոյցներս պիտի տամ, և այնպիսի ապացոյցներ որոնց համար և ոչ պիտի կարենաս բերանդ բանալ:

Յետոյ դատարանին դառնալով, շարու նակեց այսպէս.

— Կ'ամբաստանեմ այս մարդն այն ամէն ոճիրներուն համար որոնք քիչ առաջ իրեն վրայ ըսուեցան և զեռ ուրիշ շատերուն համար: Ինքն դաշոյնով զարկաւ Ռիքարտոյ կոնտուլարը զեղեցիկ կղզւոյն մէջ և ուրիշ անգամ մ'ալ Վիլլաֆրանգայի դաշտերուն մէջ: Կ'ամբաստանեմ զինքը իր երկու մեղսակիցներն ողջ ողջ այրելուն համար: Վերջապէս այս արկածներէն շատ ժամանակ առաջ սպաննեց ձկնորս Սալվադորն անոր ձեռքէն, որ ձիւնէն արկածներէն համար, անոր հետ պիտի հետացնել ուզելով ուրիշ ծանրագոյն գործերի մը ապացոյցն, իւր հօրեղբորորդոյն՝ Պօղոս Մարդինենկոյին սպաննութիւնը Պրէշիայի պարիսպներուն տակ, կանակէք զարնել տալով զինքը, Պօղոսին կնոջ թու նաւորումն, և վերջապէս այս երկու անձնակներուն աղջկան, ձինէվրա Մարտինենկոյին, անյայտացումն:

Այս ահաւոր ամբաստանութեանց հանդէպ Բատուայի կուսակալը գոյնը կապոյտցած, ժանտատեսիլ, ոտքի ելաւ, ջանալով բողբոջանաց ձե մը գտնել, սակայն չի կարողացաւ, բռտերը կոկորդին մէջ կը գամուէին: Պատարանին նախագահն անոր



օգնութեան հասաւ հարցնելով Հ. Յակոբոսին.

— Այսպիսի ամբաստանութիւններն ընելու ատեն, ըսաւ անոր յուզեալ ձայնով մը, լաւ մը խորհեցա՞ք, Հայր, ձեր գլխուն վրայ ծանրացած պատասխանատուութեան վրայ:

— Այս ծերութեան հասակիս մէջ, պատասխանեց վստահարար Հ. Յակոբոս, գիտե՞մ կշռել իմ խօսքերս. և կ'ուզեմ հիմայ ըսածս փաստով հաստատել: Կըրնա՞մ համարձակօրէն խօսիլ:

— Խօսեցէ՛ք, Հայր:

— Այս ահաւոր ոճիրներուն շարքը պատմելու համար, ըսաւ կրօնաւորն, ժամանակագրական կարգաւ կ'սկսիմ:

Երեկոյ մը ըստ սովորութեան իմ մատրանս մէջ կ'աղօթէի, ժողովրդենէ ազքատ մարդ մը, լճակի ձկնորս մը, խնդրեց ինծի հետ տեսակցիլ: Շատոնց կը ճանչնայի այս մարդն և կը ցաւիմ ըսելու թէ Պետութիւնը թերեւս ապերախտ գտնուեցաւ անոր, վասն զի հասարակաց երախտագիտութիւնն որ ատեն մը արժանի համարեցաւ զինքը Սալվադոր — փրկիչ հայրենեաց — կոչելու, անոր ծերութեան ա-

տեն անօթութենէ մեռնելու աստիճան աւմէն տեսակ զրկանքի և կարօտութեանց մէջ լքեց զինքը, խեղճը զո՞հ պիտի երթար չքաւորութեան: Հարուստ մարդ մը, որուն զաղտնեացը տեղեակ էր Սալվադոր, Մկրտիչ Մարդինենկոյ զօրավարն, իր հօրեղբորորդոյն՝ Պօղոսին հարստութիւնները ժառանգելու համար սպաննած էր զինքն, ինչպէս քիչ առաջ ըսի, և աւոր կինը թունաւորած: Սակայն ժառանգութիւնը ձեռք անցընելու համար կը մնար տակաւին արգելք մը, փոքրիկ մանուկ մը, այս ամուսնութենէ ծնած աղջիկ մը: Ամենէն վայրագ ոճրագործներն այս տկարութիւնն ունին, որ շատ անգամ իրենց կորստեան պատճառ կ'ըլլայ. զօրավարն Մարդինենկոյ չունեցաւ այն տխուր քաջութիւնը մանկիկին զուխը ջախջախելու քարի մը տակ, դրամական խոստումով յանձնեց Սալվադորին զինքն մէջտեղէն անյայտ ընելու: Այս վերջինը բռնադատեալ թշուառութենէ՝ յորում իրենները կը տանջուէին, յանձն առաւ այս ահաւոր ոճրագործութիւնը: Սակայն գործադրելու վայրկենին իրեն քաջութիւնն ալ պակսեցաւ, ձգեց մանկիկն ողջ, և քիչ յետոյ



պիտի ըսեմ թէ ինչ վերջ ունեցաւ այն աղջիկը: Մարդինենկոյ իմանալով որ իր հրամանները չէին կատարուած, անխուհեմութիւն ունեցաւ երթալ սպանալ Սալվադորին, զինքը մեռցնել տալէն առաջ: Այս ատենն էր որ ծեր ձկնորսին այցելու թիւնն ընդունեցայ: Եւ ինծի հաւատաց այս գաղանիքը զոր կը յայտնեմ հիմայ, չուզեց որ իրեն հետ մեռնի: Երկրորդ օրը Մարդինենկոյի ըրած սպանալիքը կատարուեցաւ. խեղճ ձկնորս Սալվադորը իր նաւակին մէջ սպաննուած գտնուեցաւ: Ահաւասիկ ինչ որ կ'ուզէի ըսել նախընթաց ոճիրներուն նկատմամբ, որոնց համար մինչև հիմայ տակաւին Բատուայի կուսակալը ամբաստանուած չէր:

— Այս ամէնը սուտ է, ըսաւ Մարդինենկոյ ձայն հանելու գերագոյն ճիգ մը ընելով. այս մարդը սուտ կը խօսի, ամէնն ալ սո՛ւտ է, սո՛ւտ, սուտ:

Հ. Յակոբոս և ոչ արժանի սեպեց զըլուխն անոր դարձնելու. միայն ձեռքն երկնցուց իր զիմացը՝ նախագահին գլխուն վրայ կախուած Քրիստոսի խաչելութեան.

— Քոյր իմ պատմածներս, ըսաւ, երդմամբ կը հաստատեմ, Քրիստոսի զի-

մաց որ իւր արիւնը թափեց մարդկանց փրկութեան համար, Աստուծոյ զիմաց որ կը ըսէ ըսածներս և որ օր մը պիտի դատէ զմեզ, ինչպէս դուք պիտի դատէք կուսակալը:

Երկար իրարանցում եղաւ ամբողջ ունկընդիրներուն մէջ. սակայն ամբոխն կարծես ուրիշ հանգոյցի մը լուծման կ'սպասէր. նախագահն ունկընդիրներուն այս զգացմունքը յայտնեց՝ ուղղելով Հ. Յակոբոսին հետեւալ հարցմունքը.

— Քիչ առաջ ըսիր թէ Պօղոս Մարդինենկոյին աղջիկը Սալվադոր ձկնորսին ձեռքով մահուընէ ազատած էր, զիտէ՞ք թէ ինչ եղած է այն փոքր աղջիկը:

— Այո՛, զիտեմ:

— Կրնա՞ք զայն ըսել մեզի:

— Հիմայ պիտի ըսեմ: Փոքրիկը Մովսէսի նման Աղբիականին ալիքներուն վրայ դրուեցաւ: Ռիքարտոյ կոնսուլավարը ազատեց զինքը և տարաւ Պուչինդարոյի վըրայ, Ֆրանչեսքոյ Փոսքարիի թևերուն մէջ դրաւ: Այս աղջիկը ամբոխին կեցցէնքով որդեգրեցաւ, ինքն է Աղբիականին աղջիկը, վեհեակոյ որբուհին, նա ահաւասիկ  
. . . . .



Եւ ձերունին կը ցուցընէր վենեծիան, որ ոտքի ելած էր երիտասարդութեամբ և գեղեցկութեամբ շողջողուն:

— Արդ ուրեմն, Մարզինենկոյ, այս անգամ ալ կ'ուրանաս ըսած ճշմարտութիւններս. աւելցուց ահաւոր ձերն վերջին անգամ մ'ալ կուսակալին երեսին զարնելով:

Սակայն կուսակալը բառ մը չ'ըսաւ, նոյն իսկ չի փորձեց ուրանալու վերջին ճիգ մը ընել. իր նստարանին վրայ կըծկեցաւ իրր շանթահարած:

Արդէն ունկնդիրներուն մէջէն ոչ ոք աւոր ներկայութեանը ուշադրութիւն կ'ընէր. ամենուն աչքը վենեծիայի վրայ ուղղուած էր, ամէնուն հետաքրքրութիւնը անոր վրայ և անոր վիպական պատմութեան վրայ կեդրոնացած էր:

Հ. Յակոբոսին ըրած պատմութենէ յառաջ եկած աննկարագրելի յուզման աւտեն դատաւորները, կրնաք երևակայել, խիստ տխուր կերպարանք կը ցուցընէին: Սակայն նախագահն ամէն ջանք ըրաւ ունկնդիրներուն յուզմունքը հանդարտեցընել: Ասկից ուզեց օգուտ քաղել դարձնելով ամենուն ուշադրութիւնը վերջին ոճրագործութեան խնդրոյն վրայ:

— Հայր սուրբ, ըսաւ Ռոմուլտինը. ըստ մեծաւորին ուղղելով խօսքը, ձեր անձին նկարագրին պարտուպատշաճ յարգանօք լսեցինք ձեր առաջ բերած վկայութիւնները: Թէպէտ ծանր են ձեր յայտնածները, սակայն ներեցէք ըսելու թէ Մարզինենկոյի դէմ բացուած ներկայ դատավարութենէ դուրս են: Չեր ըսածը վերջը պիտի գայ: Այս օրուան խնդիրն է Ֆէլիչէ Պատոէր Պատրիկին սպաննութիւնն և կոնտրաւարին նկատմամբ ենթադրեալ ոճիրը: Այս երկու գործերուն վրայօք դատարանին յայտնելու բան մը ունի՞ր:

— Կը համարիմ թէ, ըսաւ Հայր Յակոբոս, իրենք կրնան ինձմէ աւելի լաւ պատասխանել անոնց:

— Ուրեմն հո՞ս են իրենք, հարցուց նախագահն զարմացմամբ:

— Հիմա կը տեսնէք զանոնք, ըսաւ Հ. Յակոբոս:

Նոյն վայրկենին դատարանին խորը դուռ մը բացուեցաւ, երիտասարդ Ֆէլիչէ Պատոէրն երեցաւ իր հաւատարիմ կոնտրաւարին ուսին կոթնած:



Ի.

## Ֆ Է Լ Ի Ջ Է Պ Ա Տ Ո Է Բ

Կրկին աղաղակներ ողջունեցին անոնց մուտքը, և երկու կանայք մի և նոյն շարժմամբ կաթոգին սիրով վազեցին անոնց վերայ. Ֆիամէզդա կոնտուլարին վիզը, վենեձիան թեկերը բացած դէպի Ֆելիչէն, որ աճապարեց գինքը բռնելու, վասն զի կը նուազէր:

Այս անգամ ապացոյցները խճողելու պէտքն չի տեսնուեցաւ. և վ. չ. Յակոբոս նոյն իսկ չի պատմեց թէ ինչպէս պատապարած էր Ֆելիչէ Պատոէրն և Ռիքարտոն, թէ ինչպէս երկուքն ալ ծածկած էր կուսակալին նոր ձեռնարկութենէ կամ ոճրագործութենէ հետո պահելու համար: Կուսակալը ոտքի ելաւ և ըսաւ.

— Ամէն բան կը խոստովանիմ. տաքէք զիս հոսկից. մահն աւելի քաղցր կը թուի ինձի քան այս օրուան քաշած անթիւ տառապանքներս:

Գատաւարութիւնը գոցուեցաւ. սակայն Ավոկատորներուն դատարանը չի կրցաւ

վեստին նիստ ընել Բատուայի կուսակալին դատը առաջ տանելու: Յաջորդ գիշերը կուսակալը խելագարութեան սաստիկ ջերմէ բռնուելով բանտին պատերուն զարկաւ իր գլուխը ջախջախեց:

Թէպէտ վենեակոյ ժողովուրդը յարմար առիթ սեպեց ասիկա՝ ըսելու թէ ծերակոյտը միջոցներ հայթայթած էր Մարգի նենկոյի՝ բանտէն փախչելու. և կ'ապրէր նա Միլանու դքսին արքունիքը, ուր բազում այցելուներ կրցած էին տեսնել զինքը:

Վենեձիան հանդիսապէս ճանչցուեցաւ զուստը Պօղոս Մարգինենկոյի, սակայն նա չընդունեցաւ իր ժառանգութիւնը խառնուած Բատուայի նախկին կուսակալին ժառանգութեան հետ: Ֆելիչէ Պատոէրի խորհրդով, որուն հետ վենեձիան պսակուեցաւ, այն ահագին հարստութիւնը բարեգործական հաստատութեանց գործածեց, և իր էրկանը հետ քաշուեցաւ ցամաք երկիր, Պատոէր ընտանեաց հրաշալի կալուածքի մը մէջ: Ռիքարտոյ, երջանիկ ամուսին գեղեցիկ Ֆիամէզդային, ինքն ալ հոն հոգաբարցուի աստիճանին բարձրացաւ:




Յ Ո Ւ Յ Ա Կ

ՏՈՂ,	Էջ	ՍԽԱԼ,	ՈՒՂ,ԻՂ,
13	13	կը մեանին	կը մեանի
12	47	քաղած	քաշած
7	53	ծերանաւորի	ծիրանաւորի
3	80	երկանը	էրկանը
22	99	կզզիակին	կզզակին
6	112	սրբուհին	սրբուհին
8	141	հանիւ	հանիւ
18	146	չէր:	չէր քեր:
12	150	դո՛ւ քրիք	դո՛ւ քրիք
19	160	արդուգարը	արդուգարը
13	205	շաղակրատինը	շաղակրատենը
19	215	(անոնց մէջ)	անոնց մէջ
13	237	վայրկենի	վայրկենի
1	238	չափաւորէ, այն՝	չափաւորէ զայն՝
3	—	սպայէն	նոպայէն
2	251	ծառային	ծառայից
2	253	կատարելու անիւ	կատարելու, անիւ
4	265	գօտիս, — գօտիս	— գօտիս
16	265	որով սպա	սպա
25	268	կը դիտէր	կը դրդէր
26	315	որ քիչ մ'ալ	որ քիչ
24	355	ցողունի	տասպակի
26	393	փալեոմեան	փալեոմեան
3	407	շքուած	շքուած
6	414	խոյնալու	խոյնալու
17	414	զրկած	զրկած

	էջ
Ա. Ծովուն հարսանիքը . . . . .	5
Բ. Նիկոլոսներ և Գասթեղացիներ . . . . .	41
Գ. Ֆիլամէզդա . . . . .	71
Դ. Ազնուական օրիորդաց վանքը . . . . .	105
Ե. Գիմակներ և դէմքեր . . . . .	139
Զ. Պետրոսը վերստին կը տեսնուի . . . . .	163
Է. Նշանախօսութիւն . . . . .	201
Ը. Գեղեցիկ կզզին . . . . .	227
Թ. Առաջին զոհը . . . . .	254
Ժ. Թակարդը . . . . .	271
ԺԱ. Նենգաւոր . . . . .	293
ԺԲ. Վտանգաւոր ազատարարութիւն մը . . . . .	311
ԺԳ. Ֆանդէն . . . . .	336
ԺԴ. Երկու մշուշներու մէջ . . . . .	362
ԺԵ. Վրէժխնդրութիւն Մարդինենկոյի . . . . .	386
ԺԶ. Երկու Ֆոքարիները . . . . .	415
ԺԷ. Երկու Ֆոքարիները . . . . .	452
ԺԸ. Վիլլաֆրանգայի բանակը . . . . .	475
ԺԹ. Ազնուատորներուն դատարանը . . . . .	503
ԺԺ. Հայրն Յակոբոս . . . . .	512
Ի. Ֆէլիչէ Պատոէր . . . . .	








10yr.



1759  
1760  
1761

✓

1761  
4.3  
« Ազգային գրադարան  
  
NL0028759

09/11  
4.2  
« Ազգային գրադարան  
  
NL0028760

0000  
0000  
0000

1759  
4.1  
« Ազգային գրադարան  
  
NL0028761





